

ԲԱՐԵԿԱՄ ԱՄԵՆԵՅՈՒՆ

ԳՐԲՈՅԿ ԲԺՇՎԱԿԱՆ

« ԸՍՏ ՀՈՄԻՅԱԳԻՔ ԳՐՈՒԹԵԱՆ »

ԱՆԽԱՏԱՍԻՐԵՄՅ

ՏՕԳԹԵՕՐ ՅԱԿՈԲՈՍ Ճ. ԿԻՐԱՊՈՍԵԱՆ

معارف تذاوت جليله سنك رخصتنامه سيلاه طبع اولمشدر

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ « ԱՐԵՒԵԼԻՔ » ՕՐԱԳՐՈՑ

1887

613

4-53

20 JUL 2010

6/7



ԲԱՐԵԿԱՄ ԱՄԵՆԵՑՈՒՆ

Կ Ա Մ

ԸՆԿԵՐ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱՑ



Ծ Ա Ն Օ Թ Ո Ի Թ Ի Ի Ն

Գրքային մէջ գործածեալ դեղերն՝ Հեղինակի քով, և գաւառներն գրքային վաճառողաց քով միշտ պատրաստ կը գտնուի, ուսկից 'ի հարկին կրնայ գնել ու և է ոք:

Գեղորէից անուան վերջն եղած թուանշանք՝ նոցա աստիճանն կը ցուցնեն, այնպէս որ դեղ գնել ուզողներն պարտին մէն մի դեղոյ վերջին թուանշաններն ևս յիշել:



57655-66



Կեանքն՝ առանց առողջութեան՝ վատթարագոյն և տաժանելի է քան զմահ : Նա է առաջին անհրաժեշտ պայման երջանկութեան , և առանց նորա ամենայն վաշիք և հաճոյք կենաց են ունայն և ոչինչ :

Հիւանդատ կամ վատառողջ կեանքն դժնդակ իմն և ձանձրոյթ է մարդուս . և երջանկութիւն ու մխիթարութիւն իմաստ չունին վասն նորա . Ամենայն ինչ տխրութիւն պատած է . և չիք ինչ հաճոյք և երջանկաւէտ մի առարկայ : Սոյն տեսութեամբն է որ «ԱՌՈՂԶՈՒԹԻՒՆ՝» ՄԱՅՐ ԵՐԶԱՆԿՈՒԹԵԱՆՑ կանուանի : Արդ գիտնալ առողջութեան պայմաններն , և ուսանիլ զօրէնս առողջապահական , ոչ միայն օգտակար և կարեւոր է՝ այլ և մի անհրաժեշտ պարտաւորութիւն :

Բոլորովին անհիմն է այն խօսք , որ կըսեն , « թէ Աստուած թող կուտայ որ հիւանդութիւնք զան , ուստի մարդս թնչ կրնայ ընել » . Այլ ընդ հակառակն պարտ է մեզ ջանալ և տեսնել թէ՛ նորա դէմ՝ Արարիչն թնչ դարման դրած է :

Մարդս կարող է քննել բազմաթիւ իրաց պատճառներն . և բառնալ զանոնք՝ եթէ վնասակար են կենաց . նոյն ատեն չենք ուրանար զի կան այնպիսի նեղութիւնք որ մարդ զեռ կարող չէ եղած նոցա պատճառներն գիտնալ . և թէ կան այնպիսիք եւս որոց պատճառներն թէև գիտցուած են , բայց զանոնք վերցունելու միջոցք զեռ անյայտ և կամ գաղտնիք են մեզ :

Այստեբու թուոյն նայելով՝ այժմ՝ բաղդատաբար անոնցմով տանջուողք առաւել նուազ են , քան զորս էին , ասկից հարիւր տարի յառաջագոյն :

Առողջապահական օրինաց տեղեակ եղողք և գործադրողք յաւէտ քիչ կը նեղուին՝ քան զայնոսիկ՝ ոյք ուշադիր չեն նոյն օրինաց : Այսանորոյ յոյժ կարեւոր է զխանալ այն օրէնք ոյք համայն երկրէ անհետացունելով զՀիւանդութիւնս՝ կարող են զայն Արարչի գրախտին վերածել :

Մինչդեռ առողջապահական օրէնք երկրիս ամէն կողմերն չի ճանչցուիր՝ բնականապէս ակտիւն եւս պակաս պիտի չըլլան, այսինքն մարդուս բնական առողջ վիճակն որ և է արտաքին պատճառաւ միով պիտի խանգարի . որ է ՏԿԱՐՈՒԹԻՒՆ կամ ԱԽՏ : Քանզի՝ ախտը սածնիս ուրիշ բան չէ, այլ բնական վիճակի խանգարումն կամ շեղումն :

Հիւանդութեանց պատճառք, ՚ի վաղուց անտի մարդուս ուշադրութիւնն ու խորհուրդն գրաւող զլիսաւոր իրաց մին կզած է : Սակայն նախ քան զքննելն հիւանդութեանց կամ տկարութեանց պատճառներն՝ կարեւոր էր բուն առողջ կազմութեան վիճակին վերահասու լինիլ . որպէս զի որ և է շեղում կամ խանգարում կարենար ճանչնալ :

Այս գլխաւոր գիտութեամբն է՝ որ այժմեան բժըշկական արուեստն կատարելութեան մերձագոյնս կը լծուի, քան զզարմանն նախնի Եգիպտական կամ Յունական : Յայնժամ մի վարագոյր կար փիլիսոփայից աչաց առջեւն և կարող չէին տեսնել հիւանդութեանց խորն կամ իսկական վիճակ նոցա : Բայց այժմ՝ Մարդակազմութիւն, Բնախօսութիւն և Առողջարանութիւն՝ ոչ միայն բժշկական գիտութեան գլխաւոր մասերն կը կազմեն, այլ կրնանք ըսել նաեւ թէ՛ ներկայ գարուս նորք քննութիւններն զանոնք գրեթէ մերձ ՚ի կատարելութեան բարձրացուցած են :

Ախտաբանութիւնն՝ կամ այն գիտութիւնն՝ որով մարմնոյն որ և է մասին առողջ վիճակէ շեղիլն կը հասկրնանք :

Դեղաբանութիւնն՝ որով այն աւերեալ վիճակէն իւր բնականին վերածելու միջոցն կըստանանք, և այլն:

Այսոքիկ և նման գիտութիւնք՝ ներկայ դարուս մէջ հսկայաքայլ յառաջադիմեցին, և այն ալ մարդկութեան վիճակի վրայ մի փոփոխութիւն ընելու նպատակաւ:

Այժմ ախտերու դարմանն՝ ոչ միայն առաւել յաջողագոյն և վստահալի է՝ այլ նաև նորա մատակարարութիւնն յոյժ դիւրացած:

Նախնի եգիպտական և յունական բժշկականութեան ուսման ընթացքն՝ գրեթէ այժմեան մարդկային ամբողջ կենաց չափն էր: Յայնժամ բժիշկն պարտ էր ըլլալ ամենագէտ: Սակայն այժմ ոչ միայն չափաւոր խոհուն անձ մը կարող է մի քանի տարւոյ մէջ զայն ձեռք ձգել, այլ նաև կան բազմաթիւ գրեանք, վասն ընտանեկան դորձածութեան, համայն Եւրոպիոյ և Ամերիկոյ մէջ, այնպէս որ իւրաքանչիւր անհատ կամ ընտանեաց զլուխ՝ իւր տան բժիշկն է, մինչ այն ատիճան որ իւր խոհնո՞ գտտմանը տակ կիյնայ տկարի վիճակն. որով բազմաթիւ նեղութիւնք առանց բժշկաց զիմելու կը դարմանուին առ տնին: Սակայն աւանդ որ սոյս անսակ պատեհութիւններէ զուրկ է մեր Ազգն, մանաւանդ անոնք որք Եւրոպական լեզուաց տեղեակ չեն. այսպիսեաց համար այն բոլոր աղբիւրներն գոցուած են:

Այս ըզձիւ էր՝ որ սոյն գրքոյկիս ձեռնարկի, և որ և է աշխատութիւն չը խնայելով՝ ըստ կարի ջանացի նորա թէ լեզուն և թէ գործածութեան եղանակն՝ պարզ և դիւրահասկնալի կերպով բացատրել: Թողով բուն անձնական փորձառութիւնս, շատ անգամ դիւրբմբռնելի ընելու համար խիստ փորձառու անձանց (Հէրլինկ, Հիւզ, Տանհրմ-Պարլօ) խրատուցն զիմելով յոյժ օգտակար համարուած և գործածեալ դեղերն դրած եմ: Երբեմն հիւանդութեանց պատճառաց համեմատ իւրեանց դեղերն նշանակած եմ՝ իբր մաթիմատիքական իրողութիւններ:

այնպէս որ հիւանդն կամ նորա տէրերն կրնան գըր-
քոյկիս համեմատ դեղերն ընտրել, առանց շուարելու թէ
ո՞ր դեղն պիտի ընտրէ ցանկի մէջէ. գորօրինակ, Գիյուք
թէ՛ ոմն հազ ունի, թո՞ղ բանայ ցանկն և տեսնէ թէ իւր
հազն ո՞ր տեսակն է. կակժւղ, պֆնդ, ցաւօ՞ք և այլն ևն.
և ըստ այնմ ընտրէ իւր դեղն: Սմին նման կարգադրեալ
են գրեթէ ուրիշ ամէն տեսակ ախտերու դեղօրայս:

Նաեւ ընթերցողաց օգտին համար առողջապահա-
կան մի քանի յոյժ կարեւոր գիտելիք ըստ կարի համառօ-
տեալ գրքոյկիս սկիզբն դրած եմ: Յանկ մը՝ որ տարբեր
նիւթոց մարտդական աստիճանն կը ցըցունէ. ուրիշ ցանկ
մը որ պահեցողութեան ժամանակ դեղոց ազդեցութիւնն
չի կտրող նիւթոց համար դրուած է. լուացման, մարմ-
նալարժութեան և ըմպելեաց վրայօք յատուկ տեղեկու-
թիւններ տալէ զլինի, ախտերու ընդհանուր և գլխաւոր
նշաններն համառօտիւ դրած հմ. որոնց մէն մի նշանն
հիւանդութեանց ժամանակ ինչ նշանակելն սովորեով, որ
և է պարագայի տակ՝ կը յուսամ որ յոյժ օգտակար պի-
տի ըլլայ:

Անտարակոյս՝ այսպիսի փոքրիկ գրքոյկի մը մէջ՝ ան-
կարելի է բոլոր ախտերն ամփոփել, նա մանաւանդ որ առ-
այժմ պէտք ալ չէ. վասնորոյ գրքոյկս է մի քաղուածք
կարի ընտանեկան ախտերու, կարգ մը ընդհանուր տկա-
րութեանց՝ որ հասարակօրէն կը տեսնուին մեր առօրեայ
կենաց մէջ. կարգ մը կանանց տկարութիւնք, և կարգ մը
եւս մանկանց յատուկ եղած հիւանդութիւններ: Եւ թէ-
պէտ երբեմն աստ անդ նպատակէս շեղեալ՝ իբր յանդուզն
ձեռնարկ մ'ըրած կը թուիմ, այնպիսի տկարութեանց վը-
րայ խօսելով՝ որ ոչ միայն գրքոյկիս սահմանէն և կա-
րողութենէն դուրս է. այլ մինչեւ իսկ ճարտարագոյն բը-
ժըշկաց կարողութենէ կը զերծանին, և նոցա ջանքն ու
աշխատութիւնք՝ ՚ի դերեւ կը հանեն. Այսպիսիք անկասկած՝
քաւ լիցի որ զիւրաբուժելի հիւանդութեանց կարգն

կամ առտնին դարմաններով յաջողակութեան յոյս մը տալու նպատակաւ աստ շարադրած եմ. ո՛չ, քանզի տա բացարձակ յանդգնութիւն մը պարտ է համարուիլ, և մարդասպանութենէ ևս ոչինչ նուազ. այլ թէ՛ որովհետեւ կան բազում պարագայք՝ յորս տառապելոց բարեկամք կ'պարտաւորին ընել՝ զոր ինչ հնար է, 'ի սիրտնս և 'ի մխիթարութիւն հիւանդաց, և կ'զգան թէ՛ պարտ է մատակարարել փոքր ինչ դեղորայս, որ կարենան ամոքել զցաւս գէթ առժամանակեայ կերպիւ: Այս է այն նպատակն և դիտաւորութիւնն որ պարտաւորած է զիս շեղիլ պարզ ընտանեկան գրքոյկի մը ձեւն պահելէ, և կ'յուսամ թէ Արդոյ ընթերցողք յորժամ ուսումնասիրեն զայս գործ 'ի նկատի պիտի առնեն սոյն կէտ, և հետեւաբար անմեղադիր առնեն զիս և փոքրիկ աշխատութիւնն իմ:

Գրգոյկս՝ իւր տեսակին մէջ առաջին գործն է, որ այս երկրի մէջ կ'հրատարակուի, և գուցէ ոմանք պիտի խընդան և այլք ծիծաղին այսպիսի գործի միոյ ձեռնարկութեանս, սակայն մարդկային ազգի պատմութիւնն ինձ միշտ քաջալերութիւն է յայսմ մասի ևս. հետեւապէս առանց անարգանաց սաստկութիւնն 'ի նկատ առնլոյ՝ իբր փոքրիկ ծառայութիւն մը իմ սիրելի ազգին՝ յանձն կ'առնում սոյն աշխատութիւնն, և թէպէտ յոյժ թերի, սակայն և այնպէս անկասկած եմ որ բազմաթիւ տառապելոց միջոց մ'ըլլալով՝ պիտի ուսուցանէ բազմաց թէ՛ Արացիչն Ամենաբարի՝ ախտերն դարմանելու համար զըզուելի և գարշելի դեղորէից գործածութեան օրէնք մը կամ սկզբունք մը չէ տուած, այլ թէ՛ այն միջոցն զոր նա մարդկային ազգի շնորհած է՝ լաւագոյն և իմաստուն մատակարարութեամբ և դրութեամբ կրնայ ամենուն հաճելի եղանակաւ գործածուիլ. և պարտ է այնպէս ըլլալ:

Բժշկական գիտութեան իւրաքանչիւր յառաջադիմական քայլի՝ բազմաթիւ զոհեր նուիրեալ են, և առանց

չափազանցութեան՝ կրնայ ըստել որ միլիոնաւոր անձինք աւելի զո՛հ եղած են տգիտութեան և բարբարոսական ընթացից , քան աստերու կամ հիւանդութեանց . և այսօր բազմաթիւ հին աստեր կան , որք մի միայն անպատշաճ դարմանաց արդիւնքն պարտ են համարուիլ :

Գեղարանութիւնն՝ կամ իբրև դէզ գործածեալ նիւթոց վրայ մեր ունեցած գիտութիւնն աստուածային մասնաւոր յայտնութեամբ մը չ'է , այլ լոկ փորձառութեամբ . և թէ մարդիկ ի սկզբանէ իբր մանկունք՝ իւրեանց շուրջն եղած տնկոց կամ մետաղաց վրայ երբէք գիտութիւն չ'ունէին , այլ հետզհետէ նոցա երևոյթներէ հրապուրեալ երբ ճաշակեցին կամ քննեցին , նոցա դեղային գորութիւնն գիտցան . և այսպէս փորձով կամ պատահմամբ ուսան թէ՛ իւրաքանչիւր նիւթ (գործածեալ իբր դեղ) մասնաւոր հիւանդութեան կամ աստի դարման մ'է :

Նախնի և արդի գիտնոց տմանք կը հաստատեն թէ Հիբօկրատէսի՝ այն երևելի փիլիսոփայի գրութեանց մէջ սա մեծ ճշմարտութիւնն կայ թէ՛ « Այն դեղն որ զառողջն կ'հիւանդացնէ , մի այլ պատճառաւ եղած նման հիւանդութիւնն փոքրագոյն չափով կ'բուժէ » : Այս ճշմարտութիւնն ծածկեալ էր մինչ 1780 , երբ ՍՍՄՈՒԷԼ ՀԱՆՆԱՄԱՆ իւր կիսադարեան դառն աշխատութեամբն ի լոյս ընծայեց յօգուտ մարդկութեան :

Հահնաման՝ տեսնելով Հիբօկրատէսի սոյն գրութիւն և խորհելով Սուֆուէն տենդարոյժ յատկութեան վրայ , մակարերեց թէ՛ սոյն նիւթն պէտք էր նման նշաններ յառաջ բերել առողջ մարդոց վրայ , եթէ չայն փոխուելու ըլլար . և ուստի սկսեց անձամբ փորձել , և մի քանի օր բաւական ուտելէ զկնի գիտեց որ ճիշդ նման տենդի՝ իւր վրայ նշաններ կ'զգար , որք դեղն դադրեցնելէ շուտ վերջն անհետացան

Այս և սմին նման բազմաթիւ փորձերով սա եզրա-

կացութիւնը կ'ընէ . « Որպէս Սփարսո կ'ըսէ զտենդն , նոյնպէս և Պէլլարոնն՝ որ Գըլլէի նման մորթի կարմրութիւն , կոկորդի և գլխոյ ցաւ կ'պատճառէ , պիտի բուժէ Գըլլէ հիւանդութիւնն . ևս իւրաքանչիւր դեղային նիւթ՝ պարտ է նման նշաններ ունեցող աստերն բուժել , » որով նոյն օրէ սկսեալ ամենադառն աշխատութեամբ դեղօրէից բնական յատկութիւնն կամ զօրութիւնն իւր և իւր աշակերտաց անձանց վրայ փորձելով՝ մի նոր դեղաբանութիւն պատրաստեց : Սոյն փորձերու արդիւնքն 'ի լոյս բերաւ սա օրէնքը կամ սկզբունքը թէ՛ « Ախտ մը կամ տկարութիւն մը բուժելու համար պարտ է նման նշաններ արտադրող դեղեր գործածել » փոքրագոյն քանակութեամբ , և ահա՛ սոյն պատճառաւ զայն ՆՄԱՆԱԲՈՒԺՈՒԹԻԻՒՆ կոչեց : ՆՄԱՆ զՆՄԱՆՆ ԲՈՒԺԻ (Similia Similibus Curantur) ոչ թէ ՆՈՅՆը զՆՈՅՆՆ , այլ զՆՄԱՆՆ :

Այս մեծ ճշմարտութիւնն՝ այժմեան Գերմանիոյ հռչակաւոր հեղինակաց մին՝ Նէմայեր (էջ 500) , եւս հռչակաւոր Տօքթէօր Պըտ (Ամերիկացի) փորձով կ'հաստատեն թէ՛ փսխունքն կրնանք դադրեցնել փսխեցուցչի մը միջոցաւ , միայն հարկ է չափն փոխել : Իբեքսոսանհփսխելն կ'դադրեցնէ փոքր չափով ($\frac{1}{100}$ ցրտեն) , և կը փսխեցնէ երկու կամ աւելի ցորեն տալով :

Ասկից յիսուն տարւոյ չափ առաջ՝ այս դրութիւնն երբ յԱմերիկայ մուտ գտաւ , սրկաս չէին անարգական ամէն խօսք , և ինչպէս ճշմարտութիւնն որքան հալածուի՝ այնքանս շուտ և լաւ կ'հաստատուի , այսպէս եղաւ նաև հոն և ուրիշ երկիրներ , և այսօր՝ միայն Միացեալ-Նահանգաց մէջ ('ի բաց առեալ Գերմանիոյ , Գաղիոյ , Անգլիոյ , Աւստրիոյ , Իտալիոյ , Սպանիոյ , Բուսաստանի և Եւրոպիոյ այլ և այլ երկրաց մէջ ըրած հսկայաքայլ յառաջադիմութիւնն) , այս վերջին 30—40 տարուան միջոցին ըրած յառաջադիմութեան նման՝

կրնամ համարձակարար և ազատօրէն ըսել թէ՛ չ'է եղած աշխարհիս վրայ մի գիտութիւն որ 80 կամ 100 տարուան միջոցին ասկից առաւել, կամ գէթ սորա հաւասար յառաջացած լինի: Փորձով գիտենք որ՝ թէ՛ բրնական և թէ՛ բարոյական՝ ամէն նոր գիւտ կամ դրութիւն յոյժ ծանր յառաջ կ'ընթանան:

Մի այլ կէտ առնեմք բազմատութեան համար վայրկենիկ մը, և պիտի տեսնեմք թէ՛ անցեալ և ներկայ բժշկական դրութիւնն քանիցս բարեփոխման կը կարօտի, և արդէն լուիկ կերպով սկսած ալ է:

Դիցուք թէ՛ գլխոյ տենդով հիւանդ մը պատահի, և որպէս բնական է, հիւանդի տէրերն անմիջապէս կանչեն բժիշկ մը: Նա գալով՝ հիւանդի համար տըզրուկ, խարան (բէհիլիվան եագըսը), փսխեցուցիչ կամ լուծիչ դեղ մը և կամ որ և է կարգադրութիւն մ'ընելով կ'երթայ:

Այդձ հիւանդն՝ սգրուկէն կը սոսկայ և մարմնոյն դաչեւն իւր վրայ սարսուռ կը բերէ, չ'ուզեր, կ'ողբայ և այլն, փսխեցուցիչ կամ լուծիչ դեղերն առնել անկարելի է նորա: դեղօրէից մատակարարութեան ժամանակ կ'մերժէ առնել: Այն օգտակար դեղոյն՝ որ աշխարհիս մեծ օրհնութիւնն եղած է (S. Quinine)՝ բազմաթիւ անձինք իւր յանիծապարտ ինչ նորա վրայ կ'հային և մերժելով՝ շատ անգամ կ'ուխտեն այլևս չ'գործածել զայն:

Դեղօրէից դառնութիւնն և նոցա գործածութեան դժուարութիւնն ընտրելագոյն կ'ընէ տանջուիլն, մանաւանդ եթէ մանուկ է հիւանդն: կրնամք խորհիլ թէ՛ ո՞ր աստիճան դժուարութիւն կայ դեղօրէից մատակարարութեան մէջ, և արդարև բուն այս կէտ՝ բազում ճարտար բժշկայ խորհրդոց առարկայ եղած է: Քանի՛ քանի մանկուք զո՛ր եղած են ճիշդ այս պատճառաւ, քանզի անկարելի կ'ըլլայ նոցա դեղ մատակարարելն, և հետեւապէս բնութեան թողլով՝ շատ անգամ անդարմանելի:

Բայց դիցուք թէ՛ նման պարագայի տակ՝ նմանա-

բոյժ մը կանչուի հիւանդաց անկողնոյ՝ քով . թէ երիտա-
սարգ ըլլայ հիւանդն թէ ծեր , թէ տղայ՝ և թէ մանուկ ,
մինչեւ իսկ նորածին երախայ , յայնժամ առանց շուարե-
լոյ իւր փոքրիկ շաքարով պատրաստեալ դեղահատիկներէ
մէկ մը կամ աւելին , հիւանդաց լեզուի վրայ դնելով , կը
պատուիրէ ժամանակին կրկնել զնոյնն առանց հիւանդաց
վրայ որ և է նեղութիւն մը բերելու և կամ արդէն ե-
ղածն զէշացունելու :

« Ըստ ոմանց Հօմիօբաթն , ինքնակոչ բժիշկ մ'է՛ ,
« առանց օրինաւոր ուսման , և այլն և այլն : Այսպիսիք բո-
« լորովին կը սխալին , զի Հօմիօբաթ բժիշկն պարտ է
« ուսանիլ այնքան Անդամադննութիւն , Բնախօսութիւն և
« Ախտաբանութիւն . որքան որ Ալիօբաթ բժիշկն : Նա ու-
« նի իւր Համալսարաններն ի Միացեալ-Նահանգս և այլուր
« ունի իւր Հեղինակներն որք կը դասախօսեն . և շատ ան-
« գամ մի և նոյն դասագիրք կուսուցուին , յերկուց դրու-
« թեանց Համալսարանաց մէջ , 'ի բաց առեալ զԳեղարա-
« նութիւն , որով կը զանազանին երկու գպրոցք : »

Արդ՝ կրնան շատերն ըսել « ուրեմն ինչո՞ւ այն-
քան բազում փորձառու և ճարտար բժիշկք դեռ սոյն
դրութեան հաւատք չեն ընծայեր , ու կը հակառակին : »

Այս հարցման համառօտիւ կը պատասխանեմ . Ո-
րովհետեւ այսպէս եղաւ աշխարհի ընթացք :

Մարդկային ազգի օգտակարագոյն ամէն գիւտ և հը-
նարք առանց հակառակութեան չէ ընդունուած իբր իրո-
ղութիւն . և Հօֆօֆալի դրութիւնն կամ Նմանաբուժու-
թիւնն չէր կրնար մի բացառութիւն ըլլար անոնց մէջ .
դիմադրութիւն , հակառակութիւն , ծաղրանք և անար-
գանք , ամէն նորագիւտ արուեստից կամ գիտութեանց
բաժինն էր մինչեւ որ ժամանակն ու գործնական վկայու-
թիւնք անուրանալի ընէին զճշմարտութիւն :

Յւ այժմ դու , սիվ ազնիւ ընթերցող , դու որ մարդ-
կային յառաջագիմութեան և նորա վիճակաց ճշմարիտ

բարեօքման նախանձախնդիր մ'ես, մի գործեր իբր միջին դարուց ստրկացեալ իմաստասէր մը, այլ որպէս պարտ է մտաւորական էակի, քննէ, փորձէ և ազա յայտնէ քու որոշում, զի ՓՈՐՁՆ է Բանալի գիտութեանց և արուեստից. Ուղեցոյց ճշմարիտ յառաջագիմութեան, և լաւագոյն ու օգտակարագոյն Եղանակ առ յորոշել զճըշմարտութիւն և հասանիլ յայն:

Տ. Բ. Յ. Ն. ԿՐԻՍՏՈՍԵԱՆ



ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ



ԳԼՈՒԽ Ա.

ԱՌՈՂՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ



ՅՕԴՈՒԱՆՄ Ա.

Առողջարանու թիւնն՝ կենաց պահպանութեան
անհրաժեշտ եղող գիտութիւնն է :

Մարդկային ընկերութեան մէջ եղած ամէն
իրաց վիճակ առողջարանութեան կը վերաբերի :
Դատարարակութեանց և ֆիզիքական աշխատու-
թեանց եղանակ , մեր փողոցներու մաքրութիւն ,
եւս մեր բնակարանաց վիճակ , կերակրոց չափն ու
պատրաստութեան եղանակն և այլն և այլն : Մոքա
ամենեքեան առողջարանութեան կարեւոր կէտերն
են : Գրքոյկիս համառօտութիւնն չի ներեր իւրա-
քանչիւր մաս առանձինն քննել , և նոցա վրայ ըն-
դարձակօրէն խօսիլ . այլ լոկ կարեւորագոյն հա-
մարուած կէտերն յիշելով՝ կուզեմ ընթերցողաց
ուշադրութիւնն առ այս գրաւել . զոր օրինակ . կե-
րակուր , Զուր և Մարմնավարժութիւն :

ԿԵՐԱԿՈՒՐ . — Այս մասիս գաղափարք յոյժ կը
զանազանին , այսինքն թէ՛ մարդս ի՞նչ տեսակ և

ի՞նչ քանակութեամբ կերակուր պարտ է ուտել .
և ի՞նչպէս պատրաստելու է զայն որ առաւել օգ-
տակար ու սննդւորար ըլլայ : Այս հարցմանց ոմանք
կը սնդեւն և կուզեն փորձով ցըցունել թէ պէտք
է բուսական ուտել առանց եփելու : Ուրիշներն
կըսեն մարդս ջրէ ի զառ որ և է ըմպելիք պէտք
չէ գործածել, ուրիշներն գարձեալ . մարդուս ամե-
նաօգտակար կերակուրն հում միսն է , և այլն : Թող-
լով անհատական գաղափարս , փորձով գիտենք թէ
բանջարեղինաց շատերն հարկ է յառաջմանէ պատ-
րաստել իրենց մէջ գտնուած վնասակար թթուն
վանելու համար : Ճշմարիտ է որ կան բուսական-
ներ , մանաւանդ պտղաց մէջ , զորս հարկ չէ յա-
ռաջմանէ պատրաստել . զոր օրինակ , խաղող , նա-
րինջ , ձմերուկ , սեխ , տանձ , խնձոր , դեղձ և այլն
և այլն , զորոնք բնութիւնն ինքն պատրաստած է :

Մարդս իբր բանական էակ երկիրն մշակել
կը խորհի , կը վարէ և կը հերկէ կենաց ամէն պի-
տոյք արտադրելու նպատակաւ : կերակուր պատ-
րաստելն քաղաքակրթեալ աշխարհի մի կարեւոր
գործն է , մանաւանդ իգական սեռին . և պար-
ծանք իւրեանց , երբ պատրաստեալ կերակուրք
համեղ և միանգամայն գիւրամարսելի կըլլան :
Երբ կերակուր պատրաստելու եղանակն առ հա-
սարակ ամէն մարդ ուսանի որպէս պարտ է , չիք
տարակոյս որ այժմեան ստամոքսի տկարութեանց
խիստ շատերն այլ եւս պիտի չը գիտցուն մեր ըն-
տանեաց մէջ :

Մեր ներկայ կացութեան տակ և բնակած երկ-
րագնտի վրայ՝ մնի և բուսականաց ու մրգեղինաց

գործածութիւնն անհրաժեշտ է կենաց առողջու-
թեան համար, և թէպէտ անկարելի է մեզ ցուցակ
մը պատրաստել և ըսել որոշակի թէ ո՞ւսկից որ-
քան պէտք է ուտել (1) . ի վերայ այսր ամենայնի
կրնամք ըսել որ Ֆիզիքայէս աշխատողք առաւել
մտեղինաց պէտք կունենան՝ քան զմտաւորայէս
գործաւորս, և թէ արք առաւել կրնան ուտել քան
զխանայս, սա է ընդհանուր կանոն : Առ հասարակ
մարդուս (չափաւոր) պէտք է գէթ օրն մի անգամ
մտեղէն ուտել . թէեւ սաստիկ աշխատաւորաց հա-
մար երկու կամ երեք անգամ պէտք կըլլայ : Կեր-
ակուրն պէտք է աղէկ ծամուի, նաեւ ուտելէ
անմիջապէս վերջը պէտք չէ գործի սկսիլ . քանզի
ոչ միայն կերակուրէ անմիջապէս վերջն սաստիկ
աշխատութիւնն փաստակար է մարդուս, այլ մին-
չեւ խտրաբազմաբազմ շատ անգամ մեծամեծ չար-
եաց և տկարութեանց պատճառ եղած է . այնպէս
որ յետ կերակրոյ պարտ է գործաւորաց կէս ժամ
հանգարտ միջոց տալ, որ ժամանակ ըլլայ կերակ-
րոյ զետեղիլ, եթէ ոչ իբր ծանրութիւն ստա-
մնքսի վրայ կը բեռնաւորի :

Կերակուրն գիւրաւ մարսելու համար պէտք
է քիչ մը ջուր խմել . ոչ թէ շատ : Բողորովին սը-
խալ է ոմանց կարծիքն թէ՛ կերակրոյ ատեն ջուր
պէտք չէ խմել : Չեմ ըսեր թէ կերակրոյ ժամանակ
անշուշտ պէտք է խմել . այլ թէ չափաւոր խմուած

(1) Բրէֆէսօր Տալթըն հետեւեալ չափն կուտայ մեզ
իբր միջին հաշիւ վասն չափաւոր անձանց՝ միս 140, տրամ
հաց 160, իւղ 30, ջուր կամ հեղուկ 425 :

Ղուրն փոխան մնաս հասցունելու օգտակար ալ է։ Սակայն՝ կը խրատեմ և կզգուշացունեմ զայնպիսիս ոյք սովոր են չափազանց իւղային միս կամ շաքարեղէն և կամ խմորեղէն ուտել։ Այսպիսիք արդարեւ լաւ կընեն եթէ կերակրոց ժամանակ ընաւ Ղուր չը խմեն, քանզի Ղուրն ստամոքսի մէջ կերակրոց իւղային մասն պաղեցնելով, զանոնք դըժուարամարսելի կընէ։

Ընթերցողաց օգտին համար հետեւեալ ցուցակն աստ կը դնեմ, որ ներկայ դարուս երեւելի հեղինակաց միոյն, Բրօքսի Տալթընի Բնախօսութենէ համառօտեալ քաղած եմ. և չիք տարակոյս որ բազում պարագայից տակ պիտի ծառայէ իբր առաջնորդ շատերու։



ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ

ՄԱՐՍՈՂԱԿԱՆ ՅԱՏԿՈՒԹԵԱՆՑ ՏԱՐԲԵՐ ՆՈՒԹՈՑ

	Ժամ	րոպէ		Ժամ	րոպէ
Բրինձ խաշած	4		Ոստրէ		2,55
Հաւկիթ հում	4	30	Հաւկիթ թերխաշ		3
Խնձոր հում	4	30	Եզան միս		3
Ըղէլ խաշած	4	45	Ոչխարի միս		3
Կարի	2		Վառեակի ապուր		3
Կաթ եռացած	2		Պանիր		3,30
Լեարդ	2		Հաց ցորենի թարմ.		3,30
Ձուկ խորոված	2		Շողգամ խաշած		3,30
Հաւկիթ	2	15	Հաւկիթ կարծր		3,30
Հնգկահաւ	2	18	Կանանչ լուբիսյ		3,45
Ոսք խորոված	2	30	Մարցորեն		3,45
Գառնուկ	2	30	Ճակնդեղ		3,45
Լուրիայ խաշած	2	30	Եզան միս խորոված		4
Բաժաթէս խաշած	2	30	Հորթու միս		4
Կաղամբ	2	30	Հաւ		4
Վառեակ	2	45	Բագ		4
Եզան միս	2	45	Սիրտ		4

Վերոյիշեալ ցուցակն առաջին անգամ ընթերցողք պիտի զարմանան որ (Կ-Ի-Ն-Է Ի-Ն-Է) Կ-Ի-Ն-Է աւելի դժուարամարս է քան Ե-Ն-Է Ի-Ն-Է : Սակայն պէտք է գիտնալ որ սա իրողութիւն է , և ոչ կարծիք : Շատեր կան որ կը խորհին թէ հաւկիթն առաւել դժուարմարսելի է , հետեւապէս որ և է պարագայից տակ հիւանդաց կրնայ տրուիլ . սակայն՝ վերոյիշեալ ցուցակն այս կարծիքի սխալ ըլլալն յայտնի կապացուցանէ :



ՄԱՍՈՒՆՔ ՍԵՆԴԱՐԱՐ ԲՈՒՍԱԿԱՆ ԿԵՐԱԿՐՈՑ

« Թուանշանք հազար մասի մէջ որքան սնունդ ըլլալն կը ցուցնեն : »

Բրինձ	84		Ցորեան	419—444
Բաթաթէս	84		Ստեպղին	450
Շոգամ	106		Հաց սեւ	466
Հաճար	106		Բակլայ	239
Գարի	125		Ոսպն	276
Վարսակ	138		Սունկ	289
Հաց ճերմակ	142		Լաւրիայ	320



ՄԱՍՈՒՆՔ ՍԵՆԴԱՐԱՐ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԿԵՐԱԿՐՈՑ

կաթ կովու	237		Ոչխար [միս խաշած]	852
Ոսորէ	305		Հորթ [միս հում]	873
Հաւկիթ [շեղնուցքն]	305		Հորթ [խաշած]	911
Պանիր	331—447		Աղաւնի [հում]	756
Հաւկիթ [սպիտակուցն]	845		Աղաւնի [խաշած]	827
Գառն [միս հում]	833		Եզ [միս հում]	880
Ոչխար ,, ,,	773		Եզ [միս խաշած]	944



ՀԱՄԱՌՈՅ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ՆԻԹՈՑ ՍՆՆՂԱՐԱՐ

ՅԱՏԿՈՒԹԵԱՆՑ

ԻՒՂ . — Իւղն դժուարամարտելի կերակուր մ'է և ջերմ կլիմայից բնակչաց համար աւելի վնասուկար : Իւղոյ մէջ շատ ածխային կազ կայ , և հետեւապէս ցուրտ կլիմայից բնակչաց աւելի հարկաւոր է մարմինն ջերմ պահելու համար : Աւտի՛ որչափ կլիման ցուրտ ըլլայ , այնչափ պէտք կզգամք իւղային կերակրոց . և ընդհակառակն՝ որչափ տաք ըլլայ այնքան քիչ կը կարօտիմք իւղային կերակրոց . ու հետեւապէս առաւել պէտք կզգամք զովացուցիչ մրդեղինաց և բանջարեղինաց (բուսականաց) : Բնութիւնն այս մեծ իրողութիւնն լաւ կուսուցանէ մեզ , և եթէ վայրկեան մը խորհելու ըլլանք պիտի տեսնենք որ ջերմ կլիմայից մէջ առատապէս կաճին ամենայն տեսակ զովացուցիչ մրդեղէնք որպէս են , ձմերուկ , խաղող , դեղձ , խնձոր , տանձնարինջ , թուղ , և այլն և այլն . որք ցուրտ կլիմայից տակ գրեթէ չեն գտնուիր :

ԿԱԹ . — Կաթն՝ բնութեան պատրաստած կենդանական կերակրոց առաջինն և ա՛նանուազ սրնունդ պարունակող անթափանցիկ հեղանիութմ'է . և սոյն իմաստալի անօրինութեամբն կարի յարմարացեալ է մանկական փափկասուն կազմութեան :

Կենդանեաց կաթի լաւագոյնն ՚ինկատ առնելով բոլոր պարագայս , կովու կաթն է : Անխարգախ կովու կաթն առաւել շաքարային և իւղային մասունք կը պարունակէ քան զկաթն կանանց , թէեւ .

նորածին մանկան մը մօր կաթն աւելի շաքար ունի, սակայն՝ ընդ աճման մանկան (3րդ - 6րդ ամիսներն) կը նուազի շաքարն : (Տալթըն) :

Իւրաքանչիւր կենդանւոյ կաթ , քիմիապէս երբէք չը զանազանիր , թէպէտ և բաղադրիչ մասանց մէջ երբեմն տարբերութիւնք կը տեսնուին , որպէս նաեւ միեւնոյն կենդանւոյ կաթի մէջ , և յիրաւի չեմք սխալիր եթէ ըսեմք որ մի և նոյն կենդանւոյ տարբեր եղանակաց կաթն առաւել կը զանազանի . քան զկաթն տարբեր կենդանեաց . քանզի յախուի պարարտացեալ կովու կաթն աւելի թթու է քան զայն՝ որ դալար արօտաց մէջ ճարակեալ է , և դարձեալ կովու կաթն առաջին երկու ամիսներն աւելի պարարտ է՝ քան վերջին ամիսներն :

Իշու կաթն՝ որ ընդհանրապէս առաւել շաքար և նուազ իւղ կը պարունակէ , դժուարին է ձեռք ձգել վասն հիւանդաց և մանկանց : Այժու կաթն՝ թէեւ ունի առաւել իւղային մասունք , բայց նաեւ ունի մի հոտ , որ բազմաց զզուանք կը սլատճառէ , եթէ ոչ սա պարտ է նախապատիւ համարուիլ , քան զկաթն կովու՝ երբ թարմ է :

Տաք կաթն առաւել դիւրամարտելի է (2 ժամ) քան զկաթն հում (2 ժամ 15 րոպէ) . ուստի՝ ստամոքսի և աղեաց տկարութիւն ունեցող անձինք պարտ են խմել տաք կաթ և ոչ հում :

Կաթն՝ երկու կամ երեք ժամ կենալէ վերջն՝ վրայի երեք չորրորդն նորա լաւագոյն մասն է , զի դժուարամարտելի նիւթն նորա յատակն կիջնէ : Սա կիսով չափ ջրախառն կրնայ դորձածուիլ :

Հետեւեալ ցուցակն տարրեր կենդանեաց կաթի բաղադրութիւնն կը ցուցնէ (միջին հաշուով):

ԿԱԹ	ՀԵՂՈՒԿ		ԹԱՆՁՐ	
	Կանանց	839	08	410
Կովու	864	06	435	94
Իշու	890	46	409	88
Այծու	844	90	455	40
Ոչխարաց	832	82	467	68

ԹԱՆՁՐ ՄԱՐՄԵՆՈՑ ՏԵՍԱԿՆ ՈՒ ՔԱՆԱԿՈՒԹԻՒՆՆԵ

ԿԱԹ	ՏԱՔԱՐ		ԻՒՂ		ՊԱՆԻՐ		ԱՂԱՅԻՆՔ	
	Կանանց	43	64	26	66	39	24	4
Կովու	38	03	36	12	55	45	6	64
Իշու	50	46	48	53	35	65	5	24
Այծու	34	94	56	87	55	14	6	47
Ոչխարաց	39	43	54	31	69	78	7	46

(ՍՄԻԹՁ)

ՀԱՒԿԻԹ . - Շատ սննդարար է և դիւրամարս, եթէ կակուղ խաշուի, կամ խորովուի, ընդհակառակն (պինդ) կարծրն, յոյժ դժուարամարս է և միշտ փնասակար:

ՄԻՍ . (Ոչխարաց կամ եղանց) : - Մսեղէնք շատ սննդարար նիւթեր են. և ինչպէս որ ցանկի մէջ ցուցուած են յոյժ դիւրամարս, ուստի այս երկու տեսակ մսերն ստամոքսի որ և է տկարութեան ենթակայ եղողներու համար լաւագոյն են, քան ուրիշ նիւթերն կերակրոց:

ՁՈՒԿՆ . — Առ հասարակ սննդարար են , բացի խիստ իւզոտ տեսակներէ , որք ընդհանրապէս փուշ կամ ոսկր շատ չեն ունենար :

ԲՐԻՆՁ . — Առաջին կարգի դիւրամարսելի բուսականաց մին է , թէեւ ոչ այնչափ սննդարար , վասնորոյ հիւանդաց ընդհանուր կերակուրն եղած է :

ԱԼԻԻՐ ԳՐԷՆ . — Տիեզերական գլխաւոր կերակուրն է և հացի համար անհրաժեշտ , մանաւանդ մեր երկրի մէջ , և ոչ միայն դիւրամարս այլ և սննդարար է : Թարմ հայն՝ երկոտասան ժամ առաջ եփուած հացի չափ դիւրամարսելի չէ , և պէտք չէ գործածել :

ԳԱՐԻ . — Մննդարար դիւրամարսելի և զովացուցիչ է , շատ անգամ հիւանդաց կը մտոտկարարենք :

ԲԱԹԱԹԷՍ . — Խորովածն՝ առաւել նախապատիւ է՝ քան զխաշածն :

ՇՈՂԳԱՄ , ԿԱՂԱՄԲ . — Չեն այնքան օգտակար և երբեմն ստամոքսի անհանգստութիւն կը պատճառեն :

ՃԱԿՆԴԵՂ , ԹԻՖԷՆ . — Զովացուցիչ են , և ընդհանրապէս տաք կլիմայից տակ կաճին , ու կերակրոց մէջ կամ առանձինն խիստ համեղ :

ՍՈՒՐՃ . — Սուրճն է աշխարհածանօթ մանաւանդ մեր երկրի մէջ , և շատ քիչերն կան որ համն առած չսլան , առանց սեռի տարբերութեան : Զօրաւոր սուրճ գործածելու սովորութիւնն ջղային

տկարութիւն յառաջ կը բերէ և ստամբսի տկարութեանց գլխաւոր պատճառաց մին եղած է :

Սուրճը խորովելէն յետոյ պէտք է պահուի շիշի մը մէջ. և հարկ եղած ատեն ազացուի, եթէ ոչ արդէն ունեցած իւր փոքր ինչ օգտակարութիւնն ալ կը կորսուի :

ԹԵՅ . — Թէյն մեր երկրին մէջ երկրորդական գործածութիւն ունեցող նիւթ մ'է, և եթէ չափաւոր կերպով գործածուի վնասակար չէ, բայց յաճախ գործածութիւնն շատ անգամ սրտի բարախում՝ քնահատութիւն և այլ նեղութիւններ յառաջ կը բերէ :

ՌԳՆԼԻՅ ԸՄՊԵԼԻԲ . — Գինւոյ գործածութիւնն այնչափ ընդհանուր եղած է, որ նորա բազմաթիւ գէշ հետեւութեանց վրայ խօսիլն գրքոյկիս համառօտութիւնն չը ներէր, սակայն առանց մի քանի խօսք գէթ յիշելու չեմ ուզեր անցնիլ :

Գինին ոգելից ըմպելեաց ամենուց անվնասն է (երբ զուտ է), ի վերայ այսր ամենայնի առանց պէտք մ'ունենալու նորա գործածութիւնն յաւէտ վնասակար է քան օգտակար : Գինին՝ ինչպէս նաեւ ուրիշ նիւթեր՝ ի հարկին կրնան օգտակար պէս գործածուիլ. զոր օրինակ՝ եթէ մէկը տկար է և զօրութեան կարօտ կրնայ քիչ մը ջրախառն գինի գործածել. բայց եթէ սովորութիւն կրնէ, յայնժամ իբր գեղ իւր օգտակարութիւնն կորսընցունելով հանդերձ կրնայ վնասել եւս :

Նմանապէս ամէն տեսակ ոգելից ըմպելիք՝ որ երբեմն իբր զօրացուցիչ գեղ կը գործածուին :

ՅԵՍԱԵՈՅ . — Ամէն երկիր իւր արտադրած բեր-
քին գործածութեանը կարօտ բնայիչ ունի , և այն
երկրաց մէջ ուր յառաջուց ծխախոտն կաճէր , հոն
անհրաժեշտ ծխախոտի գործածութեան կը կարօ-
տէին նորա բնայիչք : Այս է երկրիս բնական օ-
րէնքն . և ինչպէս արդէն յիշեցինք , այն երկիր-
ներն որ սաստիկ տար են՝ բնականապէս զովսոցու-
ցիչ պտուղներն պսկաս չեն զոր օրինակ . ձմերուկ
դեղձ , խաղող , և այլն և այլն . որոց գործածութիւ-
նը բնայիչաց խիստ օգտակար և առողջարար է :

Ծխախոտի գործածութիւնն այնքան ընդհա-
նուր եղած է , որ հաղիւ լսելի կըլլայ նորա դէմ
խօսուած որ և է խօսք , սակայն նորա վնասակա-
րութիւնն եւս չզգացողներ խիստ հազուադիւտ
պիտի ըլլան , մանաւանդ ներկայ գործածութեան
եղանակաւ :

Մարդիկ սովորաբար երբ օրուան սաստիկ աշ-
խատութենէ կը դադարին , կը յուսան ծխախոտի
կամ որ և է այլ գրգռիչ նիւթոյ մը գործածու-
թեամբն զիրենք հանգստացնել . թէեւ սորա սխա-
լութիւնն ժամանակէ մը վերջն կ'իմանան , անշուշտ
« Ամէն բան բարի է , երբ բարիի համար կը դոր-
ծածուի » :

ԿԵՐԱԿՈՒՐ . — Կերակրոց մասին անկարելի է
ընդհանուր կանոն մը տալ , այլ իւրաքանչիւր ան-
ձի կը թողուի ընտրել ո՞ր կերակուրն իւր կազ-
մութեան և բնութեան աղէկ է : Գէշ սովորու-
թիւն մ'է ամենայն ինչ ստամոքան լեցնել , որպէս
ծնողք սովորաբար կրնեն զաւակաց օգուան խոր-
հելով :

Նաեւ դժուարին է կանոն մը սահմանել և ըսել թէ՛ իւրաքանչիւր անհատ ի՞նչ չափ կերակուր պարտ է ուտել. քանզի ինչպէս շատա՛կերութիւնն փաստակար է մարդուս, նո՞նպէս և սակաւակերութիւնն, բայց ամէն բանի մէջ շափաւորութիւնն պէտք է և կարեւոր :



ՅՕԴՈՒԱՆ Բ.



Ընթերցողաց օգտին և դիւրութեան համար հետեւեալ ցուցակն աստ կը յաւելում :



ԴԵՂՕՐԷՒՅ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆՆ ՁԻՎՑՐՈՂ ՆԻԻԹԵՐ

ԱՊՈՒՐ . — Բրինձ , շէնք , պարզ և մնայրով :

ՄՍԵՂԵՆՔ . — Միս ոչխարի և եզան, խաշած կամ խորոված , վառեակ , թռչուն , նապաստակ , և այլն :

ՁԿՆԵՂԷՆ . — Որ և է թարմ ձուկ , (որ թեփոտ է) խաշած կամ խորոված (ոչ ձիթով) :

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ . — Իւղ , պանիր , հաւկիթ թարմ քիչ աղով , կակուղ խաշած հաւկիթ (խիթ ունեցողք պէտք են զգուշանալ հաւկիթէ) :

ՀԱՅ . — Յորենի հացն՝ գոնէ քսան և չորս ժամ կանխաւ եփուած պէտք է ըլլայ :

ԽՄՈՐԵՂԵՆ . — Ոչ չափազանց իւզոտ , հասարակ ,
շէնքի :

ԿԱԹ . — Թարմ կամ եռացած , բրինձով խա-
շած : Մածուն թարմ (ոչ թթու) և շաքարով :

ԲԱՆՁԱՐԵՂԵՆՔ . — Բակլայ , բրինձ , ք-ն-նե-
լուբիայ , կաղամբ , ճակն-դեփ , լեմ-լեմ :

ՊՏՈՒՂՔ . Խնձոր , տանձ , դեղձ , ելակ , թու թ ,
խաղող , ձմերուկ , որք պէտք են հասուն ըլլալ , և
ոչ խակ կամ թթու : Սոյն պտղոց թէ թարմն և
թէ ջորն , և կամ քիչ շաքարով պատրաստեալն
հիւանդութեանց պարագայից և աստիճանաց հա-
մեմատ չափաւորապէս կրնան առնուլ :

ՋՈՒՐ . — Պաղ ջուր զուտ կամ քիչ մը շաքարով :

ԹԵՅ . — Սեւ , (տկար պատրաստեալ ,) կաթով
կամ առանց կաթի :

ԱՂ . — Չափաւոր :



ՅՕԴՈՒԱՄ Գ .



ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՅ ԺԱՄԱՆԱԿ ԱՐԳԻԼԵՍԼ ՆԻԻԹԵՐ

ԲՈՒՍԱԿԱՆՔ . — Վարունգ , աղձան . սոխ , խըս-
տոր , բողիլ թէ թարմն և թէ թթուութն (լեմ-լեմ) :

ՀԱՄԵՄՆԵՐ . — Պղպեղ , ընկոյզ , նուշ , կաղին ,
չաղանակ :

ԸՄՊԵԼԻՔ . - Սուրճ . կանանչ թէյ , գինի ,
օղի , դրձր , քայախ և այլն :

Գեղօրէից մատակարարութեան ժամանակ
պէտք է ամէն տեսակ անուշահոտ իւղերէ զգուշանալ և զանոնք չը գործածել , ոչ ակուպի և ոչ
գլխոյ և ոչ ալ ուրիշ որ և է դարման մ'ընել :

Ոմանք խիտ ունակութիւն ըրած են սուրճ
կամ ուրիշ նիւթ մը գործածել , զորոնք չը գործածեն շատ անգամ ուրիշ նեղութիւն կը պատճառէ հիւանդի . այսպիսեաց համար աղէկ չէ բուրրովին և անմիջապէս դադրեցունել , թէեւ կըրնայ ըլլալ որ արգիլեալ ցանկի մէջ գտնուի այն նիւթն . այլ պէտք է ըստ կարի չափաւորել :



ԳԼՈՒԽ Բ .



ՅՕԴՈՒԱԾ Ա .

ՄԱՐՄՆԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Քնական և օգտակարագոյն մարմնավարժութիւնն տան մէջ և կամ բացօթեաց տեղուանք անմիաս և զուարճալի զբաղմունքն է : Բայց որովհետեւ առ հասարակ դիւրին չէ այս տեսակ զուարճութիւնք ձեռք բերել , վասնորոյ այսպիսեաց համար է որ պիտի յիշենք :

Մարմնավարժութեան կարեւորութիւնն (հան-

դերձը վնասիւքն) այն աստիճան տեսնուած է եւրոպիոյ և Ամերիկայի մէջ, որու համար յատուկ դասատուներ կան և մինչեւ իսկ հատուտել ուղղներ որ մարմնավարժութեամբ բաղմաթիւ իրրանքութիւի դասապարտեալ ախտեր իրականապէս բուժեալ են :

Պարզ մարմնավարժութիւնն, քալելն է, և թէպէտ ողորմելին, սակայն և այնպէս իւր օգուտն ունի . քանզի թէպէտ և մարմնոյ մէկ մասն կը յողնի, մինչ ուրիշ մասերն անշարժ մնալով մարմնավարժութիւնն անկատար և հետեւապէս իւր օգուտն ալ քիչ կըլլայ . ի վերայ այսր ամենայնի բացօթեայ տեղուանք քալելն ոչինչ օգուտ չընծայեր մարդուս :

Երկրորդն է ձի հեծնալն՝ որ ստամոքսի տկարութիւն ունեցողաց համար աւելի օգտակար է, մանաւանդ առաւօտեան կանուխ ժամերուն . սա կը բանայ հիւանդի ախորժակն և մարսողական գործարանն ոյժ և կենդանութիւն կառնու :

ՅՕԳՈՒԱԾ Բ.

ՀԱԳՈՒՍՏ

Հագուստի տեսակներն այնքան շատ ու օրքան զօր բաղմանալու վրայ են՝ որ անոնց գործածութեանը մասին շատ քիչ բան կրնանք ըսել, սա-

կայն՝ դիտենք թէ հազուստի գլխաւոր նպատակն երկուք է . առօջին՝ օգին ցուրտ կամ տաք ազդեցութենէն մարմինն պահել, երկրորդն՝ զարդարել զմարդ :

Մեր հազուստներն գլխաւորապէս երեք տարբեր նիւթերէ շինուած են, բամպակ, քթան և բուրդ :

Ասոնց առօջին երկուքը՝ տաք, և երրորդն՝ ցուրտ կլիմայից բնակչաց գործածութեանը համար է :

Քթանն ամենազով պահող նիւթն է, և հետեւապէս շատ տաք կլիմայից առկա կը գործածուի, քանզի շատ քրտինք կը ծծէ, ուստի՝ սաստիկ քրտնող անձանց համար աղէկ չէ մարմնոյ վրայէ քթանեղէն հագնիլ . որովհետեւ ծծած քրտինքն պաղելով կրնայ թացութիւնն մտնող ազդել որ խիտա տհաճելի է և վնասակար, մանաւանդ անոնց որք յօդացաւութեան կամ մկանացաւոյ արդէն ենթակայ են . այսպիսիք լաւ կրնեն եթէ փոխան քթանեղէնի՝ բամպակեղէն գործածեն, անմիջապէս մարմնոյ վրայէ :

Հազուստի չափին նկատմամբ մասնաւոր կանոն մը տալն դժուարին է, կան մարդիկ որ բնականապէս առաւել տաք կամ պաղ կը սիրեն, և որոց բնութեան համաձայն ալ պէտք է յարմարցուի հազուստին :

Անհիմն ու սխալ է այն գաղափարն թէ՛ պէտք ենք ինքզինքնիս տակաւ առ տակաւ վարժեցունել թէ տաք և թէ ցուրտ օգերու . որպէս զի չընեղուինք : Մարդս կարող չէ այս մասին ուրիշնե-

բու օրինակացն հետեւել, զի կազմութիւնք կը տարբերին, և հետեւապէս հիւսիսային ցուրտ քամի մը կընայ միոյն հիւանդութեան պատճառ ըլլալ, մինչ ուրիշի մը փոխան վնասակար ազդեցութեան օգտակար ըլլալ. ուստի իւրաքանչիւր անհատ իւր կազմութեան ընդունակութիւնն ՚ի հաշիւ առնելով պարտ է հագուել, և ոչ այլոց սովորութիւնն :

Ունակութիւնն՝ անտարակոյս, մեծապէս ազդեցութիւն ունի մեր կազմութեանց վրայ. զոր օրինակ, եթէ մէկ մը ՚ի մանկութենէ գլուխն բաց պահել սովոր է, և ուրիշ մ'ալ նորա հակառակն, անշուշտ այս վերջինն առաջինէն առաւել պաղի ենթակայ կըլլայ՝ երբ գլուխն բաց ուշ ատեն բացթեայ տեղ գտնուելու ըլլայ, վասնորոյ թո՛ղ իւրաքանչիւր անհատ իւր մտքովնն այլոց սովորութեան չը յարմարեցունէ, (որպէս կընեն Չինացիք) այլ պարտ է, նախ՝ իւր անձին առողջութիւնն ՚ի նկատի առնել, և ապա զնորասիրութիւնն :

Փոփոխական կլիմայից տակ ապրողք պէտք չեն օգին երբեմնակի ջերմութեան խարուելով բարակ հագուստներ հագնիլ. քանզի այս պատճառաւ շատ անգամ կը վնասուին, այլ միշտ պարտ են յիշել թէ լուսագոյն է քիչ մը աւելի տաք ըլլալ քան թէ պող. որպէս զի օդոյն անմիջական փոփոխութենէ ծագած հետեւանքներէ ազատ ըլլան :

299-555975



Զ Ո Ւ Ր

Զուրն՝ մարդուս կենսական պիտոյից գլխաւորն է, և անկասկածելի եղանակաւ ապացուցեալ է թէ՛ մարդս կրնայ առաւել առանց հացի ապրիլ քան առանց ջրոյ : Զրոյ օգտակարութիւնք բազում են, բայց մենք նորա երեք գլխաւորներն աստ յիշել բաւ կը համարիմք :

Առաջինն է՝ Մաքրութիւն : Բ. Զախութիւն և Գ. Զօրութիւն կամ առողջութիւն :

ՄԱՔՐՈՒԹԻՒՆ . — Մաքրութիւնը՝ առողջապահական օրինաց գլխաւորաց մին է . մարդս պարտ է գէթ 24 ժամն անգամ մը լուացուիլ ըստ առողջապահական օրինաց, սակայն այս կանոնն ահաոտարակ զանց առնուած ըլլալով՝ վրիսան 24 ժամու՝ քսան և չորս օրն մի անգամ՝ լուացուողք հաղուագիւտ են :

Ոմանք՝ պաղ ջրէն խիստ կերկնջին, և կարծեն որ եթէ երբէք պաղ ջրով լուացուելու ըլլան անդարմանելի ախտի ենթակայ կըլլան, այնպիսիք կարի սխալանաց մէջ ինկած են :

Պաղ ջրով լուացումն՝ յաւէտ օգտակար է քան ֆրասակար, եթէ պէտք եղած զգուշութիւնք ըլլելին, զոր օրինակ՝ դոց և չափաւորապէս տաք տեղ մը լուանան, և յետ լուացման մարմիննին լաւ մը

չորցունեն : Այս կերպ լուացման՝ ամէն հասակի ան-
ձինք կը կարօտին , գէթ տասն կամ տասն և հինգ
օրն մի անգամ , մանաւանդ մանկունք որոց մարմ-
նոյ արագ աճման ժամանակն է :

Տղայք յոյժ սիրելի արարածներ են ընտանեաց
մէջ երբ մտքուր են , բայց ընդհակառակն խիստ
դժուելի կըլլան երբ իրենց գէժքն աղտեղութեամբ
լի ըլլայ : Երանի՞ թէ ծնողք իւրեանց զուակացն
մտքուր պահուելու միջոցներն ունենալով կարենա-
յին վերցունել աղտեղութեանց հետեւանքն եղող
բազմաթիւ տկարութիւնք , զոր տգիտութիւնն այն-
պէս կը կարծէ թէ՛ Ամենաբարին իրենց վրայ բեռ-
նաւորած է :

ՁՈՎՈՒԹԻՒՆ . — Զովու թեան համար գործած-
ուած նիւթոց մէջ պաղ ջրէն անվնասն և լաւա-
գոյնն չի կայ , հետեւապէս մտրդիկ սովոր են պաղ
ջրոց ալիերն գիւել իրենց պապակն աջնելու համար :

Այս յոյժ օգտակար նիւթոց բազում անգամ
անխոհեմ գործածութեամբն զանազան չարիք
յառաջ կուգան : Քանինե՛ր հոգնած և քրտնած
պաղ կամ ձիւնախառն ջուր խմելով մինչ գերեզ-
ման իջած են , վասնորոյ պարտ է զգուշանալ և
անխոհեմութեամբ չտրտար չի գործածել բնու-
թեան սցո մեծ պարգեւն :

Ը Մ Պ Ե Լ Ի Ք

Բնական ըմպելիքն ջուրն է, և որպէս արդէն յիշեցինք. Վիսիայն ծարուեալին պապակն յագեցնելու նիւթն. չիկայ ուրիշ հեղուկ մը որ կարենայ ջրոյ նման մարդուս և մինչեւ իսկ անասնոց պապակն յագեցունել:

Մաքուր ջուրն՝ ոչ գոյն ունի և ոչ համ, և ոչ ալ հոտ: Մարդս ամէն ատեն ջուր կլնայ խմել բացի մարմնոյն սաստիկ տաք եղած ժամանակն (ոչ թէ հիւանդութեան ժամանակ): Ոմանք կը կարծեն թէ կերակրոց ատեն ջուր խմելն փնասակար է. սակայն այս կարծիք բոլորովին սխալ է մանաւանդ երբ չափաւոր կը խմուի. անտարակոյս ամէն բանի մէջ չափազանցութիւնն կը փնասեղմարդ: Եթէ մէկը սաստիկ ջերմութեան մէջ տշխատութեամբ քրտնելու ըլլայ՝ յայնժամ իւր ծարուն առանց որ և է փնասու անցնելու համար՝ լաւ է քիչ մը լեմն կամ ուշուշ և կամ գինի խառնել ջրոյ հետ, և եթէ մաքուր ջուր գանկն գժուարին է, լաւ է անձրեւի ջուր խմել, բայց եթէ հանդարտ լճերու ջրէն խմել պարտաւորեալ է, յայնժամ պէտք է լաթէ մը զտել և թողուլ ժամաւակ մը որ հանդչի, և եթէ կարելի է մի քանի կաթիլ լեմն կամ քացախ խառնել ջրոյ մէջ:

ԾՈՎԱՅԻՆ ՋՐՈՅ ԲԱՂՆԻՔ

Ծովային բաղնիքն՝ այնչափ ընդհանրացած է այժմ, մանաւանդ ծովեզերեայ տեղերն, որ փոխանակ իբր առողջութեան միջոց գործածելու, մի դուարճութիւն եղած է :

Ծովային բաղնիքն՝ որ երբեմն ջրային տկարութեանց օգտակար եղած է, բազում անգամ բազմատեսակ ախտերու պատճառ կրկայ մանաւանդ կանանց դաշտանի ժամանակներն : Անուրանալի է նորա օգտակարութիւնն՝ իբր զօրացուցիչ ընդհանուր կազմութեան, եթէ լուացման ժամանակ ծովու մեղմ հովէն խարուելով իբր զուարճութիւն չգրապին : Քրտնած ստեն պէտք չէ ծով մտնել, մանաւանդ սաստիկ հողմոյ ժամանակ . ոչ ալ մարմնոյն չափազանց պաղ կամ տաք եղած ատենն, նաեւ լուացմանէ յետոյ կարեւոր է քիչ մը շրջագայիլ :

Ծով մտնելու յարմարագոյն ժամանակն է երեկոյին . և միշտ կերակուրէ երկու ժամ առաջ կամ վերջն, նոյնպէս առաւօտներն . և պէտք չէ ջրոյ մէջ հանդարտ կենալ . ոչ ալ չափազանց հողնիլ . միշտ պատսպարեալ տեղ մտնելն լուադոյն է քան բաց տեղ . և պէտք է անմիջապէս բոլոր մարմինն թրջել :

Շնչառութեան դժուարութիւն, եւս Սրտի տկարութիւն ունեցող անձինք, առանց բժշկի մը խորհրդոյն աղէկ չէ որ ծովային բաղնիք մտնեն :

ՅՕԴՈՒԱՅ Զ.

Տ Ա Ի Ծ

Տուչն՝ անձրեւանման լուացումն է, և անգամ մը սովորողին համար յոյժ զուարճայի և հաճոյական ջրարութական դարման մ'է :

Տուչն՝ առ հասարակ գլխոյ նեղութեանց և ջղային տկարութեանց համար կը գործածուի, և օրն մէկ կամ երկու անգամ կրնայ առնել հիւանդ մը, բայց պարտ է միշտ զգուշանալ և կուշտ չըլլալ. նաեւ կարեւոր է դիտել որ տեղացած ջուրն ոչ ուղղակի ստամոքսի վրայ լինայ և ոչ ալ կուրծքին, որ չըլլայ թէ վնասէ :

Տուչէն վերջը թեթեւ մարմնավարժութիւնն առաւել օգտակար կրնէ զայն :

ՅՕԴՈՒԱՅ Է.

ՈՏԻՑ ԲԱՂՆԻՔ

Տնական և հասարակօրէն դիտցուած բան մ'է իբր անմիջական դարման ժամանակաւոր գլխոյ ցաւոց և այլն : Տաք ջրոյ բաղնիքն՝ շատ անգամ հարկաւոր կըլլայ, սակայն՝ եթէ միայն ոտքերն տաք ջրոյ մէջ կը գրուի՝ առանց գլխուն պաղ ջուր դը-

ներու (Թրջած լաթ մը) . այն ատեն բնական է որ անկակալեալ օգուտն յառաջ չի գար :

Ոտից բազնիքն՝ արեան շրջանի դրդում կուտայ . և անշուշտ ուր որ տաք է՝ ասոր դործածութենէ յետոյ կը զովանայ , և ընդհակառակն ուր որ պաղ է կը տաքնայ ժամանակ մը , և դարձեալ իւր բնական վիճակին կը վերադառնայ : Այս պատճառաւ զլիսուն պաղ ջուր դնելն կարեւոր է , որպէս զի ի վերջոյ չի տաքնայ :



ԳԼՈՒԽ Գ.



ԱԽՏԱԲԱՆՈՒԹԻՒՆ



ԱԽՏԵՐՈՒ ԳԼԽԱՒՈՐ ՆՇԱՆՆԵՐՆ

Գործնական բժշկութիւնն՝ երկու գլխաւոր հարցում ունի , Ա. թէ՛ ինչ ունի իւր հիւանդն , և Բ. ի՞նչպէս կարող է դարմանել զայն :

Առաջին հարցման պատասխանելու համար անհրաժեշտ է գիտնալ՝ Բնախօսութիւն և Ախտաբանութիւն :

Երկրորդ հարցման համար դեղային նիւթոց յատկութիւնն պարտինք գիտնալ , այսինքն՝ Դեղաբանութիւն :

Այս կարեւոր գիտութիւններն ձեռք բերելու համար եւս անհրաժեշտ է ժամանակ և աշխատութիւն, ունինդրութիւն մասնաւոր դասախօսութեանց, և եթէ կարելի է դորձնականապէս դիտել և ուսանիլ զանոնք հիւանդանոցաց և այլ տեղեաց մէջ, որպէս զի կարող ըլլայ ոք իբր գործնական բժիշկ իւր հիւանդաց լաւ դարման ընել:

Սակայն՝ կան կարգ մը անձինք որք այս մասնաւոր նպատակէն հեռի ըլլալով, (ինչպէս ծնողք և ուսուցիչք) բաւ կը համարին չափաւոր գիտութիւն մ'ունենալ, որ ի հարկին ուր ան իջական բժիշկ հնար չէ գտնուիլ, ժամանակաւոր դարման մը կարենան ընել: Այս կարգի անձանց համար պէտք է այնպիսի հրահանգ մը որ ի հարկին կարենան անմիջական օգուտ մ'ընել հիւանդի:

Վասն որոյ հետեւեալ համառօտ տեղեկութիւնք տալ կարեւոր կը համարիմ, յօգուտ այս կարգի անձանց և որպէս զի առաւել դիւրմբունելի ըլլայ ընթերցողաց, հետեւեալ բաժանումն կընեմ, զորոնք պարտ են աղէկ դիտել:

Ա. Զերմութիւն, երբեմնակի՞ է թէ շարունակ և կամ ընդմիջեալ:

Բ. Հիւանդն քրտինք ունի՞ թէ ոչ:

Գ. Մէզն կարմրագոյն է կամ դեղնագոյն, կանոնաւոր է թէ քիչ: (կանոնաւոր չափն է 250-400 տրամ 24 ժամն):

Դ. Ըղեղի վիճակն պայծա՞ռ է թէ թմրած, և ա: ին

- Ե. Հիւանդի մտաւորական վիճակն , գործն ու
աշխատութիւնն :
- Զ. Ստամբուի վիճակն , ախորժակն՝ ծարաւն , ևն :
- Է. Աչաց երեւոյթն , մորթի գոյն :
- Ը. Գիշերուան քունն , քնացած ժամանակի վի-
ճակն :
- Թ. Յաւն , նորա տեղն , տեւողութիւնն , տեսակն
ու ժամանակն :
- Ժ. Կուրծքի վիճակն , հաղը , ելած խուխն (դաւ-
կո՞) :
- ժԱ. Ողնայարի ոսկրներուն ձեւն , և (եթէ կայ) ցաւն :
- ժԲ. Ախտի հնու թիւնն , ժառանգական է թէ ոչ
հիւանդի հասակն բնութիւնն և սեռն , արու ,
է թէ էգ , մանուկ , չափահաս թէ ծեր , և այլն :

ՅՕԴՈՒԱՆՆ Ա.

ՋԵՐՄՈՒԹԻՒՆ

Ջերմն՝ այնպիսի զգալի նշան մի է , որ ս և է
մէկն դիւրաւ կրնայ ըսել Ջերմ՝ ունենալն կամ ոչ :
Ջերմն զանազան վիճակ ու աստիճաններ ու-
նի , զոր օրինակ Մարմնոյ տաքութիւն և չորութիւն

որ ընդհանրապէս դող կամ սրսրուքէ մը վերջն կուգայ . յետոյ երակն՝ ուժգին , բերանն՝ չոր , լեզուն ճերմակ կամ դեղնագոյն հիւթով մը ծածկեալ կըլլայ և այլն , որ ջերմոյ առաջին վիճակն կը կոչուի . և եթէ չի գտրմանուի , կանցնի երկրորդ վիճակին , այսինքն . Սաստիկ տաքութիւն , այտերու և մարթի կարմրութիւն , երբեմն գլխոյ պոտոյտ կամ ցաւ և սրտի բարախումն . և այլն :

Երբեմն վերոյիշեալ նշաններէ ոմանք կը պակսին , մանաւանդ թեթեւ տեսակաց մէջ . և եթէ աղէկնալու վրայ է՝ հետզհետէ քրտինք կուգայ հիւսնդի վրայ , որով մարմինն զովանալով բազկերակն եւս կը կակղանայ կամ կը մեղմանայ :

Չափահաս անձինք հասարակ հարբիսոյ ատեն ունեցած ջերմի ժամանակ ինքզինքնին չեն կորսընցուներ , մինչդեռ մանկունք և տղայք բազում անգամ բոլորովին անդգայ վիճակի մէջ կիյնան , մանաւանդ գիշերներն :

Պարզ ջերմի ատեն , վերոյիշեալ նշանք քսան և չորս ժամու մէջ ի յայտ կուգան :

Անմիջական ջերմն՝ ներքին գործարանաց բորբոքման նշանն է :

Դողէ վերջն՝ շարունակական տաքութիւնն՝ ջրղային կազմութեան ներքին մասանց մէջ անկարգութեան նշանն է :

Դողէ վերջն կիդիչ ջերմ և սաստիկ ուժաթափ քրտինք՝ թոքային տկարութեան նշանն է , որ ընդհանրապէս քսան և չորս ժամն անգամ մը կուգայ , որ և տղայոց պատահած ժամանակ շատ անգամ բննշան բանի մը տեղ կը դրուի :

Եթէ տաք բնակարանի մը մէջ դող կսկսի ուկորներու անհանգստութեամբ, ձեռքերն և տոքերն պաղ, ըզունքներն կապոյտ՝ ջրոյ պապակ, սրտի բարախումն, գլխոյ պոռոյտ և կոնակի ցաւ անտարակոյս Տենդի նշան է :

Ծարաւն՝ մարմնոյ խոնաւութիւն յառաջ բերելու անկարողութեան պատճառաւն է, հետեւապէս հիւանդ մը որքան քիչ քրտնելու որ ըլլայ այնքան առաւել կըլլայ իւր ծարաւն :

Հիւանդի տոն նեղութիւնն բառնալու համար պարտ է զովութիւն արտադրող արհեստական միջոցներ գործածել. որոց բուազոյնն է պաղ ջուր տալն, և չի խնայել զայն բնաւ : Բոլորովին անգըթութիւնն է պապակող հիւանդին պաղ ջուրը արդիւղին, մինչ փոխանակ մնասու օգուտ յառաջ բերելուն երբէք կասկած չիկայ :

Հիւանդի բազկերակաց բաղխումն ջերմի առեւն նկատողութեան առնելու կարեւոր մի կէտ է :

Ընդհանրապէս չափահաս անձանց երակն մէկ րոպէն 65-75 է, թէեւ անսխալելի մի օրէնք չէ, քանզի կան չափահաս և ութեղ անձինք, որոց բազկերակի բաղխումն մինչ 45 կամ առաւել քիչ կըլլան, որպէս կըսուի Մեծն Նարոյէօնի համար թէ՛ 40 ի մօտ էր. և ընդհակառակն կան անանկներ ալ որ մինչ 85-90 կըլլայ :

Մանր տղայոց կամ մանկանց բաղխումն առելի արագ կըլլայ, և միջին թիւն է 100-120. և երեք տարեկան տղու մը բազկերակն 90-95 :

Օգի ջերմութիւնը, արագ շնչառութիւնն, և

մարտոյութիւնն բարախումն կաւելցնէ , և ընդհակառակն քունն և պառկիլն կը քիչցունէ :

Ջերմի ատեն բաղխումն կը տարբերի , որոց գլխաւորներն աստ կը դնեմք :

Ա. Արագ , ուժգին , լեցուն , կոպտացող որք նշան են Ջերմի ուժգնութեան , նորութեան և բորբոքման վիճակացն :

Բ. Կամաց , լեցուն , և ծանր դանդաղ բաղկերակն մարմնոյ անզօր վիճակն կը ցըցունէ :

Գ. Արագ , և բարակ բաղկերակն տկարութեան նշան է որ շատ անդամ , արագ , ուժգին և լեցուն բաղկերակէն վերջը կը լլայ :

Դ. Ընդմիջեալ բաղկերակն՝ Սրտի տկարութեան նշան է , և եթէ նոր հիւանդութենէ վերջն պատահի՝ կենդանական զօրութեան տկարութիւնը կը ցըցունէ .

Ե. Բարակ և դիւրադադրելի երակն՝ մահամերձ ըլլալուն նշան է :

Զ. Անհաւասար և անկանոն բաղկերակն Ջղալին տկարութիւն կը ցըցունէ և ընդհանուր է կանանց :

Է. Կամաց անկանոն և ընդմիջեալ բաղկերակն Ըղեղի դործունէութեան տկարութիւնն կը նշանակէ :

Ը. Անմիջական փոփոխումն , արագէ՛ կամաց , և

կամայէ տրագ, գլխոյ հիւանդութեան ժամանակ, գէշ վիճակ կը ցըցունէ :

Թ. Միօրինակ բարձրանալն՝ հիւանդութեան սաստկանալուն նշան է :

Ժ. Զերմի ատեն փոփոխականութիւնն՝ Զղային կազմութեան տկարութեանը ապացոյց է, և չէ ազէկ նշան .

Վերոյիշեալներէ զատ կան բազում այլ և այլ տեսակներ եւս, զորոնք վարժ ձեռք մը միայն կարող է որոշել :

ՅՕԴՈՒԱՅ Բ.

Յ Ա Ի

Յաւն՝ կարեւոր նշաններէ մին է, և երբ ջերմութեան հետ կըլլայ, եղած տեղւոյն բորբոքեալ վիճակն կը ցըցունէ, և ուստի կարեւոր է,

Ա. Յաւոց բուն իսկ տեղն ստուգել, որպէս զի կարող ըլլանք գիտնալ թէ ի՞նչ մասնաւոր գործարանաց ազգած է, և ըստ այնմ դարմանել զհիւանդն, զոր օրինակ, Թոքերն, լեարդըն կամ սիրտն .

Բ. Յաւոց եղանակն ու սատիճանն պարտ է ըստ ստուգել, Ուժգին, սաստիկ, երբեմնակի, թէ սներնդ հատ .

- Գ. Եթէ մասններու բարբոքումն ըլլայ, Սուր ցառուռ, տաքութիւն և կարմրութիւն գլխաւոր նշաններն են, որ առաջին անգամ կը տեսնենք.
- Դ. Եթէ ցաւն՝ փոքր մասններու մէջ ըլլայ, յայնժամ, Ուռ, կարմրութիւն, կոպտացող ցաւ կզգայ ուռին մէջ:
- Ե. Թոքերու հիւանդութիւնն՝ Շնչառութեան դժուարութիւն, ցաւ, և հազ կունենայ:
- Զ. Եթէ թոքերու նեղութիւնն օդոյ խողովակաց մէջ է, ամէն շնչառութեան ժամանակ՝ կարծես սուր դարձի մը կը մզեն նոյն տեղն.
- Է. Կուշտէն՝ մինչ կուրծքի ոսկրներն կամ ողներն եզող սուր ցաւն, աջ թեւոյ թմրութիւն չոր հազ և կարճ շունչ, Լեարդի բորբոքման նշան է (վրայի մասն): Բայց եթէ ցաւն այնչափ սաստիկ չէ, և մարմինը գեղնապոյն է այն ասէն հակառակ կողման հիւանդութեան նշան է:
- Ը. Սրտի մօտաւոր (ձախ կողմն) եղած ցաւն՝ նրուազումն, և ոտից ու ձեռաց պայփին՝ և արագ կակուղ անկանոն բազկերակն՝ Սրտի բորբոքման կամ տկարութեան նշան է:
- Թ. Եթէ ստամոքսի մօտ՝ առջնտող, այրող ցաւ, ու երբեմն ուռ, տաքութիւն, փսխունք, պապակ՝ և լեզուին մէջ տեղն ճերմակ ու բոլորտիքն կարմրապոյն ըլլալով հանդերձ, պրն.

դու թիւն և երբեմնակի փորհար ըլլայ, Ստամբուլի (ներքին մաշիկի) բարբոքումն կը ցըցունէ .

Ժ. Անմիջական՝ մերթ ընդ մերթ եղող ցաւն՝ առանց սաստիկ տաքութեան, Ջղային կանուանուի . բայց երբ տաքութիւն, ուռեցք և կարմրութիւն եւս ըլլայ, յայնժամ՝ Ջղային բարբոքման նշան է .

Նաեւ կան տեղեր ուր ցաւն բնականապէս սաստիկ կը ըլլայ . զոր օրինակ՝

Սչք, ակուայ, ականջ, որ կը մաշեցնէ զՏիւանդն .

Եթէ մասնաւոր տեղ մը երբեմնակի ցաւ պատահի՝ նոյն տեղւոյն գործարանի տկարութեան նշան է .

Եթէ ցաւ մը անմիջապէս աներեւութանայ, և այլ եւս չզգայ . նոյն տեղւոյ մեռած ըլլալուն կամ մահամերձ ըլլալուն նշան է, որպէս կը պատահի կտորած անդամոց .

Մարդիկ կան որ բնականապէս ուրիշներէն առաւել ցաւոց կը դիմանան և համբերութեամբ կը տանին . այսպիսի պարագայից տակ հարկ է տկարաց բնութիւնն գիտնալ, որպէս զի ցաւոց սաստուկութիւնն ուղիղ կշռելու կարող ըլլանք :

Կ Կ Ղ Ա Ն Ք

Կկղանք՝ կամ ի մարմնոյ դուրս արտաքսեալ նիւթերն՝ երկու միջոցաւ կը վանին, մին քրտանց՝ մարմնոյն ծակոտիկներէն, և միւսն աղեաց կամ ներքին գործարանաց միջոցաւ, այսինքն՝ մէզի կամ Աղբի :

ՔՐՏԻՆՔ. — Առողջ անձինք՝ թիչ կամ շատ կը քրտնին՝, քրտնեն կենդանական գործողութիւն մ'է, որով կերակուրն մարմնոյ ամէն գործարանաց կերպով իւր կը մատակարարուի :

Առողջ անձանց քրտինքն՝ ոչ հոտ և ոչ գոյն ունի, այլ փոքր ինչ աղի համ, բայց զանազան պատճառանօք միշտ կը տարբերին, որպէս խոնաւութենէ և մարմնոյ ներքին անմարբութենէ, որ կարեւոր գիտելիքներ են :

Պարզ ջերմի ժամանակ քրտինքն տարութեան սասակութեանը համեմատ կըլլայ, կան հիւանդներ որ օրն երկու կամ չերեք անգամ սոստիկ կը քրտնին, և որքան քրտնին նոյնչափ ջերմն կը տըկարանայ, և հիւանդն լուազոյն կզգայ :

Ջերմի ժամանակ երբ հիւանդն չի քրտնիր, պէտք է պաղ ջուր խոցունել, որքան առատ որ կարելի է, միայն պարտ է լաւ ծածկել զհիւանդն : Ջերմ սխելէ մինչ քսան և չորս ժամ, հիւանդըն եթէ կարելի է պէտք է քրտնցնել, իսկ եթէ

չի քրտնի՝ յայտնի նշան է թէ գլխոյ և կամ որովայնոյ Զերմի ենթակայ եղած է . (թիֆոյ) կամ հաստ, (թայֆլը) :

Գիշերային քրտինքն՝ տկար կամ անզօրութեան նշան է . և եթէ դող, ջերմութիւն եւս ըլլայ, Ծիւրական ախտի յայտնի նշաններ են . մանաւանդ ճերք հազ, ցաւ և ծիւրումն ևայլն, ունենայ հիւանդն :

Մանաւոր կամ յատուկ տեղական քրտինքն՝ նոյն տեղոյն մերձ գտնուող գործարանաց անկարգութիւն կը ցըցունէ :

Քրտինքի հոտն, դոյնն, տաք կամ պաղ ըլլալն կարեւոր է դիտել, տկարութեան կամ ախտի աստիճանն որոշելու համար, քանզի՝ շուտ և չափազանց քրտինքն . ընդհանուր կազմութեան տկարութեանը նշան է :

ՅՕԴՈՒԱԾ Դ.

ԿԿԴԱՆՔ Ա.Դ.ԵԱՅ

Ստորական պնդութիւնն՝ Լեարդի անկարգութենէ յառաջ կուգայ : Նաեւ կրնայ ընդհանուր կազմութեան տկար վիճակն ցըցունել :

Ա. Աղեաց վերջին մասի բորբոքում ունեցողք, ընդհանրապէս պնդութիւն կուենան :

Բ. Կանանչ կամ սեւագոյն աղբն՝ մաղձայ գործարանի անկարգութիւնն կը նշանակէ :

Գ. Կուանման աղբն՝ մաղձայ նուազման նշան է :

Դ. Գէշ հոտն՝ մաղձայ գէշութեան և ընդհանուր կազմութեան մէջ խանգարման նշան է :

Մ է Զ

Մէզն՝ մի այլ կարեւոր կկղանք է, որոյ յատկութիւնը պէտք է զննել, և իւր քանակութիւնը որպէս նաեւ իր գոյնն պէտք է դիտողութեան առնել:

- Ա. Զերմի ատեն ընդհանրապէս մէզն կարմրագոյն և շատ անգամ՝ նման փոշի մը իւր յատակն կիջնէ:
- Բ. Դեղնագոյն մէզն՝ մաղձայնութեան նշան է:
- Գ. Մէզի անուշութիւնն և շատութիւնն՝ երիկամանց տկարութիւն կը նշանակէ:
- Դ. Յաճախ և ջրային մէզն՝ ջրութեան անկարգութիւն կը ցըցունէ:
- Ե. Զղային կանայք առ հասարակ յաճախ կմիզեն:
- Զ. Որովայնային ջերմի ատեն՝ մէզն խիստ թթու (կարմրագոյն) կըլլայ:
- Է. Դեղնութեան ժամանակ, մաղձայ նշանն մէզի մէջ կը նշմարուի:

Այլ և այլ բազում տկարութեանց ժամանակ քանազան նիւթեր և ըստ այնմ գոյներ եւս մէզի մէջ կը տեսնուին, զորանք յիշելն գրքոյկիս համառութիւնն չի ներեր:

ՎԻՃԱԿ ԸՂԵՂԻ ԵՒ ԶՂԱՅԻՆ ԴԻՈՒԹԵԱՆ

- Ա. Գլխոյ պտոյտն՝ արեան անմիջական գէպ ի գըլուխն հոսելէ կրնայ պատճառիւ, որ շուտ կանցնի, բայց եթէ կրկնուելու ըլլայ և բաղկերակն անկանոն, յայնժամ՝ ըղեղի անկարգութիւն կը նշանակէ:
- Բ. Եթէ գլխոյ պտոյտն թեթեւ ըլլայ՝ ընդհանուր ջղային գրութեան տկարութիւնն և արեան անկանոն շրջան ընելն կը ցրցունէ:
- Գ. Գլխոյ պտոյտն՝ ստամբսի խանկարգ և խառնակ վիճակն՝ կը յայտնէ շատ անգամ:
- Դ. Լեարդի և սրտի տկարութիւն ունեցողք գըլխոյ պտոյտի եւս ենթակայ կըլլան:
- Ե. Զառանցումն (սայրդլամադ) ներքին կազմութեան անկարգութեան կամ խանգարմանն նշան է:
- Զ. Զառանցումն և գլխոյ ցաւ, (թայֆըզ) որովայնային շերտ կը ցրցունէ,
- Է. Զառանցումն՝ ամէն տեսակ սաստիկ ցաւոց ժամանակ մինչև և իսկ ճճիներէ կրնայ պատճառիւ: Կանայք և մանր տղայք աւելի ենթակայ են, և ոչինչ ցաւ օր զառանցման վիճակի մէջ կիսան. վասնորոյ պէտք է գիտնալ և չի շուարիլ այսպիսի պարագայից տակ:

ՅՕԴՈՒԱԾ Է.

ԿԾԿՈՒՄՆ (Ի-ԿԶ)

Կծկումն՝ որ ջղերու չափազանց քաշուիլն կամ նոցա հաւասարակշռութեան կորուստն կը նշանակէ բազմատեսակ պատճառներէ կրնայ յառաջ գալ. որոնցմէ մի քանին հոս կը դնեմք :

- Ա. Կծկումն պարզ ջղային տկարութեան նշան մը կրնայ ըլլալ, որպէս հասարակօրէն ջղային կանայք կուենեան :
- Բ. Ճճի ունեցող և ատամնահատութեան մերձեզող մանկունք կրնան «բազճ» ունենալ եւս :
- Գ. Կրնայ վախէ պատճառիլ, ինչպէս որ հասարակօրէն քիչ մը պաղ ջուր կը սրսկենք նոցա երեսն :
- Դ. Կծկումն երբեմն գլխոյ ջերմի (ֆեբրէ «էրէդու») գալուստն կը գուշակէ :
- Ե. Յղայոց կծկումն՝ ըղերդին վրայ արեան ճնշումն կը նշանակէ, և պէտք է առանց ժամանակի կորստեան դարմանել :
- Զ. Որ և է արտաքին վտանք մը. զոր օրինակ, Հարուած՝ և կամ բարձր տեղէ անկում մը, կրնայ թեթեւ կամ զօրաւոր կծկումն պատճառել: Կան նաեւ այլ և այլ պատճառներ, բայց այսքանս բաւ է :

ԿԻՐՔ ԵՒ ՎԻՃԱԿ ՄՅՍՑ

- Ա. Մեղամաղձոտութիւնն՝ երբեմն Սրտի տկարութիւն կը ցըցունէ :
Մեղամաղձոտանձինք՝ իրենց վիճակաց վրայ միշտ անորոշ ըլլալով տկարութիւննին զիրենք գրեթէ գերի ըրած է :
- Բ. Մտաց անկարգ վիճակն՝ երբեմն Ըղեղի տկարութիւն կը ցըցունէ :
- Գ. Երկարատեւ ջղային անկարգութիւնք, տակաւ առ տակաւ կարողութիւններն նուաղեցընելով մինչեւ իսկ Տխմար կընեն զմարդ :
- Դ. Արեւահարութիւնն՝ երբեմն մարդս յիշողութեան կարողութենէ կը զրկէ :
- Ե. Երկարատեւ գիճութեան գերի եզող երիտասարդք՝ թէ արու և կամ թէ էգ՝ մտաւոր խանգարման ենթակայ կըլլան, որպէս նաեւ Սրտի տկարութեան, և երբեմն զո՛հ Ծիւրական ախտի :

ՄՏՍՄՈՒՔՍ ԵՒ ՎԻՃԱԿ ՆՈՐԱ

Ստամոքսի վիճակն լաւ հասկնալու համար պէտք է գիտել լեղուն, բերնի համո, ջճարան,

փոխանք ունենալն, նաեւ տարբեր կերակրոց ը-
րած ազդեցութիւններն :

Ա. Ազտոտ լեզուն՝ ընդհանրապէս (մանաւանդ ա-
ռաւօտներն) ստամոքսի ջրային գրգռումն կը
յայտնէ :

Բ. Զերմի ատեն լեզուն քիչ կամ շատ հիւթօժ
ծածկեալ կըլլայ, եթէ թանձր ներմակ կամ
դեղնագոյն է, ստամոքսի նեղութեան յայտ-
նի նշան մ'է :

Գ. Չոր՝ նեղքուած լեզուն, նմանապէս մի այլ
նշան է ստամոքսի նեղութեան :

Դ. Թանձր սեւագոյն ծածկեալ լեզուն՝ տոջորիչ
ջերմութեամբ և չորութեամբ, գլխոյ ջերմի
նշան է, և ըլիցի անկարգութիւն կը ցըցունէ :

Ե. Զերմի ժամանակ երբեմնակի լեզուի խոնա-
ւութիւնն՝ լաւ նշան մի է :

Զ. Դեղնագոյն լեզուն՝ ընդհանուր կազմութեան
տկարութիւնն կը նշանակէ :

Է. Պաղ լեզուն՝ սաստիկ տկարութիւն, և կեն-
դանական մասի անգործութիւնն կը յայտ-
նէ, որպէս կը տեսնուի Հնտախտի ժամանակ :

ՅՕԴՈՒՍՅ Ժ.

ԱՆՈՐԺԱԿ ԵՒ ՆՍՐԱՒ

Ա. Չափազանց ախորժակն՝ ստամոքսի ջրաց առ-
կարութեան նշան է :

- Բ. Անհաղութիւնն՝ տղայոց ճճի ունեհալնուն մի ապացոյցն է :
- Գ. Տկար կանայք և տղայք՝ շատ անգամ կաւիճ, ածուխ, աճառ և այլն ուտելու անճոռնի ախորժակն կունենան :
- Դ. Տկարք՝ երբեմն մասնաւոր կերակրոյ մը յատուկ իղձ կունենան, որ թէպէտ ինքնին վրնասակար, բայց ուտելով անմեկնելի կերպով տուողջացած են :

ՅՊԴՈՒԱԾ ԺԱ.

Ծ Ա Ր Ա Ի

Ծարաւն՝ ջերմի ատեն ընդհանուր նշան մի է, աակայն առանց ջերմի եւս սոյն նեղութիւնը կըրնայ ըլլալ :

Ա. Գէր ըլլալու ընդունակ եղող անձինք՝ շատ ջուր կը խմեն. ջուրն այնպիսեաց համար սրնունգ և կենդանական տուքութիւնը չափաւորելու օգնական մ'է :

Բ. Հիւանդութեան ժամանակ ծարաւն կը տարբերի, ոմանք ջրոյ, իսկ այլք լե՛ծնո՞ր կամ մի տարբեր օշարակ խմելու կը պապակին :

Գ. Տենդի և աղեաց բորբոքման մէջ՝ ծարաւն խիստ է, և բնութեան սոյն պահանջն արդիւլեւ խոհեմութիւն չէ :

ՅՕԴՈՒԱՆԾ ԺԲ.

Ճ Ա Շ Ա Կ

- Ա. Բերնի ճաշակը կորսնցունենլն՝ ստամուքսի գրգռուումն կը յայտնէ, որով ամենայն ինչ անհամ կերեւնայ :
- Բ. Լեղի համն՝ մաղձային անկարգութեան նշան է :
- Գ. Թթու համն՝ ստամուքսի սատտիկ ջղային խանգարումն կը նշանակէ :
- Դ. Քաղցր համն՝ թանջի առաջին նշաններէն մին է :
- Ե. Աղի համն՝ թոքային տկարութեան նշան է, որ միուս նշաններու հետ խորհրդածութեան առնուլ արժան է :

ՅՕԴՈՒԱՆԾ ԺԳ.

Փ Ս Խ Ո Ւ Ն Ք

- Ա. Ստամուքսի չափազանց լեցունութենէ կամ անպատշաճ նիւթ մը անդ գտնուելէ կրնայ պատճառիլ :
- Բ. Սովորական նողկալն՝ երբ քիչ մը բան ուտելով կանցնի, ստամուքսի ջգաց գրգռեալ վիճակն կը յայտնէ :
- Գ. Փսխունքն՝ Յզութեան առաջին ամիսներու մի նշանն է :

- Գ. Կերակուրներէ վերջն փոխերու ունակութիւնն ստամոքսի գրգռեալ կամ կարծր վիճակն կը յայտնէ :
- Ե. Փոխունքն՝ Լեարդի տկարութեան, Միզապարկի և նորա այլ և այլ մասանց հիւանդութեանց գլխաւոր նշաններու մին է . և պէտք է փրսխունքի տեսակին ուշադրութիւն ընել, Եթէ փոխունքն՝ մաղձային է Լեարդէն ըլլալուն նշան է, բայց եթէ արիւնային՝ Ստամոքսէ : Իսկ եթէ արեան հետ հազ ալ կայ, յաջնժամ թոքերէն է կրնանք ըսել. և ըստ այնմ ուղղել մեր քննութիւնք և դարմանք : Սակայն՝ լոկ փոխունքն ինքնին բաւ չէ սրտչել զտկարութիւնն :



ԳԼՈՒԽ Դ.

ԳՈՅՆ ՄՍՐՄՆՈՅ

Մարմնոյ գոյնն մեծապէս կը փոխուի ինչ ինչ տկարութեանց ժամանակ. և հիւանդութեանց կամ ախտերու տեսակներն մասամբ իւրիք այս կերպ փոփոխութիւններէ կը ճանչնամք :

- Ա. Աչաց կապրագոյն երեւոյթն՝ Սրտի գործարանաւոր տկարութեան մի նշանն է :
- Բ. Մարմնոյ կամ մերթոյ դեղնութիւնն՝ Մաղձի գործարանի անկարգ վիճակն կը յայտնէ :
- Գ. Այտերու կարմրութիւնն՝ պէտք չէ միշտ ա.

առողջութեան նշան համարուիլ. վասն զի՝ երբեմն Զղային տկարութեան, և սյլ ժամանակ Միւրական ախտի Թրամադրութիւն կցըցունէ:

Գ. Դեղնութիւնն՝ Արտադրիչ զօրութեան պակասութիւն կը նշանակէ:

Մորթոյ գոյնի հետ պարտ է մեղ միշտ մարմնոյ վիճակն ինկատ առնել. սյսինքն՝ տաք կամ պաղ ըլլալն և այլն, քանզի առանց անոնց լոկ մարմնոյ գեղնութիւնն՝ կրնայ պարզ Զղային տկարութեան պատճառաւ եղած ըլլալ:

ՅՕ՛ԻՈՒԱԾ Ա.

Թ Ո Ւ Ն

Ա. Բնական հանգիստ քունն՝ տկարութեանց ժամանակ լաւ նշան մ'է:

Բ. Կերակուրներէ անմիջապէս վերջն եղած թրմութիւնն՝ կամ նիրհումն՝ մարսողական գործարանի տկարութիւնն կը ցըցունէ:

Գ. Զղային կանայք՝ խոր թմրութեան ենթակայ կըլլան:

Դ. Մանր տղայոց թմրութիւնը՝ ըզեղի մէջ չափազանց արեան հաւաքումն կը յայտնէ, որպէս և ջերմի:

Ե. Թմրութիւնն՝ մասամբ անզգայութիւն կը ցըցունէ, որ ըզեղի մէջ հիւթոյ կամ արեան հաւաքմանէ յառաջ կուգայ, սչաց փիփերու

ընդարձակութեամբ. վասնորոյ անկարող կըլ-
լայ լուսոյ հայել:

Զ. Չափազանց անքուն ըլլալն՝ Ջղային գրդուման
ուժգին վիճակն կը յայտնէ:

Է. Քնացած ժամանակ տղայոց ատամանց կրճա-
տումն՝ ճճւոյ (սղւ-հոն) նշան մ'է թէպէտ
կրնայ ջղային եւս ըլլալ:

Ը. Եթէ տղայք քնոյ մէջ ոտքերնին գէղ յորովայն
քաշեն, ու երբեմն յանկարծ լալով արթննան
յայտնի մի նշան է որ խիթ ունին, որ կրնայ
ճճւոյ պատճառաւ ըլլալ:

Թ. Ջղային անձինք՝ չափազանց կերազեն:

Ժ. ՊԱՌԿԵԼՈՒ ԵՂԱՆԱԿ. — Եթէ հիւանդ մը՝ ան-
կողնոյ ծոցն կը քաշուի, մանաւանդ ջերմի
ատեն, կենդանական զօրութեան նուազմանն
յայտնի ապացոյց մ'է:



ՅՅԴՈՒԱՆ Բ.

ԿՈՒՐԾՔԻ ՎԻՃԱԿ

ՀԱԶ, ԽՈՒԽ ԵՒ ՅԱՒ

Հիւանդաց հազն քննելու ատեն՝ պարտ է մեզ
նորա ժամանակն, տեսակն և չափն ի նկատ առնու ը

Ա. Պարզ հազն՝ առանց մի մասնաւոր նեղութեան
Հարբուխ կը կոչուի:

Բ. Հազի հետ ջերմ և կուրծքի ցաւ, յաճանի
նշան է թոքերու մէջ բորբոքման:

Գլխի Ե.

ՔԱՆԱՆՈՒԹԻՒՆ ԳԵՂՈՐԷԻՑ

Գեղորէից քանակութեան շատութեանցը պատճառաւ շատ անգամ հիւանդութիւնն առժամանակեայ կը սատոկանայ, և հիւանդի յու մպէտս մի նեղութիւն կը պատճառէ :

Հասնաման դիտելով զայս խորհեցաւ բարեփոխել զքանակութիւն նոցա, մինչ այն աստիճան որ կարենայ բուժել հիւանդութիւնն, առանց նեղելու զհիւանդն :

Ըստ Հօմիօրաթի դրութեան գեղորէից քանակութիւն կամ նոցա տտիճանն՝ յաւէտ մի փորձառական դիտութեամբ կրնայ որոշուիլ, և ուստի անկարելի է մեզ մի բացարձակ կանոն տալ այսպիսի համառօտ դրոյցի մը մէջ, բայց որպէս զի ընթերցողաց դիւրութիւն ըլլայ, հետեւեալ մի քանի կարեւոր կէտերն աստ կը յիշեմ :

Ա. կան յոյժ դիւրազգաց հիւանդներ, մանկունք և ջղային գրգռեալ բնութեան տէր անձինք, որք բնականապէս յոյժ փոքր, և սակաւ անգամ գեղորէից կը կարօտին :

Բ. կան հիւանդութիւնք ոյք խիստ կարճատեւ կամ սրնթաց են և յոյժ վտանգաւոր՝ այսոքիկ եւս ստէպ գեղորէից կարօտ են :

Վասն որոյ պարտ է մեզ հիւանդութեանց տեսակն և նոցա ընթացքն, ու հիւանդաց կազմութիւնն ինկատ առնուլ և ըստ այնմ գեղորէից աստիճանն և նոցա կրկնումն որոշել: Քանզի փորձառութիւնն կուսուցանէ մեզ որ ջղային տկարութիւնք դուն ուրեք գեղորէից կը կարօտին, մինչ գործա-

ըմանաւոր, առաջափոխիկ և հախճային ախտեր, առաւել տոէպ և մեծաւ քանակութեամբ (ցած աստիճանի, - 1, 2, 3, 6) դեղորէից պէտք ունին :

Անկատկած եմ, որ բազումք ընթերցողաց պիտի հարցունեն կամ դէժ խորհին, թէ ինչպէ՞ս այսպիսի փոքրիկ քանակութեամբ դեղորայք կը բնան երբէք ազդեցութիւն մ'ունենալ մի ուժգին հիւանդութեան ատեն, և այլն :

Աստանօր չեմ աշխատիր սկզբունքն բացատրել և ոչ ալ նորա կարելիութիւնն, այսպիսի անպատեհ վէճերէ խոյս տալով, կըսեմ, եթէ մին հաւատոտ չընծայէր փոքրիկ քանակութեանց ըրած ազդեցութեանց, չեմ մեղադրեր զինքն, այլ խընդրեմ և կը խրատեմ որ փորձէ :

Ի վերայ այսր ամենայնի, հետեւեալ երկու յոյժ կարեւոր կէտերու ընթերցողաց ուշադրութիւնն խոնարհաբար կուզեմ հրաւիրել :

Ա. Հիւանդոտ կամ մարմնոյ ախտացեալ մասն առաւել դիւրազգաց է արհեստական գրգռման կամ դեղորէից ազդեցութեանց, քան առողջ մասերն, և սա է պատճառն որ բազում անգամ հիւանդաց մատակարարելի Հօմիօբաթիք դէղերն՝ առողջ անձ մը դիտութեամբ և անդիտութեամբ կրնայ լսել առանց երբէք իւր անձի վնաս մը բերելու . սա յանիրաւի առիթ եղած է ի ձեռս չբազմաց՝ Հօմիօբաթիք դեղորէից անբաւականութեան :

Գարձեալ ի տեսութիւն ունենալով բազմութիւ ախտերն զորս բնութիւնն առանց դեղորէից կը բուժէ, արդեօք խոհեմութիւն կրնայ սեպուել մեծաւ քանակութեամբ նոցա մատակարարու-

Թիւնն, կը հարցունեմ՝ արդեօք բնական և յարմարագոյն չէ՞ խորհիլն՝ թէ որքան սակաւ դեղօրէիւք կրնամք ախտերն բուժել, քան խորհիլն՝ թէ՛ հիւանդ մը առանց մեռնելոյ ո՞րքան մեծ քանակութեամբ դեղ կրնայ առնել:

Բ. Յաժ աստիճանի (չատ) դեղերն աւելի շուտ կազդեն և զօրեղ են, բայց ոչ բարձր աստիճանաց (քիչ) չափ երկարատեւ, որոնք թէեւ տակաւ առ տակաւ, աստիճանաբար, կը գործեն, բայց երկարատեւ է իրենց ազդեցութիւնն: Վասն որոյ Հովիօրաթիւք դեղօրէից ցաժ աստիճաններն ստիպողական պարագայից տակ, և բարձրերն Հին ախտերու համար գործածելու կանոնն՝ առ հաստրակ ընդունուած կանոնն է. եթէ ըսելու ըլլում չե՞մ սխալի:

ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԳԵՂՕՐԷԻՑ

Գեղօրէից մատակարարութիւնն՝ բժշկութեան կարեւորագոյն մի կէտն է. թէպէտ և յոյժ՝ դրժուարին է մէն մի տկարութեան առանձինն վիճակի յարմար մի կատարեալ կանոն տալ, սակայն՝ անսեղի պիտի չըլլայ գէթ ընդհանուր կանոն մը տալ:

Կան Նոր և Հին տկարութիւնք կամ ախտեր Նոր տկարութիւնք ըսելով շուտ և կարճ միջոցի մը մէջ կամ քիչ օրեր տեւող հիւանդութիւնք կիմանամք. զոր օրինակ, ջերմ, ծագիկ, հնտախտ և այլն. և այլն. որոց տեւողութիւնը իրստ կարճ է:


Հին տկարութիւնք ըսելով, որ և է նոր տկարութեան սլատճառաւ հիւանդաց վրայ մնացած, և մերթ ընդ մերթ հիւանդաց այցելու տկարութիւնք կը հասկնամք. զոր օրինակ, Յօդացաւ, մը-

կանայաւ և այլն, որոց մի անգամ պաղով կամ որ և է պատճառաւ եթէ ոք ենթակայ ըլլայ շատ անգամ կը պարտաւորի հիւրնկալել զայն. միով բանիւ նոր տկարութիւնք են կարճատեւ. իսկ հին տկարութիւնք շատ անգամներ կրկնուող ախտեր են:

Արգ՝ գեղորէից մատակարարութիւնն պարտ է ախտերու կամ տկարութեանց տեսակաց համեմատ ըլլալ. հետեւեալէն նոր ախտերու համար գեղորէից մատակարարութիւնն առաւել ստիպողական կըլլայ քան զՀին. վասն զի կարճ է հիւանդութեան միջոցն և այն կարճ միջոցին մէջ պարտաւորեալ ենք գարմանել զայն:

Նոր տկարութեանց համար իններքոյ նշանակեալ որ և է գեղորէից մին, ամէն տասն և հինգ վայրկեանն կամ կէս ժամն, և կամ, մէկ, երկու մինչ երեք ժամն գրգալ մը կրնայ տրուիլ հիւանդաց, և երբ նորա ազգեցութիւնն հիւանդի վրայ կը նշմարենք. յայնժամ պարտ է առաւել ուշկէկ մատակարարել:

Բայց գալով Հին ախտերու պէտք չէ ստէպ ստէպ գեղ տալ, այլ երկու կամ ի հարկին օրը երեք անգամ, և երբեմն շարաթը երկու օր կը բաւ է:



[Արուեսան փիլիսոփայութեամբ, և ֆիլիսոփայութիւնն՝
Մարդկութեան, օգտակարութեամբ պէտք է վախճան առնուլ]:

ԲԲՅԵ. ՄՕԲԿԵ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ



ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԳԱՐՄԱՆՔ

ԳԼՈՒԽ Ա.

ՁԵՐՄՆ



ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

Գուցէ պիտի չ'գտնեմք հիւանդութիւն մը՝ որ բժշկաց ուշադրութիւնն այնքան գրաւած ըլլայ, որքան ՁԵՐՄՆ, ըստ որում բազմատեսակ գաղափարներ կան: Հեղինակաց ոմանք՝ Ձերմն և Արեան գրգռումն՝ մի և նոյն տկարութիւնն կը համարին, իսկ այլք կը զանազանեն, կամ մի և նոյն տկարութեան տարբեր վիճակներն կը կոչեն զայն:

Այս յերկուց գաղափարաց ո՛րն և ըլլայ, բարեբաղդարար՝ ըստ Նմանաբուժութեան, անհրաժեշտ կարևորութիւն մը չ'ունի, թէև լաւ ու օգտակար է գիտնալ թէ՛ յերկուց գաղափարաց ո՛րն է ուղիղն: Ձի այսպիսի պարագայից տակ արտաքին նշանք բաւ են վասն ընտրութեան պատշաճագոյն դեղորէից:

Նոր ախտերն՝ բժշկական գրութեան մէջ ճշմարիտ վորճաքարն միշտ սեպուած են. Նմանա-

բութական դրութիւնն՝ մինչ սոյն սկզբունքով կը գործէ, անմիջապէս իւր Հիմնադրին ձեռներէց դրութեան ապահով և ճշմարտագոյն ըլլալն, և Նորա ընտրած սկզբան բնութեան օրինաց վրայ Հիմնեալ ըլլալն կ'ապացուցանէ: Դեղօրէից ստէպ մատակարարութիւնն ու նոցա ներգործութիւններն այնպիսի՝ իրողութիւններ են, որ զանոնք փորձով տեսնողներէ՝ ի զատ, հազիւ մէկ մը կրնայ հաւատօք ընծայել:

Ամէն տեսակ նոր հիւանդութեանց մէջ՝ Զերմն ներկայ է. և ընդհանրապէս կենսական գործողութեանց խառնակութիւն մը յաւէտ կ'երևնայ. զոր օրինակ, Զղային դրութեան վրդովմամբն՝ ջրղերն սաստկապէս, ուժգին կերպով կը գործեն, և հետեւապէս տաքութիւն կամ ջերմ կ'արտադրեն:

Իարձեալ Զերմն իւր տեսական կը զանազանի: Անոնցմէ ոմանք մասնաւոր տեղութիւն կամ ժամանակ ունին, և ընդհանրապէս իւրեանց սկզբնաւորութիւնն գրեթէ նման են միմեանց, և սոյն պատճառաւն է որ՝ թէ՛ բժիշկը և թէ՛ հիւանդաց տէրերն շատ անգամ կը շփոթին կամ կը խաբուին:

Զերմն առ հասարակ նախնական կամ յառաջընթացիկ նշաններ ունի. ինչպէս, Անհանդստութիւն առանց որ և է ցաւոյ, Ոսկրներու նեղութիւն, ընդհանուր ուժաթափութիւն, որոց կը յաջորդեն Դող, Տաքութիւն մարմնոյ, զօրաւոր զարկ բազկերակաց, ևլն. ևլն:

Վերոյիշեալ նշաններն նախնական և ընդհանուր են ամէն տեսակ ջերմի ժամանակ: Սակայն

անոնք կը զանազանին մէկզմէկէ , և իւրաքանչիւրն իւր մասնաւոր նշաններն ունենալով՝ իւր տեսակի կարգն կը դասուի :

Արդ՝ ՚ի բաց թողլով մանրամասնութիւններն՝ որ կան յիւրաքանչիւր տեսակի , պիտի ջանամք յիշել նոցա գլխաւորներն՝ որքան որ կը ներէ գրքոյկիս համառօտութիւնն :



ՊԱՐԶ ԶԵՐՄ (Fever simple)

Պարզ Զերմն՝ ընդհանրապէս սաստիկ աշխատութենէ կամ կերակրոց անզգուշութենէ, մանաւանդ տաք եղանակաց մէջ արեգական չափազանց տաքութեան ենթարկուելէ ծագած տկարութիւն մ'է : Եւ եթէ տկարն մտաւորական զբաղմանց տէր է , յայնժամ ջերմն առաւել ուժգին կընայ ըլլալ , և կամ թիֆոզն կերպարանք առնուլ :


Պարզ Զերմի գլխաւոր նշաններն են , նախ՝ Ուժաթափութիւն ընդհանուր մարմնոյ հանդերձ դողով . յետ այնորիկ Մարմնոյ տաքութիւն , ծարաւ , գլխոյ պտոյտ կամ ցաւ . Յօգուածոց յոգնութիւն , բազերակն գրգռեալ : Սոյն Զերմի ատեն՝ ընդհանրապէս հիւանդի փորն պինդ , և մեղն կարմրագոյն կ'ըլլայ : Հուսկ յետոյ Զերմն իւր ամենաբարձր վիճակին կընայ շուտ հասնիլ , եթէ խնամք տարուելու չ'ըլլայ :

Այս Զերմն՝ առ հասարակ միայն մի քանի օր կը տևէ , եթէ զգուշութեամբ խնամք տարուի .

բայց եթէ ոչ՝ կրնայ մինչ երկու կամ երեք շաբաթ տևել :

Այս Զերմոյ գլխաւոր և առաջին դեղն է Ա. + Ե. 12 հատ , և դէ՛ր զայն կէս գաւաթ կամ 12 դրդալ ջրոյ մէջ , և աղէկ մը զարկ մինչև որ հալի , ու երբ պատրաստ է՝ քառորդ ժամը դրդալ մը տուր հիւանդին , մինչև սկսի քրտնիլ . յայնժամ դադրեցո՛ւր դեղն և խմցո՛ւր հիւանդին բաւական պաղ ջուր , և լաւ մը ծածկէ : Յետ մի քանի ժամու սկսէ տալ դեղն ամէն երկու ժամս դրդալ մը , և այսպէս շարունակէ՝ մինչև որ ջերմն անցնի , հետզհետէ աւելի ուշ մատակարարելով դեղն :

Իսկ եթէ հիւանդն գիշերները անքուն ըլլայ , տե՛ս դարման Քնահատութեան և ըստ այնմ՝ դարմանէ : Բայց եթէ փսխունք և կամ ստամոքսի խառնակութիւն ունենայ հանդերձ տաքութեամբ , յայնժամ Ա. + Ե. + և Պ. + Ե. + Ե. , տուր , փոփոխակի ժամը դրդալ մը : (Պատրաստութիւն դեղոց՝ տե՛ս Ա. + Ե. 12) :



ՉԵՐՄ ՀԱՐԲՂԽԱՅԻՆ (Influenza)

Այս տարափոփիկ ջերմն՝ թէև նախնեաց յոյժ ծանօթ տկարութիւն մ'է , բայց և այնպէս դեռ իւր պատճառն գիտցուած չ'է . գիտենք սակայն որ Հարբղխային Զերմն նման Հնտախոտի՝ մթնուլորտային թոյն մի է՝ որ կարի արագութեամբ կը

չըջի ամեն երկիր, և, թէ՛ անասնոց և թէ՛ մարդոց հաւասարապէս կ'ազդէ:

Ստոյգ է թէ՛ ո՛չ պաղն և ո՛չ տաքն, ո՛չ խոնաւութիւնն և ոչ ալ ուրիշ որ և է արտաքուստ մեզ ծանօթ պատճառաց մին է, վասն զի այս արկարութեան՝ տարւոյ ամէն եղանակաց մէջ պատահին միշտ տեսնուած է:

ՆՃԱՆՔ. Ընդհանրապէս տկարի արտասուքներն չը հոսին, յաճախ կը փռնդայ, հազ, կոկորդի նեղութիւն կամ չորութիւն կ'ունենայ, որոց հետ նաև քիչ կամ շատ անպակաս է տաքութիւնն. լեզուն ճերմակ հիւթով մը ծածկեալ ըլլալով, հիւանդն միշտ անհանդիստ վիճակ մը կ'ունենայ: Երբեմն փորն ըյծ ըլլալով՝ մերթ ընդմերթ ևս մարմնոյ ստորին անդամոց թմրութիւն կամ յոգնութիւն կը պատճառէ, և հետեւապէս հիւանդն աւելի ուժաթափութիւն կ'զգայ:


Վերոյիշեալ նեղութեանց բոլորն՝ ՚ի բաց առեալ հաղն ու մարմնոյ ուժաթափութիւնն, մի բանի առար մէջ կ'անհետանան. իսկ հաղն ու անհանգստութիւնն հիւանդաց երկար ատեն կ'ընկերանան:

Այս Զերմն՝ հասարակօրէն վտանգաւոր չի համարուիր (վասն չափահասից), իսկ մանկանց՝ աւելի ուժգին ըլլալով հանդերձ, շատ անգամ ուրիշ տկարութեան նախաշաւիղն կրնայ ըլլալ. չափահասից համար յաւէտ ճանճբացուցիչ կրնայ ըսուիլ քան մահաուիթ կամ վտանգաւոր:

ԴՍՐԾԱՆ, Հիւանդն առաջին անգամ ո և է նեղութիւն կամ անհանգստութիւն մը որ կ'զգայ

(որպէս յառաջագոյն յիշեցի), պէտք է Պարբերիչ և Ֆոֆֆորու առնել փոփոխակի ամէն կէս ժամն դըրգալ մը, մինչև որ լաւ մը քրտնի. յետ այնորիկ աւելի ուշ (ժամը կամ երկու ժամն դըրգալ մը): Այսպէս շարունակէ՛, մինչև որ հիւանդն աղէկ ըլլայ: Իսկ եթէ հիւանդի քթէն ջրանման հիւթ մը հոսելու ըլլայ, յայնժամ պէտք է Արնէնէ՛ ժամը կամ երկու ժամն դըրգալ մը, մինչև տարբերութիւն տեսնուի. յետ այնորիկ հարկ է աւելի ուշ տալ դեղերն: Սակայն եթէ կոկորդն չոր կ'զգայ, յայնժամ Նիտրուսի Արնէնէ՛ և կամ Սիֆֆիկուսի հետ փոփոխակի տուր վերոյիշեալ կերպովն:

Եթէ հիւանդի վրայ ուրիշ նշաններ ևս տեսնուին, ըստ այնմ պարտ է դեղ մատակարարել:



ՋԵՐՄ ՄԱՂՁԱԻՈՐ (Bilious)

Մաղձաւոր Ջերմն՝ կրնայ շարունակական ըլլալ կամ ընդմիջական, և կամ մի այլ տեսակ ջերմի հետ խառն: Այս ջերմի ուրիշներէ զանազանող նշանք հետևեալներն են:

Ստամոքսի խառնակութիւն կամ փսխունք մաղձաւոր, դառնութիւն բերնի, ախորժակի կորուստ, լեզուն դեղնագոյն հիւթով ծածկեալ, մարմինն ու աչքերն դեղին, մէզն խիտ կարմրագոյն, և մերթ ընդ մերթ դող ունենանալով հանդերձ՝ իւր տաքութիւնն առաւել երկարատև է:

ԴԱՐՄԱՆ: Վերոյիշեալ նշաններն հիւանդի

վրայ երևցած ատեն, պէտք է Բուֆֆլը՝ և Մերի-
բել-Սու տալ փոփոխակի՝ ամէն կէս ժամն դրդալ
մը, մինչև որ նեղութիւնն մեղմանայ, այնուհետև
ոչ այնքան ստէպ (մէկ կամ երկու ժամը դրդալ մը) :

Բայց եթէ փստունքն շարունակելու ըլլայ,
յայնժամ մէկ դի թողլով վերոյիշեալ դեղերն՝
պատրաստէ Արֆուէնը և Պրոֆիտին, ու ամէն տասը
վայրկեանն դրդալ մը տուր փոփոխակի, և փրս-
խունքի տարբերութեան համեմատ հետզհետէ ու-
շացուր դեղոց մատակարարութիւնն : Եթէ հի-
ւանդի վրայ մի այլ նեղութիւն տեսնուի՝ ըստ
այնմ ընտրէ դեղն . Պրոյն, Ճելֆֆըն, Ասֆը կամ
Բրոֆուէն, (տե՛ս դարմանն այլ և այլ ջերմերու) :



ՋԵՐՄ ՈՐՈՎԱՅՆԱՅԻՆ (Թիֆ) (Typhus)

Այս ջերմն իւր յատուկ և որոշ ընթացքն ու-
նի, նաև տարբեր վիճակներն . մէկ շաբաթէն մինչ
երկու, երեք, չորս կամ վեց շաբաթ տևողու-
թեամբ, և չեմք կարող բուժել զայն որպէս կը
բուժեմք մի այլ բորբոքումն . եթէ անգամ մը
ջերմն իւր յատուկ ընթացքն սկսած ըլլայ, կ'եր-
թայ մինչ ցվախճան . և մինչև իսկ եթէ ախտի բը-
նութեան համապատասխանող դարմանն ըլլայ, և
դեղերն իւրեանց բուժող ներդործութիւնն կա-
տարեն :

Կան զանազան տեսակ Թիֆ, որք իրենց ա-
նուններն մասնաւոր տեղեաց կամ գործարանաց

և կամ նոցա բնութենէն կ'առնուն. զոր օրինակ,
Գլխոյ Թէֆոյ, եթէ այնպէս կը թուի թէ՛ ըզերի
վրայ առաւել ազդած է ջերմն. Թոքային Թէֆոյ,
եթէ թոքերն ևս բորբոքեալ են, Լեարդային և
Որովայնային՝ եթէ մինչ լեարդն կամ որովայնն
տարածեալ է բորբոքումն, և ըն, զորոնք յիշելն
գրքոյկիս սահմանէն դուրս է: Թիֆոն կրնայ զա-
նազան պատճառներով յառաջ գալ, բայց մաս-
նաւորապէս խոնեալ, գէշ ու տղմուտ կամ պիղծ
տեղումնք, և ճախնային քաղաքներն՝ ուր մար-
դիկ գարշելի հոտն կը շնչեն ընդ սաստիկ տաքու-
թեան արևու ճառագայթից, կը ճարակի սոյն
ախտն: Գարձեալ՝ կրնայ պատճառիլ սաստիկ մը-
տաւոր յոգնութենէ վերջն, և կամ քրտնած վի-
ճակի մէջ սաստիկ պաղ հովին ենթարկելով զին-
քըն: Անտարակոյս գէշ և ոչ անդարար կերակ-
րովք ազրոյններն աւելի ընդունակ կ'ըլլան ախտին:

Ընդհանրապէս ընդունուած է սա իբր տա-
րափոխիկ հիւանդութիւն մը, և խոհեմութիւնն
կը պահանջէ առաւել զգուշանալ այսպիսի վը-
տանդաւոր պարագայից տակ, քան անհոգ մնալ:

Թէֆոն երբէք յանկարծօրէն չի գար, (թէև
բացառութիւնք կրնան ըլլալ հիւանդի զօրեղ և
առոյգ կազմութեան պատճառան), այլ ընդ-
հանրապէս իւր յայտնուելէ մի քանի օր առաջ
իբր հարբոյսային կամ յօղացաւային ջերմ, ոսկը-
ներու թեթև կամ ուժգին ցաւ, և անդամներու
թուլութիւն, ամբողջ մարմնոյ անզօրութիւն, և
հիւանդի գէմքի վրայ տխրութիւն մը յայտնի կը
նշմարուին:

Այս վիճակէ մի քանի օր վերջն գլխոյ ծանրութիւն, ասորժակի կորուստ, և գիշերներն խիստ անհանդիստ ըլլալով՝ շատ անգամ քիթէն արիւն կը հոսի, յետոյ դող, բերնի չորութիւն, լեզուի ճերմակութիւն, տաքութիւն՝ որ երեկոյն կը սաստկանայ (*), այնպէս որ հիւանդն այլ ևս անկարող ըլլալով՝ անկողին կ'իյնայ: Այս վիճակի մէջ հիւանդի ասորժակն բոլորովին կը կորսուի, և լեզուն ճերմակութիւնն կը շատնայ, աղիքներն լոյծ, որովայնն քիչ կամ շատ ուռեցած և յոյժ դիւրազգած ըլլալովն՝ չի թողուր որ մէկը դպչի. և եթէ աղէկ քննուելու ըլլայ՝ մորթին վրայ մանր լուի խածուածքին նման սպիներ կամ բիծեր ևս կը տեսնուին. (ոմանք այս պատճառաւ « բժաւոր ջերմ » կ'անուանեն):

Ահա՛ այս է Թէֆոյէ առաջին շարժումն վիճակն, և երկրորդ շարժմն բոլոր նշաններն առաւել ուժգին ըլլալ կ'սպասուի, (եթէ 'ի սկզբրանէ փոքր ինչ անհոգութիւն եղած է), և այն ատեն հիւանդի աղիքներն և ամբողջ շրային կաղմութիւնն աւելի անկարող ըլլալով հանդերձ՝ երբեմն աջ կողմն ցաւ, լեզուն սաստիկ չոր ու կապտագոյն ըլլալով՝ մտաւոր վիճակն մթին կամ թանձրացեալ կ'ըլլայ, միշտ կը զառանցէ և ուժաթափութիւնն յետին աստիճանի կը հասնի:

Աստ հիւանդութիւնը իւր կատարելութեան

(*) Երեկոյեան տաքութեան սաստկութիւնը՝ աւելի նշմարելի կ'ըլլայ գլխոյ Թէֆոյէ մէջ քան որովայնային :

Հասած ըլլալով՝ յետ այսորիկ եթէ օր ըստ օրէ տկարանայ, բազկերակն տկար ըլլայ, պաղ քրքրաինք դայ, և ըն նշան է թէ նա մերձ է իւր կենաց վախճանին. բայց եթէ հիւանդի գիմաց վրայ զուարթութիւն կը նշմարուի՝ մեղմ քրտինքով, յայնժամ օր ըստ օրէ կենդանութիւն կ'առնու, և դէպ առողջութիւն կը յառաջանայ:

Թե՛նչ մէջ գլխաւոր նկատելու կէտն՝ հիւանդի սաստիկ տաքութիւնն (*), և դէշ թթու հոտոտ քրտինքն է՝ (որ բոլոր ժամանակ կը տուէ), բազկերակի բաղխումն խիստ բարձր է, և այնպէս կը մնայ տաքութիւնն անցնելէ վերջն ալ:

Անկանոն կամ խիստ արագ (*) բազկերակն (շուճ) դէշ նշան է. լոյժ որովայնն սաստկութեան նշան է՝ որ գերնագոյն ըլլալով՝ օրն երկու կամ երեք անգամ կը պտտահի, և շատ անգամ սաստիկ ցաւով: Գլխոյ ցաւն թէպէտ և այնքան սաստիկ չ'է, բայց ուշադրութիւն գրաւելու մի ուրիշ գլխաւոր կէտ է: Այս ատեն հիւանդին մտաւոր կարողութիւնն հոգնած է և ասարօրինակ իրաց վրայ կը խորհի, կ'երեւակայէ և կը զառանցէ: Ականջներն շատ անգամ կը ծանրանան և թմրած վիճակ մը կ'առնուն, ու երբեմն, թէպէտ քիչ անգամ, այնպիսի՝ գրգռեալ վիճակ մը կ'ունենայ որ՝ եթէ չ'արգիլուի, հիւանդն իւր անկարող վիճակի մէջ յանկոզնէ դուրս կ'սկսի փախչիլ, որ խիստ վտանգաւոր նշան մի է:

(*) 104—107 ֆորէնայի:

Քթէն արիւն դալն ծանր հիւանդաց կը պատահի, և կրնայ հիւանդութեան որ և է աստիճանի մէջ ըլլալ, սակայն առ հատարակ ջերմի խիստ մեղմ ատենն կ'ըլլայ:

ԳԱՐՄԱՆ Գարմար: Ջերմ գարմանելու մէջ առաջին և էական կէտն է՝ հիւանդն կատարեալ հանգիստ պահել՝ թէ՛ մարմնով և թէ՛ մտք: Նաև հարկ է մաքուր օդ, զով բնակարան, հիւանդի սենեկին բարեխառնութիւնը՝ ոչ աւելի քան 16—55⁰ ֆարէնհայթ: Հիւանդի անկողնոյ ծածկոցներն պէտք են քիչ ըլլալ:

Քնութիւնը ինքնին կ'ուսուցանէ մեզ՝ որ երբ ակտրժակ չունի՝ պէտք չ'է կերակուր տալ, եւ տաքութիւն ունի՝ այն ատեն զովացուցիչ տալ, որոց ամենապարզն և լաւագոյնն է մաքուր ջուրն: Որ և է թանցր կերակուր պէտք չ'է հիւանդին տալ, քանզի լաւագոյն է խիստ զգուշութիւն ընել կերակրոց մասին, քան անհոգ ըլլալով հիւանդութիւնն վտանգաւոր ընել:

Երբ ջերմն կը մեղմանայ, հիւանդին կրնայ տրուիլ տաք կաթ, և թեթե մսի ջուր, բրինձի ջուր քիչ մը շաքարով, ևն. ևն:

Հետեւեալ գեղոց մատակարարութեան պէտք է զգուշութիւն ընել և ճշգիւ ժամանակին տալ:

ԳԱՐՄԱՆ: Երբոր դող, ոսկրներու ցաւ կուգայ հիւանդի վրայ, որուն շուտ կը յաջորդէ տաքութիւն, յայնժամ պէտք է Ա. Բ. Բ. տալ առանց ժամանակ կորսնցնելու, մինչև երկրորդ և երրորդ օրն. (12 հապ՝ 8 դրդալ ջրոյ մէջ հալեցուր, եւ ամէն կէս ժամը դրդալ մը տուր՝ մինչ քրտնի):

բայց երբ մինչ երրորդ օրն զգալի տարբերութիւն չ'ընեք, այն ատեն Պօփօնիւն, (1/10)՝ մի քանի կաթիլ կէս գաւաթ ջրոյ մէջ դիր, և ժամը կամ ամէն երկու ժամը դրգալ մը տուր, և այսպէս շարունակէ երկու կամ երեք օր, որ ատեն եթէ հարկ ըլլայ դեղոց մատակարարութիւնն պէտք է ուշացընել: Բայց եթէ հիւանդի լեզուն չոր, աղբն դեղնագոյն ըլլալով՝ որ և է փոքր ճնշում մ'եղած ատեն աղեաց մէջ ցաւ զգայ, յայնժամ պարտ է 'ի բաց թողուլ միւս դեղերն, և տալ Արեւիչ և Մերեւիչ, փոփոխակի՝ ժամը կամ երկու ժամը դրգալ մը, մինչև որ աղբի գոյնն տարբերի կամ դադրի: Եթէ յետ դադարման՝ ըլեզլի բորբոքման և չնշառական դժուարութեան նշաններ տեսնուլին, (թմրած ու աչքերն կարմրագոյն և գլխոյ ցաւ), յայնժամ Պելլադոն, և Ֆոֆօրոլ տուր փոփոխակի, նաև Պօփօնիւն, որպէս արդէն յիշեցի:

Եթէ հիւանդի շունչն գէշ է, Մերեւիչ և Բոֆօրոլ տուր, մանաւանդ երբ աղբն կարմրագոյն, խէժային և կամ մազանման ըլլայ. և եթէ կռնակի ցաւ ու գլխոյ թմրութիւն ունենայ (որպէս կ'ըլլայ յօդացաւային տեսակին), Սիմօնիւն, և տուր:

Եթէ որովայնալուծումն սև կամ դեղնագոյն ըլլայ, և կամ հիւանդն մաղձ փսխէ, Բոֆօրոլ պէտք կ'ըլլայ տալ: Իսկ եթէ աղեաց մէջ ցաւ ըլլայ, մանաւանդ ձախ կողմն, և լեզուն ճերմակ հիւթով ծածկուած, յայնժամ Պոփօնիւն և Բոֆօրոլ փոփոխակի պէտք է տրուիլ հիւանդի, մէկ կամ երկու ժամն դրգալ մը:

Բայց որպէս զի դիւրութիւն ըլլայ ընթերցո-

ղաց, հետևեալ դասակարգութիւնն աստ կը դը-
նեմ, ըստ կարի ամփոփելով զայն:

Ա. Եթէ հիւանդի գլխաւոր գանգատն՝ Գը-
լուխն է, Արնէր, Պելլաբոնայ, Պրայօնէա, Հո-
յօնիսօն, Օքիլը, Բըն-ը, Սըրաօնիլը, ընդհա-
նուր գեղերն եղած են:

Բ. Եթէ թոքերն նեղութիւն կ'զգայ, Արնէր-
ը, Պելլաբոնայ և Փօֆօրը:

Գ. Եթէ Լեարդն է, Արնէրը, Պելլաբոնայ, Պրո-
յօնէայ և Բըն-ը:

Դ. Եթէ Որովայնն տարածեալ է հիւանդու-
թիւնն, յայնժամ Արնէրը, Պելլաբոնայ,
Քալաբոնայ, Լայօքօրիլը և Արնէրը:

Այս ամէն ծանօթութեամբն հանդերձ պէտք
է անփորձ մէկն՝ իւր գիտութեան վստահու-
թեամբ, այսպիսի վտանգաւոր հիւանդութեան
ատեն ճարտար բժշկի միոյ խրատէ զուրկ չնայ:

Այս ամէնն՝ բժշկաց բացակայութեան և կամ
մինչ նոցա գալուստն՝ ՚ի գործ դրուելու համար
գրուած են: Վասն զի Թիֆլիսն՝ ո՛չ թէ անփորձ
հասարակութեան դարմանի տակ եղած ատենն,
այլ շատ անգամ ճարտարագոյն և փորձառու բը-
ժշկաց խնամոց տակն իսկ մահարեք կրնայ ըլ-
լալ: (Թէև ըստ նմանարութեան աւելի քիչ կը
պատահի մահ, քան որ և է մի այլ դարմանիւ):
Վասն որոյ կը խրատեմ զընթերցողս որ հակեն հի-
ւանդի վիճակացն վրայ, և յարմար ժամանակին
կանչեն բժիշկն:

ԹԻՖՈՅԱՆԱՌՆ ՁԵՐՄ (Fever Typhoid)

Արդէն նկարագրած ըլլալով թէ՛քոյէ վիճակն ,
աստանօր հարկ չ'եմ տեսներ կրկնել նոյնն , զի սա
նման թէ՛քոյէ՝ բոլոր անդամներու թուլութիւն կամ
ընդհանուր անզօրութիւն կը պատճառէ , և հիւ-
ւանդին ակտիւ զօրութիւն կորսուելով՝ հետզհետէ բե-
րանն կը տոչորի և երբեմն (սաստիկ տեսակն) փոր-
լուծութիւն կ'ունենայ : Եւ եթէ սկիզբէն անհո-
գութիւն ըլլայ , օր քան զօր գլխոյ ցաւն , երե-
կոյեան տաքութեան աստիճանն բարձրանալով
զառանցումն ևլն. կ'ունենայ :

ԴԱՐՄԱՆ : Մինչ գալուստն բժշկին՝ հետևեալ
գեղերն պարտ են զգուշութեամբ գործածել . զի
որպէս թէ՛քոյէ՝ նոյնպէս և աստ պէտք չ'է առանց
բժշկի մնալ , խորհելով թէ գրքոյկս սոյն նպա-
տակաւ գրուած է :

Եւ նախ Պ֊բնի֊ւոյ մի քանի կաթիլ , գա-
ւաթ մը կամ 50 տրամ ջրոյ մէջ լից և ժամը դըր-
գալ մը տուր , (մանաւանդ երբ ինքզինք կառա-
վարելու կամ գլուխն հանդարտ պահելու անկա-
րող է , և գիշերներն առանց քնոյ անկողնոյ մէջ
միշտ անհտնգիստ) : Մինչև որ տաքութիւնն եւ
գլխոյ ցաւն կամ ծանրութիւնն մեղմանայ . յետ
այնորիկ ոչ այնքան ստէպ տալ պէտք է : Իսկ ե-
թէ որովայնալուծութիւն ունենայ , մանաւանդ
մաղձային , յայնժամ Ար֊էնի֊ւոյ և Մեր֊ի֊ւոյ լա-
ւաքոյն գեղերն են , որք պէտք են փոփոխակի
տրուիլ հիւանդի : Բայց երբ գլխոյ ցաւն սաստիկ

է՛ Պեյլառոնայ տուր երկու ժամն անդամ մը . և եթէ թմրութիւն ունի և կամ ինքզինք կորսնցուցած վիճակի մէջ է , յայնժամ հետեւեալ դեղերն կրնան գործածուիլ Պեյլառոնայէ հետ փոփոխակի : Օքէլէ՛ , Սըբոնէ՛ կամ հոյսոնէ՛ և լին : (Տես դարման թիֆոյէ կամ այլ ջերմերու) :

ՋԵՐՄ ՊԱՐՁ ԵՒ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ

(Fever simple continual)

Այս ջերմն ինքնին պարզ չոր տաքութիւն մի է . երբեմն քիչ մը դող , ոչինչ պապակ , և ոսկրներու փոքր յոգնութեամբ մը , և գլխոյ թմրութիւն կամ թեթև ցաւ : Հիւանդն երբեմն պընդութիւն կ'ունենայ և երբեմն ալ սրովայնալուծութիւն , մէզն փոքր 'ի շատէ կարմիր : Պարզ ջերմն զանազան պատճառներէ յառաջ կուգայ . զոր օրինակ , պաղ , երկիւղ , և ստամոքսի անկարգութեամբ , և այլն :

Ոմանք կը կարծեն որ այս ջերմն՝ եթէ աղէկ չի դարմանուի , կրնայ թիֆոյէ փոխուիլ . սակայն այս կարծիք կարի ստուգութեան կը կարօտի . 'ի վերայ այսր ամենայնի լաւ է խորհիլ այնպէս , որպէս զի Ջերմի թեթևութիւնն զմեզ անհոգ չ'ընէ :

ԴՍՐԱՄԱՆ : Այս ջերմն յոյժ կարճատև ըլլալով՝ երբ լոկ չոր տաքութիւնն և ոսկրներու յոգնածութիւն կը նշմարուի , անմիջապէս Ա. օքէլէ՛ պէտք է տալ հիւանդի : Սա միշտ բաւ եղած է

Ղերմն իւր մեղմագոյն վիճակի մէջ բուժել, (12 հոգ կամ երկու երեք կաթիլ, 12 դրդալ ջրոյ մէջ դիր և ժամը դրդալ մը տուր):

Իսկ եթէ առաջին երկու երեք օրերն եղած անհոգութեան պատճառաւ, լեզուի չորութիւն և որովայնի ուռեցումն և փորլուծութիւն կ'ունենայ հիւանդն, փոխան նախկին պնդութեան, յայնժամ լաւագոյն և միայնակ դեղն է Պֆֆլէնէ, որով շուտով լեզուի դեղնութիւնն մաքրուելով՝ հիւանդն շուտ ազէկի կը դառնայ, բոլոր նեղութիւններ մեղմանալով:

Երբեմն ստամոքսի խառնակութիւն ևս կ'ունենայ իբր հետևութիւն անհոգութեան, յայնժամ պարտ է Պֆֆլէնէ, և Սլէնէ, տալ փոփոխակի, ժամը դրդալ մը: Իսկ եթէ փսխունքն չափազանց նեղելու ըլլայ զհիւանդն, յայնժամ աւելի ստէպ կրնան տրուիլ վերոյիշեալ դեղերն: Եւ եթէ մաղձախառն է փսխունքն, յայնժամ տե՛ս Զերմ մաղձաւոր):



ՍՏԱՄՈՔՍԻ ՋԵՐՄ (Fever gastric)

Ստամոքսի Ղերմն՝ ուրիշներէ տարբերող մի յատուկ նշան է հիւանդի փսխունքն. նորա լեզուին ծայրն եղած կարմրութիւնն և ամբողջ լեզուին թանցր ճերմակ՝ դեղնագոյն կամ մոխրագոյն ծածկուած ըլլալն է. ստամոքսի ուռեցուորումն, պնդութիւն, գլխոյ թմրութիւն կամ ցաւ, ևլն:

Այս Ղերմի ժամանակ բազկերակն թէև արագ,

բայց չ'է այնքան զօրաւոր, այլ յաւէտ կակուղ է, երբեմն անկանոն, և տաքութիւնն գրեթէ մի օրինակ է՝ օրն 'ի բուն:


Հիւանդութեան պատճառներն են՝ անմիջականս պաղ, մանաւանդ քրտնած ատեն, չափազանն ուտելն և կամ անյարմար կերակուր, և շն: Հիւանդութիւն ունի իւր մասնաւոր ընթացքն, և թէպէտ մեղմ տեսակն մինչ քսան և չորս ժամ կ'աղէկնայ, բայց երբեմն մինչ տասն օր կրնայ տեւել, և երբեմն ալ աւելի:

ԳՍՐՄԱՆ. Այս ջերմի առաջին կարգի գեղերէն մին է Արեւելոյ, եթէ տաքութեան աստիճանն այնքան բարձր չ'է որ ներքէ զհիւանդն, (որքան որ կը ներդուի փսխունքի պատճառաւն):

Բայց երբ տաքութիւնն շատ է՝ հանդերձ փսխունքով, յայնժամ պէտք է Պրոքլիտոյ տալ, կամ առանձինն և կամ փոփոխակի ընդ Արեւելոյ: Նախ՝ սկսէ տալ ամէն կէս ժամն դրգալ մը, ետեթէ հարկն պահանջէ՝ աւելի կանուխ և կամ ուշ կրնայ մատակարարուիլ:

Վերոյիշեալ գեղերէ զատ՝ կան նաեւ ուրիշ գեղեր, զոր տարբեր հեղինակներ գործածած են սոյն հիւանդութեան ժամանակ, զորոնք 'ի ստորև կը դնեմ. բայց ըստ իմ փորձառական դիտութեան՝ սոյն կլիմայի տակ վերոյիշեալ երկու գեղերն բաւ եղած են:

Առժեկն, Պելլագրոնոյ, Նիտոլ, Պրոքլիտոյ, Մեր-
+իւրոս, Իբէտոսաննա:



ՏԵՆԴ (Սւլճոյ) (Fever ogue)

Տենդի պատճառներն և ախտանիշերն յեշելէ առաջ՝ պատշաճ կը համարիմ աստ մի քանի համառօտ տեղեկութիւններ տալ՝ նորա գլխաւոր դեղն գտնուելէ առաջ ախտի ըրած կոտորածի նկատմամբ: Առ հասարակ դիտցուած իրողութիւն մ'է որ Տենդի գլխաւոր դեղն է Ս:լ:Ֆ:Բ: (Քունայն):

Այս դեղոյ գտնուելէն առաջ, 1653-60, եօթըն տարուան միջոցին, 10,466 մահ պատահած է Տենդի պատճառաւ՝ Անդղիոյ մէջ. մինչ նման պարագայից տակ (դեղն գտնուելէ վերջն) 1733-40, ախտէն բռնուող ու մեռնողներու թիւն եղած էր միայն 31 հոգի: Հարկ չ'է ըսել թէ՛ ի՛նչ ահաւոր է երկու թուոց տարբերութիւնն:

Թէպէտ մեր երկրի բնակչաց շատերն լաւ կը ճանչնան այս ախտն, և բազմաց հին ընկերն ու բարեկամն է. ի վերայ այսր ամենայնի կը յուսամ թէ՛ անտեղի պիտի չ'համարուի եթէ նորա վրայ փոքր ինչ ընդարձակաբար խօսելու ըլլամ՝ ի տեղեկութիւն մեր ընթերցողաց:

Տենդն՝ ստուգապէս հաստատեալ է որ տեսակ մը թոյն է (*), որ յաւէտ ճախնային, տրդմտ, գետեղերեայ և ծովեղերեայ տեղեաց մէջ կը ժարակի, ուր շատ բուսականք կը գտնուին, և հետևապէս թողուելով կը փտտին, որք ախտի ճարակման գլխաւոր պատճառներն պէտք են համարուիլ:

(*) Ճահիճներու արձակած ապականիչ նիւթն ևլն:

Կենաց ամէն վի ճակի մէջ Տենդ կրնայ ունենալ մարդս: Ամէն կազմութիւն և սեռ քիչ կամ շատ ընդունակ է ախտի և չէ կարող ըստ ամենայնի ինքզինք ազատ սեպել: Տարակոյս չկայ որ զգուշութիւնն ամենայն ինչ կը տարբերէ, և կամ կը բարեփոխէ, հետեւնապէս այս ախտի նկատմամբ ևս զգուշաւորք աւելի ազատ են քան զանհոգս:

Տենդն շատ անգամ տասնէ մինչ տասն և հինգ օր առանց յայտնի նշան մը ցոյց տալու՝ կազմութեան մէջ կը յղանայ, և երբ ՚ի յայտ դայ, շատ անգամ այնպէս կը կարծուի թէ հիւանդն առանց պատճառի Տենդ ունեցած է, որ բոլորովին սրխալ է:

Տենդի վիճակն գլխաւորապէս երեք է, (թէև երբեմն կը զանազանի), և որոնք ևս հետեւեալներն են: Ա. Սրսռուկ կամ Դող, Բ. Տաքութիւն և Գ. Քրտինք: Առաջին վիճակին մէջ հիւանդն կ'զգայ դող, ընդհանուր մարմնոյ տկարութիւն, ծունկերու կտրտուկ, գլխոյ և մէջքի ցաւ, և որոց կը յաջորդէ պաղ վիճակն, որ ընդհանրապէս մարմնոյ անդամոց ծայրերէն սկսելով հետզհետէ բոլոր մարմին կը պատէ, և դողդալով կ'սկսի ծածկուիլ. և եթէ հիւանդի ստամոքքն լեցուն է, շատ անգամ կը փսխէ: Այս վիճակն ընդհանրապէս կէս ժամէ մինչև երեք ժամ կը տևէ: Բ. վիճակն է սաստիկ տաքութիւն և գլխոյ ցաւն, որոյ սաստկանալովն՝ մարմնոյ գոյնն՝ որ առաջ դեղին կ'երևնար, կը փոխուի, սաստիկ ծարաւութիւն ունենալով, բազկերակն (նամզ) ևս կը սաստկանայ: Այս վիճակն ևս երկուք է, և մինչ երկու-

տասան ժամ կը տևէ . յետ այնորիկ մեղմ քրտինք կ'սկսի , և բոլոր մարմինն ծածկելով կը վանէ այն նշաններն , և հիւանդն իւր (որպէս թէ) նախկին առողջ վիճակին կը վերադառնայ : (Թէև երբեմն այս քրտինքն չ'ըլլար) :

Տենդն՝ կրնայ ամէն օր կամ երկու օրն անգամ մը և կամ շարաթն երկու անգամ կրկնիլ , թէև բացառութիւնք պակաս չ'են :

ԴԱՐՄԱՆ . Առաջին անգամ դող սկսած ատենն Ա.՝՝՝ և Պ.՝՝՝-ի տուր փոփոխակի ամէն տասը ըրպէն դրդալ մը , մինչև որ հիւանդն լաւ մը քրտնի , յայնժամ դադրեցուր դեղերն : (Եթէ հիւանդն փսխելու ըլլայ , լաւ է 100 տրամի չափ գաղջ ջուր խմցնել , մինչև որ բաւական փսխելով հանդչի , յետ այնորիկ մի քանի անգամ Իբէ-+--+ ատուր , մինչև որ փսխելու հակամտութիւնըն անցնի) : Յետ դադրեցնելոյ վերոյիշեալ երկու դեղերն , Ա.՝՝՝ և Ս.՝՝՝-ի տուր փոփոխակի ժամը դրդալ մը , 'ի բաց առեալ քնացած ատենն . (հիւանդդ բնաւ մի՛ արթնցներ՝ երբ քուն պէտք է անոր) : Եւ եթէ դողն կամ տաքութիւնն կրկնուելու ըլլայ , վերոյիշեալ դեղերն (Ա.՝՝՝ և Պ.՝՝՝) նոյնպէս կրկնէ , ու դողն անցնելէ վերջը Ա.՝՝՝ և Ն.՝՝՝-ի փոփոխակի տուր՝ երկու ժամն դրդալ մը :

Վերոյիշեալ եղանակաւ Տենդերու մեծագոյն մասն կրնաս մի քանի օրուան մէջ բուժել . 'ի վերայ այսը ամենայնի աստ կը պարտաւորիմ յիշել այն եղական Տենդարոյժ դեղն , Ք.՝՝՝ կամ Ս.՝՝՝ , զոր ճանչցուած է արդէն իբր միակ դեղն

եւ ըստ ոմանց անկարելի է Տենդ մը առանց Սօլֆօմօյի բուժելն :

Այս հանրածանօթ Տենդարոյժ դեղն ճշմարիտ է որ աշխարհիս մեծ օրհնութիւն մ'երզած է նման այլ և այլ օգտակար դեղօրէից : Սակայն բուրոյովին անհիմն է այն յոմանց բժշկած պնդածն ալ թէ առանց Սօլֆօմօյի Տենդն կարելի չ'է որ բուժի : Կայ Տենդ (կամ տեսակ մը Տենդ) որ առանց անոր չը բուժիր . բայց սակայն , կան ուրիշներ ալ՝ որ եթէ մինչև իսկ ականջներն խլացունելու շարի ուտելու ըլլայ , դարձեալ կարող չ'է բուժիլ , և պէտք է ուրիշ դեղ գործածել որպէս զի բուժի :

ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆ Սօլֆօմօյի : Տենդի առաջին օրն դժուարին է ըսել թէ ի՞նչ դեղ զայն կը բուժէ , քանզի իւր տեսակն այնպայտ կ'ըլլայ , (ամէն օր՝ թէ երկու օրն անդամ մը , առաւօտուն՝ թէ կէս օրին կամ երեկոյին) . և որովհետև Սօլֆօմօն բաղմատեսակ Տենդերու համար լաւ դեղ մ'է , վասն որոյ անտեղի չ'ըլլար առաջին օրն , ախտի անորոշ վիճակի մէջն , Սօլֆօմօ տայն , վասն որոյ պէտք է մէկ ցորեն Սօլֆօմօ տասը մեծ դրգալ ջրոյ մէջ հալեցնել և մէկ կամ երկու ժամը դրգալ մը առնել , կամ տալ հիւանդի , մինչև որ հատնի . (Սօլֆօմօյի այս կերպ մատակարարութիւնն՝ երբէք ընդհատել հարկ չ'է հիւանդի տաքութեան ժամանակն , զի սա փոխանակ տաքութիւնն սաստկացնելու , որպէս կ'ընէ մեծ քանակութեամբ տըրուած ժամանակն , յաւէտ զայն կը մեղմացնէ) :

Վերոյիշեալ կերպով շատ անգամ տրամներով

Սրտի Գործածող (և դեռ Տենդէն տանջուող) հիւանդաց տուած եմ, ու անոնցմէ շատեր բու-
ժուած են, բայց անոնք որ չ'են օգտուած սոյն
դեղէ, այլ ևս հարկ չ'եմ տեսներ զայն կրկնել,
այլ մի ուրիշ դեղ մատակարարել պարտաւորուած
եմ, որ կը հաստատէ այն հանրածանօթ Գերմա-
նացի բժշկի վկայութիւնն թէ՛ «Իեղօրէից ոչ թէ
«քանակութիւնն, այլ տեսակն եւ նոցա մատա-
կարարութեան եղանակն է որ կը բուժէ զհի-
ւանդն» : (Անշուշտ թունաւորիչ չափն ըսել չ'է) :



ՍՐԵԻԱ. ՀԱՐ (Sun stroke)

Ամառնային արևուն սաստիկ տաքութեան մէջ
աշխատաւորք (թէպէտ շուքի մէջ գործողք եւս
կ'ըլլան) երբեմն գլխոյ անմիջական ցաւօք հան-
դերձ տաքութիւն կ'ունենան, որ եթէ զանցա-
ռութիւն ըլլուի՝ կրնայ վտանգաւոր ըլլալ : Այս-
պիսի ժամանակ անմիջապէս Ա. Գ. Բ. և Պ. Գ. Գ. Գ.
ատք է փոփոխակի ամէն կէս ժամն անգամ մը
առնել, (12 հող 6 դրգալ ջրոյ մէջ հալեցուր) մին-
չև որ անցնի թէ՛ ցաւն և թէ՛ տաքութիւնն :

Իսկ եթէ գլխոյ ցաւն խիստ սաստիկ է եւ
կոպտացող, և տկարի վրայ թմրութիւն և անըզ-
գայութիւն ևս կը նշմարուի, յայնժամ առանց
ժամանակ կորսնցնելոյ պէտք է տալ Կ. Գ. Գ. Գ. : (12
հող 6 դրգալ ջրով) ամէն կէս ժամը դրգալ մը՝
մինչև հիւանդի աղէկի դառնալն, յետ այնորիկ

աւելի ուշ պէտք է տրուիլ Սրեահար եղող ան-
ձինք շատ անգամ գլխոյ մասնաւոր ներդրութիւն մը
կ'ունենան իւր հետեանք, վասն որոյ լաւ է որ
վերոյիշեալ դերն մի քանի օր շարունակէ, նե-
ղութիւնն բոլորովին անհետանալէ վերջն ալ :

ԿԱԹՈՒՍԾ

Կաթուածն՝ պարզապէս ըսելով ըղերի տկա-
րութիւն մ'է, թէև կրնայ ըլլալ որ ուրիշ տեղ
իւր ծագումն առած ըլլայ, այսինքն Ջղային դը-
րութեան որ և է մի մասին մէջ սկսած ըլլայ : Գըլ-
խոյ Կաթուածն՝ իւր կանխազեկոյց նշաններն ու-
նի, զոր որինակ Պտոյտ կամ թմբութիւն գլխոյ,
կարմրութիւն աչաց, խաւարումն տեսութեան և
կամ շփոթ տեսութիւն, ձայն յականջս, ծանր լը-
սողութիւն եւ անորոշ արտասանութիւն, նաեւ
թմբութիւն ձեռաց կամ ոտից, երբեմն մէկ կող-
ման, երբեմն երկու կողմանց, շնչառութիւնն ևս
ընդհանրապէս խիտ դժուրին կ'ըլլայ, ևլն. ևլն :

Կարճահասակ և գէր անձինք (կարճ վրով)
մասնաւոր յարմարութիւն ունին այս ախտի, նաև
անբարեխառն եղողք :

ԴՍԻՄՍՆ : Ըստ հին դըրութեան գլխաւոր դար-
մանն էր հիւանդէ արիւն առնել անմիաջապէս,
որ յաւետ վաստակար կ'ըլլար քան օգտակար :
Ըստ Հօֆօբօլի Գրութեան՝ Ա. Ժ. Կ. առաջին դերն
է, մանաւանդ երբ ուժգին է գլխոյ երակաց բա-

բախումն , այտերու և աչաց կարմրութիւնն , գլխոյ թմրութիւնն և յն :

Առ 4-6 կաթիլ և դիր զայն գաւաթ մը ջրոյ մէջ ու քառորդ ժամը դրգալ մը տուր , մինչ տարբերութիւն մը տեսնուի , յետ այնորիկ աւելի ուշ : Իսկ եթէ մի քանի անգամ Առնի տրուելէ վերջն տարբերութիւն մը չ'տեսնուի , Պելլուանայ 30 պէտք է փոփոխակի տալ , կէս ժամը դրգալ մը :

ՕՖիլՄ՝ եթէ անզգայ ըլլայ կամ սաստիկ թրմբութիւն ունենայ հիւանդն , և շնչառութիւն յոյժ դժուարին ըլլայ :

Նիւտրիտ՝ եթէ հիւանդն անբարեխառն մէկն ըլլայ , փոխանակ Պելլուանայէ , որք ընդհանրապէս խիստ շատ յարմարութիւն կ'ունենան այս ախտի : — Պաղ ջրոյ գործածութիւնն՝ երբոր դըլուինն սաստիկ տաք չ'է՝ օգտակար կրնայ ըլլալ :



ՄԱՆԿԱԿԱՆ ՋԵՐՄ ԸՆԴՄԻՋԱԿԱՆ

ԿԱՄ

ՆՈՐ ԽՈՅԼ

(Acute scrofula)

Տղայք ընդհանրապէս 'ի միջի եօթն և մետասաներրորդ տարւոյ , մանաւանդ զարնան ժամանակ կ'ունենան այս ջերմն՝ ոտքերնին թրջելով եւ կամ խոնաւ տեղեր նստելով , և յն . և յն :

Այս ախտն հասարակօրէն երեք կամ չորս շաբաթ կը տևէ , և յետ այնորիկ կատարեալ առող-

ջութիւնն կը վերադառնայ, եթէ լաւ խնամք տա-
րուի, բայց ոչ աւելի կանուխ:

Զերմն կ'սկսի դողդղալով՝ բաղկերակն կը
բարձրանայ մինչ 120--130՝ մէկ վայրկեանի մէջ, ո՛չ
ուժգին, այլ մեղմ և կակուղ, և սոյն նախի ա-
րագութիւնն ամբողջ գիշերն կը տևէ:

Մի քանի օր այսպէս ջերմն շարունակելէ վեր-
ջըն, երբեմն անմիջապէս կ'անհետանայ, մանուկն
իւր ախորժակն կորսնցնելով՝ ստամոքսի խառնա-
կութիւն, և երբեմն փսխունք ևս կ'ունենայ:

Մերթ ընդ մերթ աղեաց մէջ խիթ կամ ցաւ-
ունենալով՝ փորհարութիւն, նեղիչ չոր հազ, հան-
դերձ կուրծքի ցաւօք, և յոյժ զգայնութիւն,
մանաւանդ խռչափողոյ մերձ մանններու և ին. և ին:
Զերմն աստ իւր շարունակական ընթացքն կը կա-
տարէ, բաղկերակն միշտ բարձր և մարմինն չոր,
մէզն քիչ և կարմրագոյն ըլլալով: Ահաւասիկ ա-
սոնք են Մանկական ջերմի ախտանիշներն, որպէս
նկարագրած է Բրօֆէսէօր Շէօնլէյն Պէրլինու ե-
րեւելի Ախտաբանն:

Որպէս արդէն յիշեցի, ջերմն երբեմն անմի-
ջապէս աներևոյթ կ'ըլլայ, բայց յետ մի քանի ա-
ւուրց կրկին՝ ի յայտ կուգայ, այնպէս որ պէտք
չէ սխալելով թողուլ որ տղայք անկողնէ ելնեն:
Վասն զի այս կերպ սխալմունքն աւելի կը ծան-
րացնէ հիւանդի վիճակն, խռչափողաց նեղու-
թիւններն սաստկացնելով:

Հիւանդի վիճակն երբ լաւագոյն կը դառնայ՝
յայնժամ առատ քրտինք կ'սկսի և բոլոր մարմինն
կը ծածկէ, մէզը կ'առատանայ, և նորա յատակը

աղտեղութիւն կը հաւաքի, վզի մասններն կ'ուռին և շուտ հասնելով կը հոսին: Երբեմն անհագութեան պատճառաւ, այս մասներու ուռեցքի հետքերն կը մնան, և ախտն հին ձևն կ'առնէ: Եթէ փոքրիկ հիւանդն ուռեցուորումն ունենայ, սա մի անվրէպ նշան է մահամերձութեան:

Այս ախտն՝ բարեբաղդաբար քիչ դէզօրէից պէտք ունի, զօրոնք 'ի ստորև հարկ կը սեպեմ՝ դնել:

ԴԱՐՄԱՆ: Ա.՝ձե՛նը՞ (*) պէտք է տրուիլ ախտի սկզբնաւորութենէ մինչև ցվեքը, որ շատ անգամ միայնակ բաւ կ'ըլլայ ախտն բուժելու, (մեղմ տեսակին):


Իսկ եթէ նեղացուցիչ որովայնալուծութիւն ունենայ, յայնժամ հարկ է Ա.՝ձե՛նը՞ ևս տալ փոփոխակի ընդ Ա.՝ձե՛նը՞ 'ի: Եւ երբոր վզի մասններն ուռեցած են, յայնժամ Մ'երէ՛ր-եօ՞ր պէտք է տրուի Ա.՝ձե՛նը՞ 'ի հետ: Վերոյիշեալ երեք գեղերն միշտ բաւական եղած են ախտն բուժելու:

Մաքրութիւնն՝ անհրաժեշտ մի պայմանն եւ դարմանաց մին է այս տկարութեան մէջ, որպէս և այլոց, այնպէս որ պէտք է փոքրիկ հիւանդն գաղջ ջրով սրբել՝ եղանակի համեմատ, գէթ օրն երկու անգամ:

Կերակրոց յոյժ խնամք տանիլ հարկ է, զի հիւանդի ապագայ կեանքն կամ առօղջութիւն

(*) Ա.՝ձե՛նը՞ մի քանի կաթիլ, 12 դրդալ ջրոյ լաւ մը գարկ, և երկու կամ երեք ժամը դրդալ մը տուր:

ստուգիւ կախում ունի առաջին անգամ տկարութիւնն դարմանուելէ :



ԳԼՈՒԿ Բ.

ԵՌԱՑԱԿԱՆ ՁԵՐՄ (Fever Eruptive)

ԾԱՂԻԿ

Ծաղիկն՝ շնորհիւն Պատուաստի (*), թէև իւր քնասակար զօրութիւն կորուսած է, բայց գեռտոգիտութիւնն իւր բաժինն ունի, և որ և է անհոգութիւն՝ իւր զոհերն :

Անտեղի չ'է աստ մի քանի խօսք խօսիլ Պատուաստի վրայով. Գիտութեան ընծայած այս մեծ օրհնութիւնն զոր կը վայելեմք այժմ, պէտք չ'է շարաշար գործածել :

Պատուաստն՝ պէտք է ըլլալ առոյգ կենդանուոյ և ո՛չ մարդոյ, և եթէ երբէք հարկադրուի մարդոյ պատուաստ գործածել, հարկ է կարելորդ զգուշութիւնն ընել մանկան կամ պատուաստն առնուած անձի առողջական վիճակի. վասն զի բազմիցս այլ և այլ ախտեր ևս կը պատուաստեմք ծաղկի հետ, և ալ առաւել գէշն այն է՝ որ այսպէս պատուաստեալ ախտերն յոյժ տաժանելի և երբեմն դրեթէ անբուժելի կ'ըլլան. երբ ախտն մերձակայ տեղեր ճարակեալ չ'է, դժուարին է հիւանդի տիրօջ և մինչև իսկ բժշկաց՝ որոշել եւ

(*) Պատուաստն պէտք է երբցս անգամ կրկնուի, գէթ վեց տարին մի անգամ :

ճանչել զայն : Վասն զի Մաղիկն՝ հասարակօրէն ուրիշ շերմերու ակտանիչներ ունի , այսինքն դողով և տաքութեամբ կ'սկսի , երբեմն սիրտ խառնուռք ունենալով քիթն կ'արիւնի , դիտոյ սլտոյտ և ըն կ'ունենայ . վերջնապէս շերմի ատեն եղող նշաններու շատերն կը տեսնուին հիւանդի վրայ :

Արդ՝ ընթերցողաց դիւրութիւն մ'ըլլալու համար գլխաւոր ակտանիչներն աստ կը յիշեմ , որք դիւրաստալելի չեն :

Մաղիկի հիւանդութեան մէջ որքան կարևոր է միւս նշաններն դիտել . կարևորագոյն ևս է գիտնալ որ ծաղկէ բռնուողներն՝ 'ի բաց առեալ միւս նշաններն՝ Անգլիացի Գրեյ և Գրեյ ցուցնեն : Սա մի անվրէպ նշան կրնայ սեպուիլ ծաղկի ժամանակ :

Ընդհանրապէս երբորդ կամ չորբորդ օրերն կ'սկսի մարմնոյ կամ մորթի վրայ մանր փամփրջտիկներ 'ի յայտ գալ՝ որ առջի բերան դեղնագոյն հեղուկ մը կը պարունակեն , և հետզհետէ բարձր կոճակներու կը փոխուին , որոց մէջ տեղերն փոսիկ մը կը ձևանայ :

Այս փամփրջտիկներն նախ և առաջ ճակտի և երեսներուն վրայ 'ի յայտ կուգան , յետոյ վիզն , կուրծքն և ձեռքերն , և 'ի վերջոյ ամբողջ մարմինն կը ծածկեն : Եւ երբ մեծնան ու բարձրանան՝ կ'սկսի ճիշդ մէջ տեղերէ դեղնագոյն և խիստ դարչազոտ թարախ ձևանալ , և ասպա կ'սկսին օր քստ օրէ չորնալ : Մինչ փամփրջտիկներէ ոմանք այսպէս չորնալու և թեփոտելու վրայ կ'ըլլան . անոնց

տեղ փամփշտիկներ 'ի յայտ կուգան : Այս ամէնն չորսէ մինչ ինն օր տեւելով թեփոտելու վիճակին կը հասնին :

Ծաղիկն երկու տեսակի կ'ըլլայ , մին Պարզ և միւսը Խառնակ : Պարզ տեսակի փամփշտիկներն հատիկ հատիկ որոշ կ'երեւնան , իսկ Խառն տեսակիներն յաւէտ իրար խառնեալ , առանց մարմնոյ վրայ պարապ միջոց մը թողլոյ :

Նաև Ծաղիկն կրնայ Խառնակ և Պարզ 'ի միասին ըլլալ , մարմնոյն մէկ մասին վրայ պարզն , և միւս մասի վրայ խառնակն : Ընդհանրապէս մարմնոյ ծածկեալ մասանց վրայ պարզ , և չծածկուած մասերն խառնակ կ'ըլլայ , սա է պատճառն որ ծերուկ մայրեր ըստ կարի կը ծածկեն Ծաղիկ բըռնուողներու երեսներն ու ամբողջ մարմինն գէթ մի բարակ սև լաթով մը :

ԴԱՐՄԱՆ : Ծաղիկի հիւանդութեան ժամանակ եղած տաքութեան և գլխոյ ցաւոյ համար կը պարտաւորիմք դեղ մատակարարել , և թեթև պարագայից տակ չ'ունիմք լաւագոյն դեղ քան Ասփիճիկ և Պելլագրան , և կամ Պֆֆֆֆֆֆ : Առաջին երկու դեղերն պէտք է փոփոխակի տալ . եթէ գլխոյ ցաւն սաստիկ է և կոպտացող , երկու ժամը դըրգալ մը , մանաւանդ փամփշտիկներն դուրս դալու ժամանակ (երկու օր) : Իսկ եթէ առաւել մէջքի ցաւ ունի քան գլխոյ ցաւ , յայնժամ դադրեցուր դեղերն , և նոցա տեղ առը Պֆֆֆֆֆֆ և Սիֆֆֆֆֆֆֆնոյն կերպով : Երբեմն հիւանդն խիստ կը նեղուի ստամոքսի խառնակութեամբ (*), այսինքն

(*) Սրտի խառնուուք :

միշտ փոխելու հակամիտեալ կ'ըլլայ, յայնժամ պարտ է թուրքա-խալիս տալ, երկու ժամն դրդալ մը կամ աւլի ուշ: Փամիշտիկներու ծայրերն գեղնիլ սկսած ժամանակ պէտք է Մերտե-ու տալ հիւանդի, օրը երեք կամ չորս անգամ: (Պէտք եղած դեղէ 12 հոգ վեց դրդալ ջրոյ մէջ պէտք է լաւ մը հալեցնել, ու անկից մատակարարել):

Խնամատարութիւն: Հիւանդն հարկ է միշտ բարեխառն վիճակի մէջ պահել, և դէտք չէ ծանրը ծածկոցներով բեռնաւորել զայն, այլ բոտ կարի զով պահել. խոսած ջուրն հարկ չէ տաք ըլլալ, բաւական է որ շափազանց պաղ չ'ըլլայ:

Երբեմն մարմինն գաղջ ջրախառն կաթով եթէ սրբուելու ըլլայ, մանաւանդ փամիշտիկներու նոր ի յայտ գալու ատենն մեծ հանգստութիւն կուտայ հիւանդի: — Անգամ մը ծաղիկ հանողն այլ ևս ազատ է ախտէն:

ՁՐԾԱՂԻԿ ԿԱՄ ԾԱՂԿԱՆՄԱՆ

Ծաղկանմանն՝ բոտ ոմանց ծաղկի թեթև տեսակն է, և բոտ այլոց՝ ինքնին բողբոջի տարբեր հիւանդութիւն մը, որ շատ անգամ պատուաստ եղողներու ևս կը պատահի, և որոց ընթացքն բոտ ամենայնի կը նմանի թեթև ծաղկի, ու հետևապէս չ'է տաղնապալից:

ԴՄՐՄԱՆ: Առաջ բաւ կ'ըլլայ ընդհանրապէս ախտի բոլոր միջոցին, իսկ եթէ գլխոյ ցաւն նե-

ղեղու ըլլայ զհիւանդն , յայնժամ կրնայ Պերուսնայ
ևս գործածուիլ :

Մի այլ օգտակար դեղ պարտ կը համարիմ
աստ յիշել , կարմրութեան և եռքի համար , որով
խիստ կը նեղուի հիւանդն :

Աբի-Տէլ եթէ չափազանց կ'այրի կարմրացած
տեղերն կամ փամփիշտիկներն . օրը երկու կամ ե-
րեք անգամ կրնայ տրուիլ : Այս դեղը ծաղկի հի-
ւանդութեան ատեն ևս կրնայ գործածուիլ նը-
ման պարագայից տակ :



ՀԱՐՍԱՆԻԹ (Գլխաճոճ) (Measles) (morbille)

Հարսանիթն՝ ոչ միայն փոխադրական է , այլ
և զ ժանտային եռացական ախտ մ'է , այսինքն ընդ-
հանրապէս փոխուելով կ'ըլլայ : Սա հասարակօրէն
մեղմ հարբոյսոյ երեոյթ մ'ունի իւր սկսած ատեն ,
և հետեապէս ՚ի նկատի չառնուիլ խեղճ տղայի
տկարութիւնն , ու կը շարունակէ իւր դպրոցն :
Այս պատճառաւ է որ շատ անգամ դպրոցներն
Հարսանիթի ծննդավայրերն կ'ըլլան , ուսկից բը-
նականապէս կը տարածուի ընտանեաց մէջ՝ իբր
տարափոխիկ ախտ : Այս ախտն սովորօրար յան-
կարծական կը թուի , արդէն սերմն իւր մէջ ու-
նենալով 12 օր :

Հարսանիթի առաջին նշաններն են՝ սաստիկ

տաքութիւն , մարմնոյ չորութիւն , թեթև գլխոյ
ցաւ . բայց նորա անվրէպ նշանն է՝ աչաց արտա-
սուաց անընդհատ հոսիլն , մանաւանդ հազալու
ժամանակ . շարունակ կը փռնգտայ , կը կոտորտի ,
լոյսի կարող չ'է նայիլ , և կարծես սաստիկ հոգ-
նած է . և երբեմն՝ սաստիկ տեսակի ատենը՝ կո-
կորդի թեթև ցաւ , մասնաւոր չոր հազ մը , եւ
բազկերակն (հոգեւ) բարձր բայց կակուղ , (տղայոց
140 — չափահասից 120) , շնչառութեան դժուա-
րութիւն , ու երբեմն ևս ջղաձգութիւն (չէ-դո՞)
կունենայ հիւանդն :

Հարսանիթն ընդհանրապէս տղայոց հիւան-
դութիւն մ'է , սակայն չափահասներն ևս բացար-
ձակապէս ազատ չ'են կրնար համարուիլ . զի շատ
անգամ բանակաց (զօրաց) մէջ կը ճարակի : Իսկ
ժէրերն և մանկիկներն՝ ըստ փորձառու բժշկաց
գազափարացն՝ ազատ են սոյն ախտէ : Նաև ըն-
դունուած է իբր իրողութիւն՝ որ մի անգամ Հար-
սանիթ ունեցողն այլ ևս ազատ է ախտէն :

Հիւանդութիւնն սկսելէ երկու երեք օր վեր-
ջը մարմնոյն վրայ կարմրագոյն մանտրտիկ սպիներ
ի յայտ կուգան անկանոն կերպով աստ անդ ցր-
ուեալ . և նախ գլխէն սկսելով՝ երեսն , վիզն եւ
կուրծքն և 'ի վերջոյ բոլոր մարմինն կը ծածկեն :


Այս կարմիր սպիներն ընդհանրապէս հատիկ
հատիկ կ'ըլլան , բայց երբեմն մի զանգուածոյ ձև
կ'առնուն և ձեռօք վրանին կոխուած ժամանակ
կարմրութիւնն բոլորովին աներևոյթ չ'են ըլլար :

Մեղմ տեսակն երեքէ մինչև վեց աւուր մէջ
ամբողջ մարմինն կը ծածկուի սպիներով , և ասոնք

ԽՐԱՏ՝ Կերակրոց մասին պէտք է խիստ ըզգուշանալ որ ըստ կարելոյն թեթեւ ըլլան . կաթ, գարիի ջուր, (առ մեծ դրգալ մը մնաքուր գարի և դիր զայն 100 տրամ եռացող ջրոյ մէջ, և թող որ պաղի . յետոյ քիչ մը շաքար դիր մէջը և հիւանդին տուր ամէն երկու ժամը փոքրիկ գաւաթ մը), և որ ըստ օրէ մնի ջուր և լն :

Հիւանդիդ պաղ ջուրն երբէք մի՛ խնայեր, թէ և քիչ քիչ, բաւական է որ սաստիկ պաղ չէ, և չափազանց չի խմէ : Հիւանդի սենեակն մթընցունե լն, երբ կարող չ'է լոյսի նայիլ, առաւել խոհեմութիւն և հանգստութիւն է նմա :

ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ : Երբ ախտն մերձակայ տեղուանք, կամ մինչև իսկ քաղաքի կամ գիւղին մէջ ճարակեալ է, լաւ է տան մէջ գտնուող տղայոց՝ գիշերներն Ա. Բ. և առաւօտներն Բ. Գ. Դ. Ե. Զ. Է. Ը. Թ. տրուիլն, որպէս զի եթէ ախտէն բռնուելու ըլլան, չ'ըլլայ այնքան սաստիկ :



ՏԵՆԴ ՀՐԱՏԱԳՆԱՊ (*) (ԳԸԸԸԸ)

{ Scarlatina }

Այս ախտն՝ յոյժ փոխադրական և տղայոց հիւանդութեանց վտանգաւորագոյնն է, թէեւ չափահասներու համար ոչ նուազ մահաբեր, եւ շատ անգամ կը յետաձգէ ուրիշ գործարանաց անկարգութիւն կամ հիւանդութիւններ :

(*) Շառագոյն :

Ընդհանրապէս իւր ակտանիշներն տեսնուելէ հինգ կամ վեց (*) օր առաջ՝ ակտն մարմնոյ մէջ ծածկեալ կը կարծուի, և նշաններու թեթեւութեան պատճառաւն առ հասարակ ի նկատի չառնուիր:

Թէ ի՞նչ միջոցաւ նա մէկ հիւանդէ միւսին կը փոխադրուի՝ յայտնի չ'է. ոմանք այնպէս կը կարծեն թէ հիւանդի շունչն է, այլք՝ փամփրջտիկներու հասնելէ վերջն անոնց վրայ եղած թեփանման կերակրիկներու միջոցաւն, և այլք՝ հագուստի միջոցաւ, ևլն. ևլն: Ըստ ոմանց՝ այս ակտն է բռնուողներու հագուստներն պէտք են այրուիլ, զի ժամանակն՝ անոնց վիասակար ազդեցութիւն չէ կարող կոտրել: Իարձեալ ուրիշներն կը կարծեն թէ՝ այս ակտն փոխադրականութիւնն աւելի նուազ է քան Հարսանիթինն, և թէ շատերն կ'ազատին Հրատագնապ ակտն փոխադրական ազդեցութենէ, բայց ոչ ոք Հարսանիթէ: Ըստ մեծի մասին և խիստ գէշ տեսակն՝ երկու տարեկանէ վեր՝ մինչև եօթն տարեկան հասակի մէջ կը պատահի, և ութ տարեկանէ մինչև քսան և հինգերորդ հասակի մէջ առաւել քիչուոր են ակտէն բռնուողք: Իսկ կենաց երկու եզրերն, այսինքն մանկութիւնն (երկու տարեկան) և ծերութիւնն խիստ հազուադիւտ կը պատահի ակտն: Բացարձակապէս հաստատեալ իրողութիւն մ'է թէ՝ անգամ մը ակտէն բռնուողն այլ ևս ազատ կը մնայ: — Շատ անգամ Հարսանիթ և կամ Մա-

(*) Մինչ ութ օր:

ղիկ ակտերու ճարակած ժամանակներն՝ սպ եւս
կը ճարակի, վասն որոյ պարտ է խիստ զգոյշ
ըլլալ :

Եռացական ակտերու մէջ ասկից անկանոն ե-
ղանակաւ 'ի յայտ եկող ակտ չ'կայ, թէեւ ունի
մասնաւոր՝ յատուկ ակտանիշեր, մի տեսակն կը
տարբերի միւսէ, մէկ տարուանն՝ ուրիշ տարինե-
րու ակտէ, և ըն. վասն որոյ մեզ կը մնայ նորա
համառօտ նկարագրութիւնն ընել, և խնդրել ըն-
թերցողաց որ յանձնապատասն չ'ըլլան այսպիսի
ակտեր դարմանելու ժամանակ, այլ՝ երբոր կա-
րելի է մի ճարտար և փորձառու բժիշկ գանել՝
չուտ կանչեն զայն. զայս կը յանձնարարեմ իբր
« Բարեկամ ամենեցուն » :

ՆՆՄՆՔ. Մոյն ակտի սկզբնաւորութիւնն՝ նը-
ման Հարսանիթի՝ սաստիկ հարբղխոյ կը նմանի, և
սորա մի միայն ու գլխաւոր զանազանող նշանն՝
փոխանակ շնչառական դործարանաց (թորերուն
և այլն) ազդելու, առաւել կոկորդին կը ներ-
գործէ: Նախնական նշաններէ երկու օր վերջն
կարմրութիւնն կ'սկսի 'ի յայտ գալ, և տաքու-
թիւնն սաստկանալ. բոլոր անդամոց յողհութիւն,
կունակի ցաւ, ու կոկորդի կարմրութիւն և ցաւ՝
ակտի գլխաւոր նշաններն կը կազմեն :

Մարմնոյն կարմրութիւնն կամ եռացումն նախ
այտերու, վրի վրայ սկսելով դուրս տալ, տպան
կամ երկոտասան ժամու մէջ բոլոր մարմինն՝ կար-
միր և երբեմն կղմինտրագոյն, միօրինակ հարթ,
քիչ բարձրացած բծերով կը պատէ: Մարմնոյն
տաքութեան աստիճանն ընդհանրապէս բարձր,

լեզուն ելականման (*) մանր կոծիծներով ծածկեալ ըլլալով՝ ՚ի կոկորդին կ'սկսի ցաւ, կարմըրութիւն և ուռեցք: Բազկերակն խիստ արագ, սաստիկ ծարաւութիւն, դլխոյ ցաւ, երբեմն թըմըրութիւն ու սիրտ խառնուռք և երբեմն ալ փրսխունք: Նաև ջղաձգութիւն կամ «*Spasme*» բացառիկ նեղութիւն մը չ'է այս ախտի ատեն, մանաւանդ արիւնային տղայոց: Այսօրիկ են ախտի նշաններն, որոնք ըստ կարի համառօտեալ՝ մինչև իսկ գրքոյկիս սահմանէ դուրս՝ աստ կը դնեմ:

Ախտի մեղմ տեսակներն՝ ընդհանրապէս հինգերորդ օրն ապաքինումն սկսելով՝ մինչև իններորդ օրը գրեթէ ամէն դիւաւոր նեղութիւններն կ'անցնին, թէև յետ այնորիկ երկու, երեք շաբաթ մեծ զգուշութիւն հարկ է հիւանդի համար, զի շատ անգամ հիւանդութիւն անցնելէ վերջն անբուժելի նեղութեանց ենթացիկ կ'ըլլան, անշուշտ պաղի պատճառաւ ևն:

Սակայն վտանգաւոր տեսակն քսան և չորս ժամու մէջ կրնայ մահ պատճառել:

Արդ՝ որքան որ գրքոյկիս համառօտութիւնն կը ներէ, սոցա իւրաքանչիւր տեսակի համար՝ սկզբանէ մինչ ցվախճան ախտի՝ գործածեալ գըլխաւոր դեղերն աստ կարգաւ կը դնեմ, յիշեցընելով միտնգամայն թէ՛ այս տեսակ վտանգաւոր ախտերն առտնին դարմանել խոհեմութիւն չ'է, երբ կարելի է բժիշկ կանչել:

ԴԱՐՄԱՆ: Պելլաքոն: Այս դեղն ո՛չ միայն

(*) Կամ թութի:

մորթին վրայ եղած կարմրութեան յատուկ է (այս ախտի ատեն), այլ նաև կոկորդի կարմրութեան և ուռեցքին, գլխոյ ցաւոյ և թմրութեան, եւ քրտնային ։

Վասն որոյ առաջին անգամ երբ կը տեսնենք նորա ախտանիշներն, պարտ է առանց ժամանակի կորստեան՝ մատակարարել զայն . (12 հոգ, 8 դրրգալ ջրոյ մէջ հալեցուր և երկու կամ երեք ժամը դրգալ մը տուր հիւանդին), մինչև որ հիւանդի մարմինն կակղանայ մեղմ քրտինքով մը, յորմէ ետքը ա՛լ աւելի ուշ կրնայ տրուիլ : Իսկ եթէ ջերմն սաստիկ ըլլայ և չոր, յայնժամ հարկ կ'ըլլայ վերոյիշեալ կերպով Ասքիլև ևս պատրաստել և փոփոխակի տալ, ժամը կամ ժամ ու կէսն դրգալ մը ։

Որովհետև ախտն խիստ փոխադրական (*) է, վասն որոյ կը յանձնարարեմ, նախազգուշութեան համար, (երբ ախտն մերձակայ տեղուանք կը ճարակի), գիշերներն երեք հոգ տալ՝ դեռ ախտէն չի բռնուողներու ։

Բաղմատիւ փորձառու անձինք կը յանձնարարեն որ հիւանդի սենեակն ըլլայ բարեխառն, (50 աստիճան ֆահրէնհայթ) և միօրինակ, և եթէ կարելի է՝ հիւանդի սենեակի օդն պէտք է փոխուիլ օրն երկու կամ երեք անգամ, (խիստ ըզգուշութեամբ որ չ'պաղի) : Հիւանդի պաղ ջուրն երբէք մի՛ արգելուր, մինչ սաստիկ տաքութեամբ կը պապակի : Երբեմն խաշած գարիի ջուրն յոյժ

(*) Պուլաշըգ ։

հաճոյական կուգայ հիւանդի, և պէտք է տրուի իբր զովացուցիչ: Երբ հիւանդն ակտրժակ չ'ունի, կաթն բաւ է անոր: Եւ երբ բազկերակն բնական վիճակին կուգայ և կարմրութիւնն կ'աներևութանայ, և կեղևներն կ'սկսին թափիլ, հիւանդն յայնժամ կրնայ անկողնէ ելնել, բայց այն ատեն սենեկի տաքութեան աստիճանն աւելի բարձր պէտք է ըլլալ:

Որպէս արդէն Հարսանիթի համար յիշեցի, աստ ևս կը պատուիրեմ, երբեմն գաղջ ջրով սըրբել նորա մարմինն (կամ կաթնախառն ջրով), երբէք պաղ ջուր մի՛ գործածեր մարմինն լուանալու համար, երբոր տաք է և քրտնելու վիճակի մէջ, քանզի պաղ ջրոյ դրսէն գործածութիւնն՝ քրտինքն, որ հիւանդի յոյժ կարևոր է, կ'արգելու: Ես այն կարմրագոյն սպիներն որ հետզհետէ դուրս գալու վրայ են, որ յայնժամ ակտն առաւել վտանգաւոր կ'ըլլայ:

Արդէն յիշուած դեղերն բաւ են պարզ եւ թեթեւ տեսակի համար. աստանօր կը դնեմ մի քանի յոյժ օգտակար դեղեր, զորոնք 'ի հարկին գործածել կարևոր են:

Երբեմն հիւանդի կոկորդն չափազանց ուռեցած ըլլալով, ցաւ և նեղութիւն կը պատճառէ նորա, որ յայնժամ պէտք է Աքիւ-Բէլ(*) և Մերի-Բէլ-տալ երկու ժամն անգամ մը փոփոխակի: (Նաև Լուի-Բէլ և Արո-Բէլ:) Իսկ եթէ ուղեղի թմրութիւնն (տալղըն) շատ է, յայնժամ Օքիւ՛,

(*) կամ Այլ-Բէլ:

Քիւրքի-ճ և Չիւրքի-ճ կը յանձնարարուի բազում փորձառու բժշկաց կողմանէ, (Պէհր և ին.) :

Եթէ 'ի սկզբանէ տաքութիւնն դանդաղ է, և կարմրութիւն կամաց դուրս կուգայ, Պրայմիւնայ բաւ է այս վիճակին, և կը նպաստէ շուտ դուրս հանելու: Երբեմն սոյն ախտի զօրաւոր տեսակի դէշ հետեւութիւններն հիւանդաց վրայ կը մնան. ախտն անցնելէ վերջն, ոմանց ականջի հոսումն (թարակս), ոմանց խլութիւն, և այլոց քթի վէրք և ին. և ին. որոց առջի երկուքին համար Սոլիւն և Աւիւ-Վիւր և վերջնոյն համար Օրու-ճ-Վիւր գործածեալ է խիստ շատ անգամ, և բուժուած :

Ի վերայ այս բամբայնի, որպէս արդէն յիշեցի, խոհեմութիւն չ'է այսպիսի յոյժ վտանգաւոր ախտ մը տնական դեղերով դարմանելն, զի ախտն խիստ արագապէս իւր ընթացքն կը կատարէ: Վասն որոյ ըրէ ամէն ինչ որ կրնաս ընել՝ մինչև բժշկի դալուստն. իսկ եթէ չ'է կարելի մի ճարտար բժիշկ ձեռք ձգել դժբաղդ հիւանդի համար, յայնժամ գործածէ սոյն գրքոյլին, որ է « Բարեկամ Մմնեցուն » և վստահ եղիլ որ պիտի վարձատրուին քու աշխատութիւններն և ինամք :

ԵՂԻՆՉԱԽԱՅԹ (Մօրուր) (Urticaria)

Եղինջախայթն՝ տեսակ մը մանր խաղաւարտ կամ ճերմակախառն կարմրութիւն մ'է, բոլորովին քրն վարդագոյն շուք մը ձևացած, և որ եղինջէ

(Երբէն թո՛ւ) խայթուածքի նման ըլլալուն պատճառաւն՝ սոյն անուամբ կը կոչուի: Սոքա երբեմն մէկ տեղէ աներևութանալով ուրիշ տեղ մը՝ ի յայտ կուգան:

ՆՏԱՆՔ: Ընդհանրապէս քիչ տաքութեամբ, խսկ սաստիկ եռ.քով կ'սկսի, այնպէս որ ծնողք շատ անգամ սխալելով Հարսանիթ կը կարծեն զայն:

ԴԱՐՄԱՆ: Ա.ձ.Ի.Է.Տ: Մարմնոյ չոր տաքութիւն, գող ներքին, լեզուի ճերմակութիւն, ջրոյ սաստիկ պապակ. երբ սոյն նշաններն հիւանդի վրայ կը տեսնուին, պէտք է տրուի մինչեւ հիւանդի քրտնիլն, (12 հող, 6 դրդալ ջրով և ժամը դըրդալ մը). յետ այնորիկ հարկ չ'է այնքան ստէպ տալ դեղն:

Պէլլարձնայ: Եթէ հիւանդի դլուխն տաք, և ինքն թմրած, միշտ զառանցական ըլլայ ու գլխոյ ցաւ ունենայ, պէտք է տրուիլ կամ միայնակ և կամ եթէ տաքութիւն դեռ շատ է, փոփոխակի Ա.ձ.Ի.Է.Տ ի հետ, նոյն կերպով:

Պրոյձնայ: Եթէ գլխոյ ցաւն չ'է այնքան սաստիկ և ոչ ալ տաքութիւնն, բայց լեզուի ճերմակութիւնն շատ ըլլալով՝ բոլոր մարմինն յոգնած կ'ըզայ:

Արեւելէ՛ս: Եթէ կարմրութիւն կանոնաւորապէս դուրս չ'գալովն՝ հիւանդն յոյժ անհանդիստ և չնչարդեղ կ'ըզայ:

Իբէրոսաննայ: Եթէ կարմրութիւնն անմիջապէս ներս քաշուելովն՝ չնչառութեան դժուարութիւն, սիրտ խառնուուք ունի, և կամ փսխելու

հակամտեալ է հիւանդն , (մէկ կաթիլ մայր հեղուկէ գաւաթ մը ջրոյ մէջ դիր ու երկու կամ երեք ժամն դրդալ մը տուր) :

Անիստիս-+ : Եթէ սաստիկ կ'այրի կարմիր տեղուանքն՝ մանաւանդ երեաներն և մատներն , ուր որ կարմրութիւն չ'տեսնուիր՝ կ'ուռեցուորի, սաստիկ ծարաւ և սիրտ խառնուուք ունենայ հիւանդըն : (Օրն երեք անգամ բաւ է . 3) :

Այսպիսի պարագայից տակ՝ հիւանդի կերակուրն պարտ է խիստ թեթեւ ըլլալ, եւ չի խնայել պաղ ջուրն , բաւական է որ խիստ պաղ չ'ըլլայ :

ՇԼՈՐՈՍՈՒԹԻՒՆ (Chlorosis)

(կանանչ հիւանդութիւն)

Շլորոսութիւնն՝ իգական սեռի յատուկ ակտմէ , և ծննդական գործարանաց հետ կապակցեալ՝ այնպիսի եղանակաւ մը՝ որ դեռ կարող չ'ենք պատճառարանել : Այս ակտը՝ մեծաւ մասամբ երեքտասաներորդ և քսան ու չորրորդ տարիներու միջոցին կը պատահի , ո՛չ աւելի ուշ : Եւ եթէ երբէք պատահելու ըլլայ , երկրորդական նեղութիւնք պէտք են նորա պատճառ համարուիլ . զոր օրինակ՝ դեռատի կանանց բազմաժնութիւնն , մանաւանդ եթէ իրենք կաթ տալու ըլլան մանկանց :

Ախտն՝ երբեմն յարբունս գալէ առաջ կը պատահի , և շատ անգամ առաջին կամ երկրորդ

դաշտանէ վերջն , ու մի միայն օրիորդաց յատուկ է : Այնպէս կը թուի թէ ժառանգական է . գունաթափ անձինք առաւել ընդունակ են . ո՛չ մի կազմութիւն բացարձակապէս ազատ է անկէ : (Թէև փախկակազմք և ջղայինք առաւել են) :

Այս ախտի պատճառները պարտ կը համարիմ աստ յիշել : — Մտաւոր աշխատութիւնք , առանց նոցա համապատասխանող մարմնավարժութեան . սիրահարական գրութիւնք , անպատշաճ վարմունք ևլն . ևլն . վերջապէս դժուարին է մէն մի շորտտութեան պատճառն հասկնալ , և ուստի կարևոր է ուշադրութեամբ դիտել :

ՆՇԱՆՔ . Քննութիւնք հաստատած են սա իրողութիւնն թէ՛ այս ախտի մէջ արեան մասնիկներն (*) խիստ քիչցած են , և երբեմն մինչ չորս հինգերորդ մասն , թէպէտ և չենք գիտեր թէ ի՞նչ է սորա պատճառն : Ընդհանրապէս կամաց կ'սկսի՝ հիւանդն շուտ կը յոգնի , ամէնավտրքը գործ մը՝ չափազանց կը յոգնեցնէ զինքն , դէմքն գունաթափ կ'ըլլայ , և մերթ դեղնագոյն , մերթ կարմիր կ'երևնայ , մարմինն իւր բնական պայծառութիւնն կորսնցնելով՝ երբեմն ևս կը դողդղայ :

Ախորժակի կորուստ , ատելութիւն կամ զրգուանք ո և է մտեղինաց , ընդհակառակն՝ անճոռնի իղձ մը քացախ , կաւիճ , հող , ածուխ ևն . ուտելու . ստամոքսն յետ կերակրոյ կը բարձրանայ և կը քացխի , ու առ հասարակ պնդութիւն կ'ունենայ , և այլն :

(*) Corpuscles.

Ենչառութիւն կարճ ըլլալով՝ վտրքիկ գործ մը շնչարգելութիւն կը պատճառէ։ Արեան շրջանն արագ ըլլալով՝ նոյնպէս ոչինչ գործ մը որքանի սաստիկ բարբախում կը պատճառէ։ Գաշտանն անկանոն ըլլալով՝ երբեմն կը դադարի և կամ ուշ կ'ըլլայ . մերթ չափազանց , մերթ քիչ , առ հասարակ բաց կարմրագոյն և երբեմն ալ բոլորովին անգոյն։ Անտարակոյս վերոյիշեալ ակտանիշներու ընդ ամէնն միշտ չենք տեսներ հիւանդի վրայ . սակայն մի անսխալելի նշան միշտ կայ , և այն է՝ Սրտի բարբախումն և շնչարգելութիւն , ամէնաչընչին գործով իսկ :

Այս ակտն եթէ նոր սկսած է , և կազմութեան մէջ գործարանաւոր խանգարում մը յառաջ չ'է բերած , կրնամք երկու կամ երեք շաբթուան մէջ դարմանելով բուժել . իսկ եթէ պատճառք կարող չ'են վերցուիլ , յայնժամ ցաւալի է նորահեռութիւնն :

ՂԱՐՄԱՆ : Այս ակտի մէջ գործածեալ դեղորէից դիսաւորներն են հեռուեալք : Ֆերրոս , Արենիլ , Քալարեո-արդ , Սեֆեո , Բուլմիլլու և երբեմն Առնիլլոս և Տիֆիլլոս , և շն :

Ֆերրոս : Եթէ պարզ դեղնութեամբ՝ ակտորժակի կորուստ ունի տկարն , (1⁰ կամ 2⁰ պէտք է) :

Արենիլ : Ենչառութեան գժուարութիւն , դեղնութեամբ հանդերձ , չափազանց գաշտան , ստամոքսի ցաւ , լեարդի նեղութիւն : Սա տկարի ակտորժակն բանալով՝ շուտով հիւանդոտ գէմքն կը պայծառացնէ :

Քալարեո : Այս դեղն յաւէտ , կամ Ֆերրոսի

և կամ Սրտի և զոտ փոփոխակի պէտք է տըրուիլ , և կամ մին տրուելէ մի քանի օր վերջն : Չափազանց և կանուխ դաշտան , զգուանք մանրինաց , ստամոքսի թթուութիւն , մամնաւոր փափաք՝ անմարս և խմորեղէն կերակրոց , (ընդհանրապէս յարբունս նոր եկածներուն) :


Սեփի : Եթէ կիսադլխոյ ցաւօք նեղուելու ըլլայ :

Բուրձնիկ : Եթէ ստամոքսի , դլխոյ , ակուայի ցաւերով շարունակ նեղուելու ըլլայ :

Սահիլ : Սրտի բարախումն , շնչարգելութիւն , մերթ այտերու դեղնութիւն , մերթ կարմրութիւն և կուրծքի ցաւ եթէ ունենայ :

Վերոյիշեալ դեղերէն ո և է մին՝ ի պահանջել հարկին՝ օրն երեք կամ չորս անգամ բաւ է :

Այս հիւանդութեան մէջ , օդափոխութիւնն՝ դլխաւոր դեղերու մին պէտք է սեպուիլ , որոյ օգտակարութիւնն ամենայնիւ տեսնուած է :



Գլուխ Կ.

ՅՕԴՈՒԱՆՍԱՅԱԻ (Rheumatism)

Այս հիւանդութիւնն՝ մազանման թաղանթներու , մկանունքներու , յօդուածներու , ջղերու ևլն. մէջ հաստատեալ նեղութիւն մ'ըլլալով՝ ընդամէնն պաղէն ազդուելով կը գէշնան : Այս հիւանդութիւնն երկու տեսակ է , շին և նոր , եւ երբեմն կարի դժուարաբուժելի և վտանգաւոր կ'ըլլայ : Նոր տեսակն՝ յաւէտ պատանեաց (14-35

տարեկան) և երխտասարդաց կը պատահի . և Հին տեսակն 'ի կատարելութեան . (40 է վերջն) :

Նոր տեսակն՝ պաղի և թացութեան պատճառաւ կուգայ , մինչ Հին տեսակն՝ խոնաւութեան պատճառաւ . և մի անգամ ունեցողն՝ երկրորդ կամ երրորդ անգամ գիւրաւ կ'ունենայ : Կանանց դաշտանի դադարման ժամանակն՝ յոյժ նպաստաւոր է այս ակտին , և այն ատեն ոչինչ պաղ մը կամ խոնաւութիւն մը բաւ է ակտի հաստատութեանը : (Պէ՛ՀՐ) :

Նոր Յօդուածացաւն՝ մարմնոյ ամէն կողմն կրնայ ըլլալ , և կ'ազդէ մինչ ներքին գործարանաց , և է տեղափոխիկ , այսինքն մէկ անգամէ միւսն միշտ կրնայ փոխուիլ . այս փոխադրական տեսակն է որ յաւէտ վտանգաւոր կը համարուի և ինչպէս որ է :

Շատ անգամ ուսէն ելնելով սիրտն կ'անցնի և կամ մի այլ անդամոց . այս պատճառաւ յոյժ գթուարին կ'ըլլայ նորա բուժուիլն :


Ախտանիշներն են՝ կարմրութիւն , ցաւ , տաքութիւն , ուռեցք , կարի զգայուն . և շատ անգամ երբ բուն Յօդուածներու մէջ կ'ըլլայ նեղութիւնն , յայնժամ հետզհետէ կը սաստկանայ եւ երբեմն ալ բոլոր մարմնոյ Յօդուածներու մէջ կը տարածուի . նաև կը պատահի որ մինչև մի քանի օր ուռեցքն 'ի յայտ չի գար , այլ լոկ կարմրութիւն և ցաւ կ'ըլլայ :

ՊԱՏՃԱՌՈՒՄ : Ախտի գրգռիչ և մեզ ծանօթ եղած միակ և գլխաւոր պատճառն՝ պաղը կամ խոնաւութիւնն է . և այս պատճառաւ է որ Եւրոպական լեզուաւ Բո՛ւմբի՛շ կը կոչուի :

ԴԱՐՄԱՆ : Առաջին գործն է՝ հիւանդն քրքրտընցնել , մանաւանդ եթէ առաջին անգամ սոյն ախտն եկած է հիւանդի վրայ , և զայս ընելու համար երկու գլխաւոր դեղեր ունիմք : Նախ՝ եթէ օդն խոնաւ է , պարտ է հիւանդի տալ Տոլուսանայ՝ հինգ կամ վեց անգամ , (10—15 ըռպէն դրդալ մը) : յետ այնորիկ Ա. Բ. Բ. Բ. կէս ժամը դրդալ մը տուր , մինչև որ քրտնիլ սկսի , ուսկից վերջը աւելի ոչ տալ պէտք է : (Ա. Բ. Բ. Բ. 12 հոգ 6 դրդալ ջրոյ մէջ հալեցուր) :

Այս երկու դեղերով շատ անգամ հիւանդն կ'աղէկնայ , մանաւանդ եթէ առաջին անգամն է ախտի ՚ի յայտ գալն , և եթէ դեղերն կանուխ տրուին :

Իսկ եթէ ախտն իւր առաջին քայլն առած և ցաւն հաստատուած է , և եթէ ցաւն մարմնոյ վերի մասն , այսինքն ուսն կամ ձեռքերն ըլլայ , հիւանդի լեզուն ճերմակ , ցաւցած տեղն կարմիր և ուռեցած և չոր տաքութիւն ըլլայ , ու մերթ ընդ մերթ ցաւցած տեղն ասղնտելու նման ցաւեր ունենայ , և որ և է շարժում սաստկացնէ ցաւոյ աստիճանն , յայնժամ Պլուստայ տուր , մէկ կամ երկու ժամն դրդալ մը՝ պարագային և ցաւոյ աստիճանին համեմատ . եւ եթէ տաքութիւնն շատ է , յայնժամ լաւագոյն է Ա. Բ. Բ. Բ. ի հետ փոփոխակի տալ :

Երբեմն ուռեցքն ու կարմրութիւնն աւելի ձեռաց մասներու մէջ կ'երևնայ , քան ուրիշ տեղ . այսպիսեաց համար հարկ է Քլորֆորմ տալ՝ օրը երեք կամ չորս անգամ եւ ոչ աւելի : 

Բարձրագույնը : Մասնաւորապէս իզական սեռի համար յատուկ է , եթէ ցաւն ծունկերն և զիստերն (*) և կամ արմուկներն ըլլալով՝ շարժական է . (ուսէն ծունկը , ծունկէն արմուկն , արմուկէն զիստն , և ըն . և ըն .) : Բարձրագույնը յարմարագոյն դեղն է , որպէս և Սէփէն , երբ հիւանդն օդոյ փոփոխականութենէ խիստ կ'ազդուի . նաեւ եթէ տաքութիւնը առաւել սաստկացնելու ըլլայ ցաւն :

(Սպիտակահոսումն եւ ականջացաւ , երկու այլ նշաններ են վասն ընտրութեան սոյն դեղոյն) :

Բարձրագույնը (**): Երբ ցաւն եւ կարմրութիւնն մարմնոյ վարի մասերն է , եւ առաջին անգամ նստած տեղէ ելլել քալելու ժամանակ սաստիկ ըլլալով՝ սակաւ առ սակաւ շարժմամբ կ'անցնի , եւ հանգչած ժամանակն դարձեալ կ'սկսի . (Սյու դեղն ճիշդ հակառակն է Պրոփոփոյի) :

Յօդացաւոց ենթակայ եղող անձինք խիստ զգոյշ ըլլալու են , եւ որ և է թթու կամ ոգելից ըմպելիք չի գործածեն : Ամենալաւ և անվնաս եւ երբեմն յոյժ օգտակար թթուն , որ կրնայ առատօրէն գործածել հիւանդն , Լեֆֆէն է , որ շատ անգամ հիւանդաց կը մատակարարուի այս ակտիատեն իբր դեղ . (քիչ շաքարով պէտք է Լեֆֆէնի շինուի) :



(*) Քալչայ :

(**) Եթէ կարելի է սոյն դեղն գիշերներն պէտք է'ն գործածել :

ՀԻՆ ՅՕԴՈՒԱԾԱՅԱԻ (Chronic Reumatism)

Արդէն՝ այս ախտի նոր տեսակին համար յիշեալ բոլոր դեղերն՝ Հնոյն համար ևս կրնան, ու պէտք են գործածուիլ: Մանաւանդ Ա. Բ. Բ. Բ. Բ., որոյ օգուտն միայն փորձառուներն իրապէս գիտեն, և հետեւապէս շեն ուզեր առանց սոյն դեղոյ մնալ:

Սակայն՝ աստանօր կ'ուզեմ յաւելուլ (թէեւ կրնամ նոր տեսակի համար ևս ընել) պաղ ջրոյ գործածութիւնն՝ հանդերձ դեղորէլց մատակարարութեամբն: Պէտք է մի քանի կտոր լաթ՝ պաղ ջրոյ մէջ թողուլ, և փոփոխիկ ցաւցած կամ ուռեցած տեղի վրայ դնել, մինչև որ ցաւն մեղմանայ: (Երբեմն հարկ կ'ըլլայ կ'ս ժամ և կամ ա'լ աւելի շարունակ փոխել լաթն): Իսկ եթէ ցաւցած տեղն խիստ տաք է, յայնժամ փոխանակ պաղ ջրոյ, գաղջ ջուր գործածելն՝ փորձառու անձինք կը յանձնարարեն:

Որպէս արդէն յիշեցի, ախտին ենթակայ եղողներն խոնար և թաց տեղեր բնակելէ, մանաւանդ գիշերուան ցօղէ ի խտ զգոյշ ըլլալու են, վասն զի շատ անգամ այսպիսի զանցառութիւն մը կրնայ պատճառ ըլլալ ցաւոյ նորոգման, և երբեմն, դժբաղդարար, աւելի սաստիկ կերպով կուգայ հիւանդութիւնն, և բազմա-յօդացաւոց կրնայ փոխուիլ, որ յայնժամ խիստ գժուարին կ'ըլլայ բուժելն:

Հետեւեալ դեղերն աստ կը դնեմ՝ յօգուտ և ի դիւրութիւն ընթերցողաց, որ կարենան սրոյշել

օգտակարագոյն գեղերն , մասնաւոր պարագայից համեմատ :

Առնելիք : Չոր տաքութիւն , պասպակ , այտերու կարմրութիւն , և գիշերներն խիստ անհանդիստ եղողներու համար :

Պրոքտիկ : Յաւ մարմնոյ վերի մասերու , մկանուններու , կուրծքի ևլն . որ շարժումն կը սաստկացնէ :

Բլոքիտ : Սաստիկ ցաւ մկանուններու , ուռեցք և կարմրութիւն մանաւանդ ոտից , որ փոփոխական ու խոնաւ օդն և սառնելն անբարձր շարժումն և տաքութիւնն ցաւը կը սաստկացնէ :

Եթէ ցաւն գիշերներն առաւել կը սաստկանայ՝ առատ քրտնելով հանդերձ , և մանաւանդ եթէ Գազզիական ակտէ պատճառեալ է , Մերթեր-ը :

Իսկ եթէ միայն (մանաւանդ աջ կողման) ձեռքըն ու մասներն կարմրութիւն , ուռեցք եւ ցաւ ըլլայ , Քլեֆելտ . և արմուկն միայն ըլլայ , Վելտ-օրը պէտք է գործածել :

Յիշեալ գեղերն՝ ըստ պահանջման հարկին՝ կրնան առանձինն և կամ համանման գեղոյ մը հետ հիւանդի տրուել՝ երկու կամ երեք ժամն դրդաւմը :



ՄԿԱՆՍՏԱԻ (Rheumatic Gout)

Այս ակտն՝ Յօդացաւոյ մի տեսակն ըլլալ կը թուի , քանզի անոր նման ցաւ , ուռեցք և ուրիշ նման նեղութիւններ ունի . և եթէ մէկը անգամ մը անկից նեղուելու ըլլայ , շատ անգամ զայն հիւրընկալելու ընդունակ կ'ըլլայ :

Բազում անգամ այս երկու ախտերն 'ի միասին հիւանդի վրայ կուգան, և դրեթէ միեւնոյն պատճառներով:

Ամէն ի՛նչ ալ որ ըլլայ՝ Մկանացաւն՝ սաստիկ կամ ուժգին ցաւոց մին է, և կրնայ ներքին գործարանաց ևս ազդել, որ յայնժամ աւելի վտանգաւոր կ'ըլլայ:

Ինչպէս ըսինք, Յօդացաւոց նման ըլլալով՝ դրեթէ ամէն պարագայից տակ նման դեղերն կը գործածեմք, այսինքն Ա+ձեթ, Պրոյձեթ, Բուլաթեթ և ին. և ին. (Տե՛ս դարման Յօդացաւոյ):

Սակայն՝ երբեմն ստամոքսի նեղութեամբ կ'ըլլայ, և կամ հիւանդն աւելի ստամոքսէ կը նեղուի քան ո և է ուրիշ նեղութեամբ, վասն որոյ աստ պարտ կը համարիմ յիշել հետեւեալ դեղերն:

Նեթու-էօ, որպէս ստամոքսի ուրիշ նեղութեանց մէջ՝ նոյնպէս և այս ախտի ժամանակ՝ լաւագոյն դեղն է, կամ առանձին և կամ փոփոխակի Պրոյձեթի հետ և կամ Բուլաթեթի, (երկու ժամը դրգալ մը և կամ աւելի ուշ). և եթէ տաքութիւն ևս ունենայ, յայնժամ Ա+ձեթ և Նեթու-էօ կրնայ փոփոխակի գործածուիլ, մինչև որ տաքութիւնն անցնի: Այս կերպով կրնաս դարմանել ի բացակայութեան բժշկաց:



ՋՂԱ.-ՈՍԿՈՐԱՅԱԻ (Նեթեթ եւեթ) (Sciatica)

Այս ախտն մի մասնաւոր տեղւոյ (զիտէն մինչև ծունկն, ու երբեմն մինչև դարչապարն

տարածեալ) ջղացաւն է, որ առ հասարակ յղի կանսնց կը պատահի, եւ երկու տեսակ է, մին Պարզ և միւսն Խառն: Պարզ տեսակն ժամանակաւոր է, այսինքն յղութեան ատեն կը պատահի եւ այն պատճառաւն է, որ յետ ծննդաբերութեան՝ առանց գեղոյ ցաւն ինքնին կ'անցնի: Իսկ երկրորդ կամ Խառն տեսակն Յօդացաւոյ հետ ի միասին կ'ըլլայ:

Ախտի պարզ տեսակի համար, թէև յետ ծննդաբերութեան ցաւն կ'անհետանայ, երբեմն կը պարտաւորեմք ցաւոյ սաստկութեան պատճառաւ գեղ մատակարարել. վասն որոյ հետեւեալները հոս կը գնեմ:

Արեւի+ը և Քօլոնիէ: Այս երկու դեղերն փոփոխակի կրնան տրուիլ, մէկ կամ երկու ժամն գրգալ մը, մինչեւ մեղմանալն ցաւոյ. յետոյ օրն երկու կամ երեք անգամ կը բաւէ:

Այս ցաւն ունեցող կանանց համար, նախ քան ցաւոյն պատկանալն, պէտք է վերոյիշեալ դեղերըն մի քանի անգամ առնել օրն: Բոլոնիէլլ մի ուրիշ օգտակար դեղ է այս ցաւոյ ատեն, և յատուկ է իզական սեռի. և ուստի՝ պէտք չէ մտնալ զայն, այլ երբեմն՝ վերոյիշեալ դեղոց միոյն հետ փոփոխակի պէտք է տրուիլ: Խառն տեսակի համար՝ տե՛ս դարման Յօդացաւոյ: Ա+միէ, Պրոյմիէ, Բընիէ+ և ին. և ին:

ՋՆԱՑԱԻ (Neuralgia)

Այս ցաւն՝ որ և է զգայական ջղերու կրնայ պատահիլ, մինչև անգամ ստամոքսի և սրտի ջղերուն, և ըստ տեղոյն՝ իւր անուն կ'առնէ, զոր օրինակ՝ Երեւի, Գլխոյ, Ստամոքսի, Սրտի, Կշտի և այլն: Այս տեսակ ջղացաւն խիստ սաստիկ կ'ըլլայ, և չի թողուր որ երբէք մէկն դաջի ցաւցած տեղոյն. թէև առ հասարակ առանց տաքութեան կամ կարմիրութեան է, բայց երբեմն այս նշաններն ևս պակաս չ'են հիւանդի վրայ:

Ժամանակ առ ժամանակ եկող դիխոյ ցաւն, որ նաև հասարակ ջղային կը կոչուի, և որ բոլոր կենաց մէջ ենթակայն կը կրէ, լոկ այս տեսակ ջղային ցաւ մը չ'կրնար ըլլալ, այլ յաւէտ ուրիշ տկարութեան մը հետ խառն պարտի ըլլալ:

Այս մաշեցուցիչ, թէև անվտանգ համարեալ ցաւոյ համար գործածեալ դեղօրէից դիսաւորներէ զոմանս աստ կը դնեմք, որ ըստ հարկին կ'օգնեն անմիջական ցաւն մեղմացնելու և երբեմն իսկ զայն բոլորովին դադրեցնելու:

Արեւիչ: Երբ հիւանդն բնականապէս նիհար է կազմութեամբ, և առանց որ և է այլ տկարութեան մը՝ ժամանակ առ ժամանակ ջղացաւէ կը նեղուի, այնպէս որ ցաւցած տեղն իբր տաք երկաթներ կը մղուին, եւ պաղ ջրոյ գործածութիւնն առաւել կը սաստկացնէ զցաւն:

(Թէեւ առաջին անգամ որ պաղ ջուր կը դրուի, փոքր ինչ հանգստութիւն կամ մեղմութիւն կուտայ ցաւոյն):

Պեւեալներ : Երբ ցաւն երեսէն սկսեալ մինչ գը-
լուին կը տարածուի , եւ եթէ ցաւոյն հետ միա-
տեղ այտերու կարմրութիւն ու տաքութիւն ալ
ըլլայ , յայնժամ լաւագոյն է տալ Ա. Ժ. Բ. , փոփո-
խակի ընդ Պեւեալներ կամ Ճեւեալներ :

Ք. Բ. : Երբ բոլոր ջղերն վրդովեալ են :

Ք. Բ. Բ. : Երբ այտերու սաստիկ
ցաւ կայ մինչև սկանջն տարածեալ , մանաւանդ
ցախ կողմն . (աջ կողմն Ս. Բ. Բ.) :

Ք. Բ. : Երբ ցաւն մանաւոր ժամանակ մ'ու-
նի , մանաւանդ եթէ լուծում ունենայ հիւանդն :

Ս. Բ. Բ. : Եթէ վիզն է ցաւն , և անկարող
չարժեղու :

Հինցած տեսակներու համար՝ Բ. Բ. Բ. և Բ. Բ. Բ.
խիստ օգտակար դեղեր են , մանաւանդ
երբ հիւանդի ձեռքերն ու ոտքերն սպաղ են : Ընտ-
րելի դեղէն 3 կամ 4 հող քիչ մը ջրոյ մէջ հալե-
ցուր և մէկէն խմցուր . նոյնն կրկնէ մէկ կամ եր-
կու ժամն անգամ մը :

ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԻԻՍՐԱԿԱՆ ԱԽՏ

Գուցէ մեծ յանդգնութիւն համարուի՝ դըրքոյկիս մէջ այս ախտի նկատմամբ բառ մ'իսկ գըրերէն, քանզի ո՛չ միայն առտնին դարմանք, այլ և ճարտարագոյն բժշկաց ուշագրութիւնն ու խորհուրդն գրաւած ըլլալով՝ քանիցս զանոնք խռոված և իւրեանց ջանքերն ՚ի դերև հանած է։ Սակայն և այնպէս յուսալով թէ ինչ ինչ պարագայից տակ՝ կրնայ փոքր ինչ օգնութիւն և մխիթարութիւն ըլլալ հիւանդի և նորա բարեկամաց, պարտաւորեալ եմ՝ յիշել աստ նորա համառօտ նկարագրութիւնն՝ հանդերձ մի քանի դեղորէից գործածութեամբ։

Անուրանալի մի ճշմարտութիւն է թէ՛ ներկայ դարուս վերջին մասին մէջ՝ մեծապէս յառաջագիւմութիւն եղած է այս մարդակործան ախտն դարմանելու մասին, և հետևապէս այժմ առաւել սակաւաթիւ են պատահած մահք, կամ գոնէ կեանքերն առաւել երկարացեալ են, քան որչափ էին 30—40 տարի յառաջագոյն եղած դարմանաւրն։ Եւ թէպէտ դեռ մի օրոշ կէտի հաստատեալ չէ զայն դարմանելու սկզբունքն, և ո՛չ ալ մէկ մը կրնայ վստահ ըլլալ իւր մի անգամ ունեցած յաջողութեան, և շարունակել նոյն ընթացիւք դարմանել նման պարագայից տակ, կամ յուսալ թէ պիտի կարենայ բուժել զայն ևս։

Սոյն յաջողութիւն՝ եթէ քննելու ըլլանք՝ կը տեսնենք որ հիւանդի կամ դժբաղդ ախտացելոյն կենաց ապահովութիւնն՝ մեծաւ մասամբ լոկ իւր ապրելու եղանակի, բնակութեան և կլիմայից փոփոխութեան վրայ հիմնեալ է միշտ :

Երբեմն Հին դրութեան միակ յուսոյ խարխիւներն էին ձկան իւղ և երկաթի տարրեր բաղադրութիւնք :

Անտարակոյտ այս և սմին նման առողջութեան էապէս կարևոր եղող դարմաններն՝ օգտափոխութեամբ հիւանդի օգնելէ՝ ի զատ, նմանաբուժութիւնն քայլ մ' ևս յառաջ կ'անցնի՝ կարգ մը դեղորէից գործածութեամբն, որք կազմութեան վերայ գէշ ազդեցութիւն չը թողլով հանգերձ՝ անհամար օգուտներ ևս ունին : Վասն որոյ պարտք կը համարիմ աստանօր այս ախտի զանազան վիճակաց կամ պարագայից տակ գործածեալ դեղորէից օգտակարագոյններէն զամենս յիշել, յուսալով թէ ըստ պարագային նոցա գործածութիւնըն բազմաց գէթ հանգատութեան միջոց մ' ըլլայ :

Աւելորդ կը համարիմ կրկրին և կրկին խրատեր զհիւանդն և նորա բարեկամներն, որ առանց ժամանակ և պատեհութիւն կորսնցնելու, որքան կանուխ որ կարելի է՝ ճարտար բժշկի մը խրատուցն ու դարմանին դիմէ :

1. Այս ախտի ենթակայ եղող կան կարգ մը անձինք, որ հասարակօրէն ստամբախ անկարողութիւն, ախորժակի կորուստ կ'ունենան, և խիստ դժուարին է իրենց համար իւղային կերակուր և երբեմն կաթն խսկ մարտել. եւ երբ ուտելու ըլ-

լան, ստամբուխի խորն՝ որպէս թէ կայրի, եւ քիչ ժամանակ վերջն ալ կը թթուի: Վերոյիշեալ նըշաններն երբ հիւանդի մը վրայ առաջին անգամ կը տեսնուի, պէտք է իսկոյն Քալաւէ և Քալաւէլ, ևս Այոթն տալ, և կամ Այոթն օգ Արճնէ, փոփոխակի երկու կամ երեք ժամն անգամ մը, և կամ իւրաքանչիւրէն օրը երկու անգամ, մինչեւ վեց օր: Եւ յետ վեց աւուր գործածութեան՝ մի քանի օր միջոց տալով՝ դիտել եթէ առաւել օգտակար դեղ մը կրնայ տրուել հիւանդի:

2. Երբ ակտն բաւական յառաջացած է, կամ հաստատեալ թորերու մէջ, յայնժամ թէև Քալաւէ և Քալաւէլ վերոյիշեալ դեղերն տակաւին կըրնան շատ օգնել, (մանաւանդ երբ ուրիշ դեղ մատակարարելու պատճառ մը չ'ենք տեսնել) . բայց որպէս զի թորերու գրգռումն արգիլել կարենանք, պէտք կ'ըլլայ Փոֆօրէ տալ երբեմնակի: Եթէ հիւանդն շնչոյ դժուարութիւն կը կրէ, այն առն փոխանակ Փոֆօրէ տալու, (մանաւանդ ծերոց), պէտք է Այոթն տալ, կամ առանձինն և կամ ընդ Փոֆօրէի փոփոխակի, (մէկ կամ երկու ժամն 4 հոգ, դեղահատիկ չոր՝ լեղուին վրայ եւ կամ քիչ մը ջրով):

3. Երբ հազն կակղանալով խուխուն դուրս կ'ելլէ, և երբեմնակի տաքութեան հետ առաւօտեան քրտինք, նաև լուծմունք կ'ունենայ, յայնժամ պէտք է Քալաւէ և Փոֆօրէ տալ օրն մի քանի անգամ, ևս Արճնէ, վերոյիշեալ կերպով:

4. Երբ կոկորդի նեղութիւն ունենայ, (առաւել քան ուրիշ նեղութիւն մը) յայնժամ Մէլ-

ճէա ըօնն. տուր օրն 4 անգամ, (12 հաս 4 դրգալ ջրոյ մէջ հալեցնելով):

Այս ամէն միջոցներն գործածելով, տակաւին չենք կրնար հիւանդի ամէն կերպ նեղութիւններն մեղմացնել, մանաւանդ գրքոյկիս սահմանէն ալ բոլորովին դուրս ելած կը համարիմ, եթէ ջանամ բոլոր միջոցներն աստ յիշել:

Անտարակոյս այսպիսի ծանր և վտանգալից պարագայից տակ, փոխանակ գրքոյկի մը էջերն դարձնելու, պէտք է փորձառու և ճարտար բըժըղի մը խորատուցն հետեւիլ:

Այս ամէնն աստ դրուած են՝ ՚ի բացակայութիւն բժշկաց, ըստ կարի օգտակար դեղ մը գործածելու, և ո՛չ այլ ինչ նպատակաւ:



ԹՌՔԱՆՏ (Սաբլընճանը և հոսիայ)

Թոքերու բորբոքումն՝ ընդհանրապէս խոնաւ տեղուանք և դեկտեմբեր, յունվար և ապրիլ ամսոց մէջ կը պատահի, որուն գլխաւոր պատճառն տաքէն անմիջապէս պաղի փոխուիլն է, որովքրտիկն կը պաղեցնէ և կ'արգիլէ դուրս ելլելն:

Թոքախտն առ հասարակ կ'սկսի սաստիկ սրըսրուկով կամ դողով, ուսկից անմիջապէս վերջն կուգայ չոր տաքութիւն, և ընդունին վրայ ճերմակ հիւթ մը կը ծածկէ, բազկերակաց բաղխումն կը զօրանայ և քանակութիւն կը բարձրանայ (90-

100 մէկ բոպէի մէջ), ու մէզն կարմրագոյն կ'ըլլայ: Երբեմն թէև բաղկերակաց բաղխումն այնքան ուժգին չ'է, բայց նոյն ատեն խիստ արագ ըլլալով կը բարձրանայ մինչ 120:

Այս վիճակին մէջ հիւանդն առաւօտեան մերձ շատ քրտինք, և երեկոյեան մօտ տաքութիւն կ'ունենայ, այնպէս որ առաւօտեան քրտինքն և երեկոյեան տաքութիւնն կանոնաւորապէս հիւանդութեան գլխաւոր նշաններն կ'ըլլան:

Բորբոքումն՝ երբեմն մէկ եւ երբեմն երկու թոքերն ալ կրնայ պատահիլ, որ այն ատեն ամբողջ կուրծքն կը ցաւի, եթէ ոչ միայն ախտի եղած մասն:

Ախտի հաստատեալ ժամանակ հետեւեալ նըշանք յայտնի կը տեսնուին հիւանդի վրայ: — Առաւօտեան քրտինք, երեկոյեան ջերմ (կամ բարձր ջերմ), հազ, կղմինտրագոյն խուխ, շնչառութեան դժուարութիւն և կուրծքի ցաւ: Ատոնք ախտի գլխաւոր և անվրիպելի նշաններն կը համարուին և են:

Վերոյիշեալ համառօտ նկարագրութեան՝ անտարակոյս եւ որ եթէ ուշադրութիւն ըլլայ՝ ախտըն ճանչնալու մասին ուղիղ առաջնորդ մը կըրնայ սեպուիլ, եթէ ուրիշ տկարութեանց հետ խառն չ'ըլլայ:

Ըստ Հին դրութեան՝ ՚ի վաղուց անտի արիւն առնելու սկզբունքն բռնած էին, բայց այժմ՝ որ բախտութեամբ կը տեսնեմք որ բազմաթիւ ճարտար և խոհեմ բժիշկք չախաւորած են այն ընթացքն, յօգուտ իւրեանց հիւանդաց:

Հատ նոր դրութեան կամ նմանաբուժութեան՝
հետեւեալ դեղերն գործածեալ են հիւանդութեան
տարբեր աստիճաններու և պարագայից տակ :

ԴԱՐՄԱՆ : Աւսէլ , երբ հիւանդն չոր տաքու-
թեան մէջ է ու բաղկերակն (նամիկն) ուժգին կը
բաղկի , յայնժամ 12 հոգ կամ 5—6 կաթիլ , 50
տրամ պաղ ջրոյ մէջ դիր և ասկից կէս ժամը կամ
ժամը գրգռւ մը տուր , մինչև որ ներքին դողն ու
մարմնոյն չոր տաքութիւնն մեղմանայ , որ այն ատե-
տեն պէտք է աւելի ուշ մատակարարել դեղն :

Շատ անգամ առանց ուրիշ դեղոց կարօտ ըլ-
լալու , միայն այս դեղով հիւանդն կը բուժի մէկ
երկու աւուր մէջ , մանաւանդ եթէ կանուխէն
սկսուի դեղն : Բայց երբ կը դիտես զի հիւանդու-
թեան բոլոր նշաններն դեռ չէ անցած , այլ մի-
այն տաքութեան աստիճանն իջած է , յայնժամ
դադրեցուր Աւսէլն և նորա տեղ տուր հիւանդին
Պրոչնէյ . կակուղ հազ , կուրծքի ցաւ եւ բոլոր
մարմնոյ անհանգստութիւն , (երբեմն Աւսէլի տեղ
տալ լաւագոյն կ'ըլլայ , եթէ տաքութեան աս-
տիճանն նոյնն մնացած է) :

ՏՕՍՅՕՐՅՁ : Երբ չնչառութեան դժուարու-
թիւն ունենայ և խուխն կզմխտորագոյն ըլլայ ,
հանդերձ օտից և ձեռաց պաղութեամբ : (երբեմն
փոփոխակի ընդ Աւսէլի) :

ՊԷԼԼՍՏՕՆՆԱ : Եթէ հիւանդն թմրած ըլլայ և
միշտ գլուխն ծանր , երբեմնակի այտեքու կարմը-
րութեամբ :

ԱՐՄԷՆԻՔԸՄ : Եթէ հիւանդութիւնն յառաջ
գացած է , այսինքն իւր ընթացքն կատարած , և

Թէև ցաւերն մեղմացած , բայց բոլորովին հիւանդքն ու ժաթափ վիճակի մէջ կ'ըլնայ , բաղկերակն (նամզ) խիստ կամոց , բարակ , անդգալի էն :

Հալեցուր 16 հող 8 դրգալ ջրոյ մէջ և ժամը գրգալ մը տուր , մինչև որ լաւագոյն նշաններ աննուին , յետ այնորիկ աւելի ոչ պէտք է տալ :

ԿՇՏԱՅԱԻ

Կշտացաւն՝ թորերն պատող մաշկի բորբոքումն է . երբեմն երկու կողման , բայց առ հասարակ մէկ կողմն կ'ըլլայ , և որոյ գլխաւոր կամ միակ պատճառն է՝ սաստիկ պաղն :

Փլխաւոր նշանք են՝ կուրծքի սուք ցաւ (հիււանդութեան եղած կողմն) , որ երկար շնչառութեան ատեն կամ հազալու ժամանակ , և կամ վրբան կոխուած ատեն աւելի կը սաստկանայ . հիււանդն չոր՝ նեղիչ հազ մը կ'ունենայ , և երբեմն , յաճախ հազի ժամանակ , արիւնախառն հիւթ մը կուգայ , ընդհանրապէս ակտի եղած կողմն չ'կըրնար պառկիլ : Երբեմն գլխոյ ցաւ եւ ստամոքսի անկարգութիւն , և միշտ սաստիկ չոր տաքութիւն պակաս չէ :

Այս ակտն՝ որպէս արդէն յիշեցի՝ սաստիկ պաղէ և երբեմն ալ արտաքին հարուածէ կը պատճառի :

ԴԱՐՄՄՆ . Ախտի նոր սկսած ժամանակն ընդհանրապէս գող և սաստիկ չոր տաքութիւն , բազ-

կերակաց ուժգին բաղխումն անպակաս կը տեսնուին, որ յայնժամ առանց ժամանակ կորսնցնելու՝ Ա.Վ.Է. 16 հոգի գաւաթ մը (50 տրամ) ջրոյ մէջ հալեցուր և անկից ամէն քառորդ ժամն դրդալ մը տուր, մինչև որ ցաւն մեղմանայ, յետոյ կէս ժամը կամ ժամը դրդալ մը, և հետզհետէ երկու ժամն տալ պէտք է:

Բայց եթէ ցաւն չ'է մեղմացած, յայնժամ Ա.Վ.Է. 16 հետ պէտք է Պրոպոլիս տալ փոփոխակի, ժամը դրդալ մը:

Եթէ արդէն ջրոյ հաւաքման նշաններ կ'երևնան, յայնժամ լաւագոյն է մի քանի անգամ Ա.Վ.Է. 16 և Սելֆը տալ փոփոխակի և յետ այնորիկ Պրոպոլիս: Երբեմն Ֆիսիոլոգիա ևս օգտակար է տալ հիւանդին, մանաւանդ եթէ մէկ օր Պրոպոլիս և երկրորդ օրն Ֆիսիոլոգիա տրուելու ըլլայ, եթէ հազէն ներուելու ըլլայ, (տե՛ս Դարման հազի):

Այս տկարութեան և այլ սուր ցաւոց մէջ՝ լաւագոյն է՝ եթէ գտնուի՝ հեղուկն տալ, փոխանակ հոգեբու, և յայնժամ 50 տրամ ջրոյ մէջ 3-4 կաթիլ բաւական կ'ըլլայ:

Դեղօրէից հեղուկներն աւելի շուտ կ'ազդեն քան զհոգեբուն:



ԴՃՈՒԱՐԱՇՆՁՈՒԹԻՒՆ (Տէր Կեֆէ) (Asthma)

Այս ախտն շնչափողերու նեղնալէ պատճառեալ ջղաճգական (սֆուզիլիտ) դժուարութիւն մ'է,

և որ կրնայ պատահիլ շարաթն, ամիսն եւ կամ տարին մի անգամ, և ախտի ենթակայ եղողներն դիւրաւ կ'զգան նորա դալատեան կանխանիչներն:

Գիշերներն անհանգիստ ըլլալով՝ մերթ ընդ մերթ բարակ գլխոյ ցաւ կ'ունենան, ուսկից անմիջապէս վերջն հիւանդի կուրծքն կ'սկսի սեղմուիլ և դժուարին շունչ առնել:

Հիւանդն երբ այս կանխանշաններն կ'զգայ, անմիջապէս ոտք ելլելով կ'սկսի շրջիլ սենեկի մէջ և կամ դէպ յառաջ ծռելով կը ճգնի ազատ շունչ առնել: Այս միջոցին հիւանդի երեսաց դոյնն կը փոխուի, ձեռքերն ու երեսներն կ'սկսին դեղնիլ կամ կարմրիլ և պաղիլ, ու աչքերն դուրս ցցուիլ իբր մեծ նշան իւր ներքին նեղութեան: Երբեմն սաստիկ քրտինքով և կամ խխալով վերջ կուտայ: Հիւանդին այս նեղութիւնն կրնայ մէկ կամ երկու ժամ տևել, ու երբեմն մի քանի օր: Իսկ կան դարձեալ ուրիշներն՝ որք միայն յոյժ թեթեւ ըլլալով, մի քանի վայրկեան կը տևեն, և ժամանակ մը անցնելէ վերջն նեղութիւնն կը կրկնուի աւելի զօրաւոր կերպով:

Այս ախտն ընդհանրապէս ժառանգական է, և առաւել արանց կը պատահի քան թէ կանանց, և կենաց ամէն վիճակ ազատ չէ անկից:

Ախտի գլխաւոր պատճառներն են՝ խոնաւութիւն, ստամոքսի անկարգութիւն, թոքերու կամ սրտի տկարութիւն, և յն. և յն. բաց յայսմանէ՝ մասնաւոր ընդունակութիւն մը՝ կրնայ ախտի դիւրաւ ծաւալման պատճառ ըլլալ:

Անտեղի չ'ըլլար եթէ աստ յիշեմ մի այլ պատ-

ճառն ախտի, որ յայժ ցաւալի ըլլալովն հանդերձ, խնատ դժուարաբուժելի ևս կ'ըլլայ, այն է Պատուաստի միջոցաւ յառաջ եկածն, որ շատ անգամ կարի մեղադրանաց արժանի անդգուշութեան մը պտուղն է, որ առանց հիւանդի առողջութիւնըն 'ի նկատի առնլով՝ թարախն կ'առնուի, և այնով կը պատուաստուի ուրիշներն ալ:

ԴՄՐՄԱՆ. Այս ախտի կատարելապէս բուժիլն շատ անգամ դժուարին կ'ըլլայ, մանաւանդ ժառանգական և կամ խնատ Հին տեսակներն: Այսու ամենայնիւ չեմք կրնար բոլորովին առանց դարմանի թողուլ խեղճ տառապեալն, զի կարող եմք գէթ նորա նեղութիւնն մեղմացնել:

Իսկ գալով նոր տեսակին՝ կրնամք վատահութեամբ ըսել թէ՛ կատարելապէս բուժելի է:

Եթէ պաղն է նեղութեան անմիջական պատճառն՝ Առնիկոս և Իբէտաննա պէտք է տրուիլ հիւանդի, փոփոխակի մէկ կամ երկու ժամն դրդալ մը, (երբեմն՝ նախ Տալամբայ և Քամայ միջանի անգամ տրուելէ վերջն, պէտք է վերոյիշեալներն տալ): Այսպէս հինգ կամ վեց անգամ իւրաքանչիւրէ տրուելէ վերջն, Առնիկոս և Անիկոսիկոս ու Իբէտաննա փոփոխակի հարկ կ'ըլլայ տալ (կէս ժամն դրդալ մը), մանաւանդ Հին տեսակին համար, նեղութեան ժամանակ, և յետ նեղութիւնն անցնելոյ, ամէն երկու ժամն դրդալ մը բաւական կ'ըլլայ, մինչև վեց օր: (Նեղ պարագայից տակ մինչև տասը ըոպէն դրդալ մը փոփոխակի վերոյիշեալ երեք դեղերն կարգաւ մատակարարելով, կարճ միջոցի մէջ հիւանդի սաստիկ նեղութիւնն անցած է):

Հին տեսակին համար , դարձեալ վերոյիշեալ եղանակաւ հիւանդի անմիջական նեղութիւնն դարմանելէ զինի , կարևոր է ժամանակ մը նոյն դեղերն գործածել՝ սա հետեւեալ կերպովն .

Արեւելեացի և Սինթիսիսի , իւրաքանչիւրէն առօրն երեք անգամ՝ մինչև երեք օր . յետոյ նոյն կերպով երեք օր ևս Իբեոսիսի և Սինթիսիսի , և այսպէս փոփոխակի կրկնէ՝ մի քանի օր միջոց տալով : Այս կերպով մեծաւ մասամբ ախտն գեթ թեթևցնելու կարող կ'ըլլա՛ք . — Երբեմն Սուլֆուր հարկ կ'ըլլայ տալ , և մերթ ընդ մերթ երբ ստամոքսի նեղութեան ենթակայ է հիւանդն՝ Նիտրատ և Պրոպիլիտ :

Ախտի ենթակայք պէտք են զգուշանալ զի ստամոքսնին չ'բռնաւորեն խառն , խմորեղէն , ծանր և իւղոտ կերակուրներով , և զիշերուան խոնաւութենէ : Ու է ոգելից ըմպելիք մնասակար է ախտի ենթակայից , որպէս և ծխախոտի չափազանց գործածութիւնն :

ԿՈՒՐԾՔԻ ՀԱՐԻ ՈՒՂԽ (Կեղեւնի Կեղեւնի)

(Bronchitis)

Կուրծքի Հարբուղ'ն՝ օգի մանր անցքերու կամ խոչափողի ծայրերու և նոցա բաժանմանց հիւանդութիւնն է , որ երբեմն (սաստիկ տեսակն) մինչև մազանման անցքերն կը տարածուին , և կամ կրնայ անտի սկսիլ տկարութիւնն .

Գլխաւոր ախտանիշներն են . չոր հաղ, կուրծքի ցաւ և խժուք, հազաքցած ժամանակն խայթ կամ կիզումն, և ախտի ծանր վիճակի մէջ արեան բիծեր, և 'ի վերջոյ խառն թարախայլն հիւթ մը :

Ախտն ջերմի ամէն նշաններն ունենալով՝ կենաց երկու եզրերն (մանկանց և ծերոց) միշտ վըտանգաւոր կ'ըլլայ, նամանաւանդ եթէ ախտն մազանման անցքերու մէջ հաստատեալ ըլլայ : Հիւանդութեան գլխաւոր պատճառներն են՝ պաղ, խոնաւութիւն և օդոյ անմիջական փոփոխութիւնք :

ԴԱՐՄԱՆ : Ոմանք բնական ընդունակութիւն մ'ունին կուրծքի Հարբղիոյ, և ոչինչ պաղ մը կը հազաքցնէ զիրենք : Այսպիսեաց համար լաւ է՝ առաջին նշաններն տեսնելուն պէս՝ Ա+ձԻՆ առնել երեք կամ չորս անգամ՝ կէս ժամն դրդալ մը, մինչև որ հպոն կ'ակղանայ, և ըն :

Սակայն՝ եթէ անհանգստութեամբ մի քանի օր անցած ըլլալով՝ արդէն մանր խժուք մ'սկսած է, յայնժամ պէտք է Ա+ձԻՆ և Իբէ+առաննա փոփոխակի առնել (ժամը դրդալ մը), մինչև որ ախտի զօրութիւնն, այսինքն խժուքն ու հազն եւ տաքութիւնն անցնի կամ մեղմանայ :

Իսկ եթէ ախտն մաղանման անցքերու մէջ ըսկըսած է, յայնժամ պէտք է Թ+ԵԼ+ԵԼ+ԵԼ և Ար+ձԻՆ տալ վերոյիշեալ կերպով : Երբեմն հիւանդի զօրութիւն տալու համար, ՔԻՆԱ և Ա+ձԻՆ-ՖՈՒՏ տալ հարկ կ'ըլլայ, երեք կամ չորս անգամ օրը :


Ախտն երբեմն օրինաւորապէս չ'դարմանուելովն՝ Հին ձեն կ'առնէ, այսինքն մերթ ընդ մերթ կ'այցելէ իւր բարեկամի, թէև ոչ այնքան ուժգին

կերպով: Այս Հին տեսակի և նորա ջերմի համար
լաւադոյն դեղերն են՝ Իբէ+ս+սաննա, Սիֆոֆիտոնայ,
Պրայնիայ, Քուլիուդի, նաև Թուրթուր-իֆոն:

Վերոյիշեալ դեղերն փոփոխակի կրնան առ-
նուիլ, (մէկ օր երկուքն, միւս օր միւս երկուքն):

Կուրծքի Հարբուղին յոյժ վտանգաւոր տկա-
րութեանց մին է, մանաւանդ մազանման անցքե-
րու մէջ տարածեալ տեսակն, եթէ տղայոց եւ
ծեբերու պատահելու ըլլայ. անտարակոյս վտան-
գը կը թեթեւայ ճիշդ այն աստիճանաւ, որով
հիւանդութեան տարածութիւնն քիչնալով, հի-
ւանդն զօրութիւն կ'առնէ:

Հիւանդն երբ ապաքինութեան վիճակի մէջ է,
խիստ զգուշութիւն հարկ է թէ՛ կերակրոց եւ թէ
հագուստի, մի՛ թողուր որ շուտ պաղի ենթարկէ
ղինքն, զի կրկնումն առաւել վտանգաւոր, եւ
փոքրիկ անհոգութիւն մը՝ ցկեանս նեղութեան
պատճառ կ'ըլլայ:



ՀԱՐԲՈՒՂԻՆ (Նեշւէ) (Catarrh)

Հարբուղին ոչինչ պաղով մը կուգայ, և ընդ-
հանրապէս գլխոյ ծանրութիւն կամ ցաւ, ու ամ-
բողջ մարմնոյ կոտորուակ կամ ուժաթափութիւն
կը պատճառէ: և եթէ չոր տեսակն չէ, ջրանման
հիւթ մը կը հոսի քթէն. և եթէ լաւ չլինամուի,

կրնայ յառաջ բերել կուրծքի ամէն կերպ հիւանդութիւններ :

ԴԱՐՄԱՆ : Հարբղխոյ առաջին վիճակի մէջ մեր լաւագոյն դեղն է Ա+ճնէլ՛ւ՛, երբ չոր տաքութեամբ գլխոյ ծանրութիւն կ'զգայ : Իսկ եթէ երկրորդ վիճակի փոխուած է , այսինքն ջրանման հիւթ ըսկըսած է վաղել , յայնժամ Ար+էնէլ՛ւ՛ լաւագոյն է քան Ա+ճնէլ՛ : Իսկ եթէ ոսկրներու ցաւն կամ կոտրրտուկն չափազանց է , յայնժամ պէտք է Են-բ-բէր տալ՝ կամ առանձին և կամ Ար+էնէլ՛ւ՛ հետ փոփոխակի :

Այս երկու դեղերն մեծաւ մասամբ բաւական կ'ըլլան նեղութիւնն անցընելու : Երբեմն կոկորդի չորութիւն կ'ունենայ , յայնժամ պէտք կ'ըլլայ Են+բ-բէր տալ . և եթէ ուրիշ որ և է նեղութիւն մը տեսնուի , ըստ այնմ դարմանէ զայն :



ՀԱԶ ԿԱՊՈՒՏԱԿ (Pertusis)

Կապուտակ հազն տղայոց յատուկ հիւանդութիւն մ'է և մասնաւոր փոփոխական թոյն մը ըլլալ կը կարծուի , որ երբեմն կը ճարակի մանկանց մէջ , և թոքերու ու շնչառութեան դործարանաց հետ կապակցութիւն ունեցող ջղերու ծածկոցներուն կը ներգործէ :

Առողջ կազմութիւն ունեցող մանկունք շատ անգամ անվտանգ կ'անցնեն՝ առանց ո և է դարմանի , մեղմ ըլլալով , լոկ օգտափոխութեամբ , որ

Կաթէ կոտուած մանուկներուն պէտք է աղէկ հողատարութիւն ըլլայ, որպէս զի վնասակար կերակուրներ չուտեն, մանաւանդ պէտք է ըզգուշանալ և շատ մտեղէն կերակուր չտալ, այլ ըստ կարի և խիստ թեթև կերակուրներ, (կաթնապուր, հասկէտէ և շին):

Հետեւեալ բաղադրութիւնն յոյժ օգտակար եղած է նման պարագայից տակ, մանկանց հիււանդանոցներու մէջ, և ուստի պատշաճ կը համարիմ աստ յիշել զայն:

Քաղցր շաղանակի տերև 16 տրամ, 300 տրամ եռացող ջրոյ մէջ թէյն պատրաստէ, կէս ժամ թող մէջն կենայ: Արարիոյ խէժ՝ 8 տրամ, մարքուր շաքար՝ 8 տրամ և 300 տրամ տերևոյ թէյն:

Թող որ խէժն ու շաքարը լաւ մը հալին ջրոյն մէջ և յետոյ խմցուր (գաղջ) մեծկակ դրդալ մը՝ օրն հինգ կամ վեց անգամ: Սոյն բաղադրութիւնն եթէ կանուխ դործածուելու ըլլայ, գրեթէ առանց բացառութեան մեծապէս կ'օգնէ նեղութիւնն թեթևցնելու և նորա տեղութիւն:



ԱՐԻԻՆ ԹՔՆԵԼ Կ՝ (ԱՐԵԱՆ ԹՔՈՒՄՆ)

Մարմնոյ մէջ գտնուած արիւնն՝ մեծ և փոքր արեան անօթներու մէջ ըլլալով՝ կաթիլ մի արիւն դուրս չ'ելլեր՝ առանց ասոնցմէ մին կտրելու: Եւ որովհետև առ հասարակ մարդու սոսկում կը պատճառէ արեան հոսումն կամ երևոյթն, վասն

որոյ գրքոյկիս մէջ համառօտիւ բայց պարզ և ուրոշ կերպով դարձան յիշել հարկ համարեցի :

Բերնէ եկած արիւնն՝ կրնայ թոքերէ , ստամոքսէ և կամ մի այլ դործարանէ եկած ըլլալ :

Ճշմարիտ է թէ այսպիսի պարագայից տակ ընտանեկան դարձաններու վստահիլն չէ այնքան խոհեմութիւն , բայց որպէս զի մինչև բժշկիլ դաւըն՝ անդարման չմնայ , հետեւեալ յոյժ օգտակար դեղերն աստ կը դնեմ :

ԴԱՐՄԱՆ : Անտարակոյս մեծ շնչերակաց համար չէ սոյն դարմանն , այլ յաւէտ մանր անօթներէ եկած արեան :

Երբ արիւնն սեւագոյն է , պէտք է Արիւնն* մէկ կամ երկու կաթիլ , 12 դրդալ ջրոյ մէջ դնելով , 5-10-15 բողէն դրդալ մը տալ հիւանդի , մանաւանդ եթէ սաստիկ ֆլէյմայան աշխատութենէ մը վերջն և կամ արտաքին մեքենական փաստու հետեւանքն ըլլայ :

Արիւնն* : Եթէ դող կամ սարսուռի գայ հիւանդի վրայ , արեան հոսած ատեն կամ վերջն (հոյն կերպով) :

Իբէրիանն : Եթէ արիւնն բաց կարմրագոյն ըլլայ , (երբ նշան ստամոքսէ գալուն) և կամ մաղձախառն , հանդերձ ստամոքսի խառնակութեամբ (կէս ժամն դրդալ մը) :

ՄԻԼԻՖՕԼԻԸՄ : Եթէ բաց գոյն է , բայց չունի ստամոքսի խառնակութիւն , մանաւանդ եթէ

* Այս նշանն ուր որ տեսնուի՝ կը նշանակէ այն դեղոյն զօրանոր հեղուկն :

տանիչն է , և շատ անգամ ոչինչ համարուած պա-
ղէ մը կը պատճառուի , և ըստ որում փոքր 'ի շա-
տէ տաքութիւնն անպակաս ընկերն է Հազի , ուս-
տի հարկ է նախ և առաջ Ա.ձ.Ե.Ե.Ս. գործածել , ո-
րոյ օգուտն անմիջական է :

Բայց , ըստ որում բազմատեսակ է Հազն , եւ
ընկեր բազմութիւ տկարութեանց , վասն որոյ հե-
տեւեալ դեղերն՝ ընթերցողաց դիւրութեան հա-
մար՝ իրենց տեսակին համեմատ կարգաւ աստ կը
դնեմ : (Մեծաւ մասամբ Տօքթէօր Հիւզի գրքէն
քաղեալ) :

Չոր Հազ . նոր հարբղխային	Ա.ձ.Ե.Ե.Ս.
Չոր Հազ կոկորդի կարմրութեամբ և զլխոյ ցաւով	Պէլլարձնայ
» » որ պաղ տեղերէ 'ի տաքն երթալովն կը սաստկանայ . . .	Պրոյձնայ
» » կուրծքի խժուք , սիրտ խառնուուք	Իբէլլարձնայ
» » որ գիշերներն կը սաստ- կանայ	Հայօսէմբ
» » Գիշերային՝ մանկանց կամ փափկասուն անձանց	Տոլլարձնայ
Եթէ կոկորդն քերուելովն , որպէս թէ փետուր մ'ըլլար անգ . . .	Իկուլէ
Եթէ կուրծքի նեղութեամբ կոկոր- դըն ևս անհանգիստ է	Փոքօրօլ
Եթէ կոկորդի եռքն Չոր հազ պատ- ճառէ	Թարմարէ
Չոր հազ և ձայնն մարած ըլլայ	Հիբար

Կոկորդի կարմիրութիւն , ցաւ , եւ (Սքընճիաւր
մարած ձայն (չոր հաղ) (Մերձի-բար

Կոկորդի կարմիրութիւն , չոր հաղ ,
կուրծքի խժուր Սքընճիաւր

Հաղ անընդհատ (կապուտակ հաղ) ,
Ղլաձգութիւն Տրօւերայ

Հաղ կակուղ , չափազանց խուխ ,
թոքերու տկարութիւն Լայտօքօրի

Հաղ կակուղ , կուրծքի ցաւ՝ ձա-
խակողմեան , քրտինք Սիւնիֆիաւր

Հաղ , կուրծքի խժուր և ցաւ (Մե-
րոց և Մանկանց) Թարմար-իւն

Հաղ կապուտակ , Ղլաձգութիւն Բօրաւելլ , Բիւրոս

Հաղ չոր՝ նիհար և բարակ կաղ-
մութեանց Արեւիկաւր և Աւիո-ֆօ

Վերոյիշեալ հաղի դեղերէ զատ կան նաև շատ
ուրիշներն ալ , որոնք մասամբ իւրք յիշուած են
իրենց յատուկ տկարութեան դարմաններու մէջ :

Յիշեալ դեղերն պարագայից համեմատ հի-
ւանդաց կընան տրուիլ , օրն երեք կամ չորս ան-
գամ , և եթէ հարկ ըլլայ՝ երկու կամ աւելի դե-
ղեր փոփոխակի . (Թէպէտ և առանձինն տրուին
լաւագոյն է) :



ԳԱԻԱԿ ԿՄԹՌՁՆԱԽԵՂԴԻԿ (Գաւազ սօղան)

(Group)

Գաւազն՝ ընդհանրապէս տղայոց (2—7 տա-
րեկան) յատուկ հիւանդութիւն մ'ըլլալովն՝ հարկ

էր տղայոց (*) տկարութեանց կարգն դասել: Բայց որովհետեւ երբեմն (խիտ բացառիկ) պատանեաց ևս կը պատահի, և շնչառական գործարանաց վերաբերեալ աստ մ'ըլլալովն՝ աստ դասել պատշաճ թուեցաւ: (Սխտի պատճառն դեռ անյայտ է):

Գաւաին՝ որ որկորի տաժանելի աստ մ'է, և հասարակ պաղի նման կ'սկսի չոր հազով մը, ու հետզհետէ ձայնն կը մարի և շնչառութիւնն դրժուարանալովն հանդերձ, բարակ ձայն մը (հըս-ս) կը լսուի, և երբեմն՝ վտանգաւոր վիճակին մէջ սոսկին ձանման հիւթ մը հազալով դուրս կը հանէ, որ խոչարփողաց բորբոքման նշան է:

Տղայոց յատուկ եղած ախտերու ամենամբտանգաւորն է այս, իւր բնութեան՝ այսինքն անմիջական ըլլալուն պատճառաւ, (Բ. օրն 'ի յայտ կուգայ ուժգնութեամբ), վասն որոյ խոհեմութիւն չ'է՝ երկար ատեն զբքոյկիս առաջնորդութեան վստահիլ, այլ միշտ և շուտով փորձառութեաց օգնութեան հարկ է դիմել: Ս. յսու հանդերձ հեռեեալ երեք գլխաւոր դեղերն, որ առ հատարակ բաւական եղած են այս աստն բուժելու, աստ կը դնեմ:

ՆՇԱՆՔ. Փոքրիկ հիւանդն՝ նախ հազ, որկորի անհանգստութիւն, փոքր ինչ ցաւ, կուրծքի նեղութիւն, ու շնչառութեան դժուարութիւն կ'ունենայ: Ասոնց գլխաւորն է Հազն, որ պառկածին պէս կ'սկսի, ու քնացած ժամանակն մասնա-

(*) Պէհր. արուներն աւելի կ'ըլլան, քան էգերն: 100ին 70 արու, 30 էգ:

ւոր ձայն մը (խըռ-խըռ) կ'ունենայ : Այս հազն մի քանի անգամ մէկզմէկու ետև կուգայ , որոյ պատճառաւ հիւանդն 'ի քնոյ կ'արթննայ . քիչ վերջը ձայնն կը հաստնայ (խապա) մարելու մօտ , և շնչառութիւնն յայնժամ աւելի արագ կ'ըլլայ , կարմիր ու արտասուքներով լի աչօք , մարմինն չոր տաքութեամբ կ'այրի , ու բազկերակն կը բարձրանայ , թէև խիստ բարակ և տկար կ'ըլլայ , շատ անգամ լեզուն դուրս քաշելով բերանն կը բանայ , ո՛չ այնքան ցաւոյ սաստկութեան , այլ յաւէտ շնչառութեան գժուարութեանը պատճառաւ ևն : Այսոքիկ գրեթէ ախտի այսինքն ծանր վիճակը կը նկարագրեն . և եթէ խնամք չտարուի , յայնժամ (երկրորդ օրն) երկրորդ վիճակին կը հասնի , այսինքն ջղաձգութիւն , խեղդիչ հազ , կապտագոյն շրթունք , այտերն մերթ դեղնագոյն , մերթ կարմիր և կամ մին կարմիր և միւսն դեղին կ'ըլլայ , ձայնն բողբոջին կը մարի , և խռչափողէն սղոցի ձայնի նման (խըռ-խըռ-խըռ) ձայն մը կը լսուի : Յայնժամ խեղճ հիւանդն կը ճգնի խուխ հանել , բայց 'ի դուր . բազկերակն մերթ ընդ մերթ բողբոջովն անզգայ կ'ըլլայ եւ շնչառութիւնն խիստ գժուարին : Սա՛ է յոյժ վտանգաւոր վիճակն :

Երրորդ վիճակն՝ հիւանդի ապաքինումն է , երբ հազն կակղացած ըլլալով , գիւրաւ հիւթն դուրս կը հանէ և հետզհետէ ազատ շնչառութիւնն կ'սկսի :

Բոլոր այս ախտէ բռնուողներն՝ վերոյիշեալ երեք վիճակներէ պարտին անցնիլ , անշուշտ՝ ոմանք թեթև և այլք ծանրագոյն , եթէ մահն

չարդիլէ՛, Որպէս արդէն յիշեցի, կը փափաքիմ աստ
տոյն ախտի համար գործածեալ երեք գլխաւոր
դեղերն նախ յիշել, և ասոնք են. Ա.՝ Ենթիւ, Սքընճիւ,
Հիքուր. . . Թէև Իօրիւր, Արեւիւր, Լատիւր և Քուր-
ևս կը գործածուին:

ԴԱՐՄԱՆ: Որովհետև ախտն հարողսոյ նման
կ'սկսի, ուստի երբ առաջին նշանն կը տեսնուի,
անմիջապէս Ա.՝ Ենթիւ մի քանի կաթիլ՝ զաւաթ մը
(30 տրամ) ջրոյ մէջ դիր և կէս ժամն դրդալ մը
տուր, մինչև որ հիւանդի հազն կ'ակզանայ եւ
սկսի ազատ շունչ առնել: Իսկ եթէ մի քանի ժամ
արդէն անցած ըլլալով, հիւանդութիւնն երկրորդ
վիճակին հասած է, յայնժամ Սքընճիւ, պէտք է
տրուիլ վերոյիշեալ կերպով: Եւ թէ որ առաջին
օրն 'ի նկատի չ'առնելով՝ երկրորդ օրն խոչարհողի
մէջ խէժային հիւթ հաւաքեալ է, ու յատուկ
ձայնն (խրո-խրո) կը լսուի, յայնժամ Հիքուր-
պէտք է տալ:

(Երբեմն ախտն ճիշդ սկսած ժամուն ուժգը-
նութեամբ կը յարձակի հիւանդի վրայ, այսինքն
անմիջական շնչարդեւութեամբ, ձայնն չափազանց
մարած ըլլալով, հազն ևս փոխուած կ'ըլլայ,
յայնժամ Ա.՝ Ենթիւրի հետ փոփոխակի պէտք է Իօ-
րիւր տալ վերոյիշեալ կերպով:

Ի մեծ դիւրութիւն՝ այս արագահաս ախտի
սկսած ժամանակն՝ վերոյիշեալ երեք դեղերն կար-
գաւ և փոփոխակի տալ կը պարտաւորիմք: Իւ-
րաքանչիւր դեղէ (Ա.՝ Ենթիւր, Սքընճիւ և Հիքուր) զատ
զատ գաւաթներու մէջ պատրաստելով՝ տասը ըո-
պէն դրդալ մը տուր փոփոխակի, մինչև որ հի-

ւանդն լաւագոյն վիճակ մ' ունենայ, յայնժամ ուշացուր դեղոց մատակարարութիւնն մինչեւ մէկ ժամ: Ս.յս վերջին եղանակաւ քանի՛նե՛ր՝ որ անյոյս երեսի վրայ ձգուած էին՝ ազատած են. եւ ուստի զայս կերպ կը յանձնարարեմ ընթերցողաց: Միւս յիշուած դեղերն ևս կրնան դարձածուիլ երբեմն մասնաւոր ներութեանց համար:

Արեւի+ւ: Եթէ շնչառութիւնն խիստ դժուարին է և խեղճ հիւանդիկն կը ճգնի, շունչ կը վնասուէ. (կրնաս երբեմնակի՛ մինչև խակ վերոյիշեալ դեղերու տրուած ժամանակն տալ):

Լ+ե+ի+ և Ք+լ+դ: Եթէ խոչարիողն ցաւ կայ:

Մաքուր ջուր, թեթեւ հացի ջուր, ջրախառն կաթ պետք է տրուիլ հիւանդի, մինչ ակտն իւր ուժգնութեան մէջն է:

Հիւանդն ցրտազին հովերէ մեծաւ զգուշութեամբ պահպանել կարևոր է, վասն զի ամէնաուշինչ պաղ մը՝ հիւանդի ապաքինման ժամանակ՝ առաւել վտանգի կ'ենթարկէ զայն: Նաև ծանր ծածկոցներով ևս հարկ չէ բեռնաւորել խեղճ հիւանդիկն, որպէս զի արդէն ունեցած շնչառութեան դժուարութիւնն չ'բազմապատկուի:



ՓՈՂԱՑԱԻ (Հիւան+) (Angin catarrhal)

Փողացաւն՝ կոկորդի մաղասային (mucous) թաղանդին բորբոքումն է, և շատ անգամ իբր

Հասարակ պաղ մը կ'սկսի հարբելոյ նման։ Սա բուրբավին կը տարբերի մանաներու տկարութենէ, որոց հետ շատ անգամ կը խառնակի։ Այստի գըլխաւոր նշաններն են՝ ընդհանուր մարմնոյ տաքութիւն, կոկորդի կարմրութիւն, չորութիւն եւ ցաւ, ևլն։

ԴԱՐՄԱՆ։ Ընդհանուր մարմնոյ տաքութեան համար պէտք է Ա⁺ձ⁺է⁺ տալ. սա՛ մարմնոյ գըրգռումն ու տաքութիւնը կը մեղմացնէ և շատ անգամ եթէ կանուխ արուելու ըլլայ՝ լաւ է տկարութիւնն բուժել։ Իսկ եթէ տաքութեամբ հանդերձ՝ կոկորդի չորութիւն և խմելու կամ ուտելու ժամանակ ցաւ ևս ըլլայ, յայնժամ պէտք է Պեղ⁺ձ⁺է⁺ տալ կամ առանձինն և կամ փոփոխակի Ա⁺ձ⁺է⁺ի հետ։ (Իւրաքանչիւր դեղէ ժամը դըրդալ մը բաւական է)։

Բայց եթէ ցաւն սաստիկ ըլլալով հանդերձ ճերմակ վէրքեր ու նշաններ կը տեսնուին, յայնժամ Մեր⁺է⁺ր⁺ պէտք է տալ։ Եւ եթէ գլխոյ կոպտացող ցաւ ալ կայ, յայնժամ լաւ է Պեղ⁺ձ⁺է⁺ եւ Մեր⁺է⁺ր⁺ փոփոխակի տալ։

Երբեմն ո՛չ այնքան ցաւ կ'ըլլայ որքան որ ուռեցք, և սա կը նմանի ճիշդ մեղուի խայթածի նման. առաւել կիզող է նեղութիւնն՝ քան թէ ցաւ։ Այսպիսի պարագայից տակ լաւագոյն դեղն է Աքէ⁺—ճ. նախ ժամը դըրդալ մը և յետոյ երկու կամ երեք ժամն բաւական է։

Երբեմն մեծապէս կ'օգնէ և հիւանդի հանդըստութիւն կուտայ, Յիլ⁺ձ⁺է⁺ (ուգին) 1 տրամ, 100 տրամ ջրոյ մէջ պատրաստելով կոկորդն լուա-

նալն (հ-բ-բ-բ, ընեխն), օրն երեք չորս անգամ:

Անտարակոյս հիւանդի կերակրոց մեծ զգուշութիւն ընել կարևոր է, որպէս պաղէն:



ՀԱԳԱԳ (Հ-բ-բ-բ-բ-բ)

(Laryngotrachial catarrh)

Հագագն՝ խռչափողի առաջին մասն է, որոյ աճառեայ կողմն յայտնի կերևնայ դուրս ցցուած և որ կը կոչուի Ադամայ Խնձոր: Այս աճառաւոր խողովակն երբեմն կը բորբոքի, և էր ժամանակ մը՝ յորում նորա բորբոքումն (*) թէ՛ հիւանդաց տիրոջը և թէ՛ բժշկաց ահ կը պատճառէր. եւ դեռ բոլորովին ազատ չէ նման երկիւղէ, վասն զի աստն խիստ շուտով իւր ընթացքն կը կատարէ և կամ կը տարածուի:

Հագագի բորբոքումն առաւել չափահասներու հիւանդութիւն մ'է քան մանկանց: Ախտի գլխաւոր պատճառն է պաղի, զի յայտնի կը տեսնեմք մեր առօրեայ կենաց մէջ թէ՛ անոնք որ ընդհանրապէս վղերնին կը ծածկեն, աւելի շուտ ենթակայ են սոյն տկարութեան: Թէ ինչո՞ւ ո-

(*) Ո՛չ պարզ հարդխային տեսակն, զի սա չ'է մահացու, բայց երբ կը տարածուի մինչ խռչափողի թաղանթներուն, յայնժամ խիստ վտանգաւոր է, եւ որոյ համար վիրաբուժական գործողութիւնն անհրաժեշտ կ'ըլլայ շատ անգամ:

մանք աւելի ընդունակութիւն ունին այս ախտի , չեմք կարող բացատրել . բայց գիտեմք թէ ձայնի չափազանց գործածութիւնն մասնաւոր ընդունակութեան մի պատճառն է , որպէս կը տեսնեմք երգեցողաց մէջ և չն . նաև ոգեկից ըմպելեաց չափազանց գործածութիւնն կրնայ մի երկրորդ պատճառն համարուիլ :

Այս ախտն կրնայ նոր ըլլալ և կամ Հին , այսինքն ախտի հետքն մնալով հիւանդի վրայ՝ մերթ ընդ մերթ կրկնուի : Ախտի թեթև տեսակին՝ ընդհանրապէս շատ տաքութիւն չ'ունենար , (իսկ ծանրը տեսակի տաքութիւնն խիստ է , և կրնայ տեւել 5—9 օր) . իսկ ցաւն կիզող է , և երբ վրան ճնշուի՝ կը սաստկանայ : Երբեմն ցաւն բոլորովին աներևոյթ կ'ըլլայ , բայց ժամանակէ վերջը կրկին ի յայտ կուգայ : Հիւանդի ձայնն մերթ մտրած և մերթ բոլորովին անորոշ կ'ըլլայ , այնպէս որ հիւանդի խօսակցութիւնն անլսելի և կամ անհասկընայի կ'ըլլայ : Նաև մի մասնաւոր չոր հազ (*) (որ կոկորդի չորութեան պատճառաւն է , զի հիւանդին ընդհանրապէս բերանը բաց կը ննջէ .) կ'ունենայ , և հազի պատճառաւն փսխունք ևս կը պատճառէ , և ահա յայնժամ կը դադարի հազն :

Ընդհանրապէս տղայոց՝ գիշերներն կը պատահի . տղայք՝ որ օրուան ժամերուն մէջ ուրախ զուարթ կը խաղային , գիշերներն յանկարծ ձայ-

(*) Ախտի տարածեալ և սաստիկ տեսակին մէջ հազն խժոյին կաշիւն հիւթ մը կ'ըլլայ և երբեմն արիւնախտուն թաղանթաւոր :

ներնին մարած (խապացած) կ'արթնան հազարով
(որ շատ անգամ դաւակի նմանելով՝ կը խարեն
զծնողս)։ Իսկ հետևեալ առաւօտուն կը տեսնենք
շտկուած իրենց ձայներն, եթէ հարբուղին չ'է
այնքան սաստիկ։ Սոյն ձայն մարիլն, ինչպէս ար-
դէն յիշեցի, բերնի չորութեան պատճառաւն է
և ոչ ախտի ուժգնութեան, վասն զի յայնժամ
մանուկի ձանն չ'էր կրնար շտկուիլ։ Սոյն ախտն՝
եթէ աղէկ խնամք տարուի՝ մինչև ինն օր կը բու-
ժի. սակայն յետ այնորիկ ևս կարևոր է խնամք,
զի փոքրիկ զանցառութիւն մը կրնայ ախտն Հին
տեսակի փոխել։ Մանաւանդ ձայնն աւելի երկար
ժամանակի կը կարօտի իւր նախկին զօրութիւնն
ստանալու համար. վասն զի որչափ որ բոլոր նե-
ղութիւնք անհետանան ինն կամ տասն օրուան
մէջ, ձայնի մարածութիւնն աւելի երկար, այսին-
քըն մինչև երեք շաբաթ և երբեմն ալ աւելի կը
տեւէ։ (Պէ՛ՀԲ)

Ախտի տարածեալ և սաստիկ վիճակի մէջ՝
դժուարին է խեղճ հիւանդի ո և է կերակուր ու-
տելն, թէ՛ հեղուկ և թէ՛ թանձր, զի շատ ան-
գամ երբ կը ջանայ կուլ տալ, ունդաց անցքերէ
և բերնէ դուրս կուգայ։

ԴԱՐՄԱՆ. Ախտի նոր սկսած ժամանակ եթէ
տաքութիւն ըլլայ, Ա+ՅԵ՛՛ մէկ կամ երկու կաթիլ
փոքրիկ գաւաթ մը ջրոյ մէջ դիր, և կէս ժամն
դրգալ մը տուր, մինչև որ հազն կ'աղղանայ ու
տաքութեան աստիճանն մեղմանայ, յետոյ աւելի
ուշ պէտք է տրուիլ Ա+ՅԵ՛՛, եթէ առաջին ան-
գամ ձայնը մարելուն (խապանալ) պէս տրուելու

ըլլայ, ինքնին բաւական է արգելել ակտի տարածումն: Իսկ եթէ վերոյիշեալ նշանն 'ի նկատի չառնուելով ակտի ուրիշ նշաններն 'ի յայտ եկած են, յայնժամ հետեւեալ դեղերն հարկ կ'ըլլայ գործածել:

Հիբուս: Եթէ Ա.ժ.Ի.Ն. մատակարարուելէ յետոյ հազն կակղանալով հանդերձ՝ ձայնն մարած կը մնայ:

Սքննիւթ: Եթէ հազն չոր և անընդհատ (Վիլհելմ-Երև) ըլլալով հանդերձ՝ որկորն ուռեցած և ձայնն մարած ըլլայ. (երկու ժամն դրգալ մը՝ եթէ տաքութիւնն չէ անցած բոլորովին, փոփոխակի սուր Ա.ժ.Ի.Ն. ի հետ):

Ա.ժ.Ի.Ն.: Եթէ որկորն կարմրագոյն և չափազանց ուռեցած ըլլալով՝ խայթող ցաւ կայ ու ձայնն անորոշ է:

Քուլտի: Իսկ եթէ որկորն ասղանման (*) ցաւ ըզգայ հեղուկ և կամ թանձր կերակրոյ ժամանակ:

Վերոյիշեալներէ զատ՝ ունիւք նաև հետեւեալ դեղերն (**), զոր տարբեր հեղինակաց ձեռաց տակ օգտակար եղած ըլլալնուն պատճառաւ, աստ կը յաւելուի:

(*) Այս ցաւը կը նմանի ձկան մանր ոսկրներու (փուշերու) պատճառած ցաւոյ, որ երբեմն անդ կը մխի, և քանի անգամ որ ուտելու կամ խմելու ըլլայ, մինչև իսկ շնչառութեան ատենն՝ ցաւ կը պատճառէ:

(**) Մին Ամերիկեան բժշկաց՝ կը յանձնարարէ Տրոսիլոյ, երբոր հազն անընդհատ և սաստիկ է. և Քուլտի, եթէ վերջ գոյացած է ներսը, (չին տեսակաց համար):

Բաղ-խոր, Մանգանաս, Թոֆորոզ, Բարսո-Վ, Մերիկ-բա-
խոր, Պելլարծնայ, Լավեւին, Բուխիւր, որք Հին տե-
սակի համար կրնան փորձուիլ, Իսկ դալով Նոր
տեսակին՝ կը խրատեմ զընթերցողս, որ երբ տես-
նեն թէ՛ արդէն գործածեալ դեղերն չունեցան
ախնկալեալ արդիւնքն, այլ ևս չ՛ջանան փորձել:
Ձի ախտն յայտնի է թէ չէ սլարդ տեսակն, այլ
տարածեալ և յոյժ բորբոքեալ, և սա չի նմանիր
այն տկարութեանց, որ մի քանի օր փորձն վնաս
մը չի սլատճառէ հիւանդին: Վասն որոյ կը խրա-
տեմ ընթերցողն որ փոխանակ ուրիշ դեղեր փոր-
ձելով՝ ընդունայն ժամանակ կորսնցնելոյ, անմի-
ջապէս դիմէ ճարտար և փորձառու բժշկի մը խը-
րատուցն: Այսպիսի ՚ի բացակայութիւն բժշկաց՝
գործածութեան համար դրուած են, որպէս զի
խեղճ հիւանդաց տէրերն չ՛շուարելով ընեն զոր
ինչ հնարաւոր է՝ մինչ ՚ի բժշկաց դալուսան:

ՄՍԲԱԾ ՁԱՅՆ

Ձայնի մարին՝ ինքնին հիւանդութիւն մը չէ,
այլ մի նշանն որ՝ շատ անգամ ախտն բողբոլովին
դարմանուած չլլլալով, հետք մը կը թողու: Վա-
սըն որոյ աստ կը գնեմ իրենց պատճառներով
միատեղ և դեղերն, որ ՚ի հարկին դիւրութիւն
մ՝ լլլայ ընթերցողաց:

Ձայնն՝ երբեմն գործարանաց աւերման սլատ-
ճառաւն կը մարի, որ յանժամ բուժիլն անկարելի


կըլլայ: Սակայն ուրիշ անգամներ հարբղխոյ եւ կամ մի այլ տկարութեան պատճառաւ կ'ըլլայ, որ յայնժամ կրնան սա հետեւեալ դեղերն գործածուիլ:

ԳՍԼՄԱՆ: Եթէ որկորն ցաւ չ'կայ, ո՛չ ուռեցք և ո՛չ կարմրութիւն, ընդհանրապէս Բուրճիւրճի յոյժ օգտակար եղած է:

Կանանց ջղային մարած ձայներու համար Եւրոպայի, Բուրճիւրճի, և Ինչուշի (*) միշտ գործածուած են: (Ինչուշի՝ յատկապէս վշտաց պատճառաւ մարած ձայնի համար):

Եւ եթէ ընդհանրապէս դաշտանի մերձենալու օրերն պատահելու ըլլայ, ճեւեղի հարկ է գործածել: Եւ եթէ սաստիկ տաքութեան պատճառաւն է, որպէս կը պատահի սաստիկ կրակի դէմ աշխատող գործաւորաց, յայնժամ պէտք է Անի-ճիւրճի տալ:

Բուրճիւրճի: Եթէ ձայնն մարած ըլլալով հանդերձ չոր հազ և փորհարութիւն ունենայ հիւանդն: Եւ Սերիւր, Սերիւր, Փոփոք և Հիւր-ճիւրճի տարբեր պարագայից տակ օգտակար եղած դեղեր են, որոնք 'ի հարկին կրնան փորձուիլ: (Վերջիշեալ դեղերու ո և է մին 3 ժամն անգամ մը պէտք է տալ):



(*) Այս դեղն լաւ է գիշերներն չ'գործածել, փասն զի ջղային գրգռումն կը պատճառէ:

ԳԼԽՈՅ ՑԱԻ

Գլխոյ ցաւ ըսելով՝ այն ինչ մասնաւոր ցաւն չենք հասկնար, այլ յաւէտ ցաւոյ տեղն, եւ որ կրնայ ընդհանուր կազմութեան և կամ մասնաւոր գործարանի մը անկարգութեան պատճառաւն ըլլալ. զոր օրինակ Ստամբուլ անկարգութենէ, Հարբըլիոյ և Յօդացաւոյ ատենն, և կամ կրնայ մասնաւոր ջղային ցաւ մ'ըլլալ, վասն որոյ լաւագոյն և օգտակարագոյն պիտի ըլլայ ընթերցողաց համար ատո դասակարգել զանոնք՝ հանդերձ իրենց յատուկ դեղերովն:

ԳՍՐՄԱՆ: Եթէ ցաւն շարունակ ըլլալով՝ ո և է շարժմամբ առաւել կը սաստկանայ, Պէլլուրմն և Ճէլէֆնէ պէտք է գործածուի: (Այս տեսակ ցաւն ամբողջ գլխոյ բոլորտիքն կարծես թէ պինդ կերպով սեղմուած և կապուած կ'ըգայ հիւանդն):

Եթէ կերակուրներէ վերջն աչքերն մթննալով գլխոյ գաղաթն կը ցաւի, Պրայմէյ պէտք է տրուիլ: (Ցաւն չէ սաստիկ կամ կոպտացող):

Իսկ եթէ չափազանց կերակրոց, և կամ ոգելից ըմպելիքներէ և կամ քնահատութեան պատճառաւն է, (աչաց վրայ կոպտացող), Նէպտալմ: Դաշտանի ժամանակ, և կամ իւղոտ կերակուրներէ վերջն եղած գլխոյ ցաւերու համար՝ Բուլմիլ: Ջղային անձանց, մասնաւանդ կանանց, գլխոյ միայն մէկ կողմն եղող ցաւի համար, (Այստեղու մին դեղնագոյն և միւսն վարդագոյն), Քոֆայլ: Պնդութեան պատճառաւ, մասնաւանդ Յօդացաւոյ

ԳԼԽՈՅ ՅԱՒ ՄԱՂՁԱԹԻՆ

Այս տեսակ ցաւն կրնայ 'ի կրից, կերակրոց անկարգութենէ և օդոյ անմիջական փոխախախտութենէ յառաջ գալ. և ուստի հարկ է պատճառաց համեմատ դարմանել:

Գլխաւոր նշաններն են՝ սիրտ խառնուուք, կերակուրներէ զղուանք, և նեղութեան սաստկացած ժամանակն՝ նախ կերակուրն և ապա մաղձ կը փսխէ, ընդհանրապէս փորն պինդ ըլլալով. սակայն երբեմն փորհարութիւն ևս կրնայ ունենալ:

Այլ կուշտն ընդհանրապէս ցաւ կամ ծանրութիւն կ'ունենայ, որ երբեմն մինչև երկու թիակներու (ուսերու) մէջ տեղն կը տարածուի. լեզուի և աչաց դեղնութիւն և բերնի դառնութիւն դրբեթէ միշտ կ'զգայ: Սա՛ է Մաղձային կոչուելուն պատճառն, և մինչև որ հիւանդի ախորժակն չը վերադառնայ, գլխոյ ցաւն բոլորովին չ'անցնիր, թէև կը մեղմանայ:

Այս տեսակ գլխոյ ցաւոյ ատեն անվրէպ մի նշանն է փսխուընք, և ամէն անգամ որ կը փսխէ՝ գլխոյ նեղութիւն կը սատկանայ. վասն զի շարժումն՝ ցաւն սաստկացնող պատճառաց գլխաւորն է:

ԴԱՐՄԱՆ. Թեթև տեսակներն ընդհանրապէս եթէ կանուխ սկսուի՝ Նիտրատի կը դարմանուի: (12 հոգ 6 դրգալ ջրոյ մէջ, ժամը դրգալ մը պէտք է տրուի). մանաւանդ երբ հիւանդն պնդութիւն ալ ունենայ. շատ անգամ աւելի շուտ կրնանք

դարմանել, (մանաւանդ իդական սեռն), եթէ
Նիսիւսը հետ Բուսիւսը փոխարինել նոյն չա-
փով տալու ըլլանք :

Բայց եթէ փոխանակ պնդութեան՝ փորհա-
րութիւն ըլլայ, յայնժամ պէտք է Մերսի-բուսը
բուսի, օրը երեք կամ չորս անգամ, կերակուրնե-
րէ մէկ ժամ առաջ կամ երկու ժամ վերջն :

Երբ հիւանդն կը փսխէ՝ Նիսիւսը հետ պէտք
է Իբիսիւսը տրուիլ ամէն կէս ժամն դրդալ մը՝
մինչև հիւանդն աղէկի դառնայ, յայնժամ աւելի
ուշ պէտք է տալ դեղերն :

Տկարութեան նոր սկսած ժամանակը՝ պաղ
ջուրն բոլոր ընկերեաց լաւագոյնն է, և պէտք չէ
խնայել հիւանդին :

Հացի ջուր, կաթ, մսի ջուր ևլն. հետզհետէ
կրնայ տրուիլ հիւանդին :



ԳԼԽՈՅ ՊՏՈՅՏ

Մարդիկ կան՝ որ առանց որ և է մտադրու-
թեան արժան պատճառի մը՝ սոյն տկարութեամբ
կը նեղուին, մինչ կազմութեամբ են առոյգ և
գործունեայ, ու հետևապէս զօրեղ, բաց ՚ի եր-
բեմնակի պնդութենէ, ասորժակի կորուստ եւ
բերնի դառնութենէ մը, որոնք աննշան համարե-
լով անդարման կը մնան, մինչև որ կրկին նեղուին
և աւելի սաստիկ :

Այսպիսի անձինք մեծապէս կ'օգտուին, եթէ

գլխոյ մազերու մէջ անդամ մը որ սկսի , և անմարբութեամբ զանց առնուի , հետզհետէ տարածուելով կրնայ ամբողջ մազերու արմատներն փրտեցնել և գլուխն մասամբ , կամ բոլորովին գոնչընել . վասն որոյ առաջին նշանն որ կը տեսնուի , պէտք է ամէն միջոց 'ի գործ դրուիլ գլուխն մաքուր պահելու . լաւ է մէկ երկու անգամ լուալ պաղ ջրով և օճառով . յայնժամ ո՛չ միայն ուրիշ գեղորէից հարկ չ'մնար , այլ արտաքուստ գործածուելու բազում վնասակար սպեղանիներէ ալ կ'ազատի :

ԴՍՐՄԱՆ ՆՆՐՔԻՆ : Երբոր վէրքը չոր է , եւ եռք ունի , և եթէ վզին վրայ ուռ կայ , յայնժամ պէտք է Քլորիֆորմ տալ առաւօտ և երեկոյ 4 հոգ չոր . և եթէ արդէն վէրքն տարածեալ է , պէտք է փոփոխակի տալ Սերենիէ՛ , այսինքն մէկ օր Քլորիֆորմ և միւս օրն Սերենիէ՛ :

Կրֆիլի : Եթէ վէրքն խիստ դարչահոտ է և չոր : Հիֆորմէ կամ ռիֆորմ փոփոխակի : Եթէ սաստիկ եռք ունի և վէրքն է խոնաւ , և օր աւուր կեղևներն կը թափին :

Վերոյիշեալ գեղերէն որ և է մէկն որ կը տրուի հիւանդին , պէտք չէ հինգ կամ վեց օրէն առաւել անընդհատ տրուիլ , այլ լաւ է միշտ միջանկեալ ուրիշ գեղ մը տալ , և կամ մի քանի օր առանց գեղի թողուլ :

Եթէ այսպէս զգուշութեամբ գործածուի , յայնժամ առանց մեծ դժուարութեան՝ կարող կ'ըլլամք հիւանդն բուժել :

ՀԵՐԱԽՏ (ԳԱՄ ՄԱԶԵՐՈՒ ԹԱՓԻՂԵ)

Հաղարաւորներն այս ներդրութեան համար ամէն օր կը խորհին եւ ղերենք յոյժ ապերջանիկ կ'ընեն, մանաւանդ իզական սեռն, որոնց պարծանաց մին է իւրեանց գլխոյ մաղերն:

Այս ներդրութիւնն բազում անգամ սաստիկ հեւանդութենէ մը յառաջ կուգայ, որ սննդական պակասութիւնն կը ցուցնէ, որպէս Թէֆլէ և լն. և լն.

Այսպիսի պարագայից տակ՝ գլուխն պարտ է քիչ մը մաքուր ձիթախաղով շփուիլ, և պազ շրով լուանալէ վերջն աղէկ մը չորցուի:

Այս ներդրութեան համար թէև ներսէն մատակարարելի դեղերն այնչափ և բացարձակ չեն բուժեր, սակայն կան պարագայներ և պատճառներ որ եթէ վերցուին, մաղերու արմատներն և իւրեանց աճումն աւելի կը զօրանան. վասն որոյ աստ մի քանին յիշել հարկ կը սեպեմ:

ՊԱՐՄԱՆ, եթէ սովորաբար գլուխն չոր է և տաք, յայնժամ պէտք է շարաթ մը՝ առաւօտ և երեկոյ Առօրէ տալ, (6 հապ, երկու մեծ դրգալ շուր, մէկն առաւօտուն և միւսն գիշերն). և երկրորդ շարաթն՝ նոյն կերպով Պէլլաճնայ:


Քայց եթէ քթէն իլինքն անպակաս է, և վղի մըսաններն ալ ուռեցած, յայնժամ Քալաբիլ տուր նոյն կերպով:

(Վերոյիշեալ դեղերն կրնան փոփոխակի դործածուիլ ժամանակ մը):

Երբեմն զարմանալի օգուտ տեսնուած է ներ-

սէն և դուրսէն Բնութեան գործածելով. (մէկ ցորեն 100 տրամ ջրոյ մէջ հալեցուր, առտու և գիշեր մէկ մէկ մեծ դրդալ խմէ՛. Նաև կէս տրամ Բնութեան հալեցուր 100 տրամ ջրոյ մէջ, և քիչ մ'ալ հոտաւէտ իւղ խառնելով շիէ՛ գլուխդ առաւօտներն.:

(Գլուխը մերթ ընդ մերթ պէտք է լուանալ):



ԳԼՈՒԽ Ե .

ՏԿԱՐՈՒԹԻՒՆՔ

ՄԱՐՍՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԱՑ

Մարսողական գործարանն ըսելով՝ պէտք է՛ է հասկնանք միայն ստամոքսն , այլ պարզապէս խօսելով՝ բերնէն մինչ աղետոց վերջին ծայրն՝ մարսողական գործարանի մասունքն են և անոնց ամբողջութեամբն նա կազմուած է :

Բայց մենք աստ պիտի խօսինք գլխաւորապէս ստամոքսի վրայ , որ մարսողական գործարանի մեծագոյն կամ կարեւորագոյն գործին ճանչցուած է՝ իւր պաշտօնիւն :

Ա . ՄԱՐՍՈՂԱԿԱՆ ԳԺՈՒԱՐՈՒԹԻՒՆ

Այս գծուարումաց տկարութիւնն՝ ընթերցողաց գիւրահասկանալի ընելու յարմարագոյն կերպըն է՝ նորա պատճառներն համառօտիւ աստ յիշելն :

Մարսողական գծուարութիւնն երկու տեսակ է , Հին և Նոր :

Նոր ըսելով՝ անպատշաճ կերակուրներէ յառաջ եկած նեղութիւն ըսել կ'ուզեմք , որով դրժուարին կ'ըլլայ մարսելն և որուն համար առհասարակ փսխեցուցիչ մը կը տրուի , երբ դեռ կերակուրն ստամոքսի մէջն է , և ոչ թէ աղետոց : Բայց եթէ ժամանակ անցնելով և ստամոքսէն

դէպ յ'աղիքներն իջնելով իւր բնական ընթացքը կ'առնէ, այն ատեն փոխեցուցիչն յաւէտ վնասակար կը դատուի :

Ոմանք կը կարծեն թէ՛ այս նեղութիւնն մըտաւոր յուզմանց հետեւութիւն է, այսինքն վիշտ, ահ, բարկութիւն և ին. և կամ ցրտոյ ու կերակուրներէ անմիջապէս ետքն մտաւոր կամ ֆիզիքական ծանր աշխատութեան պատճառաւ յառաջ կուգայ, թէև կերակուրն չափաւոր և դիւրամարսելի եղած ըլլայ :

Այսպիսի պարագայից տակ պատշաճագոյն դեղերն են՝ Բուլուիլլ, Նիտրալ և Արեւիք :

Բուլուիլլ : Եթէ հիւանդի ձեռքերն ու ոտքերն պալ ըլլալով, սիրտ խառնուուք և փոխունք, լեզուի ճերմակութիւն և կերակրոց զզուանք ունի, ու անմարս իւղային կերակրոց համն դեռ բերնին մէջ կ'զգայ :

Նիտրալ : Եթէ չափազանց և դժուարամարսելի կերակրոց պատճառաւ սաստիկ ցաւ զգալով՝ կերակուրն դուրս հանելու համար կ'աշխատի, եւ կամ ողելից ըմպելեաց պատճառաւն է :


Արեւիք : Թթու կամ խակ պտուղներու կամբուսականաց և կամ չափազանց սառ ու պաղպղակ ուտելէ յառաջ եկած նեղութեան :

Արդ՝ կը տեսնեմք վերոյիշեալ նշաններէ թէ՛ Բուլուիլլ, Նիտրալ և Արեւիք, առ հասարակ պատահական դժուարամարսութեան առաջին կարգի դեղերն են :

ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ, Նիտրալ : Եթէ կերակուրներէ անմիջապէս վերջն նեղութիւն կ'զգայ,

Երբեմն դիտոյ ցաւ : 12 հաղ , 12 դրգալ ջրոյ մէջ
հալեցուր և 5-10-15 բոսկէն դրգալ մը տուր , մինչ
չև որ նեղութիւնն անցնի :

Բուլուղիւն : Մանաւանդ իւղային կերակրոյ վերջն
դիւաւորապէս երբ անհանդատութիւն կամ ցաւ
երկու կամ երեք ժամ վերջն կ'զգայ :



Հին ՄԱՐՍՈՂԱԿԱՆ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆ

Փոխանակ աստ տկարութիւնն բացատրելու ,
պատշաճ կը համարիմ (արդէն տկարութեան նոր
տեսակի վրայ խօսած ըլլալով) միայն նեղութեանց
նշաններու համեմատ դեղերն կարգաւ դնել . մի-
այն աստանօր սա կը յաւելում որ եթէ այս տը-
կարութիւն աղէկ չի դարմանուի , կրնայ աղեաց
բորբոքման պատճառ ըլլալ :

Ոգելից ըմպելեաց սովորութիւն ունեցող ան-
ձանց համար նիւտրալ անալիս դեղն ըլլալով ,
դանդաղ մարսողութեան համար կըֆֆին , և թթու ,
կազային զգայունութիւն (ետ գալ) կերակրոյ , սիրտ
խառնուուք , ստամոքսի ցաւ , լուծման հակամի-
տութիւն , բերնի գէշ համ , (մանաւանդ կանանց)
Բուլուղիւն :


Անպատշաճ կամ խառն կերակուր , կերակրոյ
անմիջապէս վերջը ծանրութիւն , Մերէիւր :

(Իբր քար մը) զգայնութիւն ստամոքսի , մա-
նաւանդ անմիջական շարժմամբ , Պրոյն :

Այս տեսակ ցաւեր՝ լեարդի տկարութիւն ունեցողաց աւելի կը պատահի :

Խմորեղէն և անմարս կերակուրներէ՝ ծերոց համար Լայօքսօլէճ և Քարլօֆէճ, և տղայոց համար Քարլօլէճ գլխաւոր դեղերն են :


Շատ անգամ ստամոքսի տկարութեանց մէջ դժուարին կ'ըլլայ երկու դեղոց մին ընտրել. վասն որոյ այնպիսի պարագայից տակ՝ երկու դեղեր, կամ երբեմն խիստ ստիպողական վիճակաց մէջ երեքն կ'ընայ փոփոխակի տրուել, 5—10 կամ 15 ըռպէն գրգալ մը :



ՍՏՏՄՈՒՔՍԻ ՑԱՒ (Յեռ կերակուր)

Ստամոքսի ցաւն՝ կ'ընայ պատճառիլ ուղղակի ստամոքսի գործարանաւոր մէկ տկարութենէն, զոր օրինակ՝ բորբոքումէ, վէրքէ և կամ նորա ջըղային մասէն : Սակայն ՚ի բաց առեալ վերոյիշեալք, կայ մի այլ տեսակ ստամոքսի ցաւ, որ ուղղակի յետ կերակրոց կը պատճառի և բոլոր մարսողութեան ժամանակ կը տւէ առանց վրսխելու, և որ կը կարծուի թէ՛ Յօղացաւի ենթակայ եղողներու գլխաւորապէս կը պատահի, և որ նշան է ստամոքսի մկանանց տկարութեանց :

Այս նեղութեան համար երկու գլխաւոր դեղեր ունիմք, որոնցմէ մին է Պլայօլէճ և միւսն Արլօլէճ, որ կը զօրացնէ ստամոքսի մկանունքն :



ՍՏԱՄՈՒՔՍԻ ԹԹՈՒՈՒԹԻՒՆ, ԿԻՉՈՒՄՆ

Այս նեղութիւնն ստամբքսի անզօրութենէ կը պատճառի, և ըստ որում կերակրոց շաքարային և իւղային մասերն կը թթուանան:

Առ հասարակ դժուարին է այս անմլաս կարծեցեալ նեղութենէ ազատիլն: Սակայն պահեցողութեամբ և դեղորէից զգուշաւոր դործածութեամբն շատ անգամ կարող կ'ըլլանք բուժել:

Ոմանք 'ի փորձառու բժշկաց կը խրատեն Լեֆմար (*) խմել կերակուրներէ 2 ժամ վերջը:

Հետեւեալ դեղերն ըստ տեսակի պէտք է դործածել:

Եթէ երբեմնակի բաւական քանակութեամբ թթու ջուր կուգայ 'ի բերան, օրը երեք անգամ ($\frac{1}{100}$ էն) մէկ կամ երկու կաթիլ Սըլֆուրէտ-սոճի:

Եթէ ոգելից ըմպելեաց չափազանց դործածութենէ պատճառեալ է թթուութիւնն, յայնժամ Պելլարժն՝ փոփոխակի ընդ Նեպոլի: առաւօտներն Պելլարժն և դիշերներն Նեպոլի:

'Ի վերջոյ լաւագոյն է որ ժամանակ մը նեղութիւնն չ'կրկնելու համար՝ առաւօտուն և երեկոյն Քալարէն առնել՝ շաքաթն երկու կամ երեք անգամ:



(*) Այսպէս կարող կ'ըլլանք բուժել այս նեղիչ տկարութիւնն: Երբեմն յետ կերակրոց՝ Լեֆմար դործածելն խիստ օգտակար եղած է:

ՓՍԽՈՒՆՔ

Հարկ չէ երկարօրէն ըսել թէ՛ փսխունքն ըստամոքսի գործարանաւոր տկարութենէ յառաջ կուգայ, ո՛չ ալ ըսել թէ՛ կան բազմաթիւ այլ տկարութիւններ որք փսխունք կը պատճառեն իբր նշանն նոցա. ըզեղի տկարութիւն, սրտի, թոքերու, երիկամանց տկարութիւնք, ինչպէս նաև յղութեան վիճակն ևլն:

Այս բոլոր պարագայից տակ՝ պարտ ենք բուն նախնական տկարութեան դարձնել մեր ուշադրութիւն և ըստ այնմ ընտրել դեղերն: Թէև շատ պարագայից տակ միևնոյն դեղն օգտակար կ'ըլլայ վասն ամենեցուն, այնպէս որ պէտք չի թողուր ուրիշ դեղօրէից, ինչպէս է Քլէօլէ: Բայց որպէս զի ՚ի հարկին գործածուի, աստ կը դնեմ հետևեալներն՝ իրենց մասնաւոր նշաններովն:

Իբէ+ա+ո+անհ: Խժային փսխունք (քէօրիւկ) մաղձի հետ խառն (մանաւանդ գիշերն):

Նի+ո+լոօ: Չափազանց կերակուրէ, կամ ոգելից բնկելիքներէ պատճառեալ:

Քո+ի+լո: Եթէ կառք նստելէ կամ ծովային ճամբորդութենէ կը պատճառի:

Մեր+ի+րէլո: Փսխունք դառն, դեղնագոյն կամ կանանչագոյն մաղձ, հանդերձ գլխոյ ծանրութեամբ և դիմաց դեղնութեամբ:

Ար+ե+ի+լո: Հին փսխելու հակամոութեանց, որ և է նիւթ, որ կ'ուտէ կամ կը խմէ, մանաւանդ ջուրն:

Բո+լա+ի+լո: Փսխունք թթու, դառն, քացխած՝ մանաւանդ գիշերն:



ԳԻՇ ՇՈՒՆՉ (Սրբոհայն)

Շատ անգամ՝ լոկ բերնի կամ ստամանց անմաքրութեան պատճառաւ հիւանդաց շունչն դէշ կը հոտի, զորս դիւրին է դարմանել լոկ մաքրութեամբ: Սակայն երբեմն ստամոքսի անկարգութեան և այլ պատճառանօք կ'ըլլան, յայնժամ հարկ կ'ըլլայ դեղոց մատակարարութիւնն:

Երբ լինտերու կակղութենէ պատճառեալ է՝ Սրբոհայն:

Ընդհանրապէս կերակրոց ժամանակ ոգելից ըմպելեաց սովորութիւն ունեցողներու եթէ պատահելու ըլլայ, Նիւտտոն առաջին և գլխաւոր դեղն է: (Առաւօտ և դիշեր 4 հաղ):

Փտած ակռայէ յառաջ եկածին համար՝ Մերքիւր:

Բայց երբ դաշտանի ժամանակ և կամ չափազանց իւղային կերակրոց սովորութեան պատճառաւ կ'ըլլայ, յայնժամ լաւագոյն դեղն է Բուրուշիլա, (առաւօտ և երեկոյ 4 հաղ ամէն ժամանակ):

Երբ լեարդն դանդաղ է և օրինաւորապէս իւր պաշտօնն չի կատարեր, Բօրօֆէլ:

Պէտք է յիշեմ որ երբեմն առանց Պրոպիլայի դժուարին կ'ըլլայ լոկ Նիւտտոնով կատարելապէս բուժել. վասն որոյ մի քանի օր առանձինն Նիւտտոնով տալէ զկնի, պէտք է Պրոպիլայ տալ փոփոխակի ընդ Նիւտտոնովի: (4 հաղ Պրոպիլա առաւօտուն, 4 հաղ Նիւտտոնով դիշերներն):



ՍՏԱՄ ՈՒՔՍԻ ԽԻԹ ԵՒ ԿԾԿՈՒՄՆ

Ստամբուլի կժկումն շատերու՝ մանաւանդ կանանց՝ սլատահած ներդուծեանց մին է, և որ կը տարբերի՝ սաստկութեան և տեսակի մասին:

Ոմանց ցաւը սաստիկ է և իբր թէ ստամբուլի խորն ծանր քար մը կեցած է և կը ճնշէ, և խիստ փափուկ է կամ զգայուն է, այնպէս որ բնաւ ծանրութիւն մը չ'կրնար կրել, մինչև իսկ ամենաթեթեւ հագուստն՝ խիստ ծանր կը թուի հիւանդին: Ոմանք կը հանգստանան մերթ ընդ մերթ կազ դուրս հանելով: Այլոց ստամբան չափազանց կ'ուռի, և եթէ թեթեւ կերպով մը դպչիս՝ խիստ կը ցաւի. երբեմն ջուր, և երբեմն սաստիկ ճրգամբ և գլխոյ պտոյտով, ջրախառն արիւն վրսխելով հանդերձ՝ ստամբուլի խորն ճնշում և ծանրութիւն կ'զգայ: Այսպիսիք են նշանք սոյն ներդուծեան:

Ստամբուլի խիթն կրնանք ենթադրել իբր հին ստամբուլի տկարութեան մը նորոգումն, և կրնայ յառաջ գալ, որպէս կերակրոց անկարգութենէ, նոյնպէս և ողելից ըմպելեաց գործածութենէ և խոնաւութենէ, և կրնայ այլ տկարութեանց հետ միանալով՝ մարմնոյ վարի մասերու ջղաց ևս ազդելով կժկումն կամ խիթ յառաջ բերել:

ԴԱՐՄԱՆ: Յաւը սաստիկ եղած ժամանակը պէտք է նոյն տեղն աղէկ մը շփուիլ, և քիչ մ'ըսպասելէ յետոյ՝ հետևեալ դեղերն ըստ տեսակին գործածել:

Այս տկարութեան մէջ՝ զարմանալի կերպով

կը տեսնենք Նիւտոն-Վոլտայի ազդեցութիւնն :

Նախ սլարտինք նայել թէ՛ նեղեալն մտաւոր աշխատութեամբ զբաղեալ է թէ ոչ, սովորական պնդութիւն ունի՞, և կամ ոգելից ըմպելեաց ու սուրճի սովորութիւն ունի՞: Եւ երկրորդ՝ պէտք է դիտել նորա կազմութիւնն, կորովի՞ է թէ նիհար, վասն զի նիհար կազմութեանց յարմար է այս դեղն, և պէտք չէ գործածել յաճախ:

Եթէ վերոյիշեալ նշաններն կը գտնուին, այս տեսակ անձանց համար, յայնժամ 12 հոգի Նիւտոն-Վոլտայ լուծելով 6 դրդալ ջրոյ մէջ, ամէն քառորդ ժամն դրդալ մը կրնայ տրուիլ հիւանդին, մինչև որ ցան մեղմանայ, յետոյ աւելի ուշ: Անտարա-կոյս եւ՛ որ այս կերպով կարող ենք բուժել այս նեղութիւնն մեծաւ մասամբ: Բայց եթէ նեղեալն փոփոկ կազմութիւն ունի, յոյնժամ պէտք է տալ վերոյիշեալ եղանակաւ՝ Ար-Նիւտոն:

Եթէ նեղեալն իգական սեռ է է, և առոյգ կազմութեամբ, ըստ ոմանց՝ փոխանակ Նիւտոն-Վոլտայի, լաւագոյն է Ին-Վոլտայ տալ:

Այս երկու եղական դեղերն, Նիւտոն-Վոլտայ և Ար-Նիւտոն, ստամոքսի տկարութեանց մէջ՝ առաջին կարգի դեղերն են:

Հետեւեալ դեղոց ցանկն իրենց նշանակէտներովն հանդերձ աստ կը դնեմ՝ ի դիւրութիւն ընթերցողաց:

Եթէ կերակուրներէ (խառն) և ոգելից ըմպելեաց գործածութենէ յառաջ եկած է, Նիւտոն-Վոլտայ և Պելլա-Վոլտայ փոփոխակի տուր: (Այս տեսակ տկարներու դիւրին միշտ դէպ ետին կամ կոնակին վրայ կը ծռի):

Եթէ կերակուրներէ անմիջապէս վերջը ցաւ պատահի Պրայմ :

Եթէ ստամոքսի մէջ քարի նման ծանրութիւն կ'զգայ »

Եթէ վիշտ կամ մտաւոր նեղութենէ վերջը պատահի Ինչու :

Եթէ քիչ ուտելով հանդերձ՝ ստամոքսի խորը ուռեցած զգայ Մերէիւր և Բուլուր :

Թող ընթերցողն ընտրէ ցաւոց տեսակին համեմատ դեղն և մատակարարէ , (որպէս Նիւտոն-Չօօ) :

ՓՍԽՈՒՄՆ ԱՐԵԱՆ

Արիւնն կրնայ ստամոքսի և կամ թէ լեարդի բորբոքումէ պատճառեալ ըլլալ, զոր հարկ է անմիջապէս դադրեցնել :

Այս ահարկու նեղութեան համար ունիմք հետեւեալ երկու գլխաւոր դեղերն՝ Իբէէ և Համ-Ֆէն (Թիւնչը) : Ընդհանրապէս այս երկու դեղերն փոփոխակի տալն մեծ իմաստութիւն է, զի պարտ է նախ կտրել արիւնն և յետ այնորիկ արգիլել նորա կրկնումն :

Եթէ փոխունքն հարուածէ մը, կամ որ և է արտաքին մի վնասէ պատճառեալ է, յայնժամ և անմիջապէս տուր Արնի մի քանի կաթիլ 5-10 (50 տրամ ջրոյ մէջ) և ամէն 5 կամ 10 ըրպէն դրգալ մը տուր :

Երբեմն պատահած է ինձ՝ որ մի քանի կա-

Թիւ Ա. Բ. Գ. (*) կէս դաւաթ ջրոյ մէջ գնելով՝ հինգ բալէն դրգալ մը տուած եմ ներշնչելին, որ քիչ ժամանակին մէջ դադրած է:

—

ՏԿԱՐՈՒԹԻՒՆԻ Ա. Դ. Ե. Ս. Յ

Բորբոքոտի Աղէց

Աղիքներն՝ ստամոքսէ սկսեալ մինչ սրբանն եղող անցքն է, ուսկից կերակրոց աւելորդ կամ անմարս մասն դուրս կ'ելլէ, և ունի իրեն յատկացեալ մի քանի ծածկոցներ:

Աղեաց բորբոքումն կրնայ աղեաց խժային թաղանթին մի մասի մէջ նոր սկսած ըլլալ, և երբեմն մինչև ուրիշ ծածկոցներն տարածուած, և ուստի պարտ է մեզ գիտնալ կամ որոշել թէ ո՞ր մասն է բորբոքեալ կէտն, Տիւօտի՞նըմ (ստամոքսէ անմիջապէս վերջը եղող մասը), բարակ ու հաստ աղեաց միացման տե՞ղն, հաստ աղի՞քն, կամ կողո՞նն, և կամ թէ սրբա՞նն:

Այս ախտն առ հասարակ սլորտի մօտերէն կ'սկսի ու կը տարածուի, և ընդհանրապէս ստամոքսի տկարութեան հետ կ'ըլլայ, և է երկու տեսակ:

Գրգռոյկիս համառօտութիւնն չ'ներբեր որ աստ իւրաքանչիւր գեղոյն և տեսակին վրայօք առանձինն խօսիլ, այլ՝ մի տեսակի նշաններն տալով՝

(*) Ա. Բ. Գ., մայր, Tincture.

ընդհանուր դարմանն կը յիշեմ, և խրատեմ զընթերցողս՝ որ դիմէ այս վտանգաւոր պարագային տակ մի ճարտար բժշկի խրատուն :

Որպէս արդէն յիշեցի, Աղեաց բորբոքումն երկուք է. մին է Նոր և միւսն Հին :

Արդ՝ մենք պիտի յիշենք միայն Նորն՝ իր նշաններով, յաւելլով նաև թէ՛ Հին տեսակն ոչինչ կը տարբերի նորէն, ՚ի բաց առեալ ցաւոց և նեղութեանց սաստկութեան աստիճանն, որով նման պարագայից տակ կրնանք միևնոյն դեղերն տալ հիւանդաց :

ՆՇԱՆՔ ԲՈՐԲՈՒՔՄԱՆ. Աղեաց բորբոքման ժամանակ՝ որովայնի մէջ սուր, կիզիչ, ասղնատղ շարունակ ցաւ մը կայ, և ամէն ուր որ դպչելու ըլլաս՝ կը ցաւի, մանաւանդ հոն՝ ուր որ սկսած է բորբոքումն, խիստ զգայուն կ'ըլլայ, և ամէնափոքր ճնշում մը մեծ ցաւ կը պատճառէ հիւանդին : Փորն տաք, ուռեցեալ, երբեմն կարծր և թմրկանման տարածեալ : Խիստ սնդութիւն, սաստիկ ծարաւ, բարակ, արագ նստիչ, մէղն կարմիր ու նուազ, սիրտ խառնուուր և փսխունք, խժային և մաղձային ու խիստ վտանգալից ժամանակ կղկղանք ևս :

Հիւանդն սաստիկ ծարաւեալ կ'զգայ զինք, և եթէ պաղ ջուր խմելու ըլլայ, աւելի կը նեղուի և խմածին պէս կը փսխէ :

ԴԱՐՄԱՆ. Ախտի գլխաւոր դեղերն են հետեւեալներն, զորոնք կարգաւ աստ կը դնեմք :

Ա. Ժ. Է. Ը. Նախ՝ երբ չոր տաքութիւն, պապակ ջրոյ և սաստիկ ցաւ կայ : 12 հող 6 դրգալ ջրոյ մէջ

Հալեցուր և քառորդ կամ կէս ժամը դրգալ մը տուր, մինչև 24 ժամ. և եթէ տարբերութիւն չըլլայ, յայնժամ պարտ է քանի մը կաթիլ մայր հեղուկէն (Tincture Aconite) դաւաթ մը ջրոյ մէջ հալեցնել և այնպէս ժամը դրգալ մը տալ՝ երկու կամ երեք օր:

Արեւիչ: Եթէ ցաւն ժամանակ առ ժամանակ կուգայ, և երբեմն ալ յակամայտ լուծումն կը պատճառէ, և քիչ քիչ ջուր խմելով գոհ կ'ըլլայ: Նոյնպէս (12 հառ, 6 դրգալ ջուր):

Պարսնիկ: Եթէ փսխունքն շատ է և ցաւն երբեմնակի, յայնժամ Արեւիչ ի հետ փոփոխակի տուր՝ ամէն կէս ժամն դրգալ մը:

Երբեմն՝ երբ գծուարին է դեղն ընտրել, վերոյիշեալ երեք դեղերն կարգաւ կրնան տրուիլ՝ փոփոխակի կէս ժամն դրգալ մը:

Քլօրօնիկ: Սաստիկ ցաւ աղեաց, հակամտութիւն լուծման, ու թէև քիչ քիչ, բայց յաւէտ արիւնսխառն և սուր ցաւօք:

Մերթիւրէիւն: Աղեաց տաքութիւն և զգայնութիւն, լեղուի և բոլոր մարմնոյ դեղնութիւն: (Երբեմն Քլօրօնիկ ի հետ փոփոխակի տրուիլն յոյժ օգտակար կ'ըլլայ):

Արեւիչ և Քլօրօնիկ: Երբոր ցաւն աղեաց վերի մասըն, այսինքն Տիօթիւնը և կամ ստամոքսի մօտերը ըլլան. մինչ Քլօրօնիկ և Մերթիւրէիւն՝ առաւել աղեաց վերջին մասն ու աջ կողմն ցաւ եղած ատեն պէտք է:

Թարսնիկ և Քլօրօնիկ: Եթէ սաստիկ փսխելու հակամտութիւն, և խիթ կամ լուծմունք ունենայ,

Այս հիւանդութեան մէջ գաղջ ջուրն խիստ օգտակար է և պէտք է առատօրէն խմցունել տրարին . և թէպէտ հիւանդն առաջին անգամ խրմելուն կը փսխէ , բայց յետ այնորիկ ակտրժանօք կը խմէ և շատ հանգստութիւն կ'զգայ :

Պէտք եղած դեղէն 12 հազ վեց դրգալ ջրոյ մէջ հալեցուր . (եթէ երկու դեղ դորժածել հարկ ըլլայ՝ երկու գաւաթի մէջ) , և կէս ժամն և կամ աւելի ուշ մէկ մէկ դրգալ տուր :

Երբ հիւանդին վիճակն կը բարւոքի , յայնժամ մի քանի օր դեղերն դադրեցնելով՝ պարտ է նիւտ-վոյտայ տալ օրն երեք անգամ , մինչև 4—5 օր , հիւանդի աղիքներն զօրացնելու համար , եւ յետ այնորիկ մի քանի օր մէջոց տալով՝ դարձեալ պէտք եղած դեղերն շարունակել :



Խիթ (Սանճը) (Colic)

Միջնտերեայ Խիթն՝ ճիշդ նման է ստամոքսի ցաւոց , և առ հասարակ շղային , և որ ընդհանրապէս աղեաց մկանանց (ծածկոցի) մէջ կ'ըլլայ երբեմն խիստ սաստիկ ցաւով , որ կրնայ ճճիներէ , անմարս կերակուրներէ և կամ Յօդացաւային ըլլալով՝ պաղէ կամ խոնաւութենէ յառաջ գալ :

Գլխաւոր նշաններն են . ցաւ որովայնի , գալարումն աղեաց , ցաւ՝ որ կոխելով կը մեղմանայ , կամ բոլորովին կ'անցնի , թէև երբեմն խիստ ուժգին ալ ըլլայ :

Խիթն՝ շատ անգամ սխալմամբ աղեաց բոր-
բոքման հետ չ'ընթերցելու համար, հոս նոցա տար-
բերութիւնն դնել հարկ կը համարիմ:

Խիթն՝ առանց տարութեան կ'ըլլայ և կոխելով
ցաւն կը մեղմանայ: Բայց

Աղեաց Բորբոքումն՝ քիչ կամ շատ տարութիւն և
ջրոյ պատակ ունենալով հանդերձ, եթէ կոխելու
ըլլաս՝ ցաւն կը սաստկանայ:

Մաղձային Խիթն յաւէտ փսխունք կ'ունենայ, որ
է իւր գլխաւոր նշաններու մին:

'Ի դիւրութիւն ընթերցողաց՝ 'ի ներքոյ կը
չարակարգեմ դեղերն ըստ տեսակացն իւրեանց:

ԴԱՐՄԱՆ: Որովհետև ըսի թէ կերակրոց մա-
սին սխալմունք մը՝ կրնայ այս նեղութիւնն յա-
ռաջ բերել. վասն որոյ սկսինք նախ և առաջ կե-
րակուրէ:

Եթէ կերակուրն է պատճառ, և պնդութիւն
ալ կայ, յայնժամ լաւագոյն դեղերնիս է նիւ-
ժօն. 3 կամ 4 հող տուր մէկ կամ երկու ժամն
անգամ մը, մինչև որ տամբերի:

Բայց եթէ պնդութիւն չ'ունի, յայնժամ
պէտք է Բուրձնաւորութիւն 3—4 անգամ,
մանաւանդ եթէ նեղեալն իզական սեռէ է եւ
դաշտանի ժամանակին մերձ. եթէ դաշտանի ա-
տեն է՝ Գոյնաւոր:

Եթէ նեղեալն Յօդացաւոց ենթակայ, և խո-
նաւորութիւնն է պատճառ ցաւոյն, յայնժամ Վե-
րաբարձու և Գոյնաւոր փոփոխակի պէտք է տրուիլ:

Եթէ մաղձէ յառաջ եկած է և կը փսխէ, Ա-
ռաջաւոր, Գոյնաւոր և Իբրէն փոփոխակի տուր:

Եթէ որովայնի ձախէն դէպի աջն է ցաւն ,
Պելլարմա և Քամօմայլ :

Եթէ ճճիէ պատճառեալ է, որ երկար ժամանակ
անկ անյայտ ըլլալով կրկին 'ի յայտ կուգայ՝ Սքույ :

Եթէ պնդութիւն ունի և մէզն ալ խիստ քիչ
է, Բլլոլլ—Պէլ :

Եթէ գլխոյ ցաւ , տաքութիւն և պնդութիւն
ունենալով հանգերծ՝ ցաւն ընդհանրապէս յետ
կերակրոց կ'սաստկանայ՝ յայնժամ Քալտրիս—տրալ :

Վերոյիշեալ դեղերն՝ ըստ պահանջման պարտ
է գործածուիլ . և երբ հիւանդն լաւագոյն վիճակ
մը կ'առնէ , անմիջապէս պէտք չ'է բուսական ու-
տեի , այլ զգուշանալ գէթ մի քանի օր , և միայն
մսեղէն ուտելով գոհ լինել :



ՈՐՈՎԱՅՆԱԼՈՒԾՈՒԹԻՒՆ Կամ Փորհարութիւն .

(Diarrhoea)

Այս նեղութեան պատճառներն այնչափ բազմաթիւ են , որ գրքոյկիս համառօտութիւնն չի
ներեր զանոնք յիշել . սակայն հիւանդութեանց
չարքին նայելով , համառօտիւ մի քանի գլխաւոր
դեղերն և անոնց գործածութեան ժամանակն
աստ յիշել պարտ կը համարիմ :

Անտարակոյս նախ տկարութեան պատճառը
պէտք է վերցնել և ապա ցաւն կամ նեղութիւ-
նըն , որովհետև յայնժամ բնութիւնը միշտ օգ-
նական կ'ունենամք ընդ մեզ . եթէ ոչ՝ մեծ յան-

դրդնութիւն է մաքառել ընդդէմ ընութեան :

ՆՇԱՆՔ : Երբեմնակի պատահած լուծումն երբեմն խթանման ցաւ մը կ'ունենայ , կանխաւ կամ յետ լուծման , և ոմանց՝ ճիշդ ժամանակն , երբեմն քիչ կամ շատ տաքութիւն , ախորժակի կորուստ և ընդհանուր մարմնոյ ուժաթափութիւն : Գլխաւոր պատճառներն են՝ խոնաւութիւն օդոյ , կերակրոց անկարգութիւն , չափազանց աշխատանք , մտաւոր վրդովմունք , և ինչ և ինչ :

ԴԱՐՄԱՆ : Եթէ խոնաւութեան պատճառաւ եղած ըլլայ , Քամայլ և Տոլտամբոս պէտք է առնուի փոփոխակի՝ օրը երկու կամ երեք անգամ , կամ քանի անգամ որ պատահի լուծմունքն :

Եթէ լուծումն ջրոտ և խժային ըլլայ , և շուտ ուժաթափ ընէ զհիւանդն , Արեւնիլը և Վերաբրոս-Ալլ :

Եթէ խժային ըլլայ և օդոյ խոնաւութեան ժամանակ , Մերտիլը և Տոլտամբոս :

Եթէ մանկանց պատահի և ճերմակ ըլլայ , Քոլտրիս . իսկ դեղնագոյնի համար և կամ ակռայի ժամանակն , Քամայլ :

Եթէ կերակրոց և ըմպելեաց անբարեխառնութենէ պատճառաւ ըլլայ , Նիստ-Վոսիս . եւ խիստ իւղոտ կերակրոց , անուշեղինաց և կամ խակ մրգեղէններու պատճառաւն , Բալասնիլլա :

Եթէ ցաւն սաստիկ ըլլայ , Քամայլ և Քոլտրիս :

Եթէ ցաւով և արիւնասառն ըլլայ , Մերտիլը և Քոլտրիս :

Եթէ մաղձային ըլլայ՝ հանդերձ լեացդի տըկարութեամբ , Իրիս-Վ և Բոթոֆիլլա :

Երբեմն մէկ կամ երկու դեղեր միատեղ մատակարարել կը պարտաւորիմք, զոր օրինակ՝ Գլաբրին և Մերիտ, երբ արիւնախառն ըլլալով՝ սաստիկ է խիթն բայց քիչ է լուծումն, թէպէտ և շարունակ հակամէտ կ'զգայ հիւանդն: Այսպիսի պարագայից տակ փոփոխակի կը սրուի, քանի անգամ որ ցաւն կամ որովայնալուծումն պատահելու ըլլայ:



ՀՆՏԱԽՏ (Գլաբրին) (Epidemic Choléra)

ԵՒ

Վարակող Որովայնալուծումիւն

Հնտախտն՝ առանց խտրութեան սեռի և հասակի, ընդհանրապէս առաւել անմաքուր և կերակրոց անզգոյշ եղող անձանց կը պատահի, եւ որ և է անհոգութիւն՝ կրնայ մահաբեր ընել զայն: Սոյն ախտի պատճառն դեռ անյայտ է, և ընդդէմ ներկայ ժամանակիս մեծամեծ ջանիցն, զոր եղան նորա բուն պատճառն ստուգելու համար, դեռ անորոշ կը կենայ յաչս գիտնոց. կը կարծուի սակայն թէ՝ ճախնային վարակող թունալից մանրաճճիք են, որք կը թափառին յօղս և կ'այցելեն տարբեր երկիրներն ժամանակ առ ժամանակ:

Ախտն թէև երբեմն խիստ սաստիկ ըլլալով, մահն ևս յանկարծահաս կ'ըլլայ, սակայն առ հասարակ գէթ մի քանի ժամ կամ մինչև մի քանի

օր յառաջմանէ իւր գրաւիչ նշաններն ունի , որք յայտնի կը տեսնուին ախտէ բուժուողներու վրայ :

Հեղինակաց ոմանք կը հաստատեն թէ՛ Հընտախտն միշտ և ամենուրէք Որովայնալուծութեամբ կ'սկսի , և ինչ . Հարկ չէ մեզ ճգնել սորա անսխալութիւնն հաստատելու համար , զի արդ և իցէ , Հնտախտն քանի անգամ որ այցելած է սոյն երկիրն , յաւէտ որովայնալոցծութեամբ սկսած է : Եւ որովհետև սոյն Հնտախտային Որովայնալուծութիւնն յար և նման է հասարակօրէն եղած լուծման , վասն որոյ երբ ախտն 'ի մերձակայս կը վարակի , պարտ է մեզ մէն մի Որովայնալուծութիւն իսկոյն դադրեցնել :

Այս տեսակ Որովայնալուծութիւնն՝ պարտ է մեզ իւր ախտանիշներու համեմատ դարմանել : Եթէ ըստ սովորականի մաղձաւոր , կանանչագոյն կամ դեղնագոյն ըլլայ աղբն , պարտ է մէն մի լուծման վերջը Իւն-Վէր (*) տալ՝ 10-15 բոպէն (**): Իսկ եթէ կերակուրներէ անմիջապէս վերջը պատահելու ըլլայ (ջրանման դեղնագոյն) , Քիւսի հարկ է դործածել : Եթէ ջրային ըլլալով հանդերձ՝ ցաւ կծկցունող և ջրոյ սաստիկ պապակ ունենայ , եւ հիւանդն բաղդատմամբ լուծման՝ շուտ ուժաթափ ըլլայ , Աւիւն պէտք է :

Եթէ ընդդէմ վերոյիշեալ դարմանաց՝ հիւանդութիւնն յառաջ կ'երթայ , յայտնի է թէ Հըն-

(*) 20 կաթիլ գաւաթ մը ջրոյ մէջ :

(**) Եթէ որովայնալուծումն շատ չ'է , կրնայ աւելի ուշիկի տրուիլ :

ՏԱԽՏՆ հասած է, որ յայնժամ պարտ է Գաֆուր (որի էն 5 կաթիլ՝ քիչ մը շաքարի վրայ կամ ջրով) տալ և 5—10 բուսէ վերջն կրկնել, և լն. և լն.

ԱԽՏԱՆԾԱՆՔ: Որովայնալուծութիւնն որ շուտ ուժաթափ կ'ընէ զՀիւանդն, ընդհանրապէս առանց ցաւոյ է. ձեռաց և ոտից պաղութիւնն, դէմքի դեղնութիւնն, աչաց բոլորտիքն եղող կապտագոյն երևոյթն, բազկերակաց կամաց եւ մերթ ընդ մերթ անզգալի ըլլալն, ախտի առաջին վիճակի դիտաւոր նշաններ կը ներկայացնեն մեզ: Ախտի երկրորդ վիճակն գրեթէ նման է առաջնոյն, սա առաւելութեամբ որ ամենայն ինչ սաստկացած են աստ. փսխունք, չափազանց ջրբանման (ճերմակ) որովայնալուծութիւն, սաստիկ խիթ կամ կծկումն ու ջղաձգութիւն, և բովանդակ մարմնոյ պաղութիւն, մերթ ընդ մերթ պաղ քրտինք և միզարգելութիւն և կամ դժուարութիւն, սաստիկ և անյաղ ծարաւ, այնպէս որ ջուրն խմելէ մի քանի բուսէ վերջը փսխելով դուրս կը հանէ, որպէս թէ տաք ջուր եղած ըլլար խրմածն: (Հիւանդի այս վիճակի մէջ ունեցած ծարաւն և նորա խմած ջրոյ քանակութիւնն յոյժ անհաւատալի կը թուի բազմաց, սակայն գրքոյկիս հեղինակն փորձառարար գիտէ զայն, 53 է հրնտախտի ժամանակ: Ոմանք մինչև իսկ ջրոյ մեծ կարասներու մէջ կը նետուին, այն կիզիչ ջերմն և անյաղ ծարաւն անցնելու համար, և սա շատերու կեանքը փրկած է):

Իսկ եթէ ախտն լաւագոյն վիճակի գառնայ, յայնժամ տակաւ առ տակաւ մարմինն կ'սկսի

տաքնալ և մեղմապէս քրտնիլ, վախուճնքն ու որովայնալուծութիւնն հետզհետէ դադրելով՝ մէզն կ'առատանայ, և հիւանդի գունաթափ դէմքն իր բնականի կը վերադառնայ:

Հնտախտէ բռնուող հիւանդաց մտաւոր կարողութիւնն կրնամ ըսել թէ միշտ յստակ և սլայծառ է, 'ի բաց առեալ այն սոսկումն ու երկիւղն զոր կը կրէ ակտացեալն իւր սրտի մէջ: Հնտախտի ամէնավտանդաւոր վիճակն՝ նոր վարակած տեներն է, որ յետին զօրութեամբ սկսելով, հետըզհետէ իւր սաստկութիւնն կը կորսնցնէ, և սա մեծաւ մասամբ մարդոց անզգոյշ և կամ անհոգութեան պատճառաւ ըլլալ կը թուի:

ՆԱԽԱԶԳՈՒԹՈՒԹԻՒՆ: Ախտի վարակեալ ժամանակ՝ սլարտ է խիտ զգոյշ ըլլալ պաղէ և դրժուարամարտելի ամէն տեսակ կերակուրներէ. ևս լաւ է գօտի մը կապել մէջքն: Բոլորովին անհիմն ու սխալ է ոմանց կարծիքն թէ՝ «Հնտախտի ժամանակ ոգելից ըմպելեաց գործածութիւնն անհրաժեշտ է և օգտակար»: այլ ընդհակառակն՝ բազմաթիւ փորձերով հաստատեալ է որ յաւէտ անբարեխառն անձինք ախտի զոհ կ'ըլլան, քան բարեխառն: Հիւանդաց սենեկի օդն սլարտ է միշտ մաքուր պահել, և աղբն երբէք հոն չի թողուլ. նաև լաւ է մի քանի կաթիլ Ա.Վ.Ֆէնի սըրսկել աստ անգ՝ սենեկի և տան մէջ:

Սոյն ախտի համար գործածեալ դիւաւոր դեղերն աստ կը դնեմ՝ 'ի դիւրութիւն ընթերցողաց, յիշեցնելով միանգամայն թէ՝ սոքա ամենեքին նեղ պարագայից և կամ 'ի բացակայութիւն

բժշկաց պէտք են գործածուիլ. նաև երբէք պէտք չէ ընտանեկան դարմանի սահմանէ դուրս ելլել: — Թինչւր-Քոֆօր (Քեֆէրէ-բոհո) (*): Արե-նիւմ-ալ: Քինայ: Քիւբրոս-տիո: Իբէքադոնան: Մեր-տիւր-տիւր: Իբի-ձեր: Վերաբրոս-ալ:

ԴԱՐՄԱՆ: Որպէս արդէն յիշեցի, ախան որովայնալուծութեամբ երբ կ'սկսի, պէտք է Մեր-տիւր-տիւր և Իբի-ձեր անմիջապէս տալ հիւանդի փոփոխակի 10—15 վայրկեանն մէկ դրդալ: (12 կաթիլ Մերտիւր գաւաթ մը ջրոյ մէջ, և 20 կաթիլ Իբի-ձեր մի այլ գաւաթ ջրոյ մէջ) մինչև որ տարբերութիւն տեսնուի, յետ այնորիկ պարտ է աւելի ուշկէկ տալ դեղերն, մինչև ցղադարումն որովայնալուծութեան:

Իսկ եթէ որովայնալուծութեան հետ հիւանդըն փսխունք ևս ունենայ, յայնժամ Վերաբրոս և Իբի փոփոխակի պէտք է տալ. (առ 16 հոդ և լուծէ զայն 6 դրդալ ջրոյ մէջ. և եթէ կէս ժամն անգամ մը փորը կը լուծէ, յայնժամ քառորդ ժամը դրդալ մը փոփոխակի տուր միւս դեղոց հետ):

Եթէ ախտացեալն աւելի փսխունքէ կը նեղուի, և կամ ընդհանուր մարմնոյ պաղութեամբ, Քեֆէրէ-բոհո 3—5 կաթիլ քիչ մը շաքարի վրայ կաթեցնելով տուր, քանիցս անգամ որ փսխելու ըլլայ: Բայց թէ որ սաստիկ ցաւ (պոնոնիւս), կծկումն և (փսխունք ունենայ թէ ոչ) մարմինն պաղ ըլլայ, յայնժամ Քիւբրոս-տիո պէտք է տը-

(*) Մէկ տրամ Քոֆօր և 9 տրամ Ալտահուլ (պիւր-նո), ամէնալու Քեֆէրէ-բոհո կ'ըլլայ:

ըուիլ՝ ամէն 5. վայրկեանն դրդալ մը: (Քիւրքու՛մ 3
ցորեն՝ գաւաթ մը ջրոյ մէջ):

Եւ եթէ որովայնալուծութիւնն յաճախ չ'ըլ-
լալով հանդերձ հիւանդն այն պատճառաւ շուտ
ուժաթափ կ'ըլլայ, նաև սաստիկ պապակ ջրոյ,
փսխունք և ըն կ'ունենայ, Արեւելէ՛ք պէտք է տրուիլ
կամ առանձինն և կամ մի այլ դեղոյ հետ փոփո-
խակի, որպէս յարմար թուի: Իսկ այս ախտի ա-
տեն ամէնալաւ եղանակն է (երբ դժուարին է դե-
ղոց ընտրութիւնն ընել) հետևեալ երեք դեղերն
կարգաւ մատակարարելն՝ մինչև բժշկին գալուս-
տըն, մանաւանդ երբ խիթ, փսխունք և լուծումն
ի միասին կ'սկսին:

Արեւելէ՛ք, Վերալիւր՝ և Քիւրքու՛մ. իւրաքանչիւր դե-
ղէ 12 հոգ հալեցուր (զատ զատ գաւաթներու
մէջ) 6 դրդալ ջրով, և կարգաւ ամէն հինգ ըր-
պէն դրդալ մը տուր փոփոխակի, մինչև որ հի-
ւանդի վիճակն բարւոքի, յետ այնորիկ տասը ըր-
պէն անգամ մը և ա՛լ աւելի ուշ կրնայ տրուիլ:

Երբեմն լոկ փսխունքն աւելի կը նեղէ զհի-
ւանդն, այն ատեն պէտք է Քիւրքու՛մ տալ ամէն
անգամ որ կը փսխէ, երեք կամ չորս կաթիլ քիչ
մը շաքարով:

Ամէն կերպով կերակրոց մասին մեծ զգուշու-
թիւն պէտք է ընել, և երբեք հիւանդէ չ'ինայել
պաղ ջուրն, զի սա է նորա գլխաւոր դեղօրէից մին:

ԹՈՒԹՔ (Պսակ) (Hemorrhoids)

Այս ախտը՝ երակաց մեծնալէ և ուռնեանալէ յառաջ կուգայ, և ընդհանրապէս աղեաց վարի մասն կ'ըլլայ:

Ասոնք երկու տեսակ են, մին Սըրլւնոտ եւ միւսն Չսը. և գլխաւոր նշաններն են՝ մէկ կամ մի քանի հատ ուռ, սրբանին ներսի կամ դուրսի կողմը, նստարանի վրայ, որք ասղանման ցաւ կը պատճառեն: Այս ցաւն առաւել կը սաստկանայ փորը ելլելու ժամանակ, քանզի ընդհանրապէս այսպիսի անձինք պնդութիւն ունենալով՝ շատ օրեր առանց լուծիչ գեղոյ մը՝ աղիքներն անգործ կը մնան:

Ախտի գլխաւոր պատճառներն են ցուրտ, գրգռիչ կերակուրք, ոգելից ընկերիք և նստուից կեանք. (ոմանք կը կարծեն թէ՛ չափազանց սուքճի սովորութիւնն՝ այս ախտի գլխաւոր պատճառներու մին է, և պէտք է այնպէս համարուի):

ԴԱՐՄԱՆ. Նախ պարտինք հեռանալ ամէն գրգռիչ պատճառներէ, և յետ այնորիկ Նիւտոն, 12 հոտ 8 գրգալ ջրոյ մէջ հալեցուր և առաւօտու գիշեր մէկ մէկ գրգալ գործածէ՝ մինչև չորս օր. յետոյ՝ եթէ ներութիւնն չէ մեղմացած՝ պէտք է 4 օր ևս Սըրլւնոտ առնել:

Ընդհանրապէս ախտն իստ հինցած ժամանակն հիւանդն աւելի կը նեղուի, և այն ատեն քնականապէս դարման կը վնտռէ: Վասն որոյ այսպիսեաց համար պարտ է առաւօտներն Ալգոլ (4 հոտ քիչ մը ջրով) և գիշերներն Նիւտոն գոր-

ծածել մինչ վեց օր , և մի քանի օր դադարեցնելէ
զինի կրկնել վերոյիշեալ կերպով :

Այսպէս շարունակելով և կերակրոց ևս պէտք
եղած զգուշութիւնն ընելով , շատերն աղատած
են այս տաժանելի նեղութենէ . եթէ բոլորովին
չբուժուի , ամէն կերպով նեղութիւնն կը թեթե-
նայ , քանզի հասարակօրէն դիւրարուժելի ակտ
մը չըլլալով , երկար ժամանակ դեղօրէից գործա-
ծութեան պէտք ունի :

Վերոյիշեալ դարմանն՝ չոր տեսակին համար
է . բայց կայ մի այլ տեսակն , որ երբեմն առատ
արիւն կը հոսի սրբանէ՝ փոխան կղկղանքի :

Արիւնային տեսակին համար մի գլխաւոր դեղ
ունիմք և այն է Համօֆէլն : Այս դեղն յատուկ է
մանաւանդ այն տեսակի , որ քիչ կամ շատ ան-
շուշտ արիւն կայ կղկղանքի հետ , թէև լոյծ ըլ-
լայ և կամ պինդ :

Մի ուրիշ դեղ ևս է Էպիլոն , որ թէպէտ վե-
րոյիշեալ դեղոյն չափ արիւնն չկայ , բայց երբ
պնդութիւնն երկարատե է (երբեմն 3-8 օր պըն-
դութիւն կ'ունենայ հիւանդն) յայնժամ փոխանակ
Համօֆէլին՝ Էպիլոն տրուիլն առաւել օգտակար ե-
ղած է : Բայց մեր ընթերցողաց դիւրութեան հա-
մար հետևեալն աստ կը դնեմ :

Ոգելից ըմպելեաց , սուրճի ևլն . սովորութիւն
ունեցողաց համար , մանաւանդ եթէ պնդութիւն
և ստամոքսի նեղութիւն ևս ունենան՝ Նիտրալ եւ
Սելֆեր պէտք է տրուիլ . իսկ եթէ ցաւն սաստիկ
ըլլայ , Կրֆէլին . և եթէ աղեաց վարի մասն սաս-
տիկ ցաւ և պնդութիւն ունենայ , Ալթըն և Քլեպը-

Ինչ լաւագոյնք են, եթէ արեան հոսումն առաւել է, քան պնդութիւնն, Հաստիւն. իսկ եթէ պնդութիւնն առաւել կը նեղէ զհլւանդն՝ Էստիւս պէտք է տրուիլ. երբեմն սոյն վերջի երկու դեղերն փոփոխակի տրուին յոյժ օգտակար եղած է:

Ախտէ նեղուողներու համար՝ պաղ ջրով լըւացուիլն օգտակար սովորութիւն մ'է:

ՊՆԴՈՒԹԻՒՆ (Constipation)

Պնդութիւնն՝ յաւէտ նշան մ'է, քան ինքնին ակտ մը, որ ըստ մեծի մասին մարսողական գործարանաց անկարգութենէ յառաջ կուգայ, եւ պարտ է ըստ այնմ դարմանել զայն:

Գիտենք թէ առօրեայ մաքրութիւնն (փորն ելլելն) առողջութեան անհրաժեշտ մի պայմանն է՝ թէ՛ աղիք ամբողջ գործարանաց մի մասն կը կազմեն և թէ՛ նոցա անգործութիւնն (եթէ խանդարումէ պատճառեալ է) վնասակար է, և պարտ է մեղ ուղղակի զայն դարմանել, փոխանակ առժամանակեայ կերպով աղիքներն դեղով աւելլու: Վստահ եմք թէ ընութիւնն նորա աւելածու կամ մաքրիչ պաշտօնեայն է. վասն որոյ վանէ՛ այն պատճառն, և ահաւասիկ աղիքներն կը կատարեն յայնժամ իւրեանց պաշտօնն, և ինչպէս որ ջերմի ժամանակ անախորժութիւն և այլ անհանգստութիւնք անպակաս ըլլալով՝ յետ ջերմն դարմանուելոյ, ամբողջապէս այլ նեղութիւն ևս կ'անց-

նին. նոյնպէս պարտինք ընել աղեաց մասին ևս, և չ'բռնաւորենք ստամորսն բազմատեսակ դեղորէիւք:

Պնդու թիւնն՝ կազմութեան մէջ եղած անկարգութեանց մին է, և պարտ է ՚ի խորհրդածութիւն առնել այլոց հետ, որով կարող կ'ըլլանք ընտրել դեղորէից յարմարագոյնն:

Հին տկարութիւնք դարմանուած ատեն խիստ շատ անգամ անոնց հետ պնդութիւնն ևս կ'դարմանուի, և հետևապէս աղիքներն իրենց կանոնաւոր պաշտօնն կը կատարեն, (գուցէ այնպիսի դեղորէից միջոցաւ, որ ուղղակի երբէք չ'գործեր աղեաց վրայ):

Անտարակոյս ըսել չ'եմ ուղեր թէ՛ պնդութիւնն մեր ուշադրութիւնն գրաւելու չ'է. ո՛չ, քանզի շատ անգամ գլխաւոր նեղութեանց պատճառ նա կը տեսնուի, և հետևապէս պարտական ենք զայն վանել:

ՊՆԴՈՒԹԻՒՆ Ն՞: Երբ աղիքներն առժամանակեայ կերպով կը դադրին գործելէ, անմիջական օդափոխութեան կամ ծովային ճամբորդութեան պատճառաւ ևլն. որք եթէ թողուին՝ ինքնին իրենց բնականին կը դառնան: Այսպիսի պարագայից տակ՝ կրնաս նե՛րս կամ Օքլե՛ տալ, եթէ կը նեղուի որ, և կամ որ և է լուծիչ գեղ մը: Այս կերպ առժամանակեայ նեղութիւններն կրնանք առժամանակեայ դեղորէից միջոցաւ դարմանել, և սա դիւրաւ կրնայ կատարուիլ: Մակայն՝ որպէս արդէն խօսեցայ, կան սովորական պնդութիւնք, որք ներքին կազմութեան մէջ անկարգութեան մը

կամ տկարութեան մը հետեանքն են և որք մասնաւոր դարմանի կը կարօտին, Մոցա մի քանին իրենց տեսակովը յիշել յարմար կը դատեմ:

Սըֆըր: Հին սովորական պնդութեան համար առաջին դեղորէից մին է. եթէ հիւանդի ընդհանուր կազմութիւնն գէշ է, մանաւանդ թութքի ենթակայ: (Պէտք է շարժ մը առաւօտ և գիշեր տալ. 12րդ աստիճան ընդհանրապէս բաւ է):

Հոյր-Բի: Սովորաբար լուծիչ դեղեր (մանաւանդ ազային) գործածողաց համար խիստ օգտակար եղած է, և աղեաց վարի մասն կամ սրբանի մօտ նեղութեամբ (որոյ պատճառաւ շատ անգամ սըրբան գուրս կ'ելլէ), մէկ երկու կաթիլ գիշերն, (մայր հեղուկէն):

Օքլը: Մտաւոր աշխատութեամբ զբաղեալ անձանց համար որք մարմնավարժութենէ զուրկ են: Առտու և գիշեր մի քանի հող քիչ մը ջրով:

Նիտրատ: Եթէ ստիպում կամ մղում մը կայ եւ հիւանդն ոգելից ըմպելեաց և սուրճի սովորութիւն ունենայ, (մանաւանդ ջղային կազմութեանց համար): Իսկ եթէ մարսողական դժուարութիւն եւ թութք (պտուր) ևս ունենայ, յայնժամ փոփոխակի Սըֆըր պէտք է տալ:

Ֆոսֆոր: Եթէ սրբանի մօտ պնդութեամբ հանդերձ սաստիկ խիթ և ցաւ կայ և երբեմն կիզումն, յայնժամ պէտք է օրն երեք անգամ առնել մէկ կամ երկու կաթիլ քիչ մը շաքարով. (հեղուկէն):

Լոյսֆոր: Եթէ պնդութեամբ չափազանց կազ (Ֆե) հաւաքեալ է աղեաց մէջ, և որ հիւանդն աւելի կը նեղուի անկից:

Կր-Ֆիլ: Եթէ կզկզանքն կարծր , և հիւանդն մոր-
թի տկարութեան ենթակայ ըլլայ :

(Իգական սեռի դաշտանի նուազումն սոյն
դեղին գլխաւոր նշաններէն մին է) :

Պելլուրոն⁰ : Կաթիլ մի՛ ամէն գիշեր՝ մինչ ամիս
մը . (ումանք խիստ օգտակար կը համարին) :

Բուլդոգ⁰ և Ֆո-Ֆո : Եթէ կարծր , մանր գնտակներ-
բու նման են , կզկզանքն ու խիթ կայ անպակաս ,
(առտու և գիշեր) :

Վերոյիշեալ դեղերն տկարութեան եղանակի
համեմատ գործածուելով՝ շատ անգամ փրկած են
բազմաթիւ նեղեալներն իրենց երկար ժամանա-
կեայ պնդութենէ :

Գիշերներն հանգստանալու ժամանակ գաւաթ
մը պաղ ջուրն՝ յոյժ օգտակար և շատերու գըլ-
խաւոր դեղն եղած է :



ՃՃԻ ՈՐՈՎԱՅՆԻ (Սօղւ-ճան) (Worms)

Ճճին՝ որպէս տղայոց , նոյնպէս և չափահա-
սից և ծերոց խկ կը պատահի , և գլխաւորապէս
աղեաց որ և է անկարգութեան մը հետեւութիւնն
է : Որովայնային ճճիներն բազմաթիւ են , բայց ես
աստ միայն հասարակ (երկայն $\frac{1}{6}$ մատնաչափ հաս-
տութեամբ) տեսակին համար խօսելով՝ նորա դար-
մանն ևս պիտի յիշեմ :

Ճճիներու նշաններն խիստ շատ են և երբեմն
չփոթիչ . աստ կը յիշեմ մի քանի գլխաւորներն ,

որք ինչ առաջնորդ եղած են որոշման ժամանակ :
Երեսի դեղնութիւն . անյագ ախորժակ կամ հա-
կադարձն , որովայնն բարձր կամ ուռեցած՝ մինչ
տտամնքսի խորն , լորցունք , ջրոտութիւն բերնի ,
մանաւանդ գիշերն , և աչաց բիբերն մեծցած . ար-
ղայոց փորը մերթ պինդ և մերթ լոյծ , և ժամա-
նակաւոր խիթ ու երբեմն ալ (փոքր մանկանց) ջը-
ղածդութիւն (սփռած) կը պատահի :

Ճճիններն թէև մեծաւ մասամբ վատառողջ
անձանց կը պատահի , և կամ անմաքուր օդոյ եւ
անպէտ կերակուրներէ յառաջ կուդան . բայց և
այնպէս շատ անգամ ամէն կարգի մանկանց մէջ կը
գտնենք զայն՝ որ և է կերակուրներէ յառաջ եկած :


ԴՍՐՄԱՆ : Եթէ ատամանց կրճատումն չա-
փազանց է , և մանուկն շարունակ քիթն կը քաշէ
և կ'ուզէ փրցնել , և կամ յաճախ կը միզէ , և քնոյ
մէջ յանկարծ վեր կը ցատկէ , ու սրբանն սաստիկ
եռք կը պատճառէ , պէտք է Սնուց տալ պառկե-
լու ժամանակ մէկ կաթիլ քիչ մը ջրով : Իսկ եթէ
անյագ ախորժակ ունենալով կերակուրներէ լա-
սնունդ չ'առներ ու ելած կղկղանքն անմաքս է ,
Քիւն , տուր (առտու և գիշեր՝ երեք կամ չորս օր) :

Երբեմն պէտք կ'ըլլայ Սննդան տալ ճճիններն
ամբողջովին արտաքսելու համար : Այսպիսի պա-
րագայից տակ՝ սովոր եմ երկու ցորեն Սննդան
խառնել լաւ մը՝ 8 ցորեն շաքարի հետ , և ասկից
առաւօտներն և գիշերներն մէկ մէկ ցորեն քիչ մը
գաղջ կաթի մէջ հալեցնելով տալ : Փորձով գըտ-
նուած է որ այս կերպով տրուած Սննդան աւելի
ազդեցիկ է՝ քան առանց կաթի , և հետեւապէս

հարկ չ'կայ մեծ քանակութեամբ տալ սոյն գեղն:

Պէտք է երբ ճճիներն կը թափին, յետ այնորիկ շափահասներու համար մէ քանի գիշեր Սեւ քեր տալ և մանկանց համար Գլխաւոր, որպէս զեարգիլէ շուտ գոյութիւնն: (Երբեմն թոյլէ խիստ օգտակար եղած է):

Ճճի ունեցող մանուկներն պէտք է զգուշացնել որ հող, կիր, մոխիր, ածուխ և չն տեսակ նիւթեր չ'ուտեն, քանզի շատ անգամ անյարգ փափաք մը կ'ունենան ոոցա և իրենց ստամոքսն յաւէտ անոնցմով կը լեցնեն:




ԺԱՊԱԻԷՆ (Tania)

Ժապաւէն կոչուած ճճի գոյութեան ստոյգ նշանն՝ նորա մաս առ մաս թափին է, քանզի շատ անգամ հասարակ (կլոր) ճճիներն նման նեղութիւններ կը պատճառեն, և դժուարին է երկոցունց տարբերութիւնն որոշել: Ընդհանրապէս երբ բնմտակի ցաւ կը պատճառէ, մանտանդ առաւօտուն կանուխ նախ քան զնախաճաշիկն, որ յետ կերակրոյ ցաւն կ'անցնի: Երբեմն կարծեա թէ որովայնէն մինչև ստամոքսն և անտի մինչ խոչարփողն կամ կոկորդն պաղ սառուցեալ գնտակ մը կ'ելլէ. գլխոյ պտոյտ, աչաց խաւարումն և ընդհանուր մարմնոյ ուժաթափութիւն և չն կը պատճառէ:

ԴԱՐՄԱՆ: Այս նեղութեան համար Յեղեմի 15-րդ աւանդն պէտք է (մինչ 15 օր), երկու կաթիլ՝ սառու

ւատ և գիշեր: Նաև նույնպէս (վայրի նունեն-
ւոյ արմատի կամ կոճղի կեղևն 10 տրամ, 100
տրամ ջրով եռացուր մինչև որ 75 տրամ մնայ, և
օրն 3—4 անգամ փոքրիկ սուրճի գաւաթ մը խմէ:
Փարձեալ Դոմենոյ կարն . 50 տրամ կուան թրջէ
բաւական կաթի մէջ և 24 ժամ վերջը կեղևէ, և
չաւ մը ծեծելով, նոյն կաթովն առաւօտներն խը-
մէ: Եթէ հիւանդն սովորական պնդութիւն ունի՝
պէտք է շուծիչ մ'առնել:



ԽՈՐ ՎԷՐՔ (ՍՐԲԱՆԱՅ) (Մաքեայ)

(Fistula in ano)

Այս վէրքն՝ յերկարաձգեալ տեսակ մը խոց
է, որ շատ անգամ մերձակայ մասանց մէջ մորթի
տակէ տարածուելով, խոռոչներ կը բանայ, և որ
առ հասարակ վիրաբուժական դարմանիւ կը բու-
ժի, և անկարելի կը թուի որ ներքին դեղերն
երբէք կարենան բուժել զայն: Սակայն՝ փորձա-
առութիւնն կ'ուսուցանէ մեզ որ կրնայ բուժուիլ
և չէ անկարելի, մանաւանդ երբ դրսէն պէտք ե-
ղած միջոցներն ևս 'ի գործ կը դրուին:

Տօքթօր Խյարն իւր գրութեան մէջ կ'ըսէ. Ե-
թէ Քուլարիս 'ի ներքուստ մատակարարուի և դըր-
մէն ևս Քուլարիս գործածուի, շատ անգամ կը
բուժի:

Հարկաւ ըստ մի ուրիշ օգտակար դեղ է այս տկա-
րութեան մէջ, որ երբեմն խիստ շատ օգուտներ

ըրած է, Քալանդարա նոյն աստեղն գրսէն գործածելով :

Քալանդարա և Քալանդարա, վերոյիշեալ կերպով այլ բժշկաց ձեռք օգտակար եղած է :

Երբեմն գիշերներն նիւտ-լոֆտ և առաւօտները Սելֆեր տալով, և Հոյոր-Քիտ գրսէն գործածելով բուժեալ է : (Գրսէն գործածուելու գեղերն՝ մէկ մաս՝ ինն մաս ջրով խառնէ, և փոքր շէշէկոյով մը լուալէն զկնի, լաթ մը թրջէ և վրան դիր) :

ԳԼՈՒԽ Զ.

ԼԵԱՐԴ ԵՒ ՏԿԱՐՈՒԹԻՒՆՔ

ԲՈՐԲՈՔՈՒՄՆ ԼԵԱՐԴԻ (Գալանդարա) (Hepatitis)

Նախ քան յիշեն Լեարդի տկարութիւններն ու ախտանիշներն, պատշաճ կը համարիմ աստանոր նորա դիրքն համառօտիւ նկարագրել :

Լեարդն՝ մարմնոյ կողի ոսկրներովն շինուած վանդակի վերի մասին մէջն է, թոքին տակը, և աջ կողմն գրեթէ բոլորովին կը լեցնէ, որոյ վարի մասը՝ մինչև վերջին կողն կը հասնի : Լեարդի վրայի կամ դուրսի կողմն քիչ մը բարձրացած՝ գոգաւոր է և ներսի կողմն կորնթարդ : (Աստ փոքրիկ պարկ մը կայ, որոյ մէջ դառն հեղանիւթ մը

կը գտնուի որ «մաղձ» կը կոչուի, և որ անտի կը թափի Տիւօտինըմին մէջ) :

Լեարդի տկարութիւն ըսելով՝ կրնայ լեարդի գողաւոր մասն հասկցուիլ, և կամ նորա հակադարձն, այսինքն կորնթարդ կողմն :

ՋԱՆԱԶԱՆԻՉ ՆՇԱՆՔ : Եթէ լեարդի գողաւոր կողմն ըլլայ բորբոքումն, յայնժամ մարմնոյ աջ կողմն կիզող ցաւ կամ խիթ («անճլի նման») կ'զգայ, ու շնչառութեան ժամանակ առաւել կը սաստկանայ, երբեմն մինչև աջ ուսն (թիակն) կը հասնի, նոյնպէս և վարի կողմն, ու մերթ ընդմերթ ձեռաց թմրութիւն մը պատճառելով, հիւանդն չէ կարող աջակողմեան պառկիլ : Բայց եթէ լեարդի տակի մասն ըլլայ տկարութիւնն, յայնժամ հիւանդի աչքերն ու այտերը կը դեղննին, որ այն ատեն Դալուկն («բուլետ») կը կոչուի :

Այս հիւանդութեան ատեն բերանն դառն ըլլալով՝ երբեմն նաև կը փոխէ, և մէզն դեղնագոյն կ'ըլլայ, և եթէ ձախ կողմն պառկելու ըլլայ, ցաւն կը սաստկանայ. իսկ ընդհակառակն երբ աջ կողմն դառնայ՝ կը հանգստանայ : Ախտի նոր վիճակի մէջ՝ քիչ կամ շատ մամնոյ չոր տաքութիւն, սաստիկ ծարաւ, և չոր հազ մ'ես պակաս չէ. նաև աջ կողմն եթէ կոխելու ըլլամք՝ ցաւ կ'զգայ :

ԴԱՐՄԱՆ : Այս ախտի համար հետևեալ դեղերն գլխաւորապէս կը գործածեմք, զորոնք իրենց կարգաւն աստ կը դնեմք :

Ա՜ճՆԷՆ, ՊրոյճՆԷ, Արսէնիւթ, Մերիւրիւլ, Տիճէնուլ, և Նիւտրիտ :

Ա. Ժ. Է. Եթէ հիւանդն տարութիւն եւ սաստիկ պապակ ունենալով մարմինն չոր է, և ինք զիշերներն անհանգիստ է, ու լեզուն գեղնագոյն ըլլայ: ԱՉ հոգ կէս փոքր գաւաթ ջրոյ մէջ հալեցուր և ժամը դրգալ մը տուր, մինչև որ քրտնի, յետոյ աւելի ուշ: Բայց եթէ չքրտնի, յայնժամ աւելի շուտ պէտք է տրուիլ:

Պրայմիայ: Եթէ փորն պինդ ըլլալով խայթիչ ցաւ ունենայ, ԱՉ հոգ կամ մի քանի կաթիլ հեղուկ, կէս գաւաթ ջրոյ մէջ դիր և երկու ժամը դրգալ մը տուր:

Մերտիւրիա: Եթէ չոր տարութիւն (ոչ սաստիկ), և մարմնոյ ու աչաց մէջ գեղնութիւն, քրտնիք, բերնի լեղիութիւն ունենալով՝ փորն մերթ խիստ պինդ, կամ մերթ լոյծ և հոտոտ ըլլայ, ԱՉ հոգ կէս գաւաթ ջրոյ մէջ հալեցուր և երկու ժամը դրգալ մը տուր:

Արեւիք: Եթէ նեղութեան ժամանակ ձեռքերն ու ոտքերն պաղ ըլլան, մազձ փսխէ, աղբը սեւ ու մէզն խիստ կարմրագոյն ըլլայ: Այն ատեն ԱՉ հոգ կէս գաւաթ ջրոյ մէջ հալեցուր և կէս կամ մէկ ժամը դրգալ մը տուր, մինչև որ տարբերութիւն ընէ, յետոյ աւելի ուշ:

Վերոյիշեալ գեղերն պէտք են տրուիլ հիւանդաց, երբ լեարդի վրայի մասի նշաններն կը տեսնուին:

Իսկ եթէ տակի կորնթարդ մասին նշաններն կան, յայնժամ պարտ է տրուիլ

Տիճիլուկ: Եթէ հիւանդի բազկերակն կամաց, ակրը ձերմակ ըլլայ, ու ախտի եղած տեղն կոխուած ատեն սաստիկ ցաւ պատճառէ:

Բարեգործութիւնք : Նաևս նոյն կերպ ներդրութեանց : 12 հասարակական շրջան մէջ և մէկ կամ երկու ժամը դրողական մը տուր :

Ներդրութիւնք : Եթէ հիւանդն չափազանց ըմպելեաց սովորութիւն ունի և անկից պատճառեալ է ցաւըն : 12 հասարակական շրջան, մէկ կամ երկու ժամը դրողական մը տուր :

Լեարդի այլ և այլ տկարութեանց համար կան նաև մասնաւոր դեղեր, զորս մի առ մի յիշելն դրողական համառօտութիւնն չ'ներեր : Բայց լոկ դեղերն աստ կարգերն բաւ կը համարիմ :

Լեարդի : Մաղձային զլիոյ ցաւ, պնդութիւն, լեարդի կողմն ցաւ, անմարս աղբ (սև), դեղնութիւն մարմնոյ :

Մանկութիւնք : Յաւ լեարդի կողմն, շնչառութեան ներդրութիւն, չոր հազ, ու երբեմն փորհարութիւն կը պատճառէ :

Լեարդի : Անմարս աղբ կամ պնդութիւն, և ցաւ : Փոքր : Չափազանց կարծրութիւն լեարդի (կողմն) վրան, և խիստ պնդութիւն :

Վերոյիշեալ դեղերն՝ իրենց նշաններու համեմատ կրնան գործածուիլ կամ առանձին, և կամ արդէն լեարդի տկարութեան համար յիշուած մասնաւոր դեղերու հետ փոփոխակի, որ շատ անգամ նեղ պարագայից տակ՝ աւելի խոհեմութիւն է այնպէս ընել :

ԴԱԼՈՒԿՆ (Մ-ԴԷԼԷԺ) (Joundice)

Դալուկն կամ դեղնութիւնն՝ որպէս անունէն յայտնի է, Մարմնոյ դեղնութիւն ըսել է, որ առաջին անգամ՝ աչաց ճերմակ թաղանթներու վրայ կը նշմարուի. ուստի բոլոր մարմինն կրնայ պատել, և բաց դեղնագոյն ըլլալով՝ կրնայ առաւել մթագոյն ըլլալ:

Այս տկարութան պատճառն լեարդի անգործութիւնն է, որով մաղձն արեան նուրբ անօթներու մէջ մնալով, կը դեղնեցնեն մարմինն. կրրնայ սաստիկ վախով կամ կրից պատճառաւ յառաջ գալ, և կամ մարսողական դժուարութենէ, պաղէ, ևլն: Անբարեխառն անձինք՝ քան զայլս աւելի ընդունակ կ'ըլլան այս ախտի:

ԴԱՐՄԱՆ: Երբ հիւանդութիւնն նոր է, և հիւանդն սաստիկ տաքութիւն, ծարաւ, գլխոյ պըտոյտ, պնդութիւն ունենայ, ու մէզն մութ կարմըրագոյն ըլլայ, Ա.+ձ.է.Ը, 12 հադ 12 դրգալ ջրոյ մէջ հալեցուր և երկու ժամը դրգալ մը տուր:

Երբեմն վերոյիշեալ նշաններու ամէնքն 'ի միասին հիւանդի վրայ չ'են տեսնուիր, նոյն ատեն Ա.+ձ.է.Ը ի մատակարարութեան պէտք կ'ըլլայ, այսինքն չոր տաքութեան ատեն, և յայնժամ հարկ է ամէն կէս ժամը դրգալ մը տալ, մինչև որ հիւանդն քրտնի:

Մեք+է-ր: Երբ դեղնութեան հետ՝ ստամոքսի խորն ծանրութիւն և ցաւ ըլլայ. (տես Ա.+ձ.է.Ը):

Գ.մ.ձ.հ.յ: Եթէ յանկարծական վախի կամ կրից պատճառաւն է. (տես Ա.+ձ.է.Ը):

Արեւիկա: Եթէ փորհարութիւն ունի արիւնախա-
ռըն կամ լորձունքի նման: Այս տկարութեան մէջ
թէ՛ հին և թէ՛ նոր տեղակին համար խիստ օգ-
տակար է. (տես Ա. Բ. 1):

Իրի: Եթէ լոյծ և մաղձային է աղբը. (տես Ա. Բ. 1):

Նիւտոն-Վոյտ: Երբ ոգելից ըմպելեաց դործածութե-
նէ յառաջ եկած է, յայնժամ հինգ կամ վեց օր՝
առաւօտուն և երեկոյին պէտք է և հոգ առնել
չոր: Բայց եթէ շուտ օգուտ չ'ընէ, յայնժամ 12
հոգ վեց դրգալ ջրոյ մէջ հալեցուր և երկու ժա-
մը դրգալ մը տուր:

Պրոպիլի: Երբ մէզի մէջ բաց կարմրագոյն փոշի լինի:
Լոյսօքո: Պնդութիւն և կղմտորագոյն փոշի:

Ի ստորև կը դնեմ մի քանի ուրիշ դեղեր, որ
երբ լեարդն յայտնի կերպով նեղութեան մէջ կը
տեսնուի՝ հանդերձ դեղնութեամբ, կրնանք դոր-
ծածել, եթէ ոչ առանձին՝ գէթ վերոյիշեալ դե-
ղորէից հետ փոփոխակի:

Քելեոմի, Լեքեանորա, Բոթոֆելլ, Հայրապետ:

Բոթոֆելլ և Հայրապետ: Եթէ խիստ սնդութիւն
ուսննայ հիւանդն. և Քելեոմ ու Լեքեանորա, երբ
չնչառութեան դժուարութիւն ուսննայ հիւանդն,
ևս միզելու ժամանակ ցաւ: Նաև պէտք չ'է մեղ
մոռնալ Պոթոֆելլ և Իոթին, որ երբեմն յոյժ օգ-
տակար եղած են:

Վերոյիշեալ դեղերն, որպէս աստի նոր վի-
ճակի մէջ, նոյնպէս և հնոյն կրնանք դործածել.
միայն թէ՛ հին տեսակին համար պէտք է աւելի
ուշ տալ դեղերն. և մի քանի օրէն վերջը՝ կամ

ընդամիջեւ բողորովին և կամ ուրիշ դեղ մը տալ՝
ըստ պահանջման ախտի :

Ոգելից ըմպելեաց գործածութիւնն՝ ախտն
անբուժելի ընելու գլխաւոր պատճառներէ մին է :



ՓԱՅՄԱՂ (Spleen) (Spleen)

Փայծաղն՝ կակուղ, սպնդային, երկայնաձև, տափակ գործարան մ'է, որ մարմնոյ ձախ կողմն՝ կողոնի և ստամոքսի կից գիրք մ'ունի. ընդհանրապէս առողջ վիճակի մէջ՝ երկայնութիւնն է 4 ու կէս մատնաչափ, և թանցրութիւնն՝ 2 ու կէս, և որոյ ծանրութիւնն է 65—70 տրամ. եւ երբ բորբոքի, երբեմն իւր բնական մեծութեան չորսն և կամ ա'լ աւելին կ'ըլլայ :

Այս գործարանի պաշտօնն դեռ յայտնի չ'է, այսինքն թէ ինչո՞ւ համար մարմնոյն այդ գիրքն կը պահէ. և ոմանք կը խորհին որ առանց անոր մարդս կրնայ ապրիլ :

Սակայն անկասկած եմք որ՝ օր մը գիտութիւնն 'ի լոյս պիտի ընծայէ մեզ թէ՛ ինչո՞ւ Ամենիմաստն աստ զերտեղած է այս մարմինն և թէ ի՞նչ է նորա պաշտօն :

Փայծաղի բորբոքումն ըստ օրինի դարմանելու համար՝ պարտ է մեզ գիտնալ որ այս ախտն մի քանի մասնաւոր պատճառներէ կամ ախտերէ յառաջ կուգայ. զոր օրինակ՝ Տենդ, Զերմ որովայնային, ևլն. ևլն :

ՆՇԱՆՔ : Այս գործարանի բորբոքումն կրնայ

ունենայ : Երբեմն Պելլագործնս եթէ Նիսիոսի հետ
փոփոխակի տրուելու ըլլայ , առաւել օգտակար
կ'ըլլայ :

Բուսաբէլլո : Եթէ որ և է շարժում հիւանդին հան-
գրատութիւն տալով՝ ցաւն ևս մեղմացնէ . (Պրայ-
նի ճիշդ հակառակն) : 12 հոգ 6 դրդալ ջրոյ մէջ
հալեցուր և 2 ժամը դրդալ մը տուր հիւանդին :

Գ Լ ՈՒ Խ Զ .

Ս Ի Ր Տ

Սիրտն սպարապ մանդէն գործարան մ'է , որ
թոքերու մէջ տեղն՝ մարմնոյ ձախ կողմն կը կե-
նայ , և տանձի մը նման՝ իւր սուր ծայրն դէպ 'ի
վար երկնցած ըլլալով , հասարակօրէն իւրաքան-
չիւր մարդոյ սիրտ՝ իւր բռունցի չափն է :

Սիրտն երկու գլխաւոր մասերու կը բաժնուի,
աջ և ձախ : Աջ կողմը կուգայ բոլոր մարմնոյ մէջ
անգամ մը շրջան ընող ամբողջ արիւնն (որ սեւ-
գոյն է) , մեծ ու փոքր արեան ընդունարաններու
միջոցաւն , ուսկից փակեալ կափարիչներն բանա-
լով վարի մասն կ'անցնի : Ասկից դարձեալ արեան
մեծ ընդունարաններու միջոցաւ թոքերն կը տա-
րուին , և հոն մաքրուելով և զտուելով , ուրիշ
կարգ մը խողովակաց ձեռամբ սրտի ձախ բլթա-
կին կը տարուի երակաց միջոցաւ , որ անկից ևս
ձախ խոռոչը կ'անցնի : Յետոյ սրտին զօրաւոր

կծկելովն մաքուր արիւնը մեծ ընդունարանի եւ այլոց միջոցաւ կը տարածուի ամբողջ մարմնոյն մէջ: Այսպէս ամբողջ արեան՝ բոլոր մարմնոյ մէջ ըրած շրջանն, կ'ըսէ Բրօֆէսօր Տալթըն, Նիւ-Եօրքի երևելի բնախօսն, քսան և հինգ մանրերկրորդի մէջ կը կատարուի:

Ընթերցողաց հետաքրքրութեան համար՝ հետևեալ ցուցակն աստ կը զետեղեմ, թէև գրքոյկիս սահմանէն դուրս ելած համարուիմ, որ նոյն հեղինակի գործէն քաղեալ է:

Մարդոց	արեան շրջանն	Մանրերկրորդ	25
Զիւռ	»	»	28
Շան	»	»	45
Այծի	»	»	43
Աղուխուռ	»	»	12 ¹ / ₂
Նապաստակաց	»	»	7

Այս վերոյիշեալ ցուցակէն կը տեսնենք տարբեր կենդանեաց արեան շրջանաց ժամանակն, որ է համաձայն իւրեանց բնութեան:



ԲԱԲԱՆՈՒՄՆ ՍՐՏԻ (ԵՒՐԷԿ ԼԻՔՆԷՆԷ)

(Cardiac Palpitation)

Սիրտն՝ իւր առողջ վիճակի մէջ՝ 17—18 բաղխում կամ մղումն կ'ընէ մէկ բոպէի մէջ, ուսկից աւելին տկարութեան նշան է: Սրտի բաբախումն՝ լոկ իբր շղային տկարութիւն նկատեալ, ըստ այնքմ նորա դարմանն ևս հանդերձ պատճառօքն աստ կը դնեմ:

Ա. Ժ. Ե. Կ. Ի. Գ. : Եթէ կրից , այսինքն բարկութեան և չն. պատճառաւ է , և գիշերներն առաւել է քան ըզ- ցերեկն , և եթէ ձախ կողմն պառկելով աւելի սաստկանայ բարախումն . 12 հոգ 12 դրդալ ջրոյ մէջ հալեցուր և քառորդ ժամը դրդալ մը առ մինչ հանդարտիլն , յետ այնորիկ ժամը դրդալ մը : Տէ՛նի՛ն : Եթէ բազկերակն անկանոն ըլլալով հան- դերձ՝ գլխոյ պտոյտ ունենայ հիւանդն . 12 հոգ 12 դրդալ ջրոյ մէջ հալեցուր և ամէն երկու ժա- մը դրդալ մը :

Մ. Ժ. Ե. Կ. Ի. Գ. : Թէյ , սուրճ և ծխախոտ գործածողաց , չափազանց ջղային կանանց և ո և է անբարեխառն անձանց համար լաւ է . (ևս Նիւտոնի) :

Բ. Ժ. Ե. Կ. Ի. Գ. : Եթէ բարախումն՝ իւղային կերակրոց պատճառաւ ստամոքսի անկարգութենէ յառաջ եկած է . (Ա. Ժ. Ե. Կ. Ի. Գ. հետ փոփոխակի) :

Ի. Ժ. Ե. Կ. Ի. Գ. : Եթէ վիշտ , կամ չափազանց ուրախու- թիւն ըլլայ պատճառ . փոփոխակի Ա. Ժ. Ե. Կ. Ի. Գ. կամ Բ. Ժ. Ե. Կ. Ի. Գ. հետ , կէս ժամն դրդալ մը :

Սրտի բարախումն ժամանակ՝ սուրճ , թէյ և կամ ո և է ոգելից ըմպելիքներ , և կամ բուսա- կաններ պէտք չէ գործածել , որոնք ստամոքսի թթուութիւն յառաջ կը բերեն :

Շատ անգամ փոքրիկ դրդալ մը Պրոպրիէ՛ գա- ւաթ մը ջրոյ մէջ դնելով , և անկից 2—3 ժամն մեծ դրդալ մը հիւանդի տալն՝ շուտով կը հան- դարտեցնէ բոլոր նեղութիւնը : Անշուշտ սա՛ հաս- կացողութեամբ թէ՛ նեղեալն Սրտի գործարանա- ւոր հիւանդութիւն չ'ունի :

ՍՐՏԻ ՏԿԱՐՈՒԹԻՒՆ (Ներքին Ֆաշիէ)

(Endocarditis)

Սիրտն՝ զինքն պատող երկու մաշկ ունի, մին ի ներքուստ և միւսն յարտաքուստ, որոց տկարութիւններն կը տարբերին. ուստի նախ և յառաջ ներքին մաշկին վրայ խօսելով՝ յետ այնորիկ համառօտիւ ևս միւսն յիշեմք:

Այս ախտն (սրտի ներքին մաշկի ցաւն), աւելի և գրեթէ միշտ երիտասարդաց կը պատահի և մանաւանդ՝ առաւել արանց՝ քան թէ կանանց, և երբեմն առանց սրտի դռնակներն վնասելու կ'ըլլայ, իբր ինքնին տկարութիւն մը՝ պաղէ յառաջ եկած, և կամ թէ՛ հիւանդն արդէն Յօդացաւի ենթակայ եղած կ'ըլլայ:

Սրտի փոխաբերական Յօդացաւն խիստ վտանգաւոր տեսակն է. և եթէ դռնակներն կամ կափարիչներն վնասուած են, յայնժամ անդարմանելի ախտերէ մին կ'ըլլայ:

Յօդացաւային սրտի տկարութեան գլխաւոր նշաններէ մին բարախումն է, որ երբեմն բաւական հեռի տեղէ կրնանք նշմարել. և եթէ աւանջնիս կուրծքին դնելու ըլլանք, յայնժամ կը լսենք նաև սողացող ձայն մը՝ հանդերձ սրտի քարշման, ևն. ևն. Երբեմն շնչառութեան դժուարութիւն, թէև միշտ տաքութիւնն շատ չէ. բայց ընդհանրապէս ներշնչ է. բաղկերակն տկար, փոքր և ցնցող ըլլալով՝ երբեմն սիրտն զօրաւոր կը բարախէ ու երբեմն տկար, այնպէս որ հազիւ

կարող կ'ըլլան զգալ նահն . հիւանդն միշտ անհանգիստ է և երբեմն մինչև իսկ կը նուազի :

Ուրիշ պարագայից տակ կուրծքի ձախ կողմն ցաւ և երբեմն բողբոլվին շնչարգելութիւն կուներնայ , այտերն դոյնագոյն , ոտքերն ու ձեռքերն պաղ , և երբեմն խիստ ձանձրացուցիչ չոր հազ մը , (երբեմն մածուծիկ հիւթ մը) և թթու քրքրտինք մը . և եթէ տկարութիւնն քիչ մ'էս յառաջանայ , յայնժամ բոլոր մարմինն կ'ուռի , սկըտելով նախ ոտից վրայէն :

Այս տկարութեան համար գործածեալ դեղօրէից գլխաւորներն են : — Ածնէն . Սքիճիւն . Տիճիւն . Նիստ—ձօմ . Պելլարօն . Բուրսնիւն , Գեթըն . Վերաբրոս—Վերո . ևս Օրոս և Ֆերրոս :

ԳՍՐՄԱՆ . Ածնէն՝ այս տկարութեան կամալստի գլխաւոր դեղն է թէ՛ շնչարգելութեան և թէ սաստիկ բաբախման կամ տաքութեան համար : Առ և կաթիլ (Tincture) Ածնէն և գաւաթ մը ջրոյ մէջ խառնելով՝ աղէկ մը զարկ և տուր հիւանդին կէս ժամն գրգալ մը , մինչև զգալի տարբերութիւն ընէ . յետ այնորիկ մէկ կամ երկու ժամը գրգալ մը տուր :

Պրայմի և Քելլիւն : Եթէ հիւանդութիւնն Յօգացաւէ պատճառած է . հինգ կաթիլ կէս գաւաթ ջրոյ մէջ աղէկ մը զարկ և փոփոխակի Ածնէնի հետ՝ կէս ժամն գրգալ մը տուր , մինչև որ տարբերութիւն ընէ :

Պելլարօն : Եթէ շնչառութեան դժուարութիւնն սաստիկ ըլլայ , Ածնէնի հետ փոփոխակի տուր ժամը գրգալ մը . (12 հող կամ կաթիլ մը՝ կէս գաւաթ ջրով) :

Օրոհ և Ֆերբորհ: Եթէ տկարութիւնն նոր սկսած ,
և ոչ գործարանաւոր բարախում մ'է՝ հանդերձ
դեղնութեամբ այտերու :

Քէլթը և Վերոնրոհ-Վեր: Եթէ բարախումն սաստիկ
ըլլայ և շուտ , բաղկերակն բարձր . (փոփոխակի
տասը բոպէն դրգալ մը) :


Մէլէլէլէ: Եթէ շնչառութիւնն կարճ ըլլալով հան-
դերձ՝ ասղանման ցաւ կայ 'ի մերձակայս սրտի :

Նոյնպէս Ա.ձ.Նի հետ տրուած ժամանակ այս
դեղն՝ աւելի օգտակար եղած է , մանաւանդ եթէ
Յօդացաւէ ծագումն առած է տկարութիւնն ,
Բուլոնիլ: Օգտակար եղած է միշտ իգական սե-
ռին , երբ տկարութիւնն դաշտանի դադարմանէ
կամ նուազութենէ պատճառեալ է :

Սա ևս լաւ է Ա.ձ.Նի հետ փոփոխակի տալ
կէս կամ մէկ ժամը դրգալ մը : Իսկ կանանց պարզ
ջղային բարախման համար՝ Մ.ս.ս. , Նի.ս.ս. և
Ք.օ.օ. , ընտիր դեղերն համարուած են , և կրնան
գործածուիլ Ա.ձ.Նի հետ :

Սրտի տկարութեամբ ներդուող անձինք պէտք
են զգուշանալ որ և է դրգուիչ պատճառներէ և
չափազանց աշխատութենէ :

Այսպիսի անձինք մանաւորապէս կ'օգտուին
եթէ սովորութիւն ընեն ամէն օր սպունքով լուս-
նանալ , կամ գէթ կուրծքերնին սրբել պաղ ջրով
և հոգ տանին՝ յետ լուացման լաւ մը չորցունել
մարմիննին :



ՄՐՏԻ ՑԱԻ (Բուրժուաձև սրտի պարիթ) (Péricarditis)

Սրտի ցաւ ըսելով՝ սիրտն յարտաքուստ պատող մաշկի կամ պարկի բորբոքումն ըսել կ'ուզեմ:

Այս ախտն ևս՝ կրնայ ինքնին և կամ Յօդացաւէ ծնունդ ունեցած ըլլալ, (Թէպէտ և խիստ շատ անգամ՝ մանաւանդ Նոր տեսակն՝ Յօդացաւէ պատճառեալ է):

Առաջին անգամ հիւանդն գուցէ լոկ ճնշում մը, ոչինչ նուաղում մը կ'զգայ, (որ հասարակօրէն «սիրտ գոցուիլ» կը կոչեն), բայց շուտ սաստկանալով՝ կ'ունենայ սաստիկ տաքութիւն, և բազմեբարկն արագ ու զօրաւոր կ'ըլլայ: Երբեմն հիւանդն ճնշում մը կ'զգայ լանջաց վրայ՝ գէպի ձախ կողմն, որ շուտով շնչառութիւնն կը դժուարանայ կամ կ'արգիլուի, յուսկ յետոյ շատ անգամ հիւանդն կը նուաղի:

Այս տկարութիւնն կամ ախտն կատարելապէս բուժելի է, եթէ կանուխ և ժամանակին դարմանուելու ըլլայ. վասն որոյ պարտ է միշտ արթուն կենալ, և առաջին պատեհութեամբ ճարտար բժշկի մը խրատուցն գիմել:

ԴԱՐՄԱՆ. Ա+ձէ՛ն, (առաջին հեղուկն), քանի մը կաթիլ գիր գաւաթ մը ջրոյ մէջ և ամէն կէս ժամն գրգալ մը տուր: (Բայց դժբաղդարար շատ անգամ անհոգութեամբ զանց կ'առնուի Ա+ձէ՛նի ժամանակն):

Ա+ձէ՛ն պէտք է տրուիլ՝ երբ առաջին անգամ կը նշմարուի թէ Յօդացաւն հասած է 'ի սիրտ, եւ կ'սկսի բաբախել Սիրտն: Երբ կանուխ կը գործա-

ժենք այս դեղն , շատ անգամ բաւական եղած է 24 ժամու մէջ՝ տկարութիւնն բոլորովին վանել և հիւանդն իւր նախկին հանգստութեան վերադարձնել : Բայց երբ արդէն բաւական ժամանակ անցած է . յայնժամ հարկ կ'ըլլայ Ա. Բ. Նի հետ Պրոպիէ տալ , կէս կամ մէկ ժամը դրդալ մը փոփոխակի : (Պրոպիէ երբէք առանձին չ'է դործածուած , այլ միշտ փոփոխակի՝ կամ Ա. Բ. Նի հետ և կամ Սքիճիէ (ր) :

Սքիճիէ : Եթէ սրտի մերձակայներն եղող ցաւն սաստիկ է , մէկ կամ երկու կաթիլ , կամ 12 հազ վեց դրդալ ջրով հալեցուր և կէս ժամը դրդալ մը տուր :

Տիճիէ : Եթէ սրտի մերձակայ ցաւին հետ կարճ հազ մ'ես ունենայ հիւանդն , յայնժամ Ա. Բ. Նի հետ պէտք է տրուի՝ 1 կամ 2 ժամը դրդալ մը : Քոլիէ և Վերմիլիէ երկու դիսուոր դեղեր են , որոնք սրտի տկարութեանց մէջ մեծապէս կ'օգնեն , մանաւանդ եթէ բարախումն զօրաւոր ու արագ է , ու բազկերակն խիստ բարձր : Այս երկու դեղերն յոյժ կ'ազդեն Նի թիւն ու սաստկութիւնն իջեցնելու , որուն յոյժ կը կարօտի հիւանդն :

Քոլիէ : Հիւանդն եթէ գիշերներն անհանգիստ և անքուն ըլլալով , չոր նեղիչ հազ մ'ես ունի :

Այս երկու դեղերն առաւել օգտակար եղած են՝ երբ փոփոխակի դործածուած են :

Երբեմն սրտի բարախումն յառաջ կուգայ երիկամանց տկարութենէ , և այն ատեն հարկ է Քոլիէ և Սքիճիէ տալ փոփոխակի՝ մէկ կամ երկու ժամը դրդալ մը . (տես Ա. Բ. Նի) :

ԿՍՏՄՐՈՒԹԻՒՆ ԱԶՍՑ

Աչաց կարմրութիւն ըսելով՝ որ և է պատճառաւ աչաց սպիտակ թաղանթի քիչ կամ շատ գրգռումն ըսել կ'ուզեմ, որ մասամբ կամ բոլորովին արիւնալից երակներով ծածկեալ կ'երևնայ:

Այս նեղութիւնն՝ ընդհանրապէս փոքրիկ փոշի մը յաչս երթալէ, պաղէ և կամ չափազանց զօրաւոր լուսով գործելէ յառաջ կուգայ. և եթէ զանցառութիւն ըլլայ, հիննալով՝ աչաց ծածկոցներու ներսի կողմն մանր աւազանման կոծիծներ կը պատճառէ. նոքա ևս շարունակ շփելով եղջերուական վրայ վէրք և կամ Հիփ ԱԶՍՑ կոչուած տկարութիւնն յառաջ կը բերեն, որոյ վրայ իւր յատուկ տեղն պիտի խօսիմ:

Աչաց բորբոքման գլխաւոր նշանք են՝ ցաւ, եռք, կարմրութիւն և տաքութիւն: Հիւանդն կարող չէ պայծառ լուսոյ հայլլ. արտասուք չափազանց կը հոսին, նաև առաւօտներն՝ արտևանունք կալչիւն վիճակ մ'ունին, և երբեմն թանցր բաց դեղնագոյն հիւթ մը՝ աչաց ներքին կոպերէ կը հոսի:

ԴՍՄՄՍՆ: Նախ և առաջ պէտք է պատճառն վերցնել. եթէ փոշի կայ՝ հանել զայն, և եթէ չափազանց գործելէ յառաջ եկած է, դադրեցրնել գործն: Այսպէս պատճառն վերցնելէ զինի, սա հետեւեալ դեղերն ըստ պահանջման հարկի պարտ է գործածել:

Թեթև տեսակներու համար ընդհանրապէս մէկ կամ երկու անգամ Ա. Ժ. Բ. առնելէ զինի, Մե-

Ինչպէս ըստ եղած է . (12 հոգ 9 դրոշմաւ ջրոյ մէջ
հալեցնելով՝ ժամը դրոշմաւ մը) : Եւ եթէ հարկ ըլ-
լայ՝ կրկնել Ա. Բ. Բ. :

Բայց եթէ արտեւանունք կաշիւն են և կոպե-
րըն ևս ուռեցած , յայնժամ պէտք է Պելլուրոն տալ
փոփոխակի ընդ Մերեմբելի :

Եթէ աչաց վարի ծածկոցն ծանր կ'զգայ ու
կարող չէ բանալ զայն , Քրոնիկ տուր : Եթէ պա-
ղէ յառաջ եկած է , Հիւրեմբել :

Աչքն՝ այսպիսի պարագայից տակ պէտք է
գաղջ ջրով լուանալ . կամ պարզ գաղջ ջուր և կամ
քիչ մը Պելլուրոն դնելով մէջն . (մէկ տրամ Պելլուրոնը-
հանրապէս բաւական է 50 տրամ գաղջ ջրոյ) . և
օրը մի քանի անգամ կրկնել զայս :

Այս վերջին կերպն շատ անգամ նոր տեսակ-
ներու համար բաւական եղած է , և աչաց միշտ
հանգստութիւն կ'ընծայէ :

ԽՐԱՏ ՄՍՍՆԱԻՈՐ : Աչաց կարմրութիւնն տես-
նուած ժամանակ , միշտ պէտք է աչաց վերի ար-
տեւանունքն (ծածկոյթն) ետ դարձնել (*) և տես-
նել թէ արդեօք օտար նիւթ մը կայ : Քանզի շատ
անգամ փոքրիկ փոշի մը՝ մեծամեծ նեղութիւն կը
պատճառէ . և եթէ կայ՝ զայն հանելէ զինի , կա-
թիլ մի Արեմբելի ոգի՝ 8—10 տրամ ջրոյ մէջ դնե-
լով՝ պէտք է լուանալ աչքն , որպէս զի ձեռներն
մի այլ նեղութիւն չ'պատճառէ :

(*) Գրիչի բարակ ծայրն վերի արտեւանունքին
վրայ դիր և ձեռքովդ թարթիչներն բռնելով ետ դար-
ձուր :

ԲՈՒՅՈՒՄՆ ԵՎ ԿՈՊԵՐՈՒ


Այսպէս կոպերու բորբոքումն կրնայ նոր ըլլալ և կամ հին. Այս բորբոքման պատճառաւ աչաց թարթիչներու մէջ մանր վէրքեր ելլելով՝ կը թափեն զանոնք, ու կոպերու կարծրութեան և շարունակ կարմրութեան պատճառ կ'ըլլան:

Այս նեղութեան համար գործածուած գըլխաւոր դեղերն են՝ Հէքսէր-ընէ և Մերտի-ընէ (մանք կը յանձնարարեն Կրօնական ներսէն և գըրսէն), որոնք պէտք են փոփոխակի գործածուիլ, մին առաւօտներն և միւսն գիշերներն. (Հէքսէր-ընէ գիշերներն). նոյն ատեն պէտք է գիշերներն գաղջ ջրով և կամ Պեր-տոլ լուանալ:

Հինցած կոպերու տկարութեանց մէջ կան այնպիսիք, որք չափազանց կարմիր և ուռեցած են, մանաւանդ Յոգացաւոյ ենթակայ եղող անձանց եթէ պատահելու ըլլայ: Յայնժամ պարտ է Աքի- և Պել-տոլ և Բը-լէտ տալ:

Այս երեք դեղերն պէտք են կարգաւ գործածուիլ թէ՛ կարմրութեան և թէ՛ չափազանց կարծրութեան համար, վասն զի շատ կը նմանի Օձիկ ախտին, և կրնայ օրինաւորապէս «Աչաց Օձիկ» կոչուիլ. (տես նաև դարման Օձիկ ախտի):

Վերոյիշեալ դեղերն կարգաւ պէտք են գործածուիլ՝ իւրաքանչիւրն զատ զատ օրեր, և օրն միայն երեք կամ չորս անգամ կը բաւէ:



ԿԱՐԻԿ ԱՉԱՑ

Կարիկն՝ փոքր ուռիկ մ'է, որ երբեմն աչաց կոպերու վրայ՝ արտուանանց մէջ կ'ելլէ, վերի և կամ վարի կոպերու վրայ, որ ընդհանրապէս անփնաս ըլլալով՝ մի քանի օրէն հասուննալով մէջի հիւթն կը վազէ և կ'աներևութանայ:

Ոմանք աւելի ենթակայ կ'ըլլան, մանաւանդ իգական սեռն, որոնք երբեմն կանոնաւորապէս գրեթէ ամէն դաշտանի ժամանակ կը նեղուին:


Թէպէտ և աչաց տեսութեան փնասելն երբէք տեսնուած չէ, սակայն մեծ նեղութիւն է հիւանդին. վասն որոյ նախ քան զգեղն յիշելն, ամէնադիւրին վիրաբուժական դարման մը աստ դընելն՝ չեմ կարծեր թէ գրքոյկիս սահմանէն դուրս եղած ըլլայ: Երբ կարիկն հասունցած է, կրնայ ո և է որ՝ քիչ շատ վարժ մէկն՝ փոքրիկ զմեկնի սուր ծայրովն ծակել և մէջն եղած հիւթն ամբողջապէս սեղմելով հանել, և յետոյ քիչ մը դաղջըրով լուանալ աչքն: (Ծեր մայրիկներ՝ գարիի ծայրովն կ'ծակեն և կ'պարպեն մէջի հեղանիւթն):

ԴՍՐՄԱՆ. Բուլուլիւն՝ այս նեղութեան համար գրեթէ յատուկ դեղ մի է, և ո՛չ միայն շուտով կը բուժէ զկարիկն, (մանաւանդ եթէ Կրֆիլի և Սիֆիլիսի հետ փոփոխակի տրուելու ըլլայ), այլ նորա ենթակայութիւնն ևս: Գ հոյ 6 դրգալ ջրոյ մէջ հալեցուր և օրը երեք անգամ տուր հիւանդին: Նոյն կերպով ևս Մերի-բել և Թոյս, որ շատ անգամ այս երկու դեղերն կրնան փոփոխակի տրուել՝ եթէ արանց պատահելու ըլլայ:

Վասն կանանց, մանաւանդ եթէ դաշտանի դժուարութիւն ալ կը կրէ, Բուլուլիւ և Կրֆէր: Սակայն երբ ուռիկն ուշ կը նշմարուի, և արդէն լեցուելու մօտ է, յայնժամ պէտք է Հէքստըզ գործածել օրը 3—4 անգամ, մի քանի օր՝ մինչև որ հասուննայ:

Այս նեղութիւնն յաճախ կրող կանայք պարտին երբեմնակի Բուլուլիւ և Սէֆէ գործածել (փոփոխակի) մի քանի օր. և որպէս զի չկրկնուի սոյն նեղութիւնն, կրնան նաև մի քանի օր եւս Սէֆէ գործածել գիշերներն:

Աչաց տկարութիւն ունեցողք, որպէս և կարիկ, պարտին ամէն կերպով զգուշանալ՝ զօրաւոր լուսով և պայծառ արեգական մէջ գործելէ, որպէս զի բորբոքն չ'տարածուի:



ՈՒՌ ԱՉԱՅ ԿՈՊԵՐՈՒ

Երբեմն աչաց կոպերու վրայ կարիկի նման փոքրիկ ուռեր կ'ելլեն, որ սխալմամբ իբր կարիկ կը նկատուի: Այս տեսակ ուռերն յաւետ կոպերու մէջ տեղի կ'ըլլան և ոչ թէ թարթիչներու մէջ, և կարծր կ'ըլլան, և եթէ չ'դարմանուի, երկարատեն՝ առանց շատ մեծնալու և կամ հասուննալով ցրուելու, հոն կը մնան:

Այս ուռերն ներքին դեղերով դիւրաւ կը բուժուին, և ընդհանրապէս սա հետևեալ երկու դեղերն բաւ եղած են բուժել զանոնք:

Քւլտուրէն և Մէրէ-րէշ : Այս երկու դեղերուն առաջինն՝ առաւօտներն , և երկրորդն՝ գիշերներն պէտք է տրուիլ վեց օր . եթէ բաւական չըլլայ , յետ մի քանի աւուրց դադարման՝ կրկնէ նոյն կերպով :



ՀԱՐՔՈՒՂԽ ԿՐԳՌՈՒՄՆ ԱՉԱՅ ՍՊԻՏԱԿԱՅ

(Conjunctivitis) *

Կարծրաթաղանթն կամ աչաց սպիտակ թաղանթն շատ անգամ ցրտոյ կամ սաստիկ հողմոյ պատճառաւ կը դրդուի և կ'սկսի կարմրիլ : Այս տկարութիւնն նոր սկսած ժամանակ դիւրաւ կը դարմանուի ներքին դեղերով : Տկարութեան նոր սկսած ատենն՝ չոր եռք , և փոքր 'ի շատէ ցաւ կամ այրիլ մը կ'զգայ հիւանդն , որպէս թէ օտար նիւթ մը դացած ըլլար աչաց մէջ : Երբեմն առատ արտասուք կը հոսի և սպիտակ թաղանթն փոքր ի շատէ կը կարմրի , որ ընդհանրապէս մի քանի անգամ Սուլֆուր առնելով բոլորովին կը բուժի :

Բայց եթէ կարմրութեամբն հանդերձ գլխոյ ցաւ ըլլայ , մանաւանդ ճակտի , յայնժամ լաւագոյն է Ա.Վ.Է. և Պելլուրմն փոփոխակի առնել օրը երեք անգամ իւրաքանչիւրէն :

Եթէ չափազանց արտասուք հոսին , և երբեմն հիւանդն կը փռնգայ , որպէս հարբխոյ ատեն , յայնժամ Ել-ֆրէն տուր : Եթէ չափազանց արտասուաց հոսման հետ կիզիչ ցաւ ըլլայ , յայն-

ժամ՝ կամ առանձինն և կամ Եկեղեցիի հետ փոփոխակի՝ պէտք է Արքեպիսկոպոսի օրը երեք անգամ:

Եթէ աչաց կոպերու կից խժային հիւթ ըլլայ, յայնժամ Քրիստոս պէտք է առնել. (մանաւանդ տղայոց կամ ջղային կազմութեան տէր անձանց): Բայց եթէ խժային մածուցիկ կաշիւն հիւթըն և կարմրութիւնն առաւել է, յայնժամ Արքեպիսկոպոսի: Իսկ եթէ կոպերն կարմիր և ուռեցած և դիշերն յաչաց հոսած հիւթն ըլլայ դեղնագոյն և խիտ կաշիւն, այնպէս որ առաւօտներն դժուարին ըլլայ աչքերն բանալ, յայնժամ պէտք է Մերկուրիոսը և կամ Հիսթերիոսը. կրնայ փոփոխակի առնուիլ, և կամ մէկ օր՝ մէկն, միւս օր՝ միւսն, օրը չորս անգամ:

Բայց երբ արտասուք շատ ըլլալով հանդերձ՝ ներդութիւնն դիշերներն միշտ աւելի կը սաստկանայ, յայնժամ լաւագոյն դեղն եղած է Բիսկոպոսը, մանաւանդ իցական սեռի կամ նման կազմութեանց: Ընդհանրապէս այս տկարութեան համար առաջին և գլխաւոր գործածուած դեղերն եղած են՝ ըստ իմ փորձառութեան՝ սա հետևեալ երեք դեղերն:

Եկեղեցի: Շատ անգամ իբր աչաց ջուր գործածած ըլլալով ամէն պարագայից տակ, նորա օգուտն տեսած եմ. եթէ բոլորովին չբուժէ, գոնէ սաստիկ գրգռեալ վիճակն կը մեղմացնէ:

Նոյնպէս և Պելլարիոսը, մանաւանդ երբ սաստիկ գլխոյ ցաւով կ'ըլլայ, աչաց կարմրութեան ժամանակ մատակարարեալ և յոյժ օգտակար դեղօրէից մին է:

Սուճըր : Անշուշտ պէտք է , եթէ մորթի տկարութեան ենթակայ է հիւանդն :

Ա. Բ. Ե. Բ. , Ա. Բ. Ե. Բ. , Բ. Ե. Բ. Ե. Բ. և այլ բազում դեղեր օգտակարութեամբ գործածեալ են 'ի ձեռս այլոց :

Գուրսէն գործածուելու դեղորէից մասին գալով ըստ իմ անձնական փորձառութեան՝ հետեւեալ երեք դեղերն ընդհանրապէս բաւ եղած են :

Նախ՝ Ե. Բ. Ե. Բ. . մի քանի կաթիլ , 8—10 տրամ մաքուր զտեալ ջրոյ մէջ , ուսկից օրը երեք կամ չորս անգամ՝ մի քանի կաթիլ աչաց մէջ պէտք է կաթեցնել :

Բ. Ա. Բ. . երկու կամ երեք ցորեն՝ 8—10 տրամ ջրոյ մէջ և օրը երեք անգամ :

Գ. Ա. Բ. Ե. Բ. Ե. Բ. կամ Ս. Բ. Ե. Բ. Ե. Բ. : Այս երկու դեղերն յոյժ օգտակար եղած են իմ փորձառութեամբս , երբ աչքերն կպչիւն և փոքր 'ի շատէ բորբոքեալ վիճակ մ'ունին :

(Մէկ տրամ , 75 տրամ դաղջ ջրոյ մէջ հալեցուր և անով լուայ առտու և երեկոյ , մինչև որ ջուրն աղէկ մը պաղի : Շատ անգամ բարակ մաքուր կտոր մը լաթ թրջել և աչաց վրայ դնելն լաւագոյն եղած է , քան լոկ լուացումն) :



ՇԱՐՍԻԱԼԻՑ ԲՈՐԲՈՔՈՒՄՆ ԱՉԱՑ

(Ophthalmia-purulent)

Այս ախտն՝ եթէ ըսեմ թէ աչաց հարբոյսոյ յոյժ սաստիկ և փնասակար տեսակն է , աւելի դիւրահասկանալի կ'ըլլայ : Այս ախտի մէջ աչաց

սպիտակ թաղանթն բորբոքեալ և արիւնալից ըլլալով հանդերձ, շարունակ շարաւալից կ'ըլլայ, որ եթէ մաքրութեան հոգ չ'տարուի, աչաց եղջերուակն կը փաստէ:

ԳՍԲՄՆ: Առաջին կարեւոր բանն է՝ աչքն մաքրել օրն երկու կամ երեք անգամ գաղջ ջրով, Արժանեւորով, որպէս արդէն յիշեցինք սլարջ հարբղիոյ դարմանի ատեն:

Գլխաւոր գործածուած դեղերն են. Հիքարուիճ, Բը-նոս, Արժանեւոր-նիլերալի և Մերքիւր-տօր:

Հիքարուիճ: Երբ թարախն չափազանց է և կ'ծածկէ ամբողջ աչաց եղջերուակն. պէտք է օրն երեք կամ չորս անգամ տալ հիւանդին:

Բը-նոս: Եթէ աչաց սպիտակ թաղանթն արիւնալից և բորբոքած, այսինքն ուռեցած ըլլայ (Օրը երեք կամ չորս անգամ պէտք է տալ):

Երբեմն պէտք կ'ըլլայ այս երկու դեղերն փոփոխակի տալ, յայնժամ պարտ է Բը-նոս առաւօտներն մինչ կէս օր գործածել, և յետ կիսաւուր՝ Հիքարուիճ, իւրաքանչիւրէն օրն երեք անգամ և միշտ լուծեալ, (12 հոգ 6 դրգալ ջրոյ մէջ):

Արժանեւոր-նիլեր: Ըստ ոմանց՝ առանց այս դեղոյ ըստ արժանւոյն չ'բուժիր այս ախտն, մանաւանդ երբ եղջերուակն վտանգի ենթարկեալ կը թուի, այսինքն երբ բորբոքումն այն աստիճան սաստկացած է, որ զայն վիրաւորելու մօտ է: Այսպիսի պարագայից տակ Արժանեւոր-նիլեր պէտք է տրբուիլ ամէն երկու ժամն դրգալ մը. (12 հոգ լուծեալ 8 դրգալ ջրոյ մէջ):

Երբեմն աւելի դիւրաբուժելի կ'ըլլայ, եթէ

մէկ ցորենն Աբրահամին 12 տրամ ջրոյ մէջ լուծելով՝ առաւօտ և գիշերն մէկ կամ երկու կաթիլ դրուելու ըլլայ բորբոքեալ աչաց մէջ :

Աբրահամին : Եթէ աչաց սպիտակն ևս բորբոքեալ է ընդ եղջերուական :

Մերտէսէն մի ուրիշ օգտակար դեղ է , զոր ոմանք գործածած են թէ՛ ներսէն և թէ՛ դուրսէն , մասնաւանդ երբ «երնդակն» հիւանդութեան մը հետեւանքն է : Այս պարագայի տակ կրնայ առանձինն և կամ արդէն յիշեալ դեղօրէից միոյն հետ փոփոխակի գործածուիլ :

Նոյնպէս դրսուանց գործածելու համար՝ Մերտէսէն է տասը կաթիլ տասը տրամ մաքուր ջրոյ մէջ դիր և օրը 3—4 անգամ (մի քանի կաթիլ) կաթեցուր բորբոքեալ աչաց մէջ :

Որպէս արդէն յիշեցի վասն մաքրութեան՝ որ անհրաժեշտ է աչաց տկարութեանց մէջ , նոյնպէս և թթու ու աղի կերակրոց զգուշութիւնն . և եթէ կարելի է , լաւ է հիւանդի մի քանի օր լոկ կաթ և հաւկիթ տալ :




ԲՈՐԲՈՒՄՆ ԱՂԲԵՐԱԿԱՑ

Աղբերակք են՝ ճանապարհ աւելորդ արտասուաց , որք կը հոսին աչաց գործածուելէն յետոյ , և իւրաքանչիւր աչք ունի մի աղբերակ : Երբեմն ցուրտն , կամ սաստիկ հարբուրդիս մը կ'ըրբոքէ զայս ճանապարհ , և արտասուք՝ փոխանակ

անտի երթալու՝ դուրս այտերու վրայ կը հասնին
և առժամանակեայ կերպով տեսութիւնն կը շփո-
թենն (արտասուաց առատութեամբն) :

Այս նեղութեան համար ցարդ գործածեալ
դեղերէն ոմանք աստ դնել պատշաճ կը համարիմ :

ԴԱՐՄԱՆ : Սուլէշիւ , Քուլտուրէ , Փլուրէ + ... ,
Նոլիւր + ... և Քուլտուրէ : Իւրաքանչիւր դեղ ա-
ռանձինն մի շաբաթ՝ օրն երեք անգամ պարտ է
գործածել :



ՇԼՈՒԹԻՒՆ (Շուշ)

Շլութիւնն՝ մէկ կողման միանանց երկարու-
թեան կամ անզօրութեան և հակառակ կողման
զօրութեամբ քաշելուն պատճառաւ շատ ան-
գամ կը պատահի : Եւ որովհետեւ 'ի մանկութիւն
շիւ եղողներէ շատերն՝ պատանեկութեան ատեն
առանց ո և է դարմանի շտկուած են . վասն որոյ
խոհեմութիւն է սպասել առանց գործողութեան ,
մինչև 'ի չափահասութիւն (12-14 տարեկան) : Քան-
զի փորձով տեսնուած է , որ 'ի մանկութիւն ձախա-
կողման շիւ եղողներն՝ յետ գործողութեան եր-
բեմն հակադարձ կողմն շիւ կ'ըլլան . վասն այնո-
րիկ պարտ է յետաձգել գործողութիւնն :

Շլութիւնն երբեմն ճճիներու գրգռմամբն և
երբեմն մանկանց մազերու չափազանց երկայնու-
թեան , և կամ մի այլ նեղիչ գիւրքի պատճառաւ
կ'սկսին քովտի հայիլ :

Հետեւեալ դեղերն աստ կը դնեմ , վասն զի չա-

տեր անոնցմով բուժեալ են: (Նախ պատճառն վերցուր):

ԴԱՐՄԱՆ: Նոր պատահածներու համար՝ Աստուծոյ և Պէլլապոսն ու Նիսիւսը: Իւրաքանչիւր դեղէն երկու օր պէտք է գործածել իրենց կարգան: (օրն երեք անգամ):

Նաև Հայոսէսը . Սիսուս . Սէլէլէս և Սիսուս երբեմն վերոյիշեալ դեղերէն աւելի օգտակար եղած են այս նեղութիւնն բուժելու մէջ:

ՄԹՈՒԹԻՒՆ ԵՂՋԵՐՈՒԱԿԱՅ (Opecity)

(Հէր Աւոյ)

Աչաց հիւրն՝ ընդհանրապէս աչաց ծածկոյթներու տակն մանրասիտ, կարծր ուռիկներու շրվմամբն յառաջ կուգայ, և եթէ կանուխ չդարմանուի՝ մթութիւնն այն աստիճանի կը հասնի որ երբեմն բոլորովին անբուժելի կ'ըլլայ: Վասն որոյ նախ քան դարմանելն մթութեան, պէտք է նոյն մանր հատիկներն դարմանել և մաքրել, որ օր ըստ օրէ նորանոր ծածկոց չ'պատճառեն: Այս գործն անշուշտ մի մասնագիտի ճարտարութեամբն կըրնայ ըլլալ: Սակայն ենթադրելով թէ՛ արտադրիչ պատճառն վերցուելով հանդերձ դեռ աչաց մթութութիւնն կը մնայ, պիտի յիշեմք մի քանին օգտակարագոյն դեղորէիցն, որք գործածեալ են այս տկարութեանց մէջ:

ԴԱՐՄԱՆ: Գուլարը: Եթէ տկար արեան հե-

տեանքն է ախտն , և կամ խոյլի ընդունակ կազմութիւն ունի ենթակայն : Քաննայն՝ յետ բորբոքման աչաց սպիտակ թաղանթի՝ եթէ մթութիւն կը մնայ :

Քուրնիւն : Եթէ Քաննայն բուրբոքման չէ կարող մաքրել , յայնժամ փոփոխակի տրուելով պէտք է դարմանել զհիւանդն . (12 հոյ 6 դրգալ ջրոյ մէջ հալեցուր և 2 ժամը դրգալ մը տուր) :

Երբեմն Ելուրն⁰ (մի քանի կաթիլ 10 տրամ ջրոյ մէջ) մէկ երկու կաթիլ առաւօտ և գիշեր հարկ կ'ըլլայ աչաց մէջ կաթեցնել :

Սակայն սոյն տկարութիւնն անհոգութեան պատճառաւ շատ անգամ Եղջերուական Բորբոքումն յառաջ կը բերէ :

Եղջերուակն՝ աչաց առջևի կողմն եղող նուրբ թափանցիկ դուրս ցցուած մասն է : Սորա հիւանդութիւնն կրնայ պարզ ըլլալ և կամ սերնդական , նաև կրնայ մեղմ և կամ շարաւալեց ըլլալ՝ իբր ստուղն անհոգութեան :

Հետևեալ դեղերն կարգաւ կը դնեմ , իրենց գործածութեան նշաններովն հանդերձ :

Աքի : Պարզ տարածեալ բորբոքման , մանաւանդ երբ արեան մանր երակներ դէպ 'ի եղջերուակն տարածեալ ըլլան : Արնայն , երբոր վէրքը բացուելու վիճակի մէջն և հիւանդն տկարակաղմ է : (Երբեմն Սուլֆուր և Քուրնիւն կրնայ գործածուիլ) :

Հիւրն : Յորժամ թարխտուելու վտանգ նշմարուի և կամ եթէ եղջերուական վրայ վէրք ըլլայ :

Մերիտիւրն : Եթէ ախտն ժառանգական է (հետեանքն գաղղիական ախտին) : Ըստ փորձառու-

Թեանց Տօքթօր Ալլէն և Նօրթըն բժշկաց՝ օգտակարագոյն կը համարուի Օրօն-Տէր (երկրորդ կամ երրորդ աստիճանն) :



ՏԿԱՐՈՒԹԻՒՆՔ ԼՍՈՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ

ԲԼԹԱԿՆ

Բլթակի բորբոքումն շատ անգամ կը ներդէ զհիւանդն, զի իբր թունաւոր միջատէ մը խայթուած՝ կ'ուռի, կը կարմրի ու երբեմն սաստիկ տաքութիւն կը պատճառէ : Այսպիսի պարագայից տակ ունինք Պելլագրիս, եթէ կարմրութեամբն հանդերձ գլխոյ ցաւ ունենայ . իսկ եթէ բորբոքեալ մասն մանր կիզիչ փամփշտիկներով ծածկեալ ըլլայ և մերթ ընդ մերթ դեղնագոյն հիւթ մը հոսի՝ Բլթակ և եթէ տաքութիւն ունենայ՝ Ա.ժ.Յ.Յ. պէտք է տալ : Երբեմն Ա.ժ.Յ. տրուին փոփոխակի ընդ Ա.ժ.Յ.Յ. ի աւելի օգտակար եղած է մանաւանդ երբ չափազանց ուռեցած է բլթակն :

Բորբոքումն երբեմն բլթակի ետևի կողմն տարածուելով վէրք կը պատճառէ : Ականջի վէրքն երբ կը հիննայ՝ դժուարաբուժելի տկարութեանց մին կ'ըլլայ . — Հետևեալ դեղերն՝ (Ա.ժ.Յ.Յ.Յ., Մ.Յ.Յ.Յ.Յ. և Կ.Յ.Յ.Յ.) շատ անգամ օգտակար եղած են, և պէտք է կարգաւ կամ փոփոխակի գործածել . (օրն երեք անգամ) :

Մի օգտակար դեղ կը գործածուի հիւան-

դանոցաց մէջ, այսինքն Կլէ-տէրէն և Թէ-նէն. (մէկ մաս Թէ-նէն և տասը մաս Կլէ-տէրէն): Այս երկուքէն սպեղանի մը պատրաստուելով վէրքին վրայ պէտք է քսուի՝ առտու և գիշեր:



ԲՈՐԲՈՒՌՈՒՄՆ ԱԿՍՆՁԻ (Արտիտիս)

(Otitis externa)

Ականջի բորբոքումն առհասարակ խոյլի կազմութեանց պատահած ժամանակ դժուարաբուժելի կ'ըլլայ: Իսկ երբ ցրտոյ պատճառաւն է, այն ատեն հետեւեալ դեղերով դիւրաւ կրնանք բուժել, (Թէև ախտն սաստիկ ցաւ պատճառէ՝ տեղւոյն փափուկ ըլլալուն պատճառաւն): Ականջի բորբոքման ժամանակ՝ կարմրութիւն, ցաւ, տաքութիւն կ'ունենայ հիւանդն, ու երբեմն դեղին հիւթ մը կը վազէ արտաքին անցքէ:

ԳՍՐՄԱՆ: Եթէ ցաւոյ տեղն կարմիր է և ուռեցեալ, ու բորբոքումն մինչ ներս տարածեալ ըլլալով՝ երբեմն արիւնախառն թարախոտ հիւթ հոսի, Ա+ձէն⁰ մէկ կամ երկու կաթիլ (մայր հեղուկն) գաւաթ մը ջրոյ մէջ լից և ժամը դրդալ մը տուր. սա շատ անգամ ինքնին բաւ է բորբոքումն բուժելու, մանաւանդ եթէ նոր է:

Իսկ եթէ Ա+ձէն բաւ չ'ըլլայ, Քոմօմայլ և Պէլ-լոման փոփոխակի պէտք է տրուիլ, մանաւանդ եթէ սաստիկ գլխոյ ցաւ ունենալով, ականջէ հոսածն ուստի ըլլայ. նաև մերթ ընդ մերթ գաղջ

ջրով լուացումն յոյժ նպաստաւոր է: Բուլուրիւն և Մերէ-րէւ հարկ է գործածել: Բուլուրիւն, եթէ ականջի նեղութիւնն արգանդի տկարութեան հետ յարարերութիւն ունենայ. և Մերէ-րէւ, եթէ ցաւն գիշերներն սաստկանայ:

Ականջի բորբոքման ենթակայ եղողք պարտին ցրտագին հովերէ զգուշանալ և ըստ կարի մաքուր պահել ականջնին, երբեմն՝ եթէ հարկ ըլլայ Անու-պեր-ի-ով լուանալ (մէկ տրամ Անու-պեր-ի, 150 տրամ գաղջ ջրախառն կաթ եւ կամ լոկ ջուր), և յետ լուացման՝ քիչ մը բամբակ դնել ականջին մէջ:



ԱԿԱՆՋԻ ՑԱԻ

Ականջի ցաւն՝ ընդհանրապէս միայն մէկ կողմն կ'ըլլայ, և շատ անգամ սաստիկ կոպտալով անմիջապէս կուգայ, այտերն կ'ուռեցուորին ու ցաւըն մինչև հոն կը տարածուի, և երբեմն լսողութիւնն կը ծանրանայ, և եթէ այս վիճակի մէջ հոգ չտարուի, յետոյ դեղնագոյն հիւթ մը կը հոսի, որ երբեմն խիստ գարշահոտ կ'ըլլայ:

ԴՍՐՄԱՆ: Նախ պէտք է ջրախառն կաթով լուանալ և 'ի ներքուստ, եթէ տաքութիւն ունի՝ Անու-պեր տալ, եթէ ոչ՝ Պելուրոն, (ժամը դրդալ մը 3—5 անգամ): Երբեմն Պելուրոն և Մերէ-րէւ վոփոխակի տրուին օգտակարագոյն եղած է: Եթէ ցաւն պարզ պաղէ յառաջ եկած է առանց վէրքի՝ Քուրու պէտք է տալ: Իսկ եթէ վէրքն

մինչև ներս տարածեալ է և սաստիկ կոպտացող
ցաւ կայ, յայնժամ հետեւեալ երեք դեղերն՝ Հե-
քսիլէն, Բուրսինէլ և Քոփիլէն փոփոխակի կար-
գաւ պէտք են գործածուիլ. (առտու, ցերեկ և
երեկոյին՝ 3 հոյ):



ԱԿԱՆՁԻ ԾԱՆՐՈՒԹԻՒՆ

Լսողութիւնն կը ծանրանայ զանազան պատ-
ճառներով, և որոցմէ ոմանք անդարմանելի են, Մենք պիտի չ'խօսինք մասնագիտաց յատուկ ե-
ղած տկարութեանց վրայ, այլ բաւ կը համարիմ
մի քանի պարզ տեսակներն՝ հանդերձ դարման-
ներովն աստ յիշել: Սաստիկ պաղն ու ականջի
բաւղին մէջ հաւաքեալ թանցր հիւթն կը ծան-
րացնէ լսողութիւնն: Դարմանած եմ տարիներով
խուլ կարծուած անձինք՝ լոկ մաքրելով բաւիղն,
Վասն որոյ նախ և առաջ պարտ է նայիլ թէ՛ բա-
ւիղն մաքրուի է. եթէ չէ՛ պէտք է մաքրել: (Եր-
բեմն մի քանի կաթիլ Կոփիլէն հարկ է քիչ մը
բամպակով բաւղին մէջ դնել և վերջն լուանալ:
Սակայն՝ եթէ ականջի ծանրութիւնն՝ մարմնոյ վը-
րայ ունեցած վէրքերու անմիջական աներևութա-
նալէն յառաջ եկած է, պէտք է առաւօտներն
Սելէն և գիշերներն Մեղերէն գործածել մինչ 6 օր.
յետոյ մի քանի օր պէտք է ընդմիջել դեղերն. ե-
թէ հարկ ըլլայ կրկնել նոյնպէս: Իսկ եթէ սաս-
տիկ պաղի մը հետեւանքն է՝ Տուրսինէլ և Քոփիլէն:

(Քոստանտնուպոլիսի Երեւոյն լսողութեան ծանրութիւնն ականջի մէջ թըռթըռացող ձայնի պատճառաւն է, յայնժամ՝ եթէ ձայնն գիշերներն կը սաստկանայ՝ Մերեւելեւ պէտք է՝ եթէ նեղեալն իզական սեռէ է և դաշտանի դժուարութիւն ունի, Բուլղարիա հարկ է տալ: Եթէ հիւանդն Յօդացաւի ենթակայ է՝ Սուլթանի «օր» (կէս տրամ 100 տրամ ջրոյ մէջ, առտու եւ գիշեր մէկ փոքր դրդալ պէտք է առնել):

Ականջի ծանրութեան մի այլ տեսակն՝ ՈՐԿՈՐԱՅԻՆ ԽԼՈՒԹԻՒՆ կոչեալն է, որ մանկանց մէջ խոյլի, և չափահասից մէջ յօդացաւոց ենթակայ եզոզներու կը պատահի: Ախտի նոր վիճակին մէջ Բուլղարիա բաւ է զայն բուժելու. իսկ հինգած տեսակին համար, որ դժուարաբուժելի է, ոմանք կը քննեն, Մանուսէլ և Բելլիւսի գործածած են, մանաւանդ մորթի տկարութիւն ունեցողաց համար և օգտակար եղած է: Եթէ խլութիւնն աւելի ձայնն որոշելու մէջն է քան լսելուն, Քոստանտնուպոլիսի միայնակ դեղն համարուած է:



ԳԼՈՒԽ Ը .

ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՔ ՀՈՏՍՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ

ԲՈՐԲՈՒՄՆ ԿՏ ՎԷՐՔ ՌՆԳԱՑ

Ռնդունք՝ նման ուրիշ գործարանաց, բորբոքման ենթակայ են թէ՛ արտաքուստ և թէ՛ ի ներքուստ, և արտաքուստ եղած բորբոքումն կը նմանի Օձիկ ախտի:

Երբ բորբոքումն նոր սկսեալ է, Պելլուրժնա առանձին կամ վոլփոխակի ընդ Առնիկէի հարկ է տրուիլ հիւանդին: Բայց երբեմն հին ձեռն կառնու, և յայնժամ պէտք կ'ըլլայ Սելֆը տալ մի քանի օր՝ կամ առանձին և կամ մերթ ընդ մերթ գիշերներն ու ցորեկներն Պելլուրժնա:

Օրն մի խիստ օգտակար դեղ է, երբ հիւանդութիւնն սերնդական ըլլալ կը կարծուի, և պէտք է առտու և գիշեր տրուիլ մինչև վեց օր, յետոյ կրնայ Սելֆը տրուիլ և կամ արդէն յիշուած դեղերէն մին:

ՀՍՐԲՈՒՂԽ ՌՆԳԱՑ (ՆԵՂԷ) (Catarrh)

Հարբուղին պարզ պաղ մի է, և ոմանց՝ որ տրամադրութիւն ունին անօր, գրեթէ տաժանելի կ'ըլլայ, մանաւանդ ձմրան եղանակին, զի շարունակ կը նեղուին անով:

ԳՄՐՄԱՆ: Առաջին անգամ հարբղիտոյ նշան-

ներն տեսնելոյ, այսինքն սրսուռւկ կամ դող, առանց որ և է տաքութեան, յայնժամ պէտք է Բաճար առնել հինգ բուսի անգամ մը, (մէկ կամ երկու կաթիլ ոգիէն քիչ մը շաքարի վրայ կաթեցուր), մինչև հինգ կամ վեց անգամ: Այս կերպով շատ անգամ կը բուժի: Բայց եթէ արդէն տկարի վրայ եկած է տաքութիւն, յայնժամ փոխանակ Բաճարի՝ պէտք է Առնել առնել. (12 հոգ 6 դրդալ ջրով հալեցուր և տասը բուսի դրդալ մը առ, մինչև որ հատնի): Երբեմն սակայն հարկ կըլլայ մանաւանդ ծերոց համար Պաշտիւնայ տալ նոյն կերպով, մանաւանդ երբ ձայնն մարելու նըշաններ կան: Հարբուղին եթէ արմատացեալ է, յայնժամ կարծուածին չափ դիւրաբուժելի չըլլար. ՚ի վերայ այսր ամէնայնի ունիմք աստ հետեւեալ գլխաւոր դեղերն, զորս ժամանակին գործածելով կրնամք առաւել դէշ հետեւանքներէ ազատել զհիւանդն:

Մերտիւրիւն: Երբ ունգաց հոսումն չափազանց չէ և ոչ ալ ջրային, — մանաւանդ եթէ կոկորդն ուռեցք կամ ցաւ զգայ:

Արնիւն: Եթէ հոսումն խիստ առատ է և ենթակայն յոյժ անզօր կ'զգայ զինքն՝ իբր երկարժամանակեայ հիւանդ մը:

Երկուստիւ: Եթէ ունգաց հոսումն առատ ըլլալով հանդերձ՝ չափազանց արտասուք ևս կը հոսին:

Նիւն: Եթէ չոր է հարբուղին, և կոկորդն չարունակ չորնալով հանդերձ՝ ստամոքսի անկարգութիւն կ'զգայ: Իսկ եթէ հարբուղին վերոյիշեալ ջրային վիճակէ թանցր վիճակին յառաջա-

ցած է, յայնժամ հարկ է բերուելու տալ (երեք կամ չորս անգամ օրն)։ Անտարակոյս այսպիսի տրկարութիւն մը՝ պէտք չէ ակնկալել որ առաջին դեղովն պիտի բուժի։ Սակայն՝ համբերութիւն և յարատևութիւն միշտ յաղթող եղած է այս տրկարութեան մէջ ևս։

Հետևեալ դեղերն՝ 'ի Մէմբիս (Միացեալ-Նահանգ Ամերիկայ) հրատարակեալ տետրէ մը քաղելով աստ կը գնեմ։

Արեւելեան-Եգիպտոս։ Փափուկ, նիհար, երկայնահասակ կազմութեանց համար խիստ օգտակար եղած է։

Օրոնտոս։ Պարչահոտ հիւթ, և ցաւ ոսկերց ռնգաց, տխուր մեղամաղձոտ բնութեանց և սնդիկ գործածողաց համար։

Կրֆֆել։ Հարբուղիս՝ որ լսողութիւնն կը վրդովէ, մորթի վէրք և դաշտանի նուազումն ունեցողներու։ Հոսուումն։ Հոսումն գարչահոտ, խէժային, թարխոտ հիւթոյ։

Քլորֆորմ։ Հոսումն դեղնագոյն մազանման կամ ճերմակ։

Սանկալին։ Կիզումն կամ խըտխըտումն ռնգաց, բորբոքեալ և երբեմն ուռեցած։

Վերոյիշեալ դեղերն կրնան գործածուիլ թէ նոր և կամ թէ հինցած տեսակին համար, և պէտք չէ օրն երեք անգամէ աւելի առնել։



ՔՔԻ ԱՐԻԻՆ (հ-եւ)

Արեան հոսումն՝ շատ անգամ գալիք ներդու-
թեան մը նշանն է, և ոչ թէ ինքնին տկարութիւն
մը, որ կրնայ արեան 'ի գլուխն հոսելէ, կամ
մարմնոյ ընդհանուր տկարութենէ, ինչպէս նաեւ
այլ բազմաթիւ պատճառներէ յառաջ գալ:

Վասն որոյ 'ի ստորև կը դնեմ կարգ մը գե-
ղեր, որք 'ի հարկին կրնան գործածուիլ:

Ա. Արնէ: Եթէ մեքենական փլասէ պատճառ-
եալ է, այսինքն ինկած կամ վարնուած է: Արնէ
12 հոգ 6 դրգալ ջրոյ մէջ հալեցուր և հինգ բո-
պէն դրգալ մը տուր:

Բ. Բայց եթէ կազմութիւնն արիւնային է, և
քիչ կամ շատ տաքութիւն ունենայ, յայնժամ
(մայր) Հոմոֆէն, երկու կամ երեք կաթիլ գաւաթ
մը ջրոյ մէջ գիր և ամէն 5 բոպէն դրգալ մը տուր
մինչև որ դադրի, յետոյ աւելի ուշ, այսինքն կէս
կամ մէկ ժամը դրգալ մը:

Այսպիսի արիւնային անձանց, որպէս զի հո-
սումն չ'կրկնուի, պէտք է մերթ ընդ մերթ Ա. և Մ. և Սելֆեր տալ առաջին օրն, և հետևեալ օրն՝ Պել-
լոմոն և Քարտէ: Իւրաքանչիւրէ օրը 2 անգամ:

Գ. Եթէ ընդհանուր կազմութեան տկարութե-
նէ, և կամ կանանց դաշտանի ժամանակ պատա-
հի, յայնժամ Քրոմ, և Սելֆեր, Ֆերրո-ֆոսֆոս և Քարտ-
է տուր փոփոխակի, իւրաքանչիւրն մէկ օր, եւ
օրը երեք անգամ:

Դ. Բայց եթէ դաշտանի մերձ օրերն պատա-
հելու ըլլայ, յայնժամ Բոլոմոն և Իբէտ պէտք

է տրուել՝ խորաքանջութէն օրն երկու անգամ:

Ե. Եթէ գլխոյ բորբոքման հետ պատահելու ըլլայ, յայնժամ Պէլլարժնա, Նիւտոն-Ջոնս և Պրոյժնէյ, փոփոխակի ժամը դրդալ մը պէտք է տրուել:

Զ. Արեան հոսումն ամէն ի՛նչ պատճառաւ որ ըլլայ, (ի բաց առեալ զդաշտանն), պարտ է ամէն կերպ տաք ըմպելեաց դործածութենէ զգուշանալ, մանաւանդ յոգելից ըմպելեաց, ևս թէյ՛ է և սուրճէ՛:



ՎԼԻՐԲ ՌՆԳԱՅ

Այս նեղութիւնն թէև մանկանց յատուկ է, սակայն երբեմն մանկանման չափահասներու եւս կը պատահի. վասն որոյ ընդհանուր հիւանդութեանց կարգն կը դասեմ աստ.

Պարզ պաղ կամ ցուրտ մը՝ երբեմն կ'ուռեցընէ քիթն, և կը կարմրի: Մանկունք ընդհանրապէս քերելով վէրք կ'ընեն, որ փրցուած ժամանակ կ'արխնի: Այս նեղութեան նոր սկսած ժամանակն եթէ Արեանի օրն երեք կամ չորս անգամ, կ'արդելու վէրք ըլլալն, մանաւանդ եթէ քիթն հոսած հեղանիւթն ջրանման ըլլայ:

Եթէ տաքութիւն ունենայ, պէտք է Ա՛ծնի տալ մի քանի անգամ, փոփոխակի ընդ Արեանի և Հիբարժ մերթ ընդ մերթ առնելով հարբըղիսոյ ենթակայութիւնն կը նուազի և կամ մեծաւ մասամբ կը տկարանայ:



ԲՈՐԲՈՒՌՆՆԻՍՆ ՌՆԳԱՅ Լ ԽԽԱՅԹ (Ozena)

Երբեմն ունգաց բորբոքումն այն աստիճան սաստիկ կ'ըլլայ, որ քիթն չափազանց կ'ուռի, և իբր կարմրագոյն գնտակ մը կը ձևանայ և ամէնառչինչ քերուածք մը ինքնին վէրք կ'ըլլայ:

Նոր բորբոքումն խոյլի տրամագիւր կազմութեանց, մանաւանդ գինեմոլ անձանց, հետեւեալ դեղերովն կընայ դարմանուիլ, եթէ անհոգութիւն չ'ըլլայ:

Ա՛ծ:Է՛, մէկ երկու կաթիլ (Tincture) գաւաթ մը ջրոյ մէջ աղէկ մը զարկ, նաև Պէլլա՛րձնա՛, նոյն կերպով ուրիշ գաւաթի մը մէջ, և փոխադարձաբար ժամը դրդալ մը գործածէ, մինչև բաւական տարբերութիւն ընէ թէ՛ ցաւն և թէ՛ ուռեցքն, յետ այնորիկ 2 ժամն դրդալ մը, և յետոյ երէք:

Եթէ արդէն վէրք գոյացած է, ուռեցքն երբ անցնի, նա ևս ՚ի միասին կը բուժի:

Ռնգաց բորբոքումն՝ երբեմն անհոգութեամբ Խխայթի կը վերածի:

ԽխԱՅԹՆ է մի գարշահոտ թարխոտ հիւթ, որ կը հոսի քիթն, և ընդհանրապէս խոյլի կազմութիւն ունեցողաց կը պատահի, որ կը զրկէ հոտառութենէ, ՚ի բաց առեալ այլ նեղութիւններն: Սա՛ ունգաց ներսն պատող թաղանթի բորբոքումն է, և կընայ մինչև իսկ ոսկերց փտութիւն պատճառել, եթէ յարմար ժամանակին չը դարմանուի: Այս ախտն կընայ նոր ըլլալ և կամ զանցառութեամբ հին: Նոր տեսակն չէ այնչափ գժուարաբուժելի, որչափ որ հինն:

ԳՍՐՄԱՆ, նոր տեսակին Առաջին, մէկ երկու կաթիլ՝ գաւաթ մը ջրոյ մէջ աղէկ մը զարնելով՝ պէտք է ժամը դրդալ մ'առնել, մինչև որ հատնի: Այնուհետև Մերթիւր-իօր, մանաւանդ եթէ վազած հիւթն թանցր և դեղնագոյն ըլլայ, որ ապացոյց է ռնգաց մէջ շարաւալից վէրք ըլլալուն:

12 հոգ կամ 2 ցորեն, 12 դրդալ ջրոյ մէջ աղէկ մը հալեցուր և երկու ժամը դրդալ մը գործածէ մինչև որ հատնի:

Արեւիկա: Եթէ վազած հիւթն ջրային է, բայց գարշահոտ, նոյնպէս երեք ժամը դրդալ մը պէտք է գործածել մինչ 2 կամ 3 օր:

Այս ախտն երբեմն գաղիական ախտի հետեւանքն կրնայ ըլլալ, կամ՝ որպէս արդէն յիշեցի՝ սերնդական արեան ապականութենէ, յայնժամ լաւագոյն դեղերն են սա հետևեալք, թէեւ իմաստութիւնն կը պահանջէ այսպիսի պարագայից տակ՝ դիմել փորձառու բժշկի մը խրատուցն:

Արեւիկա, մի քանի կաթիլ, օրն երկու կամ երեք անգամ, (նոյպէս Մերթիւր-իօր): Նաև Քլի-Հայրե-իօր, (առ 2—3 ցորեն և լուծէ զայն տասը տրամ ջրոյ մէջ և անտի 15—20 կաթիլ գործածէ օրն երեք անգամ, մինչև որ հատնի):

Երբեմն վերոյիշեալ դեղերն չ'են բաւական ախտն բուժել, և կամ մինչև իսկ մեղմացնել, այն ատեն պարտ է մեզ տալ հիւանդին Օրթո-Քլի, (փոշին), մէկ ցորեն առաւօտուն, մէկ ցորեն դիշերն, մինչև վեց օր, և յետոյ ընդմիջելով դեղն մի քանի օր, ի հարկին պէտք է շարունակել նոյնն: Այս ախտի համար իբր դարման՝ քիթն որ

և է զօրաւոր դեղերով լուանալն՝ փոխան օգտե-
լու, յաւէտ փնաս յառաջ կը բերէ: Հոյրուրն (ո-
գին) և Բուրուրն միմիայն անփնաս և օգտակար
եղող դեղերն են, զորս կը յանձնարարեմ՝ ի հար-
կին գործածել. (մէկ տրամ Հոյրուրն կամ Բու-
րուրն 75 տրամ գաղջ ջրով): յետ այնորիկ՝ քթի
գարշահոտութիւնն կորսնցնելու համար՝ կրնանք
քիչ մը գաղջ ջրոյ մէջ մի քանի կաթիլ Բուր կամ
Լուրուր կաթեցնել և լուանալ:



ՈՒՌ ՌԵՊԱՅ (Արուբոս) (Palypus-n)

Ռնգաց մէջ փոքր արիւնային ուռիկներ կը լը-
լան, որ չափազանց նեղութիւն կը պատճառեն
շնչառութեան, մանաւանդ քնացած ժամանակ,
անանկ որ ենթակայն միշտ պարտաւորեալ է բե-
րանն բաց քնանալ: Սուքա յաւէտ նեղացուցիչ են
քան վտանգաւոր: Այս ուռիկներն շատ անգամ
ներքին դեղերով կը բուժին, թէպէտ և քիչ մը
երկայնմտութիւն պէտք է:

ԴԱՐՄԱՆ: Գլխաւոր դեղերն են՝ Թուրիւր, Բու-
րուր, Փոփուր և Թոյր: — Թուրիւր, եթէ ուռն
կակուղ ըլլալով՝ նեղեալն յաճախ հարբղիսոյ են-
թակայ է: Բուրուր, եթէ մասմուլ տեսակն է, և
ամբողջ քթին անցքն լեցուցած է, Փոփուր, եթէ
մերթ ընդ մերթ կ'արիւնի: Թոյր, կարծր կամ
այնպէսեալ ուռիկներու համար. (օրը երեք կամ
չորս անգամ):

Թուրիւր և Թոյր, պէտք է նաև դրսէն գործածել.

Թուրքիոյ ի փոշին՝ իբր քթախոտ՝ օրն երկու անգամ
կրնայ գործածուիլ. և Թուրք (ողին) մէկ տրամ,
150 տրամ ջրով, օրն երկու անգամ փոքրիկ շի-
րինկայով մը պէտք է լուանալ:

ԽՈՅԼ. Խոյն՝ ականջի բլթակի ետեւն կամ քո-
վերն և ծամելեաց տակի գեղձերու բորբոքումն
է, որ թէև հասարակօրէն մանկանց կը պատահի:
Մակայն՝ երբեմն չափահասից ևս ըլլալուն՝ աստ
կը դնեմ նորա դարմանն:

ԳԱՐՄԱՆ. Առաջին անգամ երբ կը նշմարենք
ուռեցքն՝ պէտք է Մերէր-ն, 12 հող վեց դրգալ
ջրով պատրաստել և երկու ժամն դրգալ մը տալ:
Բայց եթէ կարմրութիւն ըլլայ՝ Պելլուրձն: Երբեմն
աւելի օգտակար կ'ըլլայ այս երկու գեղերն փո-
փոխակի գործածելն:

ՈՐՔԻՒՆ. Որքիւն՝ փոքր մանեկածև կարմրու-
թիւններ են, որք մարմնոյ վրայ աստ անդ կ'ել-
լեն, մանաւանդ երեսներն: Այս նեղութեան հա-
մար գործածեալ գեղերն են. Սելճէր, առաւօտ և
գիշեր՝ վեց օր: Երբեմն Սեփէ, Բը-ն և Հիւր-ն
խիստ օգտակար եղած են:

ԱՆՈՐԺԱԿԻ ԿՈՐՈՒՍՏ. Ախորժակի կորստեան
պատճառաց մին՝ դիշերներն երկար ժամանակ
արթուն մնալն է, և կամ չափազանց սուրճ կամ
ողելից ըմպելեաց գործածութիւնն, որ յայնժամ
պէտք է Նիւր-ն, օրն երեք կամ չորս անգամ:
Մակայն երբեմն՝ մանաւանդ իգական սեռի օգ-
տակար կ'ըլլայ, եթէ փոփոխակի Պրայձնայ արուի:
Բայց եթէ չափազանց իւզոտ կամ անուշեղէն կե-
րակուրներէ պատճառեալ է, Բուլա-նիլ:

ԲԵՐՆԻ ՎԷՐԻՔ: Բերնի վէրքն՝ սաստիկ հար-
բըղխոյ ժամանակ շատ անգամ բերնի մէջ՝ լեզուի
բոլորտիքն և կամ հազազն կ'ելլեն

ԳՍՐՄԱՆ: Առաջին անգամ երբ կը նըշ-
մարուի, մի քանի հեղ Ա+ծնէ՛ն տալն բաւ է այս
նեղութիւնն բուժելու: Սակայն երբեմն տաքու-
թեամբ հանդերձ՝ բերանն ևս կը ջրոտի և լոր-
ձունքներն բերնէն դուրս կը հոսին, յայնժամ
պէտք է Մեր+է-ր-ը, երեք կամ չորս անգամ օրն,
մինչ դադարի լորձունքն, 'ի վերջոյ լաւ է մի քա-
նի օր ևս Սելֆը տալ. (երբեմն քիչ մը Պեր+տով
լուանալն նպաստաւոր կ'ըլլայ բուժման):

ԳՈՐՏԻԿ: Գորտիկն՝ լեզուի տակն փոքրիկ ուռ
մի է, որ երբեմն հեղանիութով մը կը լեցուի ու
ամրացեալ կապտագոյն երևոյթ մը կ'առնու:

ԳՍՐՄԱՆ: Գլխաւոր դեղերն են. Քալ+պէ-ն,
խոյլի կազմութեանց համար: Նախ+հոս-մի-ր և Մեր-
+է-ր-ը, երբ սերնդական ակտէ յառաջ եկած է:
Եւ թոյս, երբ ուռիկն ամրացեալ և կապտա-
գոյն ըլլայ:

Վերոյիշեալ դեղօրէից որ և է մին՝ օրն երեք
չորս անգամ պէտք է դործածել:

ԼԻՆՏՐ: Լինտրն՝ որ ատամանց տնակն կրնայ
կոչուիլ, երբեմն տկարանալով՝ ցաւ և ուռեցք և
մինչև իսկ շարաւալից վիճակ մը կ'ունենայ, որ
շատ անգամ այն պատճառաւ առողջ ատամունք
կը թափին:

ԳՍՐՄԱՆ: Եթէ տաքութիւն ունենայ, նախ
Ա+ծնէ՛ն պէտք է տրուիլ. և եթէ չափազանց կա-
պտագոյն կարմիր են, յայնժամ պէտք է Պէլլ-

«ճնն» կամ առանձինն և կամ փոփոխակի ընդ Աստ-
նիշուի: Իսկ եթէ ցաւն կոպտացող է, պէտք է
Մերէի-ը: Բայց եթէ արդէն թարխոտիլ սկսած
է, յայնժամ լաւագոյն դեղերն են՝ Սյւլիւն եւ
Մերէի-ը, որք փոփոխակի կրնան գործածուիլ
օրն երեք անգամ: Իսկ լինտերու կակղութիւնն
արդիւելու համար Աստ-ն լաւագոյն համարեալ է:

ԱՏԱՄՆԱՅԱԻ: Ատամնացաւն երեք տեսակ է,
առաջին՝ փտտած ակռայներու ցաւն, որ կերակ-
րոյ մաս մը՝ խոռոչի մէջ երթալով, կամ ջուր խը-
մած ժամանակ կ'սկսի ցաւն սաստկանալ:

Ա. ԴԱՐՄԱՆ: Եթէ ակռան փտտած է և սեւ
խոռոչ ունի, Մերէի-ըն և Քրէօզոն, իւրաքանչիւ-
րէն 12 հապ (տարբեր դաւաթներու մէջ) հալե-
ցուր, և փոփոխակի քառորդ ժամն դրդալ մը
գործածէ, և խոռոչի մէջն քիչ մը բամպակով մի
կաթիլ Սքիֆիկ⁰ դիր:

Բ. Եթէ լինտերն ուռեցած են և կարմրագոյն,
յայնժամ փոխանակ Քրէօզոն Պելլագոնն պէտք է
տրուիլ փոփոխակի ամէն կէս ժամն դրդալ մը:

Գ. Եթէ ցաւն շղային է, ո՛չ փտտած է և ո՛չ
ալ ուռ կայ, յայնժամ Քոմոմայլ պէտք է առնել,
մանաւանդ երբ պաղ ջուրն՝ ժամանակաւոր մեղ-
մացնելէ զինի՝ կը սաստկանայ: Բայց եթէ պաղ
ջուրն չ'մեղմացնէ ցաւն, Քօֆի տուր նոյն կեր-
պով: Իսկ եթէ Քոմոմայլ և Քօֆի գործածելէ վեր-
ջն դարձեալ ցաւն կը շարունակէ իւր սաստկու-
թեամբն, յայնժամ Աստիլ, Քոմոմայլ և Քօֆի տուր
փոփոխակի՝ տասը բոպէն դրդալ մը: Եթէ պարզ
հարուղին է պատճառ, Աստիլ և Նիտա-լ: Եթէ

դաշտանի կամ յղութեան ժամանակն ցաւն կը նորոգի, Բոր-լու-իւ-ն, Սի-ն-ի-ն-ի-ն և Պր-ի-ն-ի-ն պէտք է փորձել:

Երբեմն ցրտոյ կամ փտտած ատամանց պատճառաւ երեսն կ'ուռի, և կարմրելով մինչև ա-կանջներն ու այտերն սաստիկ ցաւ կը պատճառէ:

ԴԱՐՄԱՆ: Նախ և առաջ Ա-ն-ի-ն գործածէ, մինչև որ այտերու տաքութիւնն և կամրութիւնն անցնի. (12 հոգ 8 դրդալ ջրոյ մէջ, կէս ժամը դրդալ մը): Եւ երբ տաքութիւնն անցած է, այն ատեն Պր-ի-ն-ի-ն և Մը-ի-ն-ի-ն փոխօրնակի տուր:

ԳԼՈՒԽ Թ.

ՏԿԱՐՈՒԹԻՒՆԻՔ ՄԻՋԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՑ

ԲՈՐԲՈՒՄՆ ԵՐԻԿԱՄԱՆՑ (Nephritis)

Երիկամանց բորբոքման մի գլխաւոր հետեւութիւն է Միզարգելութիւնն: Միզարգելութիւնըն ևս կրնայ ամբողջովին ըլլալ կամ մասամբ, և կրնայ տարբեր պատճառներէ յառաջ գալ, զորս յիշելն մեր նպատակէն դուրս է: Բայց որպէս զի ընթերցողաց օգնութիւն մ'ըլլայ, մի քանի դեղեր միայն իրենց նշաններովն աստ կը դնեմ:

Միզարգելութեան ատեն՝ նախ պէտք է հիւանդն անմիջապէս տաք ջրոյ մէջ դնել, մինչև կէս մարմինն, 20 վայրկեանի շափ: Սա մեծապէս կ'օգնէ, և շատ անգամ կը վերցնէ ամէն դժուար-

ըութիւն , մանաւանդ այն սաստիկ ցաւն ու ջղա-
ձգութիւնն , որով հիւանդն կը տանջուի . (մինչ
ջրոյ մէջն է , 3—5 կաթիլ Գաթիլի Գաթիլի ոգի՝ քիչ մը
շաքարով տուր երիցս , ամէն 5 րոպէն) : Յետոյ
հետեւեալ դեղերն իրենց նշանաց համեմատ տուր :

ԴԱՐՄԱՆ : Նախ և առաջ Ա. Գաթիլի , մէկ կամ
երկու կաթիլ դիր դաւաթ մը ջրոյ մէջ (Tincture-
Aconit) և ասկից ամէն 10 րոպէն դրդալ մը տուր ,
մինչև որ ազէկ մը քրտնի հիւանդն : Իսկ եթէ չի
մեղմանայ ցաւն և կամ միզելն չդիւրանայ , յայն-
ժամ թերապիան նոյն կերպով , մանաւանդ եթէ
միզի մէջ արեան նշաններ կը տեսնուին :

Գաթիլի : Եթէ մէզն քիչ ըլլայ և եղեգան անցքի
մէջ միզելու ժամանակ սաստիկ ցաւ . 3—4 անգամ
Գաթիլի : Եթէ ստիպումս կայ , բայց կարող չէ
միզելու . (12 հող , 8 դրդալ ջուր , քիչս կամ մէկ
ժամը դրդալ մը) :

Մերեթեմեալ և Գաթիլի կրնան դործածուիլ ,
դի ասոնցմով ևս բուժեալք կան :

Գաթիլի : Եթէ արդանդի տկարութենէ պատ-
ճառեալ է :

Արեւիկա : Եթէ արտաքին վնասուց հետեանքն է :

Արեւիկա : Երբ մէզն յաճախ՝ բայց կաթիլ կաթիլ է :

Սիւնայ կամ Սանթիմի : Եթէ ճճին է պատճառ դը-
ժուարութեան . (չափ դեղոց՝ տես Գաթիլի) :

ԴԺՈՒԱՐԱՄԻԶՈՒՄՆ (Ischuria)

Դժուարամիզումն կամ ցաւօք միզելն՝ կրնայ ջղային ըլլալ, և կամ եղեգան անցքի մի նեղութենէ, անդ եղած բորբոքման իբր մի հետևութիւնն: Շատ անգամ՝ երկար ատեն մէզն պահելը այս նեղութեան պատճառ եղած է, ուստի և կը խրատեմ զընթերցողս որ զգոյշ ըլլան և փութան բնութեան սոյն պահանջն ժամանակին կատարել:

ԴԱՐՄԱՆ: Այս տկարութեան նոր տեսակն կրնանք դիւրաւ բուժել՝ Քոֆէին ոգին տալով 3-5 կաթիլ (քիչ մը շաքարով)՝ ամէն 5 բոպէն անգամ մը, մինչև որ ցաւն անցնի ու սկսի միզել:

Եթէ Դժուարամիզումն կանանց կը պատահի, յայնժամ լաւագոյն դեղերն համարուած են Քոֆէին և Իֆեֆէրֆ: Իսկ եթէ ջղային է, որ շատ անգամ օտար տեղ մը՝ ակնածութեան պատճառաւ կը պատահի, յայնժամ Պելլերման I+, Աքէ և Քոֆէին օգտակար եղած են նեղութիւնն վանելու:

Հետևեալ դեղերն աստ կը դնեմ յօգուտ մեր ընթերցողաց:

Ափֆին: Եթէ անմիջական ցրտոյ պատճառաւն եւ սաստիկ ցաւ ու տաքութիւն ունենեայ հիւանդն: (Ափֆին I, 2—3 կաթիլ 12 դրդալ ջրոյ մէջ լից, և անկից 15—20 բոպէն դրդալ մը գործածէ, և եթէ սա բաւական չ'ըլլայ, այն ատեն Քոֆէին պէտք է տալ փոփոխակի:

Նիտրատ: Եթէ հիւանդն ոգելեաց ու սուրճի չափազանց սովորութիւն ունենայ:

Բոլլերման I+: Եթէ խէժային հիւթ խառն ըլլալով

միզի հետ, արդիլէ հոսումն և սաստիկ ցաւ պատ-
ճառէ:

Օքէլ: Եթէ միզելու ժամանակ կծկումն կամ ջղա-
ձրդութիւնն («քուզ») ունենայ հիւանդն: Իսկ եթէ
ախտն հինցած է, Աքի տուր, մանաւանդ երբ
ջրդողութեան նշաններ ունենայ հիւանդն:


Ալէ (էպէմ-կէօմէճի) յոյժ օգտակար է յղու-
թեան ժամանակ եղածներու: (10 տրամ էպէմ-կէօ-
մէճի տերևն 100 տրամ ջրով եռացուր և երկու
ժամն փոքրիկ գաւաթ մը (գաղջ խմցուր):



ԱՐԻՒՆԱԽԱՌՆ ՄԷՉ (Bloody urine)

Միզի մէջ արիւն ըլլալն մի այլ նշան է երի-
կամանց բորբոքման, և, աստ ևս եթէ միևնոյն
դեղն գործածելու ըլլանք չեմք սխալիւր, այսինքն
Թիւրուքիւն: Այս դեղն՝ թէև ըստ ոմանց չունի
պէտք եղած զօրութիւնն, սակայն՝ ըստ իմ անձ-
նական փորձառութեան, յոյժ ստիպողական պա-
րագայից տակ՝ արիւնն շուտ դադրեցուցած եւ
հիւանդի կատարեալ հանգստութիւն տուած է:

ԴՄՐՄԱՆ: Թիւրուքիւն, 12 հոյ 8 դրգալ ջրոյ
մէջ հալեցուր և կէս ժամն դրգալ մը տուր, երեք
անգամ. յետ այնորիկ աւելի ուշ պէտք է տրուիլ:
Այս դեղն գէթ մինչ 8 օր պէտք է գործածել,
արիւնն դադրելէ վերջն ևս:



ԳՐԳՌՈՒՄՆ ԵՂԵԳԱՆ (Irritable Bladder)

Եղեգան գրգռումն երբեմն առանց որ եւ է բորբոքման, ցաւոց և կամ միզի գործարանի մէջ անկարգութիւն մ'ըլլալու՝ կ'ըլլայ, երբ յօդացաւութեան մի պարզ նշանն, որ յայնժամ նեւալ շատադոյն գեղն է, և թէ երբեմն ուրիշ երիկամանց, արդանդի, սրբանի հիւանդութեանց համակրական հետեւութիւնն ևս կ'ըլլայ, որ յայնժամ պէտք կ'ըլլայ նախ պատճառն վերցնել. այսու ամէնայնիւ շատ անգամ աստ ևս նեւալ կ'օգնէ գէթ գրգռումն մեղմացնելով:

Պէլլուրոն, այս նեղութեան պարզ տեսակի համար գործածեալ մի այլ օգտակար դեղ է: Սակայն եթէ հանդարտութեամբ գրգռումն կ'անցնի, եւ ընդհակառակն որ և է մարմնավարժութիւն (մանաւանդ ցերեկն) յաճախ միզումն, կէս ժամն անգամ մը կը պատճառէ, յայնժամ Ֆերրուս-ֆոսֆորուիլ պէտք է, օրն 3 անգամ: (ՀիՒԶ)

ԲՈՐԲՈՔՈՒՄՆ ՍՄՈՐԻՉԿՆԵՐՈՒ (Orchitis)

Բորբոքումն ամորձկա-պարկի՝ կրնայ պարզ պազի մը պատճառաւ և կամ սերմնակաթութեան ախտի հետեւանքն ըլլալ:

Այս ախտի համար ունիմք երկու գլխաւոր դեղեր, որք միշտ յաջողութիւն ընծայած են մեզ: Ասոնցմէ մին է Բուլուրոն և միւսն Համադէն. վերջին դեղը միշտ յաջողութիւն ընծայած է ինձ, և

պարտաւորեալ չ'եմ եղած գործածել զառաջինն
այնքան յաճախ : Բայց որովհետև ճարտարագոյն
բժիշկք քան զիս՝ միշտ յաջողած են և շերժապէս
կը յանձնարարեն , վասն որոյ աստ կ' յիշեմ զայն :

ԴՍԲՄՆ : Համարել 12 հազար դրոյ մէջ ,
կամ մէկ կաթիլ հեղուկն 12 դրոյ մէջ դիր
և 2 ժամն դրոյ մը տուր : Նոյն ատեն մէկ տը-
րամ (Tincture⁰) ոգիէն 20 տրամ ջրոյ մէջ դիր և
լաթ մը թրջելով ամբողջ մասն պատէ , և երկու
կամ երեք ժամն անդամ մը նորոգէ :

Բուլուրիւն ճիշդ վերոյիշեալ կերպով պէտք է գոր-
ծածել , և կամ փոփոխակի՝ մէկ օր մէկն և երկ-
րորդ օրն՝ միւսն : (Բուլուրիւն ներսէն պէտք է տը-
րուի , և ոչ աւելի վար) : Իսկ եթէ հիւանդն սաս-
տիկ տաքութիւն ունենայ , յայնժամ պէտք է Ա-
+ճիւր տալ : Եւ եթէ ջղային վրդովումն կայ հան-
դերձ մերթ ընդ մերթ գլխոյ ցաւօք , յայնժամ
Պելլուրիւն պէտք չէ մոռցուիլ , որ խիստ յարմար
է այսպիսի պարագայից տակ , մանաւանդ երբ
Ա+ճիւրի հետ փոփոխակի տալ պէտք կը տեսնուի :

Հիւանդն անշուտ պարտի հանդարտ անկողին
մնալ և կերակրոց զգուշութիւն ընել :

ՊՍԲԻ ԶԲԳՈՂՈՒԹԻՒՆՆ ևս սոյն տկարու-
թեան կ'ընկերանայ , որոյ համար Սբնճիւն , Բուլու-
րիւն , Բոբոբէնուրժ և Օբոս կը յանձնարարուի : Սա-
կայն՝ այս ախտի համար առ հասարակ կը ջնջու-
առտու և գիշեր բաւ եղած է ներսէն , և Համ-
արիւն սպեղանին ևս դրսէն գործածուելով : Ոմանք
Ս. յոբոբէն ոգին ևս կը գործածեն դրսէն : Մանկանց
համար Բուլուրիւն լաւագոյն համարուած է :

ՍԵՐՄՆԱԿԱԹՈՒԹԻՒՆ (Gonorrhoea)

Այս ախտն փոխադրական է, և ոմանք առաւել շուտ, և այլք դժուարաւ ընդունակ են սոյն թոյնի: Ախտի նոր տեսակն երբեմն խիստ նեղիչ կ'ըլլայ, և եթէ աղէկ չ'դարմանուի, կրնայ այլ և այլ գէշ հիւանդութեանց ենթակայ ընել զախտացեալն: Եթէ ախտն առաջին անգամն ըլլալով՝ քաջառողջ անձանց պատահելու ըլլայ, դժուարին չէ զայն բուժելն ճարտար բժշկի մը համար: Իսկ եթէ երկրորդ կամ երրորդ անգամն ըլլալով հանդերձ՝ վատառողջ անձանց ըլլայ, յայնժամ տաղտկալի և տաժանելի կ'ըլլայ ախտն եւ նորա բուժիլն: Հետեւեալ գեղօրայք ըստ կարի համառօտելով ճարտարագոյն բժշկաց գործքերէ՝ աստ կը դնեմ:

ՏՕԲԹՕԲ ՃԱՐԲ ԽԸՐ ԳՈՐԾՈՅ մէջ կ'ըսէ. «Եթէ ախտն նոր է, Սերպիոն¹⁰ առաւօտներն ու գիշերներն սուր, և մեղմ կամ թեթեւ գեղերով լուայ ներսն, (չիբիկայ ըրէ): Նաև Քանապոն¹¹ նոյն կերպով մինչ երեք շաբաթ, մերթ ընդ մերթ Մերսի-րիւշ¹² տալով:

ՏԷ. ԲՕԲ և ՀԷՅԼ նոր տեսակաց համար կը յանձնարարեն Ասիլ¹³ և Ճելեֆու¹⁴. և եթէ նեղութիւնն մինչև եղեգան մէջ տարածեալ ըլլայ, այսինքն միզելու ժամանակ ցաւ ունենայ, յայնժամ երբեմնակի Քանապոն գործածել արժան կը համարին:

Պէչի¹⁵ մի Գերմանացի հեղինակ՝ կը յանձնարարէ իբր լաւագոյն դեղն Մերսի-րիւշ¹⁶ առաջին

10—12 օրն , յետ այնորիկ Հէր-ը-ը-ը : Նա կ'կար-
ծէ թէ՛ այս ախտի համար չորս շաբաթ հարկ է ,
որպէս զի երբէք հետք մը չ'թողու : Նա Քանադե-
օգտակար կը համարի , երբ դեռ բորբոքեալ չէ :

Վերոյիշեալ քաղուածէ սա որոշման կը յան-
դիմք թէ՛ այս ախտի համար՝ Մերտի-րէշ , Սեփե ,
Քանթարիս , Քանադեօս , Սոմիթի և Ճելեֆի-ը-ը գործա-
ծեալ դեղերն են :

Իսկ գալով իմ անձնական փորձառութեանս ,
չոր ունեցած եմ այս ախտի մասին , 'ի ստորեւ
կը դնեմ :

Առաջին անգամ (եթէ ուրիշ դեղ չէ առած)՝
տուած եմ Մերտի-րէշ մինչև չորս օր , (օրն երեք
անգամ) : Իսկ երբ եղեղան մէջ ցաւ կամ կիզումն
ըլլայ , յայնժամ Քանթարիս՝ փոփոխակի ընդ Մեր-
տի-րէշի : Սա միշտ բաւական եղած է , եթէ ախ-
տըն առաջին անգամն է ունեցած : Սակայն՝ երբ
երկրորդ կամ երրորդ անգամն է , յայնժամ նախ
Սեփե , երկու օր , առտուն և գիշերն տալ հարկ
համարած եմ , և յետ այնորիկ վերոյիշեալ դե-
ղերն : Նաև սոցա հետ միատեղ պարտաւորեալ
եմ երբեմն Հոյր-ը-ը-ը գործածել թէ՛ ներսէն և
թէ՛ լուանալու համար : (Շիրինկայի համար մէկ
տրամ Հոյր-ը-ը-ը-ը փոշին , 75 տրամ տաք ջուր , սա
բաւ է երկու օրուան համար՝ օրն երկու անգամ
ընելով) : Այս ընդհանրապէս բաւ եղած է դար-
մանելու՝ մինչև երեք շաբաթ ու երբեմն աւելի
կանուխ՝ առանց հետք մը թողլոյ : Ախտի հին-
ցած տեսակաց համար սա՛ որոշման եկած եմ թէ՛
առանց շերտի-ը-ը ընելու գրեթէ անկարելի է լոկ
ներքին դեղօք բուժել :

Անտառակոյս ախտի ենթակայք հանդարտ կենալու պէտք ունին, եթէ կ'ուզեն շուտ բուժիլ. նաև բացարձակապէս հրաժարիլ ամէն տեսակ ոգելից ըմպելիքներէ, մինչև իսկ չափազանց սուրճի գործածութենէ, զի սորա յոյժ կը վըրգուեն զախտն:

ԳԼՈՒԽ Ժ.

Ջրգողութիւն (Սւգոյ) (Dropsy)

Ջրգողութիւն է՝ արեան ջրային մասի հաւաքում 'ի մի վայր՝ մարմնոյ մէջ, և կարելի է ըլլալ ընդհանուր և կամ մասնաւոր տեղւոյ, և կրնայ ինքնին ախտ մ'ըլլալ, և կամ մի ուրիշ ախտէ պատճառեալ, որպէս Սրտի տկարութենէ, Երկկամանց, Լեարդի և կամ մի Եռացական տենդի հետեւութիւնն: Նաև կրնայ անմիջական ըլլալ, որպէս վախէ, և կամ տակաւ առ տակաւ ընդհանուր կազմութեան մի տկարութենէն, որպէս զոմանս արդէն յիշեցինք:

Նախ և առաջ կահուղ է, բայց հետզհետէ թանցրամարմին զանգուածի մը կը փոխուի, եւ երբ մատուղ վրան կոխելու ըլլաս, փոքրիկ փոսիկ մ'անդ կը մնայ՝ մատիդ տեղիկն, և հետըզհետէ ուռեցեալ մասանց վրայ կարմրադոյն բծեր ի յայտ կուգան, և տարածուելով՝ մարմնոյ այն մասն մութ և կամ սևադոյն երևոյթ մը կ'առնէ,

լի, նաև չոր հազ մը, որ յաւէտ ներզացուցիչ է հիւանդին իւր սկսած ժամանակ և հետզհետէ կ'ըլլայ խոնաւ, որ կը հանէ գէշ խուխ, թարխտո:

Երբ հաւաքումն կ'սկսի, կրծոց այն մասերն յաւէտ կը բարձրանան և ընդհանուր ջրգողութիւն ևս ամբողջ մարմնոյ՝ սորա հետ, մանաւանդ յոտից սկսեալ վեր:

Այս ուռեցման անմիջական աներևութանալն՝ ախտի վտանգաւորութեան նշան է:

Կրծոց ջրգողութիւնն կրնայ սլաղով, քրտանց անմիջապէս արգիլմամբն, ահիւ կամ երկիւղիւ, սրտի և թոքերու տկարութեամբն, ոգելից ըմպելեաց չափազանց գործածութեամբն և եռացական ախտի անմիջական աներևութանալովն և ընյառաջ գալ:

Փոխանակ աստ խօսելու սրտի արտաքին մաշկի և այլ գործարանաց ջրգողութեան, այսչափս բաւ համարելով, կը դնեմ աստ իրր ընդհանուր դարման իրենց գործարանաց դիրքովն հանդերձ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՐՄԱՆ ԶԻՂՈՂՈՒԹԵԱՆՑ.— Նախ Ա.Յի.Վի. Եթէ հիւանդն գծուարամիզելութիւն ունի, այսինքն յաճախ, կարմրագոյն, քիչ եւ ցաւօք կը միզէ: Մէկ կամ երկու կաթիլ 1+ գաւաթ մը ջրոյ մէջ դիր և 2—3 ժամն դրգալ մը տուր, մինչև նշաններն փոխուին:

Ա.Յի.Վի. Եթէ սրտի բարախումն, ջղային անհանգըստութիւն և քնահատութիւն, նաև չոր ջերմութիւն ունենայ, մանաւանդ եթէ յանկարծ վախով յառաջ եկած է տկարութիւնն:


Կրծոց ջրգողութեան համար յատկապէս օգ-

տակար եղած է, երբ հետեւեալ նշանք կը տեսնուին. յանկարծական նուազումն, շնչարդեղութիւն (յետ փոքր ինչ աշխատութեան), սրտի բաբախումն անմիջական, յաճախ արթննալ 'ի քնոյ, այտերու անմիջական փոփոխութիւն, մերթ կարմրագոյն, մերթ դեղնագոյն, դող և տաքութիւն, ոտից պաղութիւն, և ըն. և ըն. Տի՛նիւն ի հետ փոփոխակի, այսպիսի պարագայից տակ Ա. + Ե. ի ուղին գործածէ մէկ կամ երկու կաթիլ գաւաթ մը ջրոյ մէջ և 2-3 ժամը դրդալ մը (փոքր)։ Ա. + Ե. ընտիր դեղ մի է շատ տեսակ ջրգողութեանց և մէզն կ'առատացնէ, մանաւանդ եթէ լեարդի տկարութիւն ունի։ Սրտի տկարութեան մէջ թէպէտ և ջրգողութեան օգտած է, բայց ոչ ախտին բուժման։ Երեք կամ չորս կաթիլ, գաւաթ մը ջրոյ մէջ և ամէն երկու ժամը դրդալ մը տուր։ Եթէ կարելի է այս դեղոյն թէյըն պատրաստուի (8 տրամ 100 տրամ ջրոյ մէջ եռացնելով) և անկից օրն չորս մեծ դրդալ հիւանդին տրուի, առաւել օգտակար կ'ըլլայ։

Ա. + Ե. ի ընտիր։ Այս դեղն բազում տեսակաց համար օգտակար եղած է, մանաւանդ եթէ երեսներն և մարմինն ուռեցեալ է, և գլխաւորապէս աջ կողմին, մինչև ծունկն. առ հասարակ մարմինն կ'ըլլայ պաղ, նաև ունեցած է մորթի տկարութիւնք։ Սաստիկ պապակ յաճախ ջուր խմելոյ՝ սակաւ առ սակաւ, մանաւանդ եթէ եռացական տենդէ պատճառեալ է. երեք ժամը մի անգամ։

Ք. ընտիր։ Եթէ ջրգողութիւնն սրտի տկարութեանց պատճառաւն է, (այս դեղն 'ի ձեռս Բուս

բժշկաց խիստ օգտակար եղած է թէ՛ ախան բու-
ժելու և թէ՛ հիւանդաց հանգստութիւն տալու
համար), մայր հեղուկէ 10 կաթիլ՝ մի դաւաթ
ջրոյ մէջ դիր և 2 ժամն դրդալ մը տուր :



ԳԼՈՒԽ ԺԱ.

ՏԿԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՆԱՆՑ

Իդական սեռի յատուկ տկարութեանց մի
քանին աստ յիշելով, կը խրատեմ՝ ընթերցողներն
որ դժուարին պարագայից տակ միշտ բժշկի մը
խրատին դիմեն :

ԴԱՇՏԱՆ

Գաշտանն է մի կանոնաւոր արեան հոսումն
և նշան՝ իդական սեռի յարբուճս ժամանեալ ըլ-
լալուն . նորա երեման ժամանակն կը տարբերի՝
տարբեր կլիմայից և սերնդական կամ ընկերական
պարագայից ազդեցութեան տակ, և ընդհանրա-
պէս երեքտասաներորդէ մինչև վեշտասաներորդ-
տարին է երեման ժամանակն, հետեւապէս իբր
միջին ժամանակ չորեքտասաներորդ տարին հա-
մարելով յարբուճս դալու ժամանակն, յայնժամ
նոյն տարւոյ կիսուն չափ ևս կարեօր է դեռա-
հաս Օրիօրդի մը, որ կարենայ ուժեղ կազմու-
թեան տէր մայր մը ըլլալ, և կարող, ուժեղ եւ
առողջ զաւակ մը սնուցանելու :

Ոմանք այս բնդհանուր ժամանակէ յառաջ կատարելութեան կը հասնին, ինչպէս նաև սորա հակառակն. բայց իբր միջին ժամանակ և կատարելագոյն վիճակ՝ չ'ենք սխալիր եթէ քսան և մէկերրորդ տարին համարինք և բացառութիւն սեպենք զայլս, որք քաջառողջութեամբ պատրաստ կը գտնուին մայրական դժուարին վիճակին:

Պաշտանն կանոնաւոր ժամանակ ունի, և բնդհանրապէս քսան և ութներրորդ օրն է երկման ժամանակն և կը տուէ 3—6 օր. թէպէտ և կան որ աւելի շուտ և կամ ուշ, այսինքն քսան և հինգերրորդ կամ երեսներրորդ օրն կ'ըլլան, որոյ պատճառն անշուշտ կազմութեանց տարբերութիւնն է, և ոչ մի պակասութիւն, այնպէս որ իւրաքանչիւր սք իւր սովորական օրն կրնայ ունենալ տարբեր, և սա՛ առանց վատառողջութեան. բայց երբ իւր կանոնաւոր ժամանակէն ուշ կամ կանուխ, քիչ կամ շատ ըլլայ, յայնժամ պարտ է մտադիր ըլլալ և ուղղել զայն:



ՅՄՊՍԳՈՒՄՆ ԴԱՇՏԱՆԻ

Ծնողք կը վրդովին՝ երբ տեսնեն որ իրենց զաւակք կարծեցեալ ժամանակէ ուշ այս բնական սովորութիւնն կ'ունենան, և յոյժ խռովեալ՝ կը դիմեն բժշկաց: Այսպիսիք պէտք են գիտնալ սակայն՝ որ ամսական այս սովորութիւնն տաք կլիմայից բնակչաց աւելի կանխաւ կը պատահի, քան ցրտագին, և որ սա՛ կազմութեան պակասութեան

մը նշանն չէ : Օրիորդք՝ երբ 14—15 տարին կ'հասնին և դեռ մի նշան չի նշմարուիր , (յաւէտ աբիւնային կազմութիւն ունեցողք) ընդհանրապէս գլխոյ տաքութիւն և երբեմնակի ցաւ , այտերու չափազանց կարմրութիւն , կռնակի ցաւ , սրտի բարախումն և ստամոքսի անկարգութեան նման նեղութիւններ կ'ուենան :

Այս վիճակաց համար՝ պէտք է նախ Ա₊Յէ՛ն գործածել մի քանի օր , երկու կամ երեք անգամ օրն : Յետ այնորիկ Բ₊Լ₊Պէ՛լ և Պէ՛լ₊Պ₊Յն₊ , իւրաքանչիւրէն երկու անգամ օրն փոփոխակի պէտք է գործածել , մինչև անցնին նեղութիւնք :

Բայց եթէ այտերու կամ դիմաց անսովոր դեղնութիւն և սրտի բարախումն ունենան , այն ատեն լաւագոյն դեղն է Փ₊Բ₊Պ₊Յն₊ օրն երեք կամ չորս անգամ , և մերթ ընդ մերթ դեղն ընդմիջելով մի քանի օր՝ վերստին գործածել նոյնն :

Այս վիճակաց մէջ բացօդեայ տեղուանք մարմնավարժութիւնն՝ ամէնակարևոր միջոցն է , եւ պէտք չէ երբէք զանցառութիւն ընել :

Գաշտանի կանոնաւորութիւնն գրեթէ ամբողջ տարի մը կը տեսէ և երբեմն առաւել : Առաջին երևումն կրնայ խիստ քիչ ըլլալ և այլ ևս չ'երևնալ մինչ երեք կամ չորս ամիսներ . կրկին փոքր նշան մը տեսնուելով քիչ օրերէ վերջն դարձեալ գալ . այսպէս անկանոն կը շարունակէ ժամանակ մը և յետ այնորիկ իւր կանոնաւոր ժամանակն կ'ուենայ : Այս վիճակաց մէջ՝ ընդհանրապէս սովոր եմ երկու դեղ գործածել , թէ՛ պատահելիք նեղութեանց և թէ՛ անկանոնութիւնն ուղղելու

Համար, որք են՝ Բուլիւս և Սէլիս :

Արդ՝ կը խրատեմ մայրերն որ չ՛մոռնան այս երկու դեղերն, մին մէկ շաբաթ, (շաբաթը երկուօր՝ միայն առտու և դիշեր), և միւսն յաջորդ շաբաթն՝ մինչև երեւումն. յետ այնորիկ ժամանակ մ՛ընդմիջելով՝ պէտք է կրկնել նոյնպէս :



ՉԱՓԱԶԱՆՑ ԴԱՇՏԱՆ (Menorrhagia)

Երբեմն ո՛չ միայն ժամանակէն կանուխ կ'ըլլայ, այլև չափազանց ու երկարատե, որով կ'ըլլայ փաստակար :

Անտարակոյս սա զանազան պատճառներով կ'ըլլայ, զորս կարող չ'ենք աստ յիշել. սակայն՝ մի կերպ յարմարագոյն կը դատեմ՝ ՚ի դիւրութիւն ընթերցողաց, և այն է՝ արեան տեսակին համեմատ կարգադրել դեղերն, և սա ներկայիս բաւ է : Չափազանց դաշտանի համար գործածեալ դեղերն յոյժ բազմաթիւ են, բայց ես՝ անոնցմէ յաճախ գործածելիներն աստ կարգաւ կը դնեմ. Գրեգորիոս : Արիւնն սև մա առ մա, և դեռահաս անձանց առաւել քան այլոց :

Սաղիս : Չափազանց արեան հոսումն, քաջ գոյն կարճեր, երկարատե, արդանդի տկարութեամբ :

Իբէլիս : Չափազանց, ոչ քաջ և ոչ սև, բայց անընդհատ փսխելու հակամոտութիւն :

Վերոյիշեալ դեղերն են ընտրելագոյն դեղերըն՝ պարզ չափազանց հոսման համար : Սակայն՝ երբեմն հետեւեալ երեք դեղերն գործածել կը

հարկադրուիմք, եթէ արդէն բաւական արիւն
կորսնցուցած ըլլալով՝ տաքութիւնն և այլ նեղու-
թիւնք եկած են հիւանդին վրայ:

Ա՜ճ՛ի՛ն, Ա՜ր՛նէ՛ս և Ի՛բէ՛ս: Իւրաքանչիւրն կարգաւ
պէտք է տրուիլ մէկ կամ երկու ժամը դրդալ մը
և կամ աւելի կանուխ: (Հ՜-հ՜գ՜ւ՜ն՜ պէտք պէտք չէ
մոռցուի՝ երբ Ի՛բէ՛ս չ'օգնէր):

Անշուշտ այսպիսի պարագայից տակ՝ հիւան-
դի տէրերն չ'պիտի ուզեն առանց բժշկի թողուլ
իրենց հիւանդն:

ԸՆԴՄԻՁՈՒՄՆ ԴԱՇՏԱՆԻ

Դաշտանն կանոնաւորելէ վերջն, երբեմն կը
պատահի որ մտաւոր յուզմունքով կամ դողով մը
ընդմիջի, այսինքն իւր կանոնաւոր ժամանակին
չ'երևնայ, որ ատեն գլխոյ ցաւ, տաքութիւն և
այլ նեղութիւններ կը պատճառէ:


ԴԱՐՄԱՆ, Մտաւոր յուզմամբ կամ դողով
անմիջապէս դադրած դաշտանն՝ եթէ իսկոյն Ա-
՜ճ՛ի՛ն դործածուի երեք կամ չորս անգամ՝ կէս
ժամն անգամ մը, կը վերագառնայ: Բայց եթէ
գլխոյ ցաւ և այտերու կարմրութիւն ըլլայ, այն
ատեն յարմարագոյն դեղն է Պէ՛լլո՛րժն՝ կամ առան-
ձին և կամ փոփոխակի Ա՜ճ՛ի՛նի հետ՝ ժամը դրդալ
մը: Բայց եթէ անհոգութեամբ ժամանակ անցած
ըլլալով՝ յաջորդ ամսագլխոյ կրկին չ'երևնայ, այն
ատեն պէտք է Բո՛ւլլո՛րժն դործածել, օրն երեք
կամ չորս անգամ՝ մի քանի օր, և կամ Բո՛ւլլո՛րժն,
եթէ արդեւման պատճառն խոնաւութիւնն եղած է:

ՅԱՃԱԽ ԴԱՇՏԱՆ

Գաշտանն թէև իւր կանոնաւոր ժամանակն ունի, սակայն երբեմն յաճախ կը պատահի, ու շատ անգամ գլխոյ ցաւով: Արեան այսպիսի կորուստն կը տկարացնէ մարմինն և հետեւապէս չէ կարող երկար աւեն դիմանալ առանց դարմանի: Հետեւեալք գլխաւոր դեղերն են սոյն նեղութեան համար գործածեալ:

ԴԱՐՄՍՆ: Եթէ գլուխն տաք և ոտքերն պաղ են հիւանդի, Պելլաքոնն պէտք է տրուիլ (4 անգամ օրն): Եթէ որովայնալուծութիւն ունենայ և իւր ժամանակէ 8 օր կանխաւ կ'ըլլայ, Քալոպէս: Բայց եթէ հիւանդն փսխելու հակամտեալ է, Իբէս: ու թէոր կանուխ ըլլալով հանդերձ խիթ, կծկումն և սիրտ-խաղ ունենայ, Նիտու: Իսկ եթէ աղեաց մէջ սաստիկ ցաւ, գլխոյ պտոյտ եւ յաճախ (3 շաբաթն) ու չափազանց ըլլայ արեան հոսումն, Քիտուր և Քրոտուս և երբեմն Ինուլին, (մանաւաւնդ եթէ վիշտ ունեցած է հիւանդն):

Վերոյիշեալ դեղերէն՝ օրն 3-4 անգամ մերթ ընդ մերթ պէտք է գործածել, մինչեւ որ կանոնաւորի:



ՅԱԻՈՎ ԴԱՇՏԱՆ

Կանոնաւոր գաշտանն գրեթէ առանց ցաւի է, սակայն երբեմն այնքան սաստիկ ցաւով կ'ըլլայ, որ կը նուաղեցնէ զհիւանդն, ապացոյց բը-

նական վիճակի խանգարման : Չ'ենք աշխատիր նո-
ցա պատճառներն բացատրել , այլ բաւ կը հա-
մարիմ աստ կարգ մը դեղեր յիշել , որք անձուկ
պարագայից տակ մեծապէս կրնան օգնել :

ԴԱՐՄԱՆ : Եթէ դաշտանի ժամանակ նեղեալն
տաքութիւն ունենայ հանդերձ ցաւով , և ատեն
ատեն հոսի արիւնն , Ա+ճէ՛ն և Բ+ճէ՛ն պէտք է
փոփոխակի տալ՝ կէս ժամն անգամ մը , (12 հոդ 6
դրդալ ջրով) , մինչև որ հանգստանայ : Ս+ճէ՛ն ,
եթէ նեղեալն արիւնային կազմութեան տէր , եւ
հոսած արիւնն ըլլայ բաց կարմրագոյն : Իսկ եթէ
սև ըլլայ արիւնն ու թանցը , Սէ՛ն : Ք+ճէ՛ն կամ
Ք+ճէ՛ն , սաստիկ խիթ , ցաւ և թանչքի ենթա-
կայից համար : Ք+ճէ՛ն և Վէր+ճէ՛ն , սաստիկ ցաւ
աղեաց , ձեռաց և ոտից պաղութեամբ , մարսո-
ղական դժուարութիւն կամ որովայնալուծումն :
Իսկ եթէ գլխոյ ցաւ , արիւնն բաց կարմիր ըլլա-
լով հանդերձ՝ շուտ կը թանցրանայ , ու հիւանդի
այտերն մերթ կարմիր , մերթ դեղնագոյն ըլլալով
սրտի բարախումն ևս կ'ունենայ , յայնժամ Ա+ճէ՛ն
և Պեւ+ճէ՛ն փոփոխակի պէտք է տրուիլ : Օքէ՛ն և
Նէ+ճէ՛ն , եթէ պնդութիւն ունենայ և կամ կրից
պատճառաւն է սոյն անկարգութիւն :

Վերոյիշեալ դեղերէ որ և է մին՝ ցաւն եղած
ատեն՝ 5-10-15 բոպէն կամ կէս ժամն մի անգամ
պէտք է տրուիլ : Իսկ ցաւն անցնելէ վերջն որպէս
զի չ'կրկնուի յաջորդ դաշտանի ատենն , պէտք է
մերթ ընդ մերթ առնել՝ գէթ շաբաթն երկու
անգամ , մինչև որ նեղութիւնն բոլորովին անցնի :

ՍՊԻՏԱԿԱՀՈՍՈՒՄՆ

Այս ներդուծիւնն կրնայ յառաջ գալ պաղով
և կամ ծննդական գործարանաց այլ և այլ տկա-
րութիւններէ: Աստ պիտի յիշեմք մի քանի յոյժ
գործածական դեղերն, առանց նոցա պատճառ-
ներն մանրամասնօրէն յիշելու:

ԴՍՐՄԱՆ. Եթէ հոսումն դեղնագոյն և թան-
ցըր ու ցաւով է, Բուլ-Բիլլ, (մանաւանդ Աւշա-
յին կազմութեան, դեղնագոյն մազ ունեցողաց
համար): Իսկ եթէ հոսումն ջրային և դարչահոտ
է (սեւամորթ), Արեւի+ւ պէտք է տալ՝ օրն երեք
անգամ: Եթէ դիմաց դեղնութիւնն և հոսումն՝
դաշտանի ժամանակ կը սաստկանայ, Սեփե պէտք
է տրուիլ: Սելֆը և Մեր+ի-բիւլ փոխադարձաբար
հարկ է գործածել՝ եթէ մարմնոյ մէջ եռ.ք ըլլայ
և երբեմն առանց եռ.քի, վասն զի շատ անգամ
կ'ուզղէ միւս դեղերու պաշտօնն: Այս ներդուծեան
մէջ յոյժ կարևոր է մաքրութիւնն. (գաղջ ջրով
քիչ մը Պար+ս և կամ Հոյր+ի-ի փոշին՝ կէս տը-
րամ, 50 տրամ ջրով, առաւօտ և երեկոյ պէտք
է լուանալ):



ՆԵՂՈՒԹԻՒՆԻՔ ՅՂՈՒԹԵԱՆ

Ընկերական հանդարտիկ և բնական կենաց
մէջ, յղութիւնն մեծաւ մասամբ ազատ է ներդու-
ծենէ: Վասն զի նա իգական սեռի այնպիսի մի
վիճակն է, որ եթէ ուրիշ նկատմամբ բնութեան

օրէնքներն չ'երգծէ, իւր առողջութիւն՝ 'ի ժամանակ յղութեան է կատարեալ:

Բովանդակ կազմութեան գործարանք, մարտողութիւն, քուն, արեան շրջանն 'ի միասին ներդաշնակ կանոնաւորութեամբ կ'գործեն մեծաւ ուրախութեամբ՝ վասն իւր աղապայ երանութեան:

Սակայն ներկայ վիճակն մեր՝ յղութիւնն ո՛չ միայն հեռի կ'ընէ երանութիւն մ'ըլլալէ, այլ յաւէտ պատճառ յուսահատութեանց և վշտաց: Վասն զի ազբատն կը խորհի թէ՛ նա իւր ներդութեանց վրայ մի ևս կը յաւելու, և նորատէրն ցաւ կ'զգայ՝ որ այն պատճառաւ պիտի արգիլուի իւր ունայն և ուժգէտ հաճոյքէն, և ըն: Յայնժամ կ'ըլլայ մի ջանք զայն կորսնցնելու (և որ ա՛լ աւելի ցաւային է), իւրեանց ընտանի բժշկաց ձեռամբն, որոց ահաւոր պարտաւորութիւնն է՝ ամէնայն միջոց գործածել զայն պահպանելու և չ'արատաւորել իւրեանց պատիւն այն անմեղ արեամբն:

Ժամանակ պիտի գայ, և արդէն հասած ալ է, որ մայրեր ընդհանրապէս պիտի գիտնան թէ՛ կեանքն իրենց մէջ կ'սկսի յղութեան առաջին օրէն, և թէ զայն դիտմամբ կորսնցնելն չէ այլ ինչ բայց եթէ պարզ ՈՐԴԵՍՊԱՆՈՒԹԻՒՆ:

ՄՏԱԻՈՐ ՅՈՒԶՄՈՒՆՔ: Մտաւոր յուզմունքն՝ (չափազանց ուրախութիւն և կամ սաստիկ երկիւղ) ուղղակի ջղային դրութեան և անուղղակի կերպով մարմնոյ բոլոր գործարանաց վրայ կը ներգործեն:

Գիտութիւնն 'ի վաղ ժամանակի հաստատած է թէ՛ յուզմունք՝ մարտողական գործարանի, սրբ-

տի և արդանդի վրայ մեծապէս կ'ազդեն, ու ներկայ բժշկական գիտութիւնն ևս փորձով հաստատած է թէ՛ սաստիկ մտաւոր յուզմունք ո՛չ միայն դաշտանի անկարգութիւններ կը պատճառեն, այլ մինչև իսկ վիժումն, և սա ոչ իբր բացառութիւն:

Հասարակաց կարծիքն է, ինչպէս նաև բազում բժշկաց, թէ՛ մտաց վրայ եղած սաստիկ տրպաւորութիւնք՝ երբեմն ուղղակի մանկան անմանը վրայ կ'ազդեն, և ՚ի հաստատութիւն սորա՝ բազմաթիւ այլակերպ և տղեղ մանկանց օրինակներ յառաջ կը բերեն: Թէ արդեօք կարելի՞ է մայրական խորհուրդն ազդեցութիւն մ'ընել մանկանց գոյնի և ձևոյն վրայ, դեռ խնդիր մ'է ՚ի մէջ Բնադննչաց:

Ընդունուած իրողութիւն մ'է սակայն՝ որ սաստիկ յուզմունքն ուղղակի կը ներգործէ մեր կազմութեան, ըստ մեծի մասին կարևոր գործարանաց վրայ: Նա կրնայ լեարդն վրդովել, և դաւլուն կամ դեղնութիւն կոչուած հիւանդութիւնն յառաջ բերել, և կամ՝ սիրտն վրդովել ու բարախումն յառաջ բերել, ևլն. ևլն: Վասն զի ըզեզն սոյն գործարանաց հետ կապակցեալ է ջղերու միջոցաւ: Բայց ընդհակառակն մայր մը և նորա անծին մանուկն երկու տարբեր գոյութիւններ են, ՚ի նկատի առնելով նոցա ջղային գրութիւնն ևլն: Ի վերայ այսր ամէնայնի բազմաթիւ իրողութիւնք, զորս պատշաճ չ'եմ համարիր աստ յիշել, կ'արդարացնեն հասարակաց այն կարծիքն թէ՛ մօր մը չափազանց այլայլումն կամ յուզմունքն՝

գէթ երբեքն՝ անծին մանկան այլաճեւութեան
կամ տղերութեան պատճառն է :

Բրօֆէսօր Տալթըն՝ իւր ԲՆԱԽՍՍՈՒԹԻԻՆ
ՄԱՐԿԿՍՅԻՆ գրքոյն մէջ կ'ըսէ . «Երբէք տեղի չու-
նիմք կասկածելու որ բազմաթիւ տղերութիւնք և
պակասաւորութիւնք անծին մանկանց , ըստ կար-
ծեաց հասարակաց , իրապէս ծագումն կ'առնու
այն ինչ պարագայից տակ՝ մանկան մօր ունեցած
ջղային զգացումներէ , զոր օրինակ՝ զլուանք , եր-
կիւղ կամ սաստիկ զայրոյթ և այլն :

Այն վատն , որոյ վրայ սոյն կարծիքն հաս-
տատեալ է , կը վերաբերի թէ՛ մարդոց և թէ՛ ըս-
տորին կենդանեաց , և սորա հաստատութեան զօ-
րաւորագոյն . վաստերէն մին է՝ (որպէս կը յիշէ
Բրօֆէսօր Համընտ)՝ հասարակաց կարծեաց հնու-
թիւնն , որ յետս կը տանի զմեզ 5000 տարի մին-
չև ցՅակօր (տես Գիրք Ծննդոց . . . Լ.) :

Հասարակաց կարծիք մը՝ կ'ըսէ յիշեալ Հեղի-
նակն , բազում գարերէ՛ ի վեր անընդմիջաբար մեզ
հասած , դժուարին է ըսել թէ՛ չունի իւր մէջ
ճշմարտութեան մի կայծ , այլ պարտ է ունեցած
ըլլալ մի ճշմարիտ հիմ , գէթ իւր յարատեւու-
թեան համար : Եւ եթէ վրդովեալ մօր մը կաթն
կազդէ և իւր ծոցէ դուրս ելող մանկան առող-
ջութիւնն շատ անգամ կը խանգարէ , անտեղի
կ'ըլլա՞յ արդեօք խորհիլ թէ՛ նա առաւել կազ-
դուի՝ երբ դեռ չէ բաժնուած իւր մօրմէ :

Վասն որոյ լաւագոյն է յղի կանանց՝ զգոյշ
ըլլալ այն ամէն առարկաներէ , ոյք կարող են
յուզմունք պատճառելով վնասել իւրեանց ծոցն
եղած անգին աւանդն :

ԴԱՐՄԱՆ: Մտաւոր յուզմունքն՝ զանազան պատճառներով յառաջ կուգայ, հետեւապէս պարտ է մեզ՝ պատճառաց համեմատ դարմանել զհիւանդն:

Աճելի, Օքիլոս և Արնիոս, եթէ վախն է պատճառ յուզման, և որ հիւանդն սրտի բարախումն ունի և գիշերն ՚ի բուն անքուն է:

Քոֆէ, եթէ յուզման պատճառն՝ չափազանց եւ անմիջական ուրախութիւնն է, և քնահատ, — Իսկ եթէ կիրք ելլելն է պատճառ, Քոֆէօն:

Ինչու, ցաւագին լուրեր, մահ, վիշտ ևլն. որոց պատճառաւ հիւանդին վրայ մեղամաղձոտութիւն և նուաղումն կուգայ, ՚ի հարկին՝ ընտրեալ դեղէ 12 հապ 6 դրդալ ջրոյ մէջ հալեցուր և 5-10-15 բոպէն դրդալ մը տուր:



ՆԵՂՈՒԹԻՒՆՔ ՊԱՏԱՀԱԿԱՆ

Կանայք երբեմն ծննդաբերութեան մերձ տարօրինակ մտաւոր յուզում կ'ունենան, իբր թէ ահաւոր վտանգ մը կայ իրենց պատահելիք, եւ ուստի անընդհատ կ'արտասուեն, և շատ անգամ չափազանց յետսամիտ կ'ըլլան: Անկարելի է համոզել զիրենք թէ՛ այն ամէնքն պարզ երեւակայական խորհուրդներ են, ևլն. ևլն:

Այսպիսի պարագայից տակ հետեւեալ երեք դեղերն միշտ օգտակար եղած են. — Սելենիոս-իւ, Բուրուիլիւ և Քոֆէօն, զորս պէտք է կարգաւ մա-

Արեւիկեացի⁵⁰ պէտք է կարգաւ փորձել՝ օրն 3-4 անգամ. բայց եթէ փոխածն թթու է, Բուլ-Նիլլ⁵⁰ :

ՅԱՃԱԽ (կամ ցաւով) Միջեւ, Երբեմն յղու-
թեան առաջին ամիսներն համակրական կծկումն
կը պատճառէ և հետեւաբար միզելու ատեն ցաւ :
Այս նեղութեան համար երբեմն միայն Գե-Ֆիլի-
բոս-հո- հոտոտելն բաւ կ'ըլլայ : Սակայն ուրիշ պա-
րագայից տակ կը հարկադրուինք Նի-տ-Վո⁵⁰ կամ
Պելլե-որ-ձն-1+ տալ փոփոխակի : Եւ եթէ ցաւոց հետ
սրունքներու ուռ ևս կը տեսնուի, այն ժամանակ
Արեւիկեացի⁵⁰ և Աբի⁵⁰ մատակարարելով հանդերձ (2
ժամն դրդալ մը), պէտք է ճարտար բժշկի մ'օգ-
նութեանն դիմել :

Միջփի ՅԱԻ : Մերձ ծննդաբերութեան կըր-
նայ մեղմանալ, Արեւիկեացի, Գե-Ֆիլի-տ-բոս և Բուլ-Նիլլ գոր-
ծածելով, մանաւանդ Գե-Ֆիլի-տ :

ՍՈՒՏ ՅԱԻ : Այս նեղութեան համար սովո-
րաբար գործածուած դեղն է Բուլ-Նիլլ⁵⁰, քանի
անգամ որ ցաւն դայ, (12 հապ, 12 դրդալ ջուր)
պէտք է դրդալ մը տալ : Այսպէս եթէ առաջին
դրդալով անցնի, ալ պէտք չէ կրկնել :

Ոմանք Գե-Ֆիլի-տ ևս կը յանձնարարեն, բայց
սակայն Բուլ-Նիլլ⁵⁰ հիւանդի այս վիճակի մէջ գոր-
ծածեալ բոլոր դեղորէից լաւագոյնն է, և պէտք
է շարունակել մինչեւ որ դադարի ցաւն :



ՎԻԺՈՒՄՆ

Վիժումն է կանխահաս ծնունդ, որ դեռ մանկան կենդանութիւնն պահպանուելու վիճակին չէ հասած, և կրնայ յղութեան որ և է վիճակին մէջ պատահիլ: Պատահականն կրնայ չափազանց աշխատութեամբ, ջղային սաստիկ վրդովմամբ, և կամ փնաս մը կրելով, կամ անզգուշութեամբ ըլլալ:

Այս կերպ վիժումն շատ քիչ անդամ կը պատահի, եթէ կանայք զգոյշ ըլլան, և չ'մոռանան այն մեծ պատասխանատուութիւնն, զոր ունին յայնժամ իրենց ծոցն դանուած սերնդեան համար. (թէ և ամէն զգուշութեամբ հանդերձ երբեմն կրնայ պատահիլ):

Յղութեան վիճակն կանանց սեռի ընական ըլլալով, խոհեմութիւնն՝ վիժման վտանգէ բացառիկ կ'ընէ: Կին մը՝ առանց մեծ դժուարութեան կրնայ իւր ընտանեկան դործոց պարապիլ, երբէք զինքն վտանգի ենթարկելու. կրնայ նաև չափաւոր զբօսավայրերն վայելել. բայց երբ չափաւորութեան սահմանն կ'անցնի, և ըստ նորասիրութեան՝ անպատշաճ հագուստից և զբօսանաց կուտայ զինքն, յայնժամ այսպիսեաց դժուարին կ'ըլլայ ասպահով անցնիլ այս փափուկ վիճակէ՝ հանդերձ զիւրովն: Եւ եթէ մի անգամ այն դժբաղդութեան ենթարկուի, յայնժամ դժուարին կ'ըլլայ յաջորդ և նման պարագայից տակ նման վրտանդէ զերծանիլ: Վասն որոյ յոյժ կարեւոր է այսպիսեաց մեծ հոգատարութեամբ անցնել, եւ որ և է ծանր աշխատութենէ, չափազանց քալելէ, մանաւանդ պարելէ ետ կենալ:

Գրքոյկիս համառօտութիւնն չը ներեր աւելի խօսիլ այս յոյժ կարեւոր կէտի վրայ, այլ թողլով զայն ընթերցողաց խոհեմութեան, մի քանի յոյժ օգտակար դեղերն կը դնեմ, որպէս զի 'ի բացակայութիւն բժշկաց՝ անվրդով և առանց շուարման կարենան գէթ վտանգաց առաջքն առնուլ:

Առաջին դարման է՝ կատարեալ հանգարտութիւն: Հիւանդն պէտք է ամէնայն զգուշութեամբ անկողին դնել, և խաղաղ ու անխռով պահել զայն, յետ այնորիկ հետեւեալ դեղերը գործածել:

ԴՍՐԾԱՆ: Եթէ յարտաքուստ փնաս մը, զօրաւոր ցնցում կամ չափազանց աշխատութիւնն է պատճառ, Արնիտ (12 հոգ 10 դրգալ ջրոյ մէջ հալեցուր), քառորդ ժամն դրգալ մը տուր, մինչեւ որ հանգարտի, յետոյ աւելի ուշ: Եթէ վախն և կամ մտաւոր յուզմունքն է պատճառ, և արեան հոսման ժամանակ սաստիկ խիթ, ցաւ, տաքութիւն ունենայ, Արնիտ և Քլօրօֆիլ փոփոխակի տուր: Իսկ եթէ ստամոքսի խառնակութիւն կամ փոխունք ըլլայ, հանդերձ հոսման ժամանակ ցաւով, Իբէրոսանն: Եթէ վիժումն երկրորդ և երրորդ ամիսներու մէջ, և մէջքն ալ սաստիկ ցաւ ըլլայ, Սպիտակ և Քլօրօֆիլ պէտք է արուել փոփոխակի՝ 5-10-15 ըտպէն դրգալ մը: Եւ եթէ ամէն ցաւոյ ժամանակ հոտումն առատ ըլլայ, Սպիտակ-օր (մէկ կաթիլ ոգիէն փոքր գաւաթ մը ջրոյ մէջ դիր և կես ժամն դրգալ մը տուր):

Երբեմն դժուարին պարագայից տակ կը պարտաւորինք երկուքէն աւելի դեղ մատակարարել, ներդրութեանց խառն ըլլալուն պատճառաւն. զոր

օրինակ . ենթադրելով թէ՛ երկրորդ ամիսն է վի-
 ժումն , յայնժամ Սուլէն կամ Քրօտ տալ հարկ է .
 բայց կը տեսնենք փոխունք ևս , իբէրտաննա տալ
 հարկ է : Խիթ , ցաւ և շն . ունի , որոնց համար
 Քրօտայլ պէտք է : Վասն որոյ այսպիսի պարագա-
 յից տակ՝ կրնանք Սուլէն , իբէրտաննա և Քրօտայլ
 փոփոխակի գործածել :



ՎԷՐՔ և ՅԱԻ ՍՏԵՍՆՑ

Կաթն առաջին անգամ երևնալու ատեն կ-
 ղած տաքութեան համար գործածուած լաւա-
 գոյն դեղն է Ա.ճ.Ե.Ը՛, օրն 3-4 անգամ :

Ստեանց մէջ գնտիկներ ըլլալն արդիւելու հա-
 մար , որ շատ անգամ բորբոքելով վէրք կ'ըլլան ,
 Պրօտայլ պէտք է տրուիլ : Եթէ կաթը ուշ գայ , և
 կամ յետ երևման քանակութիւնն իջնայ , Ա.Ե.Ը՛-
 և Քրօտայլ : Իսկ եթէ սոյն պատճառաւ ջղային
 կոկորդի ցաւ ունի (իբր գնտակ մը կոկորդն կե-
 նայ) , յայնժամ Ա.ճ.Ե.Ը՛ լաւագոյն դեղն է : Ե-
 թէ արդէն վէրք գոյացած և բացուած է , Քրօտ-
 այլ (մէկ տրամ ոգի , 50 տրամ ջուր) և Ֆլուօլ-
 այլ յով պէտք է լուանալ : Կաթն քիչցնելու համար
 Քրօտայլ լաւ է գործածել : Եթէ ստինք նախորդ
 ծննդաբերութեանց ժամանակ վէրքեր ունեցած
 են և հետևապէս կաթն յոյժ սակաւցած է , Տր-
 կլինՍի կը յանձնարարէ Կրօտայլ : Իսկ եթէ ստինք
 բորբոքման վիճակի մէջ են , այսինքն կարմիր եւ
 փայլուն , Պրօտայլ և Ա.Ե.Ը՛ պէտք է գործածել

փոփոխակի : Վէրքի բացուիլն երբ անհրաժեշտ կը տեսնուի , Փոփոխուի և Հիֆուսի եթէ փոփոխակի գործածուելու ըլլայ , կը դիւրացնէ զայն :

ՎԷՐԳ, (Պտկունք) ՍՏԵԱՆՑ : Ստնտու կանանց այն նեղութիւն թէև մանկան ծննդենէ յառաջ կ'սկսի , սակայն ընդհանրապէս ծննդաբերութեանէն մի քանի շաբաթ վերջը յայտնի կ'ըլլայ , ու շատ անգամ մանկանց բերանն ևս ըլլալով առաւել կը գրգռուի :

ԴԱՐՄԱՆ : Այս նեղութեան համար ներքին դեղն է Ի-Բ-Է-Է-Է-Է , որ պէտք է օրն 2-3 անգամ տալ մանկան , և նոյնի ոգիէն 5-6 կաթիլ 25 տրամ ջրոյ մէջ դնելով սրբել թէ՛ մանկան բերանըն և թէ՛ պտկունքն :

Հետևեալն խիստ օգտակար եղած է բազմաց և կը խրատենք գործածել զայն 'ի հարկին՝ որպէս գրեալ է : Առ Քուրսուս (մայր ոգին) ջուր և մաքուր Կլորիֆիկ , իւրաքանչիւրէն 2 տրամ , և խառնէ զայս , և մանկան կաթ ուտելէ անմիջապէս վերջն ստինքն սրբելով , փափուկ վրձինով մը քսէ զայս և կրկնէ , քանի անգամ որ մանկան կաթ տրուի :


ՅԱԻ ՍՏԵԱՆՑ : Յղութեան ատեն ստեանց տակաւ մեծութեան ժամանակ եղած ցաւի համար հետևեալ դեղերն կը յանձնարարեմ :

ԴԱՐՄԱՆ : Եթէ ցաւն ջղային է , այսինքն առանց կարմրութեան ևլն . յայնժամ Քուրսուս և Բուրսուս : Իսկ եթէ բորբոքման նշաններ , կարմրութիւն և ցաւ ունենայ , յայնժամ Պելլուրոն և Պրոյմիս պէտք է տալ իւրաքանչիւր դեղէ օրն երեք անգամ :

ԱՌԱՒՕՏԵԱՆ ՏԿԱՐՈՒԹԻՒՆ (ՅԷ Կանանց)

Յղութեան հինգերորդ կամ վեցերորդ շաբաթն, կամ աւելի կանխաւ, կանայք այս ներդրութիւնն կ'ունենան, և առաւել 'ի կէս աւուր, (փրսխունք, ստամոքսի խառնակութիւն, գլխոյ պրտոյտ, ևլն.): Եւ երբեմն այն աստիճան սաստիկ կ'ըլլայ, մանաւանդ փափկասուն կանանց, առաջին յղութեան ատեն, որ բժշկական դարմանաց անհրաժեշտ պէտք կ'զգան:

ԴՄՐՄՍՆ: Եթէ փսխունք չափազանց մաղձային է, Իբէ+ս+ս+անհա կամ Քրեոզոն (12 հող 6 գրք-դալ ջրոյ մէջ հալեցուր) տուր 2 ժամն անդամ մը: Իսկ եթէ փսխածն ո՛չ մաղձ՝ այլ խէժային լորձունք է, Վեր-Քրո-ս պէտք է տալ: Եւ եթէ հիւանդն արդէն ստամոքսի տկարութեան ենթակայ է, Նի-ս-լ. բայց երբ փսխունքն թթու է, Բուլ-Քրո-ս հարկ է տալ: Երբեմն Իբէ+ս+ս+անհա հետ Սը-է-ն-է-լ⁵⁰ փոփոխակի տրուին հարկ կ'ըլլայ, մանաւանդ եթէ հիւանդն յաճախ ջուր խմէ քիչ քիչ:



ՎԵՐՁԻՆ ՑԱԻ

Կանայք՝ առաւել այս ցաւէ կ'երկնչին, քան ծննդարեւական ցաւէ, որ յաւէտ կարճատե կ'ըլլայ. և երբեմն իրաւունք ևս ունին, վասն որոյ հետեւեալ դեղերն աստ կը դնեմ՝ 'ի հարկին գործածուելու համար:

ԴԱՐՄԱՆ. Յետ մանկան ծննդեան, ամէն քա-
ռորդ ժամն անդամ մը 4 հող Արձիւտ տուր 3-4 ան-
դամ. յետ 2 ժամ սպասելոյ, եթէ ցաւն փոխանակ
մեղմանալու՝ սաստկանայ, յայնժամ Բուլ-Բիլ⁵⁰
տուր ամէն կէս ժամն անդամ մը, մինչ մեղմա-
նալն ցաւոյ. (եթէ մանուկն չ'ծնած տրուած չէ,
վասն զի առ 'ի դիւրացուցանել զծննդաբերու-
թիւնն սովորաբար կը տրուի սոյն դեղ՝ ամէն ան-
դամ որ ցաւն դայ):

Բաժնայլ, եթէ հիւանդն ջղային և յոյժ գրգռեալ
է, 4 հող ժամն անդամ մը:

Սիտիլիտեր, եթէ շատ նիհար է կազմութեամբ,

Վերոյիշեալ դեղօրայք մեծաւ մասամբ կը
մեղմացնեն ցաւն:



ՎԱՆՃԱՆ ԴԱՇՏԱՆԱԿԱՆ ԿԵՆԱՑ

Լ

Տկարութիւն+

Կանանց դաշտանի դադարումն՝ միջին հա-
շուով 45րդ տարին է, թէև սա կը տարբերի կազ-
մութեանց պատճառաւ: Ոմանք 30րդ տարւոյ
վերջն, մանաւանդ այնպիսիք, որոց դաշտանն կա-
նուխ կ'սկսի. (գիտեմ մին որ իւր 26րդ տարին
դադրած է, յետ ծնանելոյ երկու քաջառողջ զա-
ւակունս): Եւ այլք կը ծնանին զաւակներ՝ յետ
50րդ տարւոյ, և կանոնաւորապէս շարունակած
են իւրեանց դաշտան մինչ 62րդ տարին:

Արդ՝ ընդունուած ճշմարտութիւնն մի է որ՝

Քրիստոս, և Յէրուսաղէմ պէտք է փոփոխակի գործածել
(երկու ժամն անգամ մը)։ Սակայն՝ երբեմն լոկ
համակրական կ'ըլլայ այս ցաւն, և յայնժամ Լուսն
լաւազոյն դեղն է. և եթէ սա ինքնին բա-
ւական չ'ըլլայ, յայնժամ Քրիստոսի հետ փոփոխա-
կի կրնայ տրուիլ։

Մի երրորդ նեղութիւն՝ Նուաղումն է, որպէս
թէ միշտ անօթի են։ Այս վիճակի մէջ եզող ջղա-
յին կանանց համար՝ Սիւնիքի, և արիւնային
կաղմութեանց համար՝ Ասիւնի պէտք է տրուիլ
(օրն 3—4 անգամ)։

ՄԱՅՐԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԽՐՍՏ

Մանուկներն պէտք չէ կաթէն կտրել, մինչև
որ ուրիշ կերակուրներու սովորին։ (Տես Մնունդ
Մանկանց)։ Եթէ մօր մ'առողջութիւնն կը խան-
գարի, պարտ է օր քան զօր սովորեցնել զմանուկն
ուրիշ կերակրոց, վեցերրորդ ամսէ սկսեալ, երեք
ամիսն քիչ կաթ տալով։

Մայրեր՝ պէտք չ'են սովորեցնել քնանալ մա-
նուկներն՝ մինչ կաթ կ'ուտեն իւրեանց գիրկն .
քանզի յետ այնորիկ դժուարին կ'ըլլայ զայն քը-
նացնել, եթէ ոչ՝ գիշերն ՚ի բուն իւր մօր կաթն
ուտելով։

Մանուկ մը պէտք չէ կաթէն կտրել՝ մինչև որ
վեց կամ ութ ակուայ ունենայ, զի այն ատենն է
որ բնութիւնն կը կոչէ թէ՛ մանկան առաւել զօ-
րաւոր նիւթ պէտք է, զօրաւոր գործիներ ունե-
նալն յայտ առնելով մօր։

Մայրերը պէտք չ'են կաթ տալ՝ մինչ գրգռեալ վիճակի մէջ են, զի սա բազում նեղութեանց, և մինչև իսկ մանկանց մահուան պատճառ եղած է, թունաւորելով փոքրիկ արարածոյն արիւնն:

Մանուկ մը պէտք չէ կաթէ կտրել ուր և է ատամնահատութեան ժամանակ, զի ցաւն ու կաթէն կտրելու այլայլումն՝ երկօրին ՚ի միասին մանկան կարողութենէ վեր նեղութիւններ են:

Մանկանց ակռաներն կծիկ առ կծիկ կ'ըուսնին և ունին մասնաւոր ժամանակ:

Նախ՝ վարի ծնօտի երկու միջին հատուներն, որոնք ընդհանրապէս հինգ կամ վեցերորդ ամսուն կ'սկսին, ու 14 աւուր մէջ դուրս կ'ցցուին:

Բ. Հինգ կամ վեց շաբաթ հանդստեան ժամանակէ վերջն՝ վերին երկու հատուներն:

Գ. Երեք շաբաթ հանդստանալէ զինի, մինչ տասներորդ ամիսն յաջորդ չորսն կը բուսնին, որ կը կոչուին սրանկիւն: Նախ վարի երկուքն, և կարճ միջոցէ մը յետոյ վերի երկուքն:

Դ. Երկու ամիս դադարմանէ վերջն, 12—14 ամսու եղած ժամանակ՝ կրկին երկու վարի ծնօտինն և երկու վերին ծնօտինն պզտիկ ազացողք կը բուսնին:

Ե. Երկար հանդստեան ժամանակէ մը վերջն, 15—20 ամսու եղած ատենն դարձեալ՝ երկու վարի և ապա երկու վերի ծնօտիններն կ'ելլեն:

Զ. Կրկին հանգիստ մ'ընելով, 24—30 ամսու եղած ատեն՝ վերջին չորսն (մեծ աղացողք) դուրս կը ցցուին, որ ընդամէնն քսան ըլլալով, աստ կը վերջանայ մանկութիւնն և հետևապէս մանկական ակռաներն:

ՄԱՆԿԱԿԱՆ ՄՆՈՒՆԴ (չօ՛ր Կեր-կուր)

Մանկական կենաց մի երևելի հանգամանքն՝ նորա արագ աճումն է։ Առողջութեան ատեն՝ նորա սննդական գործարանի գործօն վիճակաց հետ բազդատմամբ միւս գործարանաց վիճակն, այնպէս կը թուին մեզ թէ՛ «նոքա ՚ի քուն են», և արդ՛ կը հետեւի թէ՛ մանկական հիւանդութեանց մեծագոյն մասն՝ յաւէտ սննդական գործարանաց միջոցաւն է, և կամ հետեւանքն նոցա։

Մայր մը՝ յետ ծննդարեւութեան, և նախ քան իւր մանկան համար շափաւոր կաթ հոսելն, ունի մի վիճակ հանգստեան. նոյնպէս և մանուկն. յուսկ յետոյ կուգայ անօթութիւնն մանկան, յորում մանուկն կը պատրաստուի սնունդ առնուլ, ցարդ եղածէն բոլորովին տարբեր եղանակաւ։

Մայրական կաթն ամէնապարզ և սննդարար կերակուրն է, և որ մանկանց համար յոյժ գլխաւոր ատմարսելի։ Նա ունի իւր մէջն այն ամէն տարերք որ արիւն շինելու համար պիտոյ են, և հետեւապէս մարմնոյն կազմութեան համար անհրաժեշտ։

Յոյժ օգտակար է տեսնել թէ՛ մայրական կաթըն ունի այն երեք գլխաւոր տարերք, որք պիտոյ են մարդուս, իւղ, շաքար և Ալբումին (սպիտակուց)։ այս մի միայն հեղանիւթն է որ այս ամէնն կը պարունակէ իւր մէջ բաւականապէս. ըստ որում կերակուրն պարտի յարմարիլ նորածին արարածին, նաև միայնակ նիւթն է՝ զոր բնութիւնն բաղադրեալ վիճակին մէջ կը հոգայ վասն մանկան։

Քրիստիան

Մայրական ստնտուութեան կաթն միշտ թարմ կը պատրաստուի՝ որպէս պիտոյ է, և մանկան կը մատակարարուի ժամ առ ժամ՝ փոքր քանակութեամբ. և ընդ ֆիւլիւսիւն և բարոյական բարի ազդեցութեան, որ զարմանալի եղանակաւ կը փութայ առ 'ի հոգալ մանկան կազմութեան յարմարագոյն կերակուրն դիւրամարս և հետեւապէս նորա արագ աճման համեմատ ընել. վասն զի մօր մարմնոյ կենդանական ջերմութիւնն զոր կ'ընծայէ իւր դիրկն եզոզ մանկան, ոչ է այնքան կարեւորագոյն և կամ բերկրալի մանկան ֆիզիքական կազմութեան, որքան որ է նորա բարոյական ազդեցութիւն, նորա գգուանքն, խանդաղատ սէրն և մայրական դիւրազգած և փափուկ սիրոյ գորովն, որ է էականն համայն հոգեւորական, խնայական և ֆիզիքական աճման իւր սերնդեան:

Մանկական առօրեայ պիտոյքն՝ կաթի առատութեամբն կը լեցուի, որ կ'ընդունի մայրական ազբիւրէ: Սակայն նիւթոց առատութիւնն կը կորուսանէ իւր կենսական ազդեցութիւնն մեծաւ մասամբ՝ երբ մանուկն զուրկ է 'ի հոգեկան սիրոյ մօրն, որով նորա նիւթական մարմինն կը կազմուի, և որով մեծաւ մասամբ հազորդակցութեան միջոցն է մօր՝ ընդ մանկան:

Մանկական մահուան այլ և այլ պատճառանաց գլխաւորագունից մին՝ մանկանց արհեստական միջոցաւ սնուցուիլն է, փոխանակ մայրական ստնտուութեամբ, զոր բնութիւնն յարմարագոյն դատեր է: Այն մանուկն, որոյ մայրն կը մերժէ իւր մայրական պարտաւորութիւնն առ նա կա-

տարեւ, կամ որ դիպուածով հիւանդութեամբ և կամ մահուամբ զրկեալ է բնութեան յատկացուցած կերակուրէն, ստէպ կը տկարանայ և կ'մեռնի: Այսպիսի մանկանց բազուկներն յաճախ կը տեսնեմք որ բաւական իւղ չ'ունին իւրեանց բազկաց փափկութիւն տալու, արեան կարմրագոյն նիւթն կը սլակօի, որ պէտք էր՝ իւրեանց այտերու և ամբողջ մարմնոյն փայլ տալու համար. դեռ ի մանկութիւն՝ ծերութեան հազուստն հազած են, իւրեանց ձայնն շարունակ նուաղեալ և ամբողջ երևոյթնին մի իրական վայ է: Բայց, աղէ՛, տո՛ւր այսպիսի մանկանց՝ բնութեան յատկացուցած կերակուրն, և եթէ դարմանն ՚ի տարածամու չէ, յայնժամ այն ողբալի հեծութիւնն պիտի դադրի, դէմքն գոհացուցիչ և հաճելի երևոյթմբ կ'առնու, և տակաւ առ տակաւ մանկան ամբողջ վիճակն կը բարեփոխի, բազուկներն գէրցած, մարմինն կարմիր և սպիտակ, և յուսկ յետոյ երբ մանկական զուարթագլին խնդումն լսենք՝ անտարակոյս յայնժամ մեզ կը թուի թէ՛ մի քանի շարթ առաջ եղող փոքրիկ նեղեալն այժմ ամէնայնիւ փոխեալ է, և կամ թէ՛ այն մանկական բնական գեղեցկութեամբ յաւերժական երկրէ յետս բերուած է: (Ուէլլ. Տիւրուիւն մանկանց)

Անկասկած եմ որ շատեր պիտի հարցնեն թէ՛ ի՞նչպէս կերակրելու ենք մանուկ մը՝ որոյ մայրն հիւանդ կամ մեռեալ է: Այսպիսեաց համար կը պատասխանեմ նախ՝ թէ մայրական կաթէ վերջն կուգայ քաջառողջ ստնտուի մը կաթն, թէև սա ամէն ատեն դիւրին չէ ձեռք ձգել, վասն զի ըս-

տընտու մը պարտ է մանկան մօր տարիքն ունե-
նալ և կամ մերձագոյնն . և դարձեալ՝ եթէ կա-
րելի է՝ զաւակաց թիւն պարտի համապատասխա-
նել . (եթէ մանուկն անդրանիկ զաւակն է իւր մօր՝
պարտ է ստնտուն ըլլալ անդրանիկ զաւակի մայր) :

Բայց որովհետև հազուադիւտ են սոյն կա-
նոնաց համեմատ իրենց մանկիկն խնամելու կարող
անձինք , վասն որոյ Տօքթօր ԿԼԻՆՍԻ հետեւեալ
խրատն կուտայ :

« Որովհետև կովու կաթի մէջ նուազ շաքար և
առաւել իւղային մաս կայ՝ քան զկաթն մայրական ,
վասն որոյ հարկ է զայն բարեփոխելով նմանցնել
մայրական կաթի՝ հետեւեալ կերպով : Քաջառողջ
կովու մը կաթն որ խտտեղէնով և ջրով սնուցեալ
է , յետ կթելոյ՝ պէտք է թողուլ երեք ժամու
չափ , և յետոյ առնուլ վրայի մասն և իւր քա-
նակութեան չափ ևս գաղջ ջուր և քիչ մը շաքար
խառնելով՝ տալ մանկան . (կաթի շաքարն լաւա-
գոյն է) : Բնականապէս երբ մանուկն կ'աճի , կա-
թի հետ խառնեալ ջուրն ևս պէտք է քիչցնել :

Ս. յսոքիկ են մանկիկի առողջութեան անհը-
րաժեշտ պիտոյք » :



ԳԼՈՒԽ ԺԲ.

ՏԿԱՐՈՒԹԻՒՆՔ ՄԱՆԿԱՆՑ

ՓՈՐՀԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱԿԱՆ

Մանկական տկարութեանց առաջիններէ մին փորձարն է, որ նոցա անբնական կերակրովք, այսինքն իւրեանց մօր կաթովն ոչ-սնուցեալ մանկանց կը պատահի, որոց աղիքներն տկարացած ըլլալով, մատակարարուած կերակուրն առանց փոփոխութեան դուրս կ'արտաքսուի:

1. Մանկական այս տկարութեան ատեն՝ եթէ կանուխ ՚ի նկատ առնուի նորա արտաքսած կէս անմաս նիւթերն, ունիւք մի լուսագոյն դեղ, այն է Նիւտրիտ (օրն երկու անգամ):

Բայց եթէ աղիքներն բաւական տկարացած ըլլալով, բոլոր կղկղանքն զրեթէ անմարս է, այն ատեն Լոպոբոսիտ⁵⁰, նոյնպէս:

Երբեմն այս երկու դեղօրէից փոփոխակի տրուին՝ աւելի շուտ ազդեցութիւն կ'ընէ, և անվարժ անձանց համար լուսագոյն է այնպէս ընել: Իւրաքանչիւրէն օրն 2—3 անգամ:

2. Կայ անմիջական տեսակ մը որովայնահարութիւն, որ ամէն անգամ սրբանն դուրս ելլելով, երբեմն ևս խիթ կ'ունենայ հիւանդն. և եթէ կանուխ չ'զարմանուի, աղեաց բորբոքումն յառաջ կը բերէ, որուն համար պէտք է տալ Բոֆօֆէլին³ և Բոֆօ, փոփոխակի երկու ժամն անգամ մը:

ԱՏԱՄՆԱՀԱՏՈՒԹԻՒՆ

Մանկանց ակուայի ժամանակն՝ ընդհանրապէս հինգերորդ ամիսէ վերջն է, և թէպէտ առոյգքաջառողջ մանկունք առանց մեծ դժուարութեան կը հանեն, բայց վատառողջք և ջլայինք բաւական դժուարութիւն կը կրեն ակուայի ժամանակ. վասն որոյ հարկ է մի դարման անոնց համար ևս.

Մանկունք անհանդիստ վիճակ մը կ'ունենան ակուայի ատեն, մանաւանդ գլխերներն, շարունակ կուլան, զի լինտերնին ուռեցած ըլլալով՝ լորձունքնին կը վազէ, երբեմն լոյծ է փորերնին, (օրն երեքէ մինչ տասն անգամ), որով մանուկն բոլորովին անզօր կը մնայ: Երբեմն նաև կծկումն (սրազմօ) կուգայ մանկան վրայ, և այնպէս կը թուի թէ՛ ալ մանկան կենաց վերջն է:

Այս և նման նեղութեանց ենթակայ է մանուկն ակուայի ժամանակ, որոնք կարգաւ և համառօտիւ պիտի յիշեմք:

ԴԱՐՄԱՆ: Մանուկն եթէ ակուայի ժամանակ տաքութիւն ունի, և լինտերն կարմրացած և ուռեցած են, Ա₊ձ₊Ն₊ օրն երեք անգամ տուր. (երկու հող ամէն անգամ):

Բայց եթէ գլուխն տաք է, Պէլլոք^{ճմ} պէտք է տալ փոփոխակի ընդ Ա₊ձ₊Ն₊ թի. երկու անգամ իւրաքանչիւրէ: Բայց եթէ փորն լոյծ է, դեղինկանանչադոյն, և մանուկն ալ կաղմութեամբ նիհար, յայնժամ Ա₊ձ₊Ն₊, Ք^{ճմ} և Ք^{ճմ} տուր. եւ եթէ մածուցիկ է փորհարն, յայնժամ Մ^{ճմ} տուր. իւրաքանչիւրէն երեք անգամ օրն 2 հող, և եթէ փորհարն շատ է, յայնժամ աւելի շուտ:

ՋՂԱԶԳՈՒԹԻՒՆ (Սթ-դժ) (Convulsion)

Մանկունք շատ անգամ կը տանջուին կծկումէ, որ յառաջ կուգայ ճճիէ, դժուարին ատամնահատութենէ, անմարտ կերակուրներէ, վախէ, զօրաւոր հարուածէ, և ին. և ին. երբեմն կարմրուկի ժամանակ ևս կը պատահի, որ տկարութեան հետ միատեղ նա ևս կ'անցնի. (թէ և երբեմն կը պարտաւորինք Պելլուսմնա տալ մի քանի հոգ): Ուրիշ պարագայից տակ՝ բացի ներսէն մատակարարութիւք դեղոց, իբր ներլութեան անմիջական դարման, պէտք է ոտքերն ու ձեռքերն տաք ջրոյ մէջ դնել մի քանի բոպէ (ծրոպէ), և նոյն ատեն սա հետեւեալ դեղերն տալ:

ՊՍՐՄԱՆ: Ա+ճիլն, եթէ տաքութիւն ունենայ, և ոտքերն ու ձեռքերն կծկուին և աչքերն դէպ 'ի վեր դարձած ըլլան. (12 հոգ 12 դրգալ ջրոյ մէջ հալեցուր և կէս ժամն դրգալ մը տուր), մինչև փոփոխութիւն տեսնուի. բայց եթէ երկու ժամէն մեծ փոփոխութիւն մը չ'տեսնուի, յայնժամ ոգիէն մէկ կաթիլ փոքր գաւաթ մը ջրոյ մէջ դիր և ասկից քառորդ ժամն դրգալ մը տուր, մինչև որ քրանի, որ ատեն աւելի ուշ տալ պէտք է: (Ա+ճիլն՝ վերոյիշեալ կերպով կանանց նուազման համար ևս օգտակար է):

Պելլուսմնայ, երբոր գլխոյ սաստիկ տաքութիւն և այտերու կարմրութիւն ըլլայ. (երբեմն մանուկն անզգայ կ'ըլլայ). (տես Ա+ճիլն):

Սելլուսմնայ, երբ ձեռքերն ու ոտքերն քաշուելով հանդերձ մատներն դիւրաւ բացուին, մանաւանդ

խոտ հիւթ մը ամբողջ աչքը կը ծածկէ : Անտա-
րակոյս մաքրութիւնն առաջին դարմանն է , ուս-
տի պարտ է օրն 2—3 անգամ դաղջ կաթնախա-
ռըն ջրով լուանալ , և եթէ հարկ ըլլայ՝ հետե-
եալ դեղերն գործածել :

ԴԱՐՄԱՆ : Նախ և առաջ պէտք է մի քանի
անգամ Ա. Ժ. Ե. տալ . և եթէ արտասուքներն չա-
փազանց կը հոսին , Ե. Ժ. Ե. կամ Բ. Ժ. Ե. աչաց
մէջ կաթեցնել օրն երեք անգամ . (ընտրեալ դե-
ղէ մէկ երկու կաթիլ՝ 8 տրամ ջրոյ մէջ կաթե-
ցուր) : Եւ եթէ փափկակազմ է հիւանդն և հար-
բըղխոյ ենթակայ , յայնժամ Ք. Ժ. Ե. տուր ներ-
սէն՝ փոփոխակի ընդ Ս. Ժ. Ե. (առաւօտ և երե-
կոյին Ք. Ժ. Ե. , ու գիշերն Ս. Ժ. Ե.) , և եթէ ան-
հոգութեամբ եղջերուական (սեխն) վրայ բիծ ըլ-
լայ , Ա. Ժ. Ե. առտու և գիշեր 3 հապ : Իսկ
եթէ աչաց թարախն շատ է և ջրային , պէտք է
յայնժամ Հ. Ժ. Ե. տալ օրն երկու անգամ :

Վերոյիշեալ դարմանն պէտք է շարունակուի
գոնէ երկու ամիս , մանաւանդ Ք. Ժ. Ե. , որ յոյժ
կարևոր է մանկանց համար և օգտակար :




ՏԿԱՐՈՒԹԻՒՆ ՈՍԿԵՐՑ ՄԱՆԿԱՆՑ

Եթէ մանուկ մը՝ ակռաները ուշ կամ դժուա-
րին կը հանէ , և կամ առ հասարակ մանկանց քա-
լելու ժամանակն ոտք չ'ելլեր , ուրիշ նեղութեամբ
հանդերձ՝ շատ հաւանական կը թուի որ ոսկերց
տկարութիւն ունենայ , և ուստի պարտ է ծնո-

ղաց՝ կանխաւ ճարտար բժշկի մը խրատուցն դի-
մել, և կամ՝ ի բացակայութիւն բժշկաց, սա հե-
տևեալ երեք գլխաւոր դեղերն իւրեանց կար-
գան մատակարարել՝ հանդերձ կերակրոց զգու-
շութեամբն :

Եթէ մանկան մը կղկղանքն կամ աղբն լոյծ է
և թթուահոտ, ու ճերմակ բրինձի փշրուքներու
նման, յայնժամ պէտք է Քլօրօլիտ⁵⁰ տալ՝ քանի
անգամ որ լուծումն ունենայ :

Եթէ լոյծ է և նիհար, և միշտ ոտից ցաւ ու
երբեմնակի դիշերային քրտինք ունենայ, Փօֆօր-
ուլիտ : Եթէ մանուկն չափազանց կը քրտնի, մա-
նաւանդ գլուխն, և խոյլի նշաններ ունենայ, այն
ատեն Սելէնիտ պէտք է տալ առտու և գիշեր :
Լաւագոյն կ'ըլլայ այս դեղն, եթէ Քլօրօլիտ հետ
փոփոխակի տրուի, մանաւանդ երբ մանկան փորն
բարձրացած է. մէկ օր Քլօրօլիտ և յաջորդ օրն
Սելէնիտ. օրն երկու կամ երեք անգամ պէտք է
տրուիլ՝ մինչև 6 օր, և մի քանի օր առանց դե-
ղոյ անցնելէ զկնի, հարկ է կրկնել :



ՀԵՄԿԼՏԱՆՔ

Այս անհանգստութիւնն որ կը պատահի բա-
զում անգամ մանկանց, ու երբեմն չափահասներ-
բու ևս, ինքնին չէ մնասակար, բայց երբեմն այն-
քան նեղացուցիչ է, որ հարկ կ'ըլլայ դեղ գոր-
ծածելն : Առաջին գարմանն՝ որ կրնայ ընել մէկն՝
անմիջապէս քիչ մը կաթ (գաղջ) խմելն է, որով

շատ անգամ կ'անցնի : Բայց եթէ չ'անցնի , յայն-
ժամ հարկ է հետևեալ դեղերու մին առնել՝ նե-
ղութեան տեսակին համեմատ :

Եթէ հեծկլտանքի ժամանակ այտերն կարմը-
րած են , Պելագոն : Եթէ յաճախակի հառաչանօք
կ'ըլլայ , Իլնուշիս : Եթէ ստամոքսի խառնակու-
թեամբ , Իբէտանանիս : Եթէ սնդուութեան և ըս-
տամոքսի անկարգութեան պատճառաւն է , Նիստ-
էօս : Եթէ գիշերներն պատահելու ըլլայ , Բուրուս :

Այսպիսի պարագայից տակ՝ պէտք է ընտ-
րեալ դեղէ 12 հող 8 դրդալ ջրոյ մէջ հալեցնել
և ամէն 5-10-15 րոպէն դրդալ մը գործածել :



ՔՐՏՆԱՍԱՇ

Քրտնախաշն մանր կարմիր խաղաւարտ մ'է ,
որ ընդհանրապէս ամառներն մանկանց վզի , կամ
ամբողջ մարմիններնուն վրայ դուրս կուգան , եւ
շատ անգամ տաքութիւն ու եռք կը պատճա-
ռեն : Այս նեղութիւնն երբեմն չափազանց ջերմ
պահող հագուստից պատճառաւն կ'ըլլայ , զոր
պէտք է փոխելով՝ անմիջապէս գաղջ ջրով լուս-
նալ զմանուկն : Եթէ սա բաւ չ'ըլլայ նեղութիւնն
անցընելու , յայնժամ Ա.ժնէն և Քամոնայ պէտք է
տրուիլ մանկան :



ԱԿՍՆՁԻ ՎԷՐՔ

Մանկանց փափկութիւն՝ ենթակայ կ'ընէ զիրենք բազում մորթի տկարութեանց, որոցմէ մին է Ականջի վէրքն, որ ընդհանրապէս ականջի բըլթակի վրայ կամ տակն ըլլալով՝ եռք, ցաւ եւ կարմրութիւն կ'ունենան, ու երբեմն դեղնագոյն հիւթ մը մէջէն վազելով առաւել ևս կ'տարածուի:

Այս վէրքերու շատերն արեան անմաքրութենէ յառաջ կուգան, ուստի՝ պէտք է նախ Սււֆըր տալ գիշերն և 24 ժամ վերջն Իբէ+ 3 հոգ առտու և գիշեր, մինչև վեց օր: Եթէ սա բաւ չ'ըլլայ, յայնժամ Բը--ն+ և Սււֆըր փոփոխակի (մէկ մէկ օր) տուր, մանաւանդ եթէ վազածն ըլլայ թանցր: Իսկ եթէ հիւթն ջրոտ է, Ար+ն+ և Սււֆըր տուր. և եթէ վէրքն կեղևոտ է, Կը--ֆէր:

Մաքրութիւնն յոյժ կարևոր է, սակայն պէտք է զգոյշ ըլլալ, և գրգռիչ նիւթեր՝ մինչեւ իսկ օճառ չ'գործածել:

Վէրքն մաքրելէ վերջը՝ Հոյր--ն+ ի փոշին պէտք է վրան ցանել, մանաւանդ ջրոտ տեսակի, որ կ'արգիլէ տարածուիլն և շուտ կը չորցնէ վէրքը: (Գրքոյլիս Հեղինակն յատկապէս կը պատրաստէ սոյն փոշին թէ՛ մանկանց և թէ՛ կաթնտուկանանց ստեանց տակն եղող նման ջրոտ փամփրջտիկներու համար):



ՎԷՐՔ ԿՏ ՈՒՌԻԿ ԲԵՐՆԻ

Կաթնկեր մանկանց լեզուի վրայ եղած ճերմակ վէրքն, որ հասարակօրէն ԲՈՒՐՆԻ կը կոչուի, գլխաւորապէս անմաքրութենէ յառաջ կուգայ: Ստնտու մայրեր պարտին իւրեանց ստեանց պրտուղներն յաճախ մաքրել՝ նախ քան սնուցանելն իւրեանց մանկիկներն: Սակայն՝ երբեմն մասնաւոր ենթակայութիւն մը կայ մանկանց մէջ, որ յայնժամ հետեւեալ դեղերն պէտք են գործածել:

Պիրուլ: Եթէ միօրինակ իբր ճերմակ ծածկոց մը ամբողջ լեզուին վրայ, մանաւանդ մէջ տեղն տարածուած է. օրն երեք կամ չորս անգամ 3 հոգ տուր: (Երբեմն կէս տրամ Պիրուլ 25 տրամ գաղջ ջրոյ մէջ հալեցնելով՝ եթէ լեզուն սրբուի, շուտով կ'անցնի):

Մերէրէլ: Բայց եթէ մէջ տեղն ճերմակ և եղբերըն կարմրագոյն է, յայնժամ 3 հոգ օրն 3 անգամ: Արնէն և Քլէմ: Նոյնպէս:

Քլէմ: Եթէ բերնին հազազն վէրք ալ կայ:

Երբեմն այս դեղն Պիրուլի հետ փոփոխակի տալ հարկ կ'ըլլայ, խառն ըլլալով նեղութիւնն:



ՎԷՐՔ ԳԼՈՒՅ ՄԱՆԿԱՆՑ

Մանկանց գլխոյ վէրքն դժուարաբուժելի տըկարութիւն մ'է. սակայն յարատեւութեամբ կըրնան բուժիլ հետեւեալ դեղոց գործածութեամբ: Սէլէն: Եթէ վէրքն թարխոտ տեսալին է, մերթ

ընդ մերթ Հիբերու տալով, Իսկ եթէ չոր կեղևոտ է, Կրֆիէն և Արֆիէն պէտք է տրուիլ, երբեմն ընդմիջելով, և ընդհանուր արեան մաքրութեան համար գիշերներն Սուճու տալով: Բայց երբ չափազանց եռք կայ, յայնժամ Վիւլֆիէն լաւագոյն դեղն է: Նաև լաւ է թողուլ վէրքի վրայի կեղևը, մինչև որ տեսնուի թէ վէրքն բուժուելու մտ է: Անշուշտ մաքրութիւնն անհրաժեշտ է ամէն մորթի տկարութեանց համար:



ՀՐԱՏԱՊ ՊԱԼԱՐ (Օյի) (Erysipelas)

Այս ախտն՝ ճշգիւ խօսելով մորթի բորբոքող տեսակէն տարածեալ կարմրութիւն մ'է, որ կ'ըսակրսի դողով ու բոլոր մարմնոյն յոգնութեամբ, և ուռ, կիզումն և ցաւ կը պատճառէ:

Կարմրութիւնն կրնայ մարմնոյ տարբեր մասերն ըլլալ, բայց ընդհանրապէս գլխոյ վրայ, երեսն, ականջի բոլորտիքն կ'ըլլայ, ու շատ անգամ դիմաց վայելչութիւնն կը տգեղացնէ:

ԴԱՐՄԱՆ: Եթէ սաստիկ տաքութիւն կայ, Ափիէն պէտք է տրուի՝ կէս ժամն անգամ մը, մինչև որ մեղմանայ. իսկ եթէ աւելի կարմրութիւն և գլխոյ ցաւ կայ, մանաւանդ աջ կողմն, Պիլլուֆիէն և եթէ կարմրութեամբ հանդերձ՝ մանր, կարմիր և դեղնագոյն հեղանիւթով մը լի փամփըշտիկներ ըլլան, որ մերթ ընդ մերթ պատուելով կը ջրոտին, Բուֆիէն, մանաւանդ եթէ գլխոյ

ձախ կողմն ըլլայ . (երբեմն Աբիւս ևս փոփոխակի կը տրուի վերջնոյն հետ) :

Վերոյիշեալ դեղերով կարող եմք բուժել որ և է պարզ տեսակ օձիկ մը , մարմնոյ ուրիշ մասերն ևս :



ՄԻՉԵԼ ՅԱՆԿՈՂՆՈՅ

Այս տկարութիւնն խիտտ նեղացուցիչ և երբեմն դժուարաբուժելի կ'ըլլայ . սակայն՝ հետեւեալ դեղերն , որք ցարդ գործածեալ ու երբեմն բուժած են տկարութիւնն , աստ կը դնեմ :

Ոսկրներու կակղութիւն ունեցող մանկանց համար՝ նախ պէտք է Քլորֆորմ տալ մի քանի օր , մանաւանդ նիհար և վատառողջ մանկանց համար . երբեմն՝ այս դեղն և Քլորֆորմ փոփոխակի առտու և գիշեր տալով բուժուած են :

Վերոյիշեալ դեղերն արու մանուկներու համար ըլլալով , աղջկանց համար ևս Սեփիւն , Բուլիւն և Պելլուրիւն օգտակար եղած են : Եթէ մէզի մէջ կղմնտրագոյն փոշի կը տեսնուի , յայնժամ Լոպտիլիւն լաւագոյն համարուած է :



ԽԻԹ ՄԱՆԿԱՆՅ (Colic)

Մանկունք երբ անօթի չ'են կամ քնահատ , բնաւ չ'են լար , առանց ցաւ մ'ունենալու . երբ կուլան՝ յայտնի է թէ ցաւ ունին , և եթէ փոք-


ըիկ ոտքերնին դէպ'ի իւրեանց փորն վեր կը քաշեն , յայնժամ կը յայտնեն թէ խիթ ունին :

Մանկանց թանչն պաղէ , մաղձէ և կամ ճճիէ կրնայ պատճառեալ ըլլալ :

Ա՜ճնի՛ն , երբ տաք և այտերն կարմրագոյն են . եթէ տաքութիւնն անցնելով դեռ ցաւն կը մնայ , Ք՜ճ՜ճն , մանաւանդ երբ չափազանց կուլայ , եւ փորն ալ ամրացած և բարձրացած է :

Սննդ , եթէ կասկած կ'ըլլայ թէ ճճի է պատճառն :

Որ և է դեղէ երեք կամ չորս անգամ տալ պէտք է , նախ կէս ժամն անդամ մը , և ապա աւելի ուշ : Մանկութեան այլ տկարութեանց համար , որպէս Կապուտակ Հազ և լն . տե'ս Ընդհանուր Տկարութիւնք , ուր յիշեալ են նաև դարմանք նոցա :



ՃԵՂՔՈՒՍԾ ԶԵՌՔ

Ոմանց ձեռքերն կը ճեղքուին , մանաւանդ ձմեռ ժամանակ ցրտոյ պատճառաւ , եւ խիստ կ'այրին : Այնպիսիք ձեռքերնին լուացած ժամանակնին պարտին լաւ մը չորցնել , և զգուշանալ տաքէն պաղ , և կամ պաղէն անմիջապէս տաքը չի փոխել , և եթէ սովորութիւն ընեն երբեմն խողի իւղով , կամ Վալէլնով և կամ Կլէ՛է՛րնով ձեռքերնին շփել , մեծապէս կ'օգտուին , մանաւանդ եթէ քիչ մը Արնի՛ն խառնելու ըլլան միատեղ . (1 տրամ Արնի՛ն , 10 տրամ վերոյիշեալներէն միոյն հետ լաւ մը հարէ) :

Այս ներդրութեան համար Աբխազի սպեղանիով եթէ ձեռքերն ճեղքուելէ առաջ (չարաթը մէկ երկու անգամ՝ գիշերներն) շփելու ըլլան, շատ անգամ բոլորովին կ'ազատին: Բայց եթէ արդէն ճեղքուած է, յայնժամ պէտք է առաւօտ և երեկոյ գործածել. և եթէ հարկ ըլլայ՝ ոտքերն ևս:

ԴԱՐՄԱՆ ՆԵՐՔԻՆ: Հէք-ը-ը-ը և Մէր-է-րէ-ը:

Այս երկու դեղոց՝ առաւօտ և գիշեր՝ փոփոխակի գործածութիւնն շատ անգամ բոլորովին կը բուժէ և կ'ազատէ տրամադրութենէ:

Բէր-ը-ը, երբ խորունկ է ճեղքուածներն: Վեց օր շարունակ առնելէ զկնի, մէկ երկու օր միջոց տալով, կրկին առնել պէտք է:

ՅՈՒՐՏ ԽԱԾ: Յրտի պատճառաւ՝ ոմանց ոտից մատներն (երբեմն ձեռաց) կ'ուռեցուորին և մթազոյն կարմիր կերպարանք մը կ'առնեն, որք շատ անգամ սաստիկ եռք և ցաւ պատճառելով՝ բաւական կը նեղեն, մանաւանդ մանր տղայս, որոնք պէտք եղած զգուշութիւնն չեն կարող ընել:

ԴԱՐՄԱՆ: Եթէ եռք և ցաւ կայ՝ հանդերձ կարմրութեամբ, պէտք է Բը-ը-ը առնել օրն 3-4 անգամ: Բը-ը-ը-ը, եթէ գիշերները կը սաստկանանայ ցաւն կամ կիզումն: Բայց եթէ կիզումն կայ և բաց կարմրազոյն ուռ, յայնժամ պէտք է Աբխ-ը-ը առնել նոյն կերպով: Երբեմն յոյժ դժուարին կ'ըլլայ այս երկու դեղոց մին ընտրելն. վասն որոյ յայնժամ պէտք է փոփոխակի առնել իւրաքանչիւրէն, (օրն երկու անգամ քիչ մը ջրով):

Եթէ Աբխազի սպեղանին կամ ջուրն դրսէն գործածուելու ըլլայ (մէկ տրամ ոգի՝ 50 տրամ

ջրոյ մէջ) և լաթ մը թրջելով վրան դրուի օրն մի քանի անգամ, մեծաւ մասամբ նեղութիւնն կը թեթեցնէ ու ցաւն կ'առնէ :

ԱՅՐԱՆԻ ԿՈՒՆԱՆԻ

Այրածներու համար գործածեալ դարմանք բազմաթիւ են, բայց մենք աստ նոցա գիւրագոյնն և ընտիրն պիտի յիշենք :

Տուն մը կամ ընտանիք մը չ'կայ որ կարօտութիւն չ'զգայ այսպիսի դեղոյ մը : Բազում անգամ մանր տղայք վառարանի մօտ նստած ժամանակնին, որպէս քնական է խաղալ կրակի հետ, կ'այրեն ձեռքերնին կամ որ և է մասերնին :

ԴԱՐՄԱՆ : Ա՛ռ հասարակ օճառ, մանրէ զայն ջրոյ մէջ և զարկ՝ մինչև որ լաւ մը փրփրի . ա՛ռ այն փրփուրն և ծածկէ անով այրած տեղն, ուր որ է : Թող մի քանի ըսպէ որ չորնայ, յետոյ կըրկին քսէ . այսպէս շարունակէ, մինչև որ լաւ եւ բաւական հաստ ծածկոց մը ձեւանայ այրածին վրայ : Սա անմիջապէս կ'առնէ ցաւն, և նեղութիւնն իրականապէս կը քիչնայ : Ոմանք՝ օճառի հետ հաւկթի սպիտակուցն ալ կը դնեն և կը վրկայեն թէ խիստ օգտակար է : Բայց իմ փորձառութիւնս է առաջին կերպն : Այս դարմանի մի անգամ փորձն ընողին անկարելի է այլ ևս զայն թողլով ուրիշ միջոցներու դիմել : Մի լաւագոյն յատկութիւնն այս դեղոյս՝ հետք մը կամ նշան մը չ'թողուին է :

Օճառն որքան կանուխ դբուի, այնքան լաւ կ'ըլլայ դարմանն. իսկ եթէ երեան է և դժուարին է քսելն, կրնայ լաթով մը դբուիլ վրան, և թողուլ զայն երկու կամ երեք օր, եթէ ոչ-սաստիկ ցաւ ունենայ:

Եթէ ձեռքն կամ ոտքն է վնասուած մասն, յայնժամ փոխուելու ատեն պէտք է քիչ մը դաղջ ջրով խիստ զօրաւոր փրփուր պատրաստել և վնասուած մասն մէջը դնելով՝ պէտք եղած կարգադրութիւնն ընել:

Դարձեալ: Արնի սպեղանին մի ուրիշ սրատուական դեղ է, որով մանկանց խոր այրածները բուժած եմ՝ առանց հետքն թողլոյ. (մանուկն երեսի վրայ հակ-լին վրայ ինկած էր): Առ Արնի սպեղանին և քսէ զայն բարակ լաթի մը վրայ և ծածկէ այրած տեղն. եթէ ցաւն սաստիկ չէ, մի՛ փոխեր մինչ 24 ժամ, յետոյ նորոգէ:

Բարնի և Ըրնի, (30 կաթիլ 5 տրամ ջրոյ մէջ) դբսէն գործածելի դեղերն են, որ 'ի հարկին՝ եթէ Արնի 3 օգնէ՝ կրնան գործածուիլ:

Դարձեալ: Ա՛ռ մաս մը բարակ աղ և մաս մը ընտիր ալիւր, (երբեմն ալիւրն առանձին բաւ է) խառնէ միատեղ և ամբողջովին ծածկէ այրածն: Սա՛ ցաւն ու տաքութիւնն շուտ կ'առնէ. բնաւ մի՛ բանար, և եթէ հարկ ըլլայ նորոգել, առաջնոյն վրայ կրկին դիր:

ՄԱՏՆԱՇ ՈՒԹՆ (Տւաւոյ), Մաստիկ ցաւ պատճառող այս փոքրիկ վէրքն՝ ձեռաց մատներու ծայրն և քիչ կամ շատ խորն ըլլալովն, անհոգութեամբ մինչև իսկ մասն կորսնցնելու պատճառ կրնայ ըլլալ:

ԴԱՐՄԱՆ. Երբ կոպտալու նման նշաններ կ'ըզայ, պէտք է փոփոխակի առնել Սպիշի և Մերի-օրն երեք անգամ, և նոյն ատեն Արնի կամ Լեպիտի ոգին դբսէն վրան դնել, և երբ չորնայ՝ նորոգել: Սա ընդհանրապէս բորբոքման վիճակէ կ'ազատէ:

ԹՈՅՆՔ ԵՒ ԴԱՐՄԱՆՔ

Թունաւորեալները դարմանելու համար՝ երկու յոյժ կարեւոր կէտեր կան : Ասոնց առաջինն է վերջնել պատճառն, այսինքն թոյնն հանել մարմինէն դուրս, և երկրորդ՝ թոյնի հետեանքէ ազատել զհիւանդն : Թոյնն ըստ կարի շուտ վանել պէտք է, և զգուշութեամբ ու առանց որ և է այլ վնաս մը պատճառելու :

Ա. Եթէ երկար ժամանակ չէ անցած, այսինքրն եթէ թոյնն դեռ ստամոքսի մէջ ըլլալ կը կարծուի, անմիջապէս փսխեցուր զայն ամէնապարզ եղանակաւ, այսինքն՝ պարզ տաք ջուր կամ աղի ջուր խմցուր, (մէկ մեծ դրգալ մը աղ՝ կէս օգգա ջուր), և կամ երկար փետուրով կոկորդն խոխոտցուր, մինչև որ փսխէ. և եթէ սա շուտ չի գործէ, յայնժամ քիչ մը մանանեխ (կէս տրամ, կէս օգ ջրով) խառնէ և զայն խմցուր. սա անտարակոյս կը փսխեցնէ :

Բ. Եթէ աղիքներն անցած է, յայնժամ փոխանակ փսխեցուցչի՝ պէտք է լուծիչ դեղ տալ, և կամ թէ թոյնն բարեխառնող զօրաւոր նիւթ մը, որոց առաջինն կրնամք համարիլ հակթի սպիտակուցն :

ԽՅԹ ՄԵՂՈՒԻ : Մեղուներու և այլ ճճիներու խայթն այնպէս նմանութիւն ունին միմեանց, որ հարկ չ'կայ ինձ իւրաքանչիւրի վրայ առանձին խօսիլ : — Մեղուի խայթի նշաններն ծանօթ է ամէնեցուն, որք են՝ ցաւ, կարմրութիւն եւ ուռեցք : Խայթուած տեղն նախ քիչ մը գունաթափ ըլլալով, հետզհետէ կը կարմրի և ի վերջոյ կապտագոյն ուռեցք մը կը ձևանայ. և երբեմն՝ երբ երբան ըլլայ, ամբողջովին կուռեցուորի, այնպէս որ աչքերն իսկ կը գոցուին : Միջատներէ ոմանք սաստիկ թունաւոր ըլլալով, եթէ շուտ դարման չ'ըլլայ՝ կրնայ մահաբեր ըլլալ :

ԴԱՐՄԱՆ : Լեւոն-բ կամ Աբնի-ի ողին՝ ան-
միջապէս պէտք է լաթ մը թրջելով վրան դնել,
և քանի չորնայ՝ կրկնել նոյնն : — Մեղուի խայթի
համար՝ հասարակ սոխն մէջ տեղէն երկուքի կրտ-
րէ և դիր վրան , և ամէն 5-10 ըտպէն անգամ մը
փոխէ , որ սա ցաւն և ուռեցքն կ'առնէ . պէտք է
մի քանի օր շարունակել :

ԶԱՍՆ հարուածն կամ խայթն՝ մի սոսկալի
ցաւ պատճառող թոյն է , զոր փորձառուք (որ-
պէս ես) լաւ կը վկայեն :

Զկան ոսկրն հանելու համար երբեմն դանա-
կով կը ճեղքեն այն թունաւորեալ տեղն , և այլք
ծծուիլով կ'այրեն . բայց սոցա լաւագոյնն է՝ (ե-
թէ պատրաստ գտնուի)՝ կակուղ խաշած հաւկիթ
մը , կարելի եղածին չափ տաք , անմիջապէս խայ-
թուած տեղին վրայ դնել : Սա թէև մէկ վայրկեան
սաստկագոյն ցաւ կը պատճառէ , բայց անմիջապէս
նորա կը յաջորդէ զովութիւն մը՝ աննկարագրելի,
և սորա հետ կ'անհետանայ այն սոսկալի ցաւն :
(Սա կրնայ փորձուիլ ուրիշ թոյներու համար ևս) :

ԹՈՒՆԱՒՈՐ ՍՈՒՆԿ (Մռ-բ) : Եթէ կը կաս-
կածինք թէ՛ սունկով թունաւորեալ է , պէտք է
անմիջապէս փսխեցնել , մինչև որ ստամոքսն բոլո-
րովին պարպուի : Առանց շաքարի զօրաւոր սուր-
ճըն եթէ չ'փսխեցնէ՝ կ'բարեխառնէ զթոյնն : Մա-
քուր քացախ՝ 50 տրամ , կամ կէս տրամ ածխոյ
փոշին , 25 տրամ ձէթով խառնէ և խմուր :

ԱՓԻՕՆ : Ափիօնով թունաւորեալներն մի՛ թո-
ղուր որ քնանան , և զօրաւոր սուրճ կամ քացախ
խմուր , մինչ բժշկի գալն :

ՄԿՆԴԵՂ : Մկնդեղով թունաւորեալներու ,
խսկոյն կաթ և հաւթիլի սպիտակուցն իրար խառ-
նելով զարկ և խմուր՝ որքան որ կրնաս , մանա-
ւանդ եթէ սկսած է փսխել :

ՄՆԴԻԿ (Ա+--Կ+Ի--Կ+): Տասը կամ տասն երկու հաւկթի սպիտակուցը զարկ և խմցնելով հիւանդիդ, կանչէ բժիշկին:

ԺԱՆԳ (պղնձի): Հաւկթի սպիտակուցն կաթով զարկ և խմցուր՝ որքան որ կրնաս: Եւ եթէ սա օգուտ չընէ, հասարակ օճառն՝ իւր ծանրութեան երեք չորս անգամին չափ տաք ջրոյ մէջ հալեցուր և խմցուր: Օճառն շատ անգամ՝ երբ հաւկթի սպիտակուցն անօգուտ ըլլայ՝ օգտակարագոյն դեղ մը համարուած է, մինդեղի, պղնձի ժանգի, ծծմբային թթուի համար ևս:

ԲԱՄՅՈՒԲ: Բաւական թոյներու համար գործածեալ նիւթ մի է, մանաւանդ երբ կը փսխեն: (Մի քանի ցորեն՝ քիչ մը ջրով, կամ 5—10 կաթիլ ոգիէն՝ քիչ մը շաքարով տուր ամէն 5-10-15 րոպէն, մինչև որ փսխունքն դադրի):

ԱՐՏԱԲՈՒՍ ԳՈՐԾԱԾԵԼԻ ԴԵՂԵՐ

ԱՐՆԻՔԱ: Արտաքին վնասներու, (քերթուած, սևցած, ուռեցած և ճզմուած է): Ոտից կոշտերու համար՝ մայր հեղուկէն պէտք է վրան դրուիլ: Փափուկ տեղերու համար, ինչպէս աչք, երես, և այլն, 5 կաթիլ՝ 15 տրամ ջրոյ մէջ դիր և լաթ մը թրջելով, վնասուած տեղի վրայ դիր՝ մինչև որ չորնայ, յետոյ նորոգէ լաթն: Իսկ եթէ ձեռքն կամ ոտքն ըլլայ, կամ մատնաշուրթն (սուտ), 30 կաթիլ՝ 8 տրամ ջրոյ մէջ պատրաստելով, լաթ մը թրջէ և փաթթէ մատն:

ԲԱԼԷՆՏՈՒԼԱ: Կտրուած, պատառուած և բաց վէրքերու համար պէտք է գործածել:

(Կերպ և չափ գործածութեան՝ տես Ա.ՆԿ+):

ՀԱՄԱՄԷԼԻՍ: Այս դեղն Ա.ՆԿ+ յի հետ փոփոխակի կը գործածուի նման պարագայից տակ:

բայց առ առաւելն թանչքի, խոր վէրքերու եւ սրբանն դուրս ելած ժամանակ՝ արտաքուստ գործածելի մի ընտիր դեղ է: (Չափ եւ գործածութիւն՝ տես Ա.Ն.Կ.Պ.):


ԼԷՏԸՄ: Մեղուի, կարիճի, և մանր միջատներու, լուի, ևլն. խոյթերու համար ընտիր դեղ մ'է: (Լեռն մէկ փոքր դրգալ և 10 տրամ ջուր):

ԲՈՒԹԱ-ԿՐԱՎ: Վէրք անկողնոյ. (երկար հիւանդութեանց պատճառաւ շատ անգամ հիւանդաց տակն վէրք կը պատճառի): Ըղունքներու և ճզմուած ոսկրներու համար: (Տես Ա.Ն.Կ.Պ.):

ԹՈՒՅԱ: Ոտից կոշտերու, և մարմնոյ որ և է մասն՝ մանր ուռիկներու կամ կոծիծներու վրայ, օրն երկու անգամ ոգին պէտք է քսուիլ:



Այս ամէնն աստ յիշուած են՝ ի բացակայութիւն բժշկաց գործածելու համար: Անկասկած ըլլալով որ ծանր պարագայից տակ սր և է տկարութեանց համար գրքոյկիս էջերն դարձնելով փոխանակ ժամավաճառութիւն ընելու, պիտի դիմեն օրինաւոր բժշկաց խրատուցն՝ հիւանդի պատշաճ դարմանն յարմար ժամանակի՝ ի գործ դնելու: Վասն զի Կանխագոյն Դարմանն՝ Լաւագոյն ԿեԱնԻ կամ Առողջութիւն ձեռք կ'ըրէ, իսկ Յապաղումն՝ Անբուժելի հիւանդութիւն և ՄԱՀ:



ՅԱՆԿ ՆԻԻԹՈՅ

Ե Ի

ԳԼԽԱԻՈՐ ԴԵՂՕՐԷԻՑ

	Էջ
Ալիւր	9
Ախորժակ	38
Ախորժակի կորուստ Պրոյճնէն , Նէ-տ-ւ-ւ 217	
Ախտաբանութիւն	23
Ախտերու գլխաւոր նշաններ	23
Ականջ արտաքին Պելլուստն , Բը-ւ-ւ	205
Ականջի ծանրութիւն , Բը-ւ-ւ-ւ , Մե-ւ-ւ-ւ-ւ 207	
» վէրբ , Ար-ն-ն-ւ , Կր-ն-ն-ւ	206
» ցաւ , Բը-ւ-ւ-ւ-ւ , Ք-մ-մ-ւ-ւ	206
Ամորձիկ , Հ-մ-մ-ւ-ւ-ւ , Բը-ւ-ւ-ւ-ւ-ւ	224
Այրած , Աղ , Ար-ն-ն-ւ , Ալիւր	272
Աչաց կարմրութիւն , Ա-մ-մ-ւ-ւ , Մե-ւ-ւ-ւ-ւ-ւ	191
Առաւօտեան տկարութիւն յղի կանանց 250	
Առողջաբանութիւն	4
Ատամնահատութիւն	254, 260
Ատամնացաւ , Ք-մ-մ-ւ-ւ , Ք-ն-ն-ւ	219
» յղի կանանց , Ս-ւ-ւ-ւ-ւ-ւ-ւ-ւ	244
Արգիլեալ նիւթեր	13
Արիւն թքնել , Հ-մ-մ-ւ-ւ-ւ , Ի-բ-բ-ւ	118
» փսխել , Մե-ւ-ւ-ւ-ւ-ւ-ւ , Ի-բ-բ-ւ	151
» քթի , Ար-ն-ն-ւ , Պելլուստն	212
Արիւնխառն խուխ , Պրոյճն , Փ-մ-մ-ւ-ւ	108

Արիւնախառն մէղ, Թիւրապէնի	223
» փորհար, Քալուքի, Մերտիւր	158
Արտաքուստ գործածելի գեղեր, Արնիւ	277
Արևահար, Կլուքի, Աստի	70
Արիօն	275
Բարախումն սրտի, Աստի, Ինչու	183
» ջղային, Քալուքի	184
Բարկուծիւն, Քալուքի	240
Բերնի վէրք, Մերտիւր, Պարտ	218
Բլթակն, Աստի, Բարտ	204
Բորբորումն ականջաց, Աստի, Պարտ	205
» (Աչաց) աղբերակաց, Քալուքի	200
» Աղեաց, Արնիւ, Քալուքի	152
» Ամորձիկներու	224
» Աչաց կոպերու, Հիւր, Մերտիւր	193
» Եղբերուական, Աստի, Քալուքի	203
» Երիկամանց, Աստի, Քալուքի	220
» Լեարդի	174
» Շարաւալից աչաց, Հիւր, Մերտիւր	198
» Ռեգաց, Պարտ, Օրտ	214
» Սրտի պարկի, Աստի, Պարտ	188
Բրինձ և Գարի	9
Գաւակ, Աստի, Սեւի, Հիւր	122
Գէշ շունչ, Բարտ	148
Գըղըլ Պարտ	82
Գլխոյ հերանց թափելն, Բարտ	140
» պտոյտ, Նիւր, Բարտ	137
» վէրք, Արնիւ, Կալուքի	138
» ցաւ, Պարտ, Ճեւեղի	134

Գլխոյ ցաւ դաշտանական, Բուլալի, Կլօնօն	134
» ցաւ մաղձային, Նէ-տ-ւ-լ, Մէր-է-ր	136
Գոյն աչաց կամ մարմնոյ	41
Գորակ, Մէր-է-ր, Թայտ	218
Գուշ պօղան, Ա-ձ-է-ն, Սքըն-ձէ-ւ	122
Գրգռումն աչաց սպիտակաց, Են-ճը-տ-է-ւ	196
» Եղեղան, Նէ-տ-ւ-լ, Պերրոս	224
Դալումն (արուլէ) Ար-է-ն-է-տ, Մէր-է-ր	178
Դաշտան	232
» յաճախ, Քար-տը-տ, Իքէ-տ	237
» չափազանց, Քրօ-տ, Սաղին	235
» ցաւով, Քօլին-տ, Քար-տայ	237
Դաշտանական կերանք	252
» վախճան	251
» ներդուծիւնք	243
Դաշտանի բնդմիջումն, Լայ-տքօր-է-ւ	236
» ժամանակն	233
» յապաղումն	233
Դերօրէից ազդեցութիւնն շտրող նիւթեր	12
Դժուարամիզումն	222
Դժուարաշունչ (որը-նէ-ճէ-ւ)	110
Եղինջասայթ (ճօր-տ-ր), Ա-ձ-է-ն	88
Երեսի ցաւ, Ա-ձ-է-ն, Պելլարմնայ	220
Զովութիւն	49
Ըղեղի վիճակ	35
Ըմպելիք	20
Ընդհանուր խորհրդածութիւն (Զերմն)	49
Ընդմիջումն դաշտանի, Լայ-տքօր	236
Թէյ	10

Թիֆոյախառն ջերմ , Պրայն , Փոֆեր	62
Թոքայտ (աւելլանալու հաստ) Աւելլ , Պրայն	106
Թոյնք և դարմանք , Կաթ , սպիտակուցն	274
Թուժք (դասար) , Հաստեղէն , Էստեւէն	165
Թունաւոր սունկ	275
Թունախեղդիկ , Աւելլ , Սքլէն	122
Ժամանակ գեղատուութեան	48
Ժապաւէն (շէրէր)	172
Իւղ	6
Լեարդի բորբոքումն , Պրայն	174
Լինար , Աւելլ , Մերթեր	218
Լինտերու ուռ , Մերթեր	219
Խայթ ձկանց (Հաւկիթ)	275
» ճճիներու	275
» մեղուի , (սօխ)	275
Խաչած , Ալիւր , Արնէր	272
Խիթ (անճը) , Քոյոնիլ , Վերաբերում	155
» մանկանց	269
Խլութիւն որկորային , Մանկանոս	208
Խխայթ , Օրսոս , Մերթեր-էր	214
Խոյլ , Մերթեր , Պէլլար	117
Խոյլ նոր , Աւելլ , Մերթեր	72
Խոր վերք (մաթեա) , Քոնիլ , Քոնիլ	173
Խորհրդածութիւն ջերմոց	49
Խուխ՝ իբր նշան	43
Ծաղիկ , (Variola) , Սիլիկ , Թարեւոր-էր	75
Ծաղկանման , Աւելլ , Արն	78
Ծարաւ՝ իբր նշան	39
Ծիւրական ախտ , Փոֆեր , Սքլէն-էր	103

Միսախոտ	44
Ծովային բաղնիք	21
Կաթ	6-8
Կաթէ կտրել	254
Կաթուած, Ա.՝ճնէն, Օքէլէճ	71
Կարիկ աչաց, Բուլուլ, Սէքէն	194
Կարմրութիւն աչաց, Ա.՝ճնէն, Մէրէն	191
Կեղծ ցաւ, Քոճոճայլ, Բուլուլ	245
Կերակուր	I-II
Կերակրոց մարսողական ժամանակն	4
Կիրք, և վիճակ մտաց	37
Կծկումն, Պէլլուրճն, Սէնայ	36
Կղկղանք աղեաց	32
Կշտացաւ, (Pleurisy), Ա.՝ճնէն	109
Կոշտ ոտից (շուշը), Թոյս, Արնէն	277
Կուրծքի հազ	43
» հարբուղիս, Ա.՝ճնէն, Արնէն	113
» վիճակ	43
» ցաւ	43
Կուրծքի ջրգողութիւն	229
Հագագ (պղտի հարբուց), Ա.՝ճնէն, Սէնէն	128
Հագուտ	45
Հազ, Ա.՝ճնէն, Իբէն, Պրայճն	120
» կապուտակ, Տրոնէր, Քէնէր	116
» կուրծքի, Թարնէր-Ին	122
» հարբուղիս, Ա.՝ճնէն	121
Հարբուղիս, Արնէն, Իբէն	115
» աչաց, Իբէն	196
» ունգաց, Արնէն, Իբէն	209

Հարսանիթ (բըռնաբըռ), Առանձին, Բաւարացի	79
Հաւկիթ	8
Հաւկիթի սպիտակուցն	276-277
Հերակիտ (մաղթափիլ), Պելլուրան, Բելլուրան	140
Հեծկլտանք, Ինչուշէն, Իբեթա	264
Հիւանդութիւնք և դարմանք	49
Հիւննաղ (փողացաւ), Առանձին, Մերեթե	126
Հիւրաչաց, Քաւարեւ, Ենթարեւ	202
Հնտախտ, Արեւիկ, Քաւարեւ	159
Հոտառութեան գործարան	209
Հրատապ պալար, Աբեթ, Բըռն	268
Զուկն	9
Ճակնդեղ, Շողգամ, Բաթաթէս և ին	9
Ճեղքուած ձեռք, Վաշէլէն	270
Ճճի, Սանթիսի, Քաւարեւ	170
Մայրական կաթ	252
Մայրերու համար խրատ	253
Մանկական սնունդ	255
Մանկական ցաւ աչաց	262
Մատակարարութիւն դեղորէից	47
Մատուց սննդարար կերակրոց	5
Մատնաշուրթն, Լուսնիկ, Հիթաւ	273
Մարած ձայն, Անթիսի, Բեթա	132
Մարմնավարութիւն	14
Մարտողական գործարան	142
» գծուարութիւն՝ Հին	144
» » Նոր	142
Մաքրութիւն	18
Մէղ (իբր նշան)	34

Մէջքի ցաւ , Արժնէ՛ս , Բըս-՛նս	245
Մթութիւն եղջերուական (Հիւր աչաց)	202
Միգարդերութիւն , Ա.ժնէ՛ն Քաննայէն	220
Միղել յաճախ , Ա.բէ՛ս , Պէլլապ , Նկա՛ս	221, 45
» յանկողնոյ	269
» ցաւով , Քաննայէն	221
Մկանացաւ , Ա.ժնէ՛ն , Պրոյժն , Բաւլաւն	98
Մկնդեղ , սպիտակուցն հաւկթի	276
Մտաւոր յուզմունք , Ինչ-՛նչ , Քոֆէ՛ս	240
Մօրքուր	88
Յաճախ դաշտան , Պէլլապն , Քալաւրէն	237
Յապաղումն դաշտանի , Բաւլաւն , Սեղէ՛ն	233
Յառաջարան	1
Յօդուածացաւ Հին , Բըս-՛ն , Քոյֆէ՛լ	97
» Նոր , Ա.ժնէ՛ն , Լեճնապ	93
Նեղութիւնք յղութեան	243, 239
Նիքրիդեէլի (Ղա-ոսկորացաւ)	99
Նոր խոյլ , Ա.ժնէ՛ն , Արժնէ՛ս	72
Նուազումն , Ա.ժնէ՛ն , Արժնէ՛ս	253
Շլորոսութիւն (կանանչ հիւանդութիւն)	90
Շլութիւն , Սինյ , Հայտնաբըս	201
Ոգելից բմակլիք	10
Ոտից բաղնիք	22
Որովայնալուծութիւն , Արժնէ՛ս , Մերէ՛ր	157
» մանկանց , Մերէ՛ր , Բաւլ	158
» վարակող՝ Վերմերոս , Քոյֆէ՛ր	159
Որքիւն , Սեֆէր , Բըս-՛ն , Հիբ-՛ր	217
Ուռ աչաց կոպերու	195
Ուռ մաքմնոյ (ջրգողութիւն) , Ա.բէ՛ս , Արժնէ՛ս	228

Սաթլըճանլը հումմա (Pneumonia)	Ա, Ենէն	106
Սանճը (խիթ)	Քուլնէն, Քուսույլ	155
Սարըլըդ (դալուկն)		178
Սբազմօ (Ղղաձդութիւն)		36-261
Սերմնակաթութիւն	Ճէլէտէն, Մերէտէր	226
Սըթմայ (Տեհդ)	Արեւնէ, Քուսույլ	66
Սրտի բարախումմա	Քուսույլ, Վերմէրուս	183
Սրտի պարկի բորբոքումմա	Սքէճէլէ	185
Սրտի տկարութիւն	Ա, Ենէն, Սքէճէլէ	185
Սրտի ցաւ (ներքին մաշկի)		188
Մնդիկ		276
Մնդարար յատկութիւն նիւթոց		6
Սուրճ		10
Սունկ թունաւոր		276
Սպիտակահոսումմա	Բուլմէլ, Սքէլէ	239
Ստամոքս		37
Ստամոքսի թթուութիւն	Պէլլուր, Արեւ	146
» խիթ	Նէտուլ, Արեւնէ	149
» ծանրութիւն	Բուլմէլ, Մերէտէր	151
» ցաւ	Պրոյճ, Արեւնէ	145
Վախ կամ երկիւղ	Օքէլ, Ա, Ենէն	243
Վերջին ցաւ	Արեւնէ, Բուլմէլ	250
Վէրք ականջի	Արեւնէ, Կրֆէլ	206, 266
» բերնի	Մերէտէր, Պրոյճ	218, 267
» գլխոյ	Կրֆէլ, Հիքուր	138, 267
» խոր	Հարբուսէլ, Քուլնէրուս	173
» ոնդաց	Արեւնէ, Հիքուր	213
» ստեանց	Իքմէր, Քուլնէրուս	249
» և ցաւ ստեանց	Արեւ, Արֆէլ	248

Վիժումն Արնիւն , Սուրբն , Քրոստ	246
Վիճակ ըղեղի	35
Վիճակ մտաց	37
Վիշտ և կիրք Ինչու է , Քրոստ	243
Տալագ (փայծաղ) Արնիւն	180
Տենդ (սըթմայ) Արնիւն	66
» Եռացական (ծաղիկ և ըն	75
» Հրատագնապ (գըղըլ) Աքի	82
Տեսակ ցաւոց	29
Տըդ նէֆէս	110
Տկարութիւնք աղեաց	152
» աչաց	190
» լեարդի	174
» լսողութեան	204
» կանանց	232
» մանկանց	259
» մարտողական գործարանաց	142
» միգի գործարանաց	220
» ոսկերաց Քրոստ	263
Տուշ	22
Յաւ իրք նշան	29
Յաւ աչաց մանկական Ա. ճնէլ	262
Յաւ կուրծքի Ա. ճնէլ , Պայծ	107
Յաւ ստեանց Քրոստ , Բարութիւն	249
Յաւով գաշտան Բարութիւն , Սէֆէ	237
Յաւով միգել Ա. ճնէլ , Պէլլարոն	222
Յուրտ-խած Արնիւն , Բար	271
Փայծաղ (քրոստ) Արնիւն	180
Փողացաւ (Հէննաք) Աքի , Պէլլարոն	126

	էջ
Փորհարութիւն Գօլթանի, Մերթիւր	457
» մանկական Բօրօֆէլ, Բոնի	259
Փսխունք (իբր նշան)	40
Փսխումն արեան Համօքի, Իբէտ	151
Փսխունք Իբէտ, Արեւիկ	244, 147
Քամֆըր	277
Քանակութիւն դեղորէկց	45
Քացախ	
Քթի արիւն Արնիտ Համօքի	212
Քթի վէրք Արեւիկ, Մերթիւր	213
Քնահատութիւն Քօֆէ, Քոմօյլ	244
Քուն	42
Քրտինք	32
Քրտնախաշ Ատօնի Քոմօյլ	265
Օձիկ (Erysipelas) (Հրատապ պալար) Բընի	268
Օճառ	275





ԳԻՆ 15 ԳաՆԵԿԱՆ